

L5n

✓ 1084



1999





Հ Ե Գ Ի Ն Ե



114 Pd:

# ՀԵՂԻՆԵ

ԱՐԲ ՕՐԻՈՐԴ Մ Ը

ՏԱՐԱՊԱՆԱՑ

ԳԳՐԱՑԻՆ ՄԵԶ

1971.



Վ Բ Խ Շ Ա Ց

ՄԻՒՋԱՐԵԱՆԱՑ ՏՊԱՐԱԿՆ

1863

28. 1084

91084-600

# ՀԵՂԻՆԵ

Ո Ր Յ Ո Ր Ի Ո Ր Դ Մ Է

ՏԱՐԱՊԱՆԱՑ ԴՊՐՈՑԵՒՆ ՄԻԶ.

ԳԼՈՒԽ Ա.

Գաղղիայի Բրոգանս գաւառին մշջ  
Պարսկնէդի հովտին մօտերը՝ մինչեւ ան-  
ցած դարուն վերջերը բնդարձակ քառա-  
կուսի տուն մը կը տեսնուէր, եղեւնի ու-  
նոճւոյ ծառերէ պատած : Աս տունը զու-  
արթ ըլլակի մը վրայ հին ասպետական  
բերդի մը աւերակաց տեղը շինուած ըլլա-  
լով, ան հին բերդին անունը կը պահէր,  
որն որ քովէն բխող պաղ ջրոյ աղբիւրին  
պատճառաւը՝ Ակնազրեր ըերդ կ'ըսուէր :

Նոյն տունը ետեւէ ետեւ շատ մար-  
դիկ առած ծախած ըլլալով, չորս կողման  
բնակիչները մտքերնին դրած էին որ քա-  
ջերու եւ ծիւազներու բնակարան է . անոր  
համար ալ իրիկուան մութը կոխելէն ե-  
տեւ՝ մէկը չէր համարձակեր չէ թէ միայն  
ներս մտնելու, հապա եւ ոչ շատ քովը  
մօտենալու : Աս պատճառաւ շատ մեծ  
սրաստութիւն պէտք էր որ մարդ յան-  
դդնէր մէջը բնակիլ . ուստի եւ նկարա-  
գեղ տեղեր սիրող մարդիկ՝ որոնք նոյն

տան գեղեցիկ շրջակայքէն յափշտակուելով՝ վարձքի կը բռնէին, քիչ մը ատեն բնակելէն ետեւ, երբ որ մէջ մը աշուքնին կը վարժէր, թող կու տային կ'երժմային :

Բլրակին ստորոտը պլտիկ ագարակ մը կար, որուն մէջ թուվմաս անունով վարձակալ մը կը բնակեր իր ընտանեօքը։ Ասմարդը միանգամայն տան պահպանութիւն կ'ընէր, եւ ծխաղներէ շվախցող մը տունը բռնելու որ կու գար, վարձքի կու տար, Արդէն երկայն ժամանակէ վեր՝ ամենեւին մէկը չէր երեւցեր, մէջ մ'ալ օր մը թուվմաս տանտիրոջմէ նամակ մ'առաւ, որուն մէջ իրեն կը ծանուցանէր որ տունն իտալիայէն եկող տիկնոջ մը վարձքի տուածէ երկայն ատենուան համար։ Անմիջապէս առ լուրն իր կնոջը հաղորդեց, յանձնելով որ երժայ պատուհանները բանայ եւ շիտկելու բան կայ նէ՝ շիտկէ։

Փանք Աստուծոյ, կանչեց կինը, խել մը ատեն է որ առանձնութենէն ձանձրացած էի։ Բայց պէտք է խոստովանիլ որ աշխարհքիս մէջ շատ արտաքոյ կարդի մարդիկ կը գտնուին. հանդարսութեամբ եւ ուզածնուն պէս քաղաքը բնակելու տեղ՝ գալ հոստեղս բնակիլ, վայրենի անանոց հետ եւ անօնցմէ աւելի վնասակար ճիւաղ . . . :

— Ասոր վրայ շխօսինք, Ա'գնէս, Քեզի այնչափ անգամ ըսի որ չորս կողմի մարդիկներուն զրուցածին ականջ կախելու

չէ : Ես բերդին մէջ շատ գիշերներ անցուցեր եմ, եւ բուէ ու չղջիկէ ուրիշ բան չեմ տեսեր :

— Լաւ, դէմ չեմ խօսիր . բայց չեմ կարծեր որ գալու խաթունն իրմէ առաջիններէն աւելի կենայ, թէպէտ սրտանց կը բաղձամ որ խօսքս, չելլէ :

Իրենք աս խօսակցութեան մէջ եղած առեն՝ տղոցմէ մէկը վազելով եկաւ, ըստ որ քանի մը հոգի դէպ ի տուն կու գան :

Ի՞նչ, արդեօք տունը բռնող տիկինննէ, կանչեց կինը . այսչափ շուտով . եւ անմիջապէս գնաց գուռը բացաւ : Դիմացն ելան երկու հոգի՝ որոնք պատգարակով տիկին մը կը բերէին, որուն զգեստներէն կ'երեւար թէ օտարական է : Վարձակալն ալ կնոջը ետեւէն համելով՝ տիկնոջ դիմացն ելան, որն որ պատգարակէն վար իջաւ, սկսաւ կամաց կամաց հետերնին դէպ ի տուն երթալ :

Բոլոր արտաքին նշաններէն կ'երեւար որ ովելըիվ տիկիննը տկար ու հիւանդուտ է . բայց երեսը սեւ շղաշատեռով մը ծածկուած ըլլալով, չէր կրնար իմացուիլ թէ արդեօք աս տկարութիւնը հիւանդութենէ : Իրեն հետ մէկտեղ եկած էր շնորհալից պղտիկ աղջիկ մը՝ որն որ վեց եօթը տարւան կ'երեւար եւ հետաքրքրութեամբ վարձակալին տղոցը կը նայէր : Իրենց ետեւէն կը քայէր ուրիշ կին մը՝ որուն զգեստէն կ'իմա-

յուշը թէ աղախին է . երեսէն շուրջ երեսունուհինդ տարւան կը տեսնուիք , եւ գծագրութիւնը՝ վրան մեծ համարում մը չէք տար :

**Տիկինը բերդին սրահը հանելուն պէս ,**  
բազմոցի մը վրայ նստեցաւ . շատ յոդնածու այլայլած կ'երեւար :

**Աիրելի մայր , ըստ աղջիկը՝ քովբնստելով ու բազուկները մօրը վիզը նետելով ,**  
շատ հիւանդ կ'երեւար . կարծեմ պատու ,  
հանները բանալու է :

**Թռովմաս շուտ մը աղջկան բաղձանքը**  
կատարեց , որն որ նոյն միջոցին մօրն երեսէն քօզը վերցուց : Ազնէս զարմացաւ մնաց ,  
տեսնելով որ տիկինն աղնիւ կերպարանոք  
մանկամարդ մըն էք , որն որ հազիւ երեսուն տարւան կ'երեւար . իսկ երեսին վրայ  
մեծ տիրութիւն կը նշմարուիք :

**Զով օդը տիկնոջ քիչ մը կենդանութիւն տալով ,**  
թռովմասին ու իր կնոջ ըստ ծառայութեանց չնորհակալ եղաւ .  
եւ իրքեւ թէ այլայլութիւնը չցուցընելու համար՝ երեսը նորէն քօզով ծածկելով ,  
աղջկան ըստ . Հեղինէ , հիմակ աղէկ եմ ,  
երթանք տան չորս կողմը տեսնենք :

**Թռովմաս զիրենկը առառ տան ամէն դին**  
պտրացընելու ելաւ , եւ քանի մը տեղեք երթալէն ետեւ , կարծեմ աս տունը հրամանոցը քիչ մը մեծ պիտի դայ , ըստ .

**Ահծութիւնը վնաս չիտար , պատասխանեց** տիկինը , բաւական որ տանտիրոջ

ըսածին պէս՝ առանձնութեան մէջ կարենամ տպրիլ :

— Ուրեմն ամենեւին մարդու հետ տեսնուիլ չէք ուզեր :

— Չէ . միայն մօտաւոր գեղին ժողովոդապետը կ'ուզէի տեսնել :

— Թու որ կը հաճիք , հրամանոցը դալուստն իրեն իմացընեմ :

— Ծնորհակալ կ'ըլլամ :

Անոջը հետ մէկտեղ տներնին դարձած ատեն՝ թուվմաս անոր ըստ . Չեմ դիտեր տիկինն ինչ ունի . շատ տրտում կ'երեւայ :

— Ե վերայ այսր ամենայնի կը տեսնուի թէ շատ ազնիւ բնութեան տէր է : Իսկ Հեղինէ՝ ինչպէս սիրուն է , ինչպէս մօրը կը նմանի : Խեղճ աղջիկ , որչափ կը ցաւիմ որ ան պզտիկ հասակին՝ այսպիսի ամայութեան մէջ բնակելու կը ստիպուի :

Քայլ ինչպէս կրնայ ըլլալ որ առ տիկինը համարձակի բերդին մէջ առանց ծառայի բնակիլ : Դրսէն երեւցածին նայելով , կրնար քովը ուզածին չափ մարդ պահել : Ամէն բանէն կը տեսնուի որ բաւական հարուստ է :

— Գոնէ սա Աննա , Հեղինէ՝ իրենց աղախնոյն նոյն անունը կու տայ , քիչ մ'աւելի քաղաքավար ու մարդամօտ ըլլար : Լսեցիր ինչպէս պատասխան տուաերը որ ըսի թէ Չեռքէս եկած ծառայութիւնն ընելու պատրաստ եմ . զբուցեց որ Հարկաւոր եղած բաներն ես անձամբ կը

զնեմ՝ դուն ալ աղէկ կընես թէ որ յա-  
ճախ հսս չես գար, որովհետեւ տիկինն ո-  
տար մարդ չ'ուզեր տեսնել :

— Ի՞նչ պիտ' որ ընես, համբերելու է :

— Վարմունքէն անանկ կ'երեւայ որ  
Հեղինէին հետ ալ աղախնոյ պէս չիվա-  
րուիր :

— Կրիայ ըստ որ շատոնցութնէ քովեր-  
նին ըլլայ: Տան մը մէջ երկայն ժամանակ  
մնացող սպասուորաց բնութիւնն ան է :

Տէր Պեռնարտէ՝ դեղին ծերունի ժո-  
ղովրդապեար թուվմասէն լսելով որ պէլ-  
րիվ տիկինն եկած է և հետը տեսնուիլ  
կ'ուզէ, երկրորդ առառ այցելութեան ե-  
կաւ: Երբ որ ժամ մը տիկնոջ քովը կե-  
նալէն ետեւ՝ ետ կը դառնար, թուվմաս  
դիմացն ելաւ, աղաչեց որ քիչ մ'ալ իր  
տնակը հրամայէ:

Մէր նոր վարձուորին ինչ կ'ըսէք, տէ՛ր  
ժողովրդապետ, ըստ վարձակար: Կարծեմ  
թէ իրմէ առջիններէն աւելի դիւրաւ կը  
վարժի առ տիտուր բնակարանին. որովհե-  
տեւ ինքն ալ շատ տրտում կ'երեւայ:

Ուրիշներուն տրտմութիւնը պէտք է որ  
յարգենք, պատասխանեց մեծարոյ ծերու-  
նին: Ա'երեւայ որ ոչելրիվ տիկինը շատ  
վիշտ կրած է: Մէր պարտքն ան է որ նե-  
ղութիւնը ձեռքերնէս եկածին չափ թէ-  
թեւցընելու ջանակ:

— Խօելքը քիչ մը պղտորած չէ՞ մի:

— Եթէ անանկ բան մը կայ, աւելի

Եւո մեր կարեկցութեան արժանի է : Անոք  
համար կ'աղացեմ որ հետք մեծ գթով ու  
սիրով վարուիք : Աղեկ ալ կ'ընէք՝ թէ որ  
իր առանձնութիւնը շատ չէք վրդովեք :

Աւրեկն սխալած չեմ եղեք, բաւ Ագ-  
նես էրկանը, ժաղովրդապետին երթա-  
լէն ետեւ . խեզջ տիկնոջ զլուխը՝ սաս-  
տիկ արտօնութենէն բան մ'եկած պիտ'ոք  
բայց : Աս սասայդ է որ աշխարհքիս մեջ  
ամէն մարդ իր խաչն ունի, եւ շատ անդամ  
ամենէն աւելի հարուստներն ամենէն աւ-  
ելի ծանր խաչ ունին կրելու :

Կարելի է աս կերպով խօսքը երկայն ա-  
տեն յառաջ կը տանէք . բայց էրիկը խօս-  
քը կարեց, ըսելով որ վեր երթայ նայի  
թէ արդեօք տիկինը բան մը կ'ուզէ :

Ի դարձին Ագնես դարձեալ աղախնոյն  
բրտութեան վրայ տրտունջ բրաւ, ըսելով  
որ ոչ Պելրիկ տիկինն ու ոչ աղջիկը տե-  
սած էք : Կ'երեւայ թէ, աւելցուց վրան,  
Աննա կ'ուզէ որ ամէն մարդ հետն իրբեւ  
տիկնոջ մը հետ վարուի . կը պահանջէ որ  
զինքն Աննա օրիարդ կանչեմ : Կարծեմ տի-  
կինը վրան մեծ վստահութիւն ունի : Դա-  
տում ընել չըլլայ, բայց վախնամ որ ան  
թշուառականն իր վրայ եղած վստահու-  
թիւնը շատ անդամ գեշի կը դործածէ :

Անիկայ մեր բանը չէ, պատասխանեց  
թուվմաս նեղանալով մը : Թէ որ ուրիշնե-  
րուն բրածին ու ըսածին խառնուիլ ու-  
զէինք, ծայրը ճոթը չէք գար : Թորդ Ան-

նա ինչպէս կ'ուղէ՝ ըլլայ . մենք նայինք որ  
տիկինք մեր վրայ տժդոհութեան պատճառ  
մը չունենայ :

Ան օրուընէ սկսեալ՝ թուվմաս ու իր կի-  
նը, եւ քիչ մը վերջը նաեւ մօտաւոր գեղին  
ընակիչները, ալ բերդին վարձուորներուն  
միտ չելն դներ : Միայն կը ցաւէին խեղճ  
Հեղինեն վրայ, զարն որ մայրը զգուշու-  
թեամբ քովը կը պահէր եւ դուրս երելու  
թող չեր տար :

Երրեմն երբ որ կը տեսնէին թէ պղտիկ  
օրիորդը պարտիզին վանդակեայ դռնէն  
կը նայի, ամեն մարդ կ'ըսէր . Մեղքը որ  
մայրն ալ աղջկան պէս ընկերութիւնը չի-  
սիրեր : Իրօք ալ շատ կ'ուրախանար Հե-  
ղինեն՝ երբ որ կարսդ կ'ըլլար պարտիզին  
առջեւէն անցնող գեղացւոց հետ խօսիլ .  
Երրեմն ալ հեռուէն անցնեյնին տեսնելով,  
կը սկսէր կանչել եւ ինչպէս ըլլայնին կը  
հարցընէր : Ազնէս եւ իր էրիկը Հեղինէին  
առ ընտանի ու ընկերասէր ընութիւնը տես-  
նելով, քանի մը անգամ ուելրիվ տիկնոջ  
աղաւեցին որ անսր հրաման տայ երրեմն  
իրենց զաւկըներուն հետ խաղալու . բայց  
տիկինը պատասխանեց թէ Հեղինէին չի-  
կրնար բաժնուիլ : Ասոր համար աղջկան  
անունը բանտարկեալ օրիորդ դրին :

## ԳԼՈՒԽ Բ.

Կը յուսամ՝ որ բան մը չեղար, կ'ըսէք  
օր մը ազնիւ ու գեղեցիկ երիտասարդ. մը  
զշեղինէ վերցընելով, որն որ բերդին պար-  
տեղին բարձրեկեկ պատէն ինկած էր:

Ես բան չեղայ, պատասխանեց աղջի-  
կը՝ ծիծաղելու ջանք ընելով. բայց խեղճ  
թռչունս ի՞նչ եղաւ:

Ի՞նչ թռչուն, բայտ երիտասարդը. ես  
թռչուն չտեսայ:

Ահաւասիկ, ահաւասիկ, հոս է եղեք,  
կանչեց աղջիկը, պատանեւոյն ձեռքէն թեւը  
քաշելով եւ ուրախութեամբ մը թռւիս-  
կատարի ձագ մը բռնելով, որուն փետուր-  
ները գեռ կատարեալ եկած շէին եւ մօ-  
տաւոր քարակոյտի մը մէջ պահուըտելու  
ջանք կ'ընէք:

Ըատ ուրախ եմ, ըստ աղջիկը, որ  
խեղճ թռչնիկիս բան մը չէ եղած . . . .  
Բայց հիմնկ որ գտայ, կ'իմնամ՝ որ  
թեւս քիչ մը կը ցաւի: Այնպէս կը վախ-  
նայի թռչնոյն իյնալէն, որ վար չձգելու  
համար՝ ես ինկայ:

Կարծեմ շատ ցաւ կ'իմնամ, ըստ  
պատանին՝ չեղինէին կերպարանաց վրայ  
ցաւոյն նշանները տեսնելով: Բայց ինչու  
պատին վրայ ելած էիր:

— Ըատ առենէ վեր տեսած էի որ  
ծառին վրայ թռւիսկատարի բոյն մը կայ.  
առ տռառու ալ ըստ սովորութեան եկայ որ

նայիմ։ Թռչունները չվախցրնելու համար՝ ծառին ետեւը պահութած էի. բայց անոնք զիս տեսնելով՝ ամենքն ալ թռան դացին. միայն աս մէկ հատը մնաց, որն որ բոյնեն ելելուն պէս՝ վար ինկաւ։ Տեսնելով որ չիկրնար թռչիլ, ուզեցի նորէն տեղը դնել. բայց երբ որ բոյնին հասնելու վրայ էի. մէջ մ'ալ գլուխս սկսաւ դառնալ, և թռչունը ձեռքս՝ վար ինկայ։

— Յուսամ՝ որ բան մը չըլլար. արդեն այլայլութիւնդ ալ անցնելու վրայ է։

— Բան չկայ. կը տեսնես որ արիւն ալ շիգար։

— Անիկա աղէկ նշան չէ. աւելի կ'ուզէի որ թեւդ արիւնէր եւ այնչափ ուռած չըլլար։ Անոր համար շուտ մը ներս դնա եւ թեւդ կապել տուր։

Աղջիկը գլուխը շարժելով՝ Զէ, չէ, տունը բան չեմ զրուցեր, բռաւ. ապա թէ ոչ՝ մայրս շտո կ'այլայլի, Աննա ալ խիօս կը ջեխէ։ Զեմ ուզեր որ բերդին մէջ մէկն իմանայ։

— Բերդին մէջ, ուրեմն մայրդ բերդին մէջ կը բնակի։

— Հրամեր ես, շատ ատեն է որ բերդին մէջ կը բնակինք. եկած առեննիս՝ վեց տարւան էի, հիմակ ութը տարւան եմ։ Ճիշդ երկու տարի է։

— Շիտակը խօսելով՝ ես չէի ուզեր հոն բնակիլ. չէ թէ որ կը վախնամ, հապա վասն զի տիսուր բան է չարս պատի մէջ

փակուած կենալ : Բայց թէ որ ընտանիքդ շատուոր է նէ , կրնաք զրօսնուլ :

— Ո՞չ , չեմ կրնար ըսել որ զրօսանք ունենամ . մայրս միշտ հիւանդ է , եւ ժողովրդապետէն ուրիշ մարդու հետ չիտես . նուիր :

— Ուրեմն եղբայր ու քոյր չունիս :

— Եւ ոչ իսկ ընկեր ունիմ . մայրս չուզեր որ գեղին բնակիչներուն հետ տեսնուիմ :

— Ըսել է թէ առանձնութիւնը կը սիրէ . . . . Բայց թէւդ ի՞նչպէս պիտի պատես , ըստ պատանին , տեսնելով որ Հեղինէ ցաւէն երթալով գոյնը կը նետէ . թէ որ չես ուզեր ինկած ըլլալդ մէկում'իմացընել :

Ես ալ չեմ գիտեր , պատասխանեց աղջիկը մտածելով . չեմ կրնար մօրս ըսել , որն որ արդէն բաւական արտում է , առ ալ վրայ դալու ըլլայ նէ՝ աւելի կը տրամ մի : Իսկ աղախինը՝ թէ որ իմանալու բլայ , անանկ կը սրգողի , որ մէյ մ'ալ թող չիտար որ պարտեղին առ կողմը պարտելու գամ : Ինչ որ է նէ՝ Աստուած ողորմած է , թէւս ինք իրմէ կը բժշկուի :

Աս ըսելով՝ կը ջանար ծիծաղիլ . բայց կը տեսնուէր որ մեծ ցաւ կ'իմանայ : Երիտասարդը քիչ մը լուռ կենալէն ետեւ՝ Անկարելի է որ , ըստու , թէւդ ինք իրմէ բժշկուի . բայց միտքս կու գայ որ անգամ մը ես ալ ծառէ մ'ինկած ըլլալով՝ սպե-

զանիքով մը շփեցին, որն որ շուտ մը ա-  
ղեկցուց : “Այս սպեղանիքէն քովս քիչ  
մ'ալ կայ . հիմա կ'երթամ կը բերեմ :  
Տունս հազիւ քսան բռպէ հեռու է :

ԱՇ, սրտանց չնորհակալ եմ, ըստ  
Հեղինէ , որուն աշուրներն երախտագի-  
տութեան արցունքներով լեցուեցան : Քայլց  
ես հոս չեմ կրնար կենալ . կրնայ ըլլալ  
որ մայրս զիս շտեսնելով՝ զԸննա զիս փրն-  
տուելու խաւրէ : Չեմ դիտեր ինչպէս պա-  
տէն անցնիմ . աս կողմանէ աւելի բարձր  
է քան թէ ներսի կողմէն , մանաւանդ որ  
թեւիս մէկը չեմ կրնար դործածել :

— Ուրեմն պէտք է որ պատին քովեն  
մէկալ կողմն երթառ եւ դռնէն ներս  
մտնես :

— ԶԵ, չը բար . մայրս կ'իմանայ որ  
պարտեզէն ելեր եմ , եւ աս միայն բաւական  
է զինքն այլայլութեան մէջ ձգելու , թէ-  
եւ ինկած ըլլալս չիմանայ :

— Միայն մէկ միջոց կայ , այս ինքն թէ  
ևս նախ պատին վրայ ելլեմ եւ դքեզ վեր  
առնում :

— Թէ որ իյնալու ըլլան :

— Իյնալ մի , Ես պիտ'օր իյնամ : Քայլց  
թէ որ իյնալու ալ ըլլամ , նորէն կ'ելլեմ :  
Նախ թռչունք տուր նայիմ , որ բոյնք  
դնեմ :

Հեղինէ պատանւոյն տուառ թռչունք  
զորն որ միշտ ձեռքը բռնած կը փայփայէր .  
եւ շատ ուրախացաւ երբ որ տեսաւ թէ

բոյնին մէջ դրուած է : Բայց իր վեր ել-  
լէլն այնչափ գիւրաւ չշահողեցաւ : Պատր  
բաւական բարձր ըլլալով, աղջիկը չէր կրր-  
նար ձեռքը հասցընել երիտասարդին վե-  
րէն երկրնցուցած ձեռքին : Օտարականն  
աս տեսնելով՝ վար իջաւ, ասդիէն անդիէն  
քարեր ժողվեց . վրայէ վրայ դիղեց . ասով  
քիչ ատենուան մէջ աստիճան մը ձեւա-  
ցուց, որուն վրայէն Հեղինէ դիւրու-  
թեամբ պատն անցաւ :

Ծատ ուրախացաւ աղջիկը՝ Երբ որ ինք  
զինքը նորէն պարտիզին մէջ տեսաւ . աս  
ուրախութեամբ եւ ընկեր մը գտնելուն  
վրայ խնդալով՝ Երկայն ատեն սպասեց,  
մինչեւ որ պատանին խոստացած սպեղա-  
նիքը գրեթէ ժամէ մը ետքը բերաւ :

Ծնորհակալութեամբ առնելէն ետեւ,  
ի՞նչ աղէկ կ'ըլլար, ըսաւ, թէ որ մեզի  
հետ բերդին մէջ ընակէիր, զէթ քովս  
մէկը կ'ըլլար, որուն հետ կրնայի խօսիլ :  
Մայրո յաճախ հիւանդ կամ տրտում է,  
եւ չեմ կրնար քովս երթալ : Խսկ Աննա՝  
թէեւ բարի է, բայց շատ անդամ նեղա-  
ցած կ'ըլլայ եւ ջեխելէն ուրիշ բան չ'ըներ :

— Ասիկա բարութեան նշան չէ . մարդ  
պէտք է որ միշտ քովիններաւն հետ սիրով  
ու քաղցրութեամբ խօսի :

— Բայց ի՞նչ պիտ' որ ընկս, մօրս աղէկ  
կը նայի . անոր համար ալ՝ թէպէտ ինձի  
շատ անդամ կը որդողի, բայց կը ջանամ  
զինքը սիրել :

— Իսկ մայրդ, շատ կը սիրես :

— Ծամ, խիստ շատ : Ծատ վիշտ կրածէ : Հայրս ալ պղտիկութեանս ատեն մեռած է :

Բայց հիմա մեծ մը չես, պատասխանեց երիտասարդը ծիծաղելով :

— Ստոյգ է, բայց ան ատեն շատ աւելի պղտիկ էի : Հօրս մահուքնէ ետեւ՝ որշափի ճամբորդութիւն ըրբնք : Մեռած ատենը Սիկիլիա կը բնակէինք :

— Ուրեմն Սիկիլիա տեսած ես :

— Հոն ալ ծնած եմ, եւ քիչ ատեն է որ իտալիայէն ելանք ու գաղղիա անցանք : Անոր համար ալ իտալերէնք մայրենի լեզուիս պէս դիւրութեամբ կը խօսիմ : Բայց հրամանքիդ հայրն ուր կը բնակի :

— Նիմ քաղաքը : Իսկ ես քանի մը տարի է որ մօրեղբօրս տունը կը բնակիմ : որն որ Սիսդրոն քաղաքն է : Երբեմն երբեմն ալ հոս դաստիարակիս տունը կուգամ : որն որ ինչպէս զրուցեցի՝ հոսկից քսան բողէ հեռու է : Անոր համար զքեզմինչեւ հիմա տեսած չըլալուս շատ կը զարմանամ :

— Ասիկա զարմանալու բան չէ : Ես եկեղեցիէն ուրիշ տեղ դացած չունիմ : Պարտեղին աս կողմն ալ քիչ կու գամ : աւելի մէկալ կողմը կ'երթամ : որ գոնէ վանդակին ետեւէն՝ անցնողները տեսնեմ : Աւ հիմայ պէտք է որ երթամ, ըստ երիտասարդը՝ ժամացոյցը նայելով : Միշտ

աս ատեն կերակուր կ'օւտենիք, եւ այսօր  
ուշ պիտի հասնիմ։ Անաս բարով, օրիոր-  
դիկս. նայէ որ թեւդ շուտով առողջա-  
ցընես։ Առ ըսելով՝ աճապարեց դնաց։

Պատանին երթալուն պէս, Հեղինէ մէկ  
կողմը քաշուելով՝ թեւը սպեղանիքով  
շփեց. եւ քիչ մ'ատեն ալ պարտէզը  
պտրտեցաւ, մասձելով որ ինչպէս աղէկ  
կ'ըլլար՝ եթէ նոյն օտարական պատանին  
երբեմն գար հետք խաղար։ Բայց դիտնա-  
լով որ մայրը հաւանութիւն չխար, տրրա-  
մութեամբ ներս գնաց, միաբր դնելով որ  
եղածները մէկու մը չզրուցէ։

Պելիիվ տիկինը հիւանդ ըլլալով՝ կե-  
րակրոյ շկրցաւ զալ, Հեղինէ լոռւթեամբ  
եւ առանձնութեամբ անցուց բոլոր իրի-  
կունք՝ որն որ առտուընէ շատ տարրեր ե-  
ղաւ։ Ասանկ առանձնութեան մէջ մնա-  
լով՝ թեւին ցաւը խիստ սաստիկ կը զգար-  
բայց ամենեւին նշան մը չտուաւ, որպէս զի  
թէ մայրը շարտմեցընէ եւ թէ աղախնէն  
յանդիմանութիւն շտէ։ Այսպէսով ան-  
կողին մտաւ, առանց իմացընելու որ զլուխն  
ինչ եկած է։

Երկրորդ օրը Հեղինեւ առտուանց կանուխ ելաւ, եւ կամացուկ մ'անցնելով մօրն անկողնոյն քովեն, որն որ դեռ քնոյ մէջ էր, պարտէզ իջաւ : Հոն խել մը ժամանակ կենալով՝ պատին վրայէն դէպ ի ան կողմը կը նայէր, ուսկից կը յուսար թէ առջի օրը տեսած պատանին կու զայ բայց ակնկալութիւնը պարապ ելաւ : Այս պէսով տրամութեամբ ներս մտաւ եւ նախաճաշ ընելէն ետեւ, երեք ժամու չափ ըստ սովորութեան՝ մօրը քով ուսման պատաղեցաւ : Երբ որ հանգչելու ժամանակն եկաւ, դարձեալ բարեկամը տեսնելու ակնկալութեամբ պարտէզ իջաւ . բայց աս անգամ ալ յոյսը փուճ ելաւ :

Տիրութեամբ առևն դառնալու ատեն՝ միտքն ինկաւ որ կրնայ ըլլալ թէ րոյնը մնացած թռչնոյն մայրն եկած չըլլալով, խեղճ անասնիկն անօթութենեւ մեռնելու վտանդի մէջ դանուի : Աս մտածմամբ ներս դնաց, քիչ մը հաց առաւ եւ նորէն պարտէզ ելաւ : “Կախընթաց օրը պատանւոյն ըրածին պէս՝ վրայէ վրայ քանի մը քար դիզելով՝ դիւրաւ րոյնին հասաւ, եւ թռչնիկն գանուած վիճակէն իմանալով որ կառկածը ստոյգ է եղեր, սկսաւ բերած հացը տալ : Տեսնելով որ խեղճ անասնիկն առանց վախ ցուցընելու՝ ձեռքէն կուտէ, ուղեց րոյնին հետ առնուլ խուցը

տանիլ : Բայց վախնալով որ թռ չնոյն ձայնէն մայրը անհանդիստ չըլլայ , դիտաւորութիւնը մէկդի ձգեց : Լաւագոյն է որ , բայտ , եղած տեղը կենայ , քան թէ առնում տանիմ : Կ'նչ արգելք կայ , ամէն օր կու գամ կը նայիմ : Պարտեզին բաց օդն անշուշտ թռնոյն աւելի աղէկ է , քան թէ խցիս գոց օդը :

Նոյն օրը չորս անգամ՝ պարտէզ եկաւ թռնոյն նայելու համար : Ատոյգ է՝ երիտասարդը տեսնելու . յոյսն ալ զինքը քիչ մը կը յօժարեցրնէր . բայց այս յոյսը միշապարապ ելաւ : Ընօր համար երր որ իրիկունը վերջին անգամ՝ ներս մտաւ , առանձնութիւնն իրեն անտանելի եկաւ :

Գիշերն ալ ասխորհուրդներով անհանգիստ ըլլալէն ետեւ . առտուանց կանուխ դարձեալ պարտէզ իջաւ , թռնիկին կերտուաւ . բայց ոչ նոյն ատեն եւ ոչ կէսօրը պատանին եկաւ : Աւ Հեղինէ զինքը տեսնելէն յուսահատած էր , մէյ մ'ալ իրիկուան դէմ դարձեալ թռնոյն կերտալու զբաղած ատեն՝ մեծ ուրախութէամբ տեսաւ անդիէն երիտասարդին գալը :

Հատ ուրախ եմ , բայտ իրեն պատանին , որ աս խեղճ թռնիկը հոգալու չես մտոցեր . թէ որ դուն ալ ինծի պէս անհոգ ըլլայիր . անշուշտ մինչեւ հիմայ մեռած կ'ըլլար : Միտքուչը եկած որ բաւական զօրութիւն չունի իր կերն ինք իրմէնարելու : Հազիւ կէս ժամ է որ միտքս

ինկաւ . մեկէն քիչ մը հաց առի ու աճապարելով եկայ : Անմտադրութեամբ ասդիրքն ալ հետո եմ բերեր :

Ի՞նչ զիրք է , հարցուց Հեղինէ :

— Ճակատն է Կրօնին գեղեցկութիւնները : Ծատ աղէկ զիրք մըն է , եթէ չես կարդացեր , սիրով կու տամ քեզի :

— Ծատ շնորհակալ եմ : Մայրս եւ ժողովրդապետն ամէն շարաթ ինծի կրօնական հրահանդ կու տան . տունն ալ նոյն նիւթին վրայ շատ գրքեր ունիմ . բայց ասալ հաճութեամբ կը կարդամ :

— Կը յուսամ որ կը հաւնիս ու կը զուարձանաս , որովհետեւ մեջը խիստ շատ օրինակներ ու պատմութիւններ կան : Միանդամայն , ըստ պատանին տրտմութեամբ , քովդ իմ յիշատակս կը մնայ , որովհետեւ երէկ մօրեղբօրմէս թուղթ ընդունեցայ . որն որ կ'ուզէ որ անմիջապէս Սիոդրոն երթամ : Ուստի վազը ճամբայ կ'ելլեմ :

Հեղինէ աս խօսքերը լսեյով՝ սկսալ : Ստոյդ է պատանին մինակ երկու անգամ տեսած էր : բայց որովհետեւ պղտիկութենէն ամենեւին ընկեր ունեցած չէր , եւ միանդամայն երիտասարդն իրեն այնշափ ուէր կը ցուցընէր , անոր համար ինքն ալ զանիկա չէ թէ մայն իրրեւ ընկեր , հապա իրրեւ եղբայր կը սիրէր :

\*Նոյնագէս պատանին ալ մեծ ցաւ կ'իմանար . խխատ բարեսիրտ ըլլալով , մեծ գութ ունեցած էր Հեղինէին վրայ , որն

որ մօրը տիտուր ու հիւանդուս ըլլա-  
լուն համար՝ ստիպուած էր օրերն ա-  
ռանձնութեան մէջ անցընելու : Աւստի  
այնպէս այլայլած էր՝ իրբեւ թէ սիրելի  
քրոջմէ մը կը բաժնուի : Սակայն եւ այն-  
պէս խեղճ աղջիկն աւելի չտրտմեցընելու  
համար, այլայլութիւնը շէր ուզեր յայ-  
տնել, եւ կը ջանար զինքը մխիթարել,  
ըսելով թէ կրնայ ըլլալ որ օր մը նորեն  
տեսնուին : Եւ սրովհետեւ, ըստու, մայրու  
հիւանդուս է, եթէ՝ Աստուած շընէ՝ օր մը  
պաշտպանի պէսք ունենալու ըլլաս, ան-  
շուշտ իմ հայրս քեզի ձեռք կը բռնէ :  
Խոկ հիմակ ինք զինքդ Աստուծոյ եւ սուրբ  
Աստուածածնայ յանձնէ, որ զքեզ պաշտ-  
պանեն : Առ առթով իրեն իմացուց որ  
անունն է Կարոլոս Աէն-Ռումէն :

Քիչ մ'ալ այս կերպով խօսելէն ետեւ՝  
իրարմէ բաժնուեցան : Պատանին աղջկան  
ձեռքը թօֆուելով՝ պատին վրայ ելաւ եւ  
անկից իջաւ գնաց . խոկ Հեղինէ պատին  
վրայէն անոր ետեւէն կը նայէր՝ մինչեւ որ  
ժայռերուն մէկալ դին աներեւոյթ եղաւ :  
Երբ որ ալ բան մը չտեսնելու սկսաւ, վար  
իջաւ ու շատ ատեն պարտէզը պտրտեցաւ,  
որպէս զի աչուրները չորնան եւ լացած րւ-  
բալը չյայտնուի : Բայց միշտ արցունքները  
կը վազէին : Աերջապէս տեսնելով որ իրի-  
կուան մութը կը կտինէ, պատանեւոյն յի-  
շատակը մոքէն հանելու ջանք ընելով՝ ներս  
մտաւ մօրը քովը գնաց :

ՊԵԼՐԻՎ տիկինն անմիջապէս ազջկան այլայլութիւնը նշմարելով՝ հարցուց որ անհանգիստ է :

Չէ, մայր, պատասխանեց Հեղինէ շփոթելով մը :

— Ուրեմն ինչու այլայլած ես : Աչուրներէդ այնպէս կը տեսնուի որ լացած ես :

Հեղինէ քիչ մը ատեն առանց պատաժան տալու կեցաւ : Արդէն մօրմէն ծածուկ կարոլսոին հետ տեսնուելուն վրայ խիզճը կը զարնէր . նոյն առեն առ խղճի խոյթն առելի սաստկացաւ : Մէկ կողմանէ կ'ուզէր ամէն բան պատմել . մէկալ կողմանէ ալ կը վախնար որ մայրը շվշտանայ եւ առելի եւս չտրտմի : Բայց վերջապէս պարտքը կատարելու բաղձանքն՝ ուրիշ ամէն նկատմանց յաղթելով՝ ուզեց զրուցել :

Կը բաղձայի, ըստ կամաց ձայնով եւ առելի այլայլելով, կ'ուզէի հրամանոցը բան մը զրուցել :

Ինձի բան մը զրուցել, հարցուց մայրն այլայլութեամբ : Ի՞նչ է նայիմ ըսելիքդ :

Երեւելի բան մը չէ, պատասխանեց Հեղինէ՝ որն որ մօրն այլայլութիւնը տեսնելով՝ խիստ վախի մէջ ինկաւ . կ'ուզէի պատմել . . . :

— Պատմելիքդ շատ հարկաւոր ու ստիպողական բան է :

— Չէ, այնչափ ստիպողական չէ, միայն առ պիտի . . . :

Ինք չլմբնցուցած՝ մայրը խօսքը կտրեց :

բոելով որ Եթէ ստիպողական բան մը չէ, վայն ալ կրնաս պատմել։ Հիմակ աղօթքդ բրէ ու պառկէ։

Հեղինէ պառկելէն ետեւ՝ տիկինն Անսային հարցուց որ արդեօք դիտէ թէ աղջիկն ինչ ունի։

Աղէկ մը չեմ դիտեր, պատասխանեց աղախինը։ Բայց անտարակոյս թաշնոյ ձագի մը վրայ պիտ' որ խօսէր, զարն որ երկու օր յառաջ պարտեզը դտեր է, եւ որուն երէկ եւ այսօր կեր կու ասյ։

Խեղճ աղջիկ, բառ մայրը, Մեղմէ ուրիշ մարդ մը չունենալով, պէտք է որ զուարձութիւն մը վնտուէ։ Անոր համար թող տալու է որ բերդին մէջ աղատութեամբ պտղախ, որովհետեւ դուրս չիկրնար ելլել։ Հսս վտանգի մը չիկրնար հանգիպիլ, եւ զոնէ բաց օդին մէջ առողջ ու զօրաւոր կը լլայ։

Երբ որ այսադէս մէկ կողմանէ ովելլիս տիկինը կը ջանար ինք զինքը մսիթարել իր աղջիկն այնպէս բոլոր ընկերութենէ հեռու, փակուած պահելու ստիպուելուն համար, մէկալ կողմանէ Հեղինէ՝ թէպէտ եւ յոդնած էր, բայց չէր կրնար աչուրները դոցել։ Կը ցաւէր որ ինչո՞ւ առաջին օրը՝ իյնայն ու կարուսոին հետ տեսնուիլը մօրը չպատմեց։ Եւ չէր կրնար ինչ ընելիքն որոշել։ Վերջապէս շատ մտածելէն ետեւ՝ միտքը դրաւ որ բոլորսին լռէ։ Կրնայ ըլլալ որ, բառ, ըրածս գէլ ըլլայ։

բայց որովհետեւ աս առիթը մէյ մ'ալ  
շիզատահիք, անոր համար ալ եղածը  
պատմելով՝ զինքը վշտացընելու անօգուտ է:  
Գուշէ ալ պարտէզ երթալու հրաման  
շիտար: Թաէ որ կարողու նորէն դալու ըլ-  
լայ, ամէն բան կը յայտնէմ, եւ կարելի  
է ան ատեն մայրու աւելի դիւրութեամբ  
հրաման կու տայ հետը տեսնուելուո՛քան  
թէ հիմայ:

Ասանկ եւ ատնց նման մտածմունքնե-  
րով Հեղինէ ջանաց ինք զինքը հանդար-  
տեցընել, եւ պարտին դէմ ընելուն հա-  
մար ինք զինքն արդարացընել: Ստոյգ է  
երկրորդ օրն աւելի հասուն խորհրդով  
մտածելով ու սխալմունքը ճանչնալով,  
միտքը փոխեց, եւ կ'ուզէր ամենայն ինչ  
ծանուցանել, բայց տեսնելով թէ մայ-  
քը հասարակօրէն եղածէն աւելի տրտում  
ու անհանդիստ է, դարձեալ ուրիշ ատե-  
նուան ձգեց:

## ԳԼՈՒԽԻ Գ.

Անցած գլուխներուն մէջ պատմուած  
դէպքերէն ետեւ քանի մը տարի անցած  
էր. բայց Հեղինէին ու իր մօրը վիճակին  
մէջ ամեննեւին տարրերութիւն չէր եղած։  
Միայն քանի որ աղջիկը տարիքը կ'առնէր,  
զտնուած վիճակն իրեն աւելի անհանդըս-  
տութիւն ու նեղութիւն կը պատճառէր։  
Մօրն արտաքոյ կարգի վարժունքը՝ իսկզբան  
միայն իր տղայական հետաքրքրութիւնը կը  
շարժէր. բայց երթալով զանազան կար-  
ծիքներու եւ վախերու ճամբայ բացաւ ի-  
րեն։ Ամենէն աւելի զինքն անհանդիստ ը-  
նտղն ան էր որ Պելլիսլ տիկինը քանի կ'եր-  
թար՝ կը տկարանար, եւ հիւանդութեան  
սաստկանարուն աստիճանար՝ տրտմու-  
թիւնն ալ կը մեծնար։

Պարտպ տեղ խեղճ աղջիկը որդիական  
սաստիկ սիրոյ ճարտարաբանութեամբը մօ-  
րը կ'աղաւէր որ բժիշկ մը բերել տայ.  
տիկինը միայն արցունքով պատասխան կու-  
տար եւ աղջիկը կ'ապահովցընէր որ հիւ-  
անդ չէ։ Բայց ամեն արտաքին նշանները  
յայտնի կը ցուցընէին որ կրծոց հիւան-  
դութենէ բռնուած է։

Հեղինէ չէր զիտեր ոչ հօրը մեռնելուն  
կերպը, ոչ ալ մօրն այնպիսի տիսուր ու  
ամայի տեղ մը բնակելուն պատճառը։ Ա-  
մեննեւին չէր յիշեր որ երբէք աղջական  
կամ ծանօթ մը տեսած բլայ, միանդա-

մայն իրեն տարակոյս կու դար որ զելլիվ  
յորջորջումը՝ բուն իր ընտանեաց անունը  
շըլայ: Բրովանսի մշջ հաստատուելէն յա-  
ռաջ՝ երբեք տեղ մը վեց ամսէ աւելի կե-  
ցած չէին. եւ ետեւէ ետեւ բնակած քա-  
ղաքներնուն վրայ միայն շփոթ յիշատակ  
մ'ունէր: Մայրը չէ թէ միայն իր ամսւ-  
սնոյն եւ Հեղինեին պղտիկութեան վրայ  
խօսք չէր ըներ, հապա աղջիկը նոյն նիւ-  
թերուն վրայ հարցում մ'ընելուն պէս՝  
անանկ կ'սցլացլէր ու կը տիրեր, որ Հեղի-  
նէ կը ստիպուէր խօսքը շուտ մը փոխել:

Ակնաղբեր բերդը գալէն Ետեւ՝ տիկինն  
ամէն տարի երկու անդամ կը ձգէր առ-  
անձին կ'երթար, եւ քանի մը օր վերջը  
ետ կը դառնար: Երբեք իր աս ճամբոր-  
դութեանց պատճառը չէր զրուցեր, եւ  
Հեղինե ինչ որ կ'ընէր՝ չէր կրնար իմանալ  
թէ մայրն ուր կ'երթայ: Ճամքայ ելլելուն  
նախընթայ օրը Աննա կ'երթար կառք մը  
կը բռնէր. բայց որովհետեւ տիկինն եր-  
բեք երկու անդամ վրայէ վրայ մի եւ նոյն  
քաղաքը չէր երթար, եւ մեծապէս կը զգու-  
շանար որ կառապանը չտեսնէ իր որ տու-  
նը մտնելը, անոր համար աս ճամբորդու-  
թեանց վախճանը միշտ ամենուն ծածուկ  
կը մնար: Վարձական աս միայն կրնար կա-  
ռապանէն իմանալ որ տիկինն այս ինչ  
քաղաքին դռւոր կառքէն ելեր է:

Գեղացիները տեսնելով որ ժողովրդա-  
պէտէն ուրիշ մարդ մը զելլիվ տիկինոց

այցելութեան չիդար, զինքը մարդատեաց  
մէկու մը տեղ կը դնէին, ոմանք ալ կը  
կարծէին որ կէս խենթ է : Աննային վրայ  
ալ առելի ազէկ համարում ունեցող չկար .  
որովհետեւ իր թուխ կերպարանքը, բիրո  
վարմունքը զամնքը կը հեռացընէին եւ  
մէկը չէր համարձակեր կամ չէր ուզեր  
հետը խօսիլ : Ամէնքը միայն զշեղինէ կը  
սիրէին, զարն որ միշտ բանտարկեալ աղ-  
ջիկ կ'անուանէին, եւ բոլորք վրան կը գթայ-  
ին : Իր շնորհալից կերպարանքն ու քաղա-  
քալար վարմունքը եւ ամէն բանէն առելի  
եկեղեցւոյ մէջ ցաւցուցած եռանդն ու  
պարկեշտութիւնը՝ գեղին բոլոր բնակիչնե-  
րուն խօսակցութեան նիւթ եղած էին . ա-  
մէնքը կը ցաւէին որ ասանկ սիրուն աղջիկ  
մը օրերն այնպէս ամայի տեղ մը առան-  
ձնութեան մէջ կ'անցընէ :

Մայրն իր հիւանդատութեան պատճա-  
ռաւ չկրնալով աղջկանը կրթութեան բառ  
պատշաճի միտ դնել, դուցէ չեղինէ իր  
բոլոր աշխոյժն եւ ուաման եռանդը կը կոր-  
որնցընէր եւ արտամութեան տակ կ'ընկճէր,  
թէ որ պատուական ժողովրդապետն իր  
սիրալիր ու եռանդուն խօսքերովը զանիկայ  
չյորդօրէր ու չիրատէր : Աս խօսքերով՝  
փոյթն ու եռանդը միշտ վառ պահուելով,  
յարդոյ ծերունոյն բերած եւ մօրը մա-  
տենադարանին մէջ դտնուած դրբերը կը  
կարդար, անսնցմով միտքը կը զարդարէր  
ու սիրար կ'առղջէր :

Վնիսային վէս ու ցատկոտ բնութիւնը խեղճ աղջկան մեծ վիշտ կը պատճառէր . բայց միտքը դրած էր որ երբեք մօրը չքանքատի . որովհետեւ կը վախնար որ անով տրտմութիւնն աւելի չսաստկանայ : Աւկայն երբեմն աղախնոյն յանդգնութիւնն ան աստիճանի կը հասնէր , որ ալ թշուառ չեղինէին համբերութիւնը կը հասնէր : Միայն թէ ժողովրդապետին մէկ խրատը բաւական կ'ըլլար զինքը հանդարտեցընելու և առաջադրութեան մէջ հաստատուն կեցընելու :

Աս կերպով չեղինէ տասնուչորս տարան հասաւ : Նոյն ատեն տիկնոջ առողջութիւնն այնպէս տկարացաւ , որ ալ չէր կրնար իր սովորական ճամբարդութիւնն ընել : Աս բանիս վրայ սաստիկ այլայլաւթեան ու շփոթութեան մէջ ինկաւ : Սովորական ատենը քանի մը օր անցնելէն ետեւ՝ ուզեց բացարձակապէս երթալ , եւ ան ժամանակ խորհուրդը թող տուաւ , երբ որ ճամբայ ելլելու համար սանդզէն վար իջնալու միջոցին՝ տկարութենէն մարեցաւ ինկաւ :

Սիրելի մայր , ըստ չեղինէ՝ երբ որ մայրն ինք իրեն եկաւ , հրաման տուէր որ ձեր տեղն ես երթամ : Զրուցեցէք ուր Երթալու եւ ինչ ընելու եմ . կը յուսամ որ գործքերնիդ ըստ պատշաճի կը կատարեմ :

Տեկինն աս խօսքին վրայ խիստ՝ այլայ-

Աելով եւ արտաքոյ կարդի տրտմաւթեամբ  
Հեղինէին երեսը նայելով, Զէ, չըլլար,  
գուշց - աշխարհք մէկդի գայ, թող չեմ  
տար որ երթաս : Աս ըսելով՝ աղջիկը սաս-  
տիկ զօրութեամբ բազկացը մէջ կը պնդէր՝  
իբրեւ թէ վախնալով որ ձեռքէն չյափրշ-  
տակեն :

Քիչ մը ետքը վերջին աստիճանի այլ-  
այլաւթեամբ կանչեց . Ուրեմն հարկ է . . . :  
Աստուած իմ, ամէն բան քու ձեռքդ կը  
յանձնեմ : Խել մը ժամանակ լուս կեցաւ  
ու խորունկ մտածմանց մէջ ընկղմած մնայ .  
վերջը սար ելլելով, Աննային նշան ըրաւ  
որ քովի խուցը գայ : Հօն կէս ժամու չափ  
առանձին մնալէն ետեւ՝ գուրս եկան, եւ  
Աննա ճամբօրդութեան պատրաստութիւն  
տեսաւ ու ելաւ դնաց :

Ազախինն երթալէն ետքը, Հեղինէ՝  
որն որ մօրը հիւանդութեան սաստկանաւ-  
լուն վրայ սաստիկ տրտմած եւ իր վրայ  
վատահութիւն չունենալուն վրայ վշտացած  
էր, գիրք մ'առաւ, սրահին մէջ միայնուկ  
նստեցաւ, որովհետեւ մայրն իրեն աղաշած  
էր որ մինչեւ կերակրոյն ատենը քովը  
չերթաց :

Կէսօրը սեղանը պատրաստեց եւ դնաց  
մօրը դուռը զարկաւ : Տիկինը ներսէն ձայն  
որ չառւաւ, Հեղինէ վախնալով որ մօրը  
վրայ նարէն մարելիք եկած շրջայ, երկրորդ  
անդամ դուռը զարկաւ . մանաւանդ թէ  
կը փարձէր որ դուռը կտարելով ներս մտնէ :

**Մէջ** մ' ալ մայրը ներսէն տկար ձայնիւ,  
բայց յանդիմանական կերպով մը զրուցեց  
որ կերակրոյ չիդար :

**Կ'աղաչեմ,** սիրելի՝ մայր, գէթ քիչ մը  
բան բերեմ, բառ աղջիկը :

**Չէ,** պատասխանեց մայրը՝ անհամբերու-  
թեամբ. զիս մի նեղեր, բան մը չեմ ուղեր  
ուտել :

**Ասիկայ** առաջին անգամն էր որ պել-  
րիվ տիկինն աղջիան հետ խստութեամբ  
կը խօսէր : Խեղճ օրիորդին սիրան ասոր  
վայ այնչափ կոտրեցաւ, որ սկսաւ աշուր-  
ներէն յորդ արցունք թափել, եւ ինքն ալ  
տրտմութենէն ախորժ ակը բոլորովին կոր-  
ունցընելով՝ պարտէղ իջաւ սկսաւ պտր-  
տիլ :

**Օդըցուրտ էր,** հովսանտառին մշջ տխուր  
խօշիւն մը կը հանէր եւ պարտեղին ծառե-  
րուն դեղնած տերեւներն ասդին անդին կը  
շրջըցէր : Քիչ մը պտրտելէն ետեւ յոզ-  
նելով, աթոռի մը վրայ նստեցաւ եւ բար-  
ձրածայն կռւ լար :

**Ազնէս՝** որ մօտ տեղերը թափած տե-  
րեւները ժողվելու զրաղած էր, Հեղինէին  
լալու ձայնը լսելով՝ քովը վազեց : Աս ի՞նչ  
է, օրիորդ, ինչո՞ւ կռւ լար, հարցուց բա-  
րեսիրտ կինը :

**Մայրս** սաստիկ հիւանդ է, պատա-  
խանեց Հեղինէ՝ պարապ տեղ արցունքները  
բռնելու ջանալով :

— **Միմիթարուեցէր,** սիրելի՝ աղջիկո,

անշտացու մայրերնիդ քիչ մը ետքը կ'առողջանայ :

— Կը վախնամ՝ որ չէ : Առվորական ճամբորդութիւնը շկրցաւ ընել . իր տեղը զԱննա խրկեց : Առտուրնէ վեր զինքը չտեսայ . չուզեր որ քովին երթամ :

— Խեղճ օրիորդ . ալ չեմ զարմանար որ այսչափ տրտում ըլլաք : Բայց քաջալերուեցէք . յոյսերնիդ Անոր վրայ դրէք՝ որն որ մեռելոց իսկ յարութիւն կրնայ տալ : Աղօթք բրէք որ Աստուած ձեզի օգնութեան հանի :

Երբ որ Հեղինէ վեր ելաւ ու որահը մոռաւ , մայրն ալ հոն եկաւ : Երեսը սովորականնէն աւելի դունաստ էր եւ կ'երեւար որ վրան ամենեւին գորութիւն չունի :

Սիրելի՝ մայր , կանչեց Հեղինէ՝ մօրը վրայ վաղելով եւ ձեռուըները պադնելով , թողութիւն տուէք որ քիչ մը յառաջ զձեզ նեղացուցի :

Խեղճ զաւակս , պատասխաննեց մայր՝ զաղջիկը դրկելով . դուն ինծի թողութիւն պիտի տաս՝ որ հետդ անանկ խստութեամբ խօսեցայ եւ թող չտուի որ քովս զաս : Բայց դուռաս զարկած ատենդ՝ խիստ ծանրակշիռ դործքի մը զբազած էի :

Հոս քիչ մը կանկ առաւ . շատ այլայլեցաւ , եւ քանի մը բռպէ խորունկ մոռածմանց մէջ մնալէն ետեւ՝ Հեղինէին ձեռքը բռնելով , հետեւեալ խօսքերը զրուցեց . խօսակցութիւնը շատ անդամ միջահատելով :

Աիրելի՛ աղջիկս, անշուշտ քեզի շատ  
ծանր կու գայ որ զքեղ այսպէս առան-  
ձնութեան մէջ կը պահեմ . . . ամենեւին  
ընկեր կամ զուարձութիւն մը չունիս . . .  
Բայց Հեղինես, մօրդ գէմ մի տրանջեր . . .  
Ո՛չ, որչափ վշտեր կրեցի . . . Քիչ մը ետքը  
ամէն բան կ'իմանաս . . . Տասն'ութը տո-  
րան եղած ատենդ, եթէ ես կենդանի մնա-  
լու ըլլամ, ամենայն ինչ կը զրուցեմ . . .  
Եսկ եթէ մեռնելու ըլլամ, Աստուած  
կայ . . . Բայց իմ մեռնելով՝ առանձին  
չես մնար . . . Անսա քիչ մը անհամբեր  
է, բայց աղէկ սիրտ ունի եւ զքեզ կը սի-  
րէ . . . Ըստ տարիներէ վեր ես ալ գրեթէ  
իրմէ ուրիշ բարեկամ ունեցած չեմ . . .  
ինձի մեծ ծառայութիւններ ըրած է . . .  
եւ բոլոր գաղտնիքներս դիտէ . . . Դուն  
ալ ինձի համար զինքը սիրէ. եւ ներէ ին-  
ձի եթէ երբեմն հետդ բառական անու-  
շութեամբ շվարուեցայ :

Հեղինէ աս խօսքերուն չկրցաւ ամենեւին  
պատասխան տալ, այնչափ վրան ազգեցու-  
թիւն ըրած էր խօսքին ան մասը՝ որ ինք  
տասն'ութը տարւան չեղած՝ մայրը կրո-  
նայ մեռնիլ: Տիկինը ջանաց խօսքն ուրիշ  
բանի դարձրնել. բայց բուելու բան չկրնա-  
լով գտնել, դարձեալ իր սովորական խո-  
րունկ մոռածութեանց մէջ թաղուեցաւ:

Երկրորդ առառւ Թելքիվ տիկինն ա-  
նանկ դէշ էր, որ ստիպուեցաւ անկողնոյն  
մէջ նախաճաշ ընել: Իրիկուան դէմ Ան-  
նա ճամբարդութենէն դարձաւ, եւ տիկինը  
զշեղինէ դուրս հանելով՝ ժամէ մ'առելի  
ազախնոյն հետ առանձին մնաց: Աղջիկը՝  
որ իր դուրս հանուելուն վրայ զարմացած  
ու վշտացած էր, ներս մնած ատեն՝ ար-  
տաքոյ կարդի վախցաւ մօրն այլայլութիւնը  
տեսնելով: Տիկնոջ երեսին վրայ՝ սովորա-  
կան նուազութեան տեղ՝ զայրացում՝ ու  
սարսափ նկարուած էր: Նոյն այլայլու-  
թիւնը բոլոր իրիկունն ալ տեւեց, անոր  
համար ուղեց որ Աննա զիշերը քովը մնաց:  
Երեք օր Թելքիվ տիկինը գրեթէ մի եւ  
նոյն վիճակին մէջ մնաց, եւ նոյն երեք օրերը  
Հեղինելին համար վերջին աստիճանի անձ-  
կութեան օրեր եղան: Բոլոր իր մնած-  
մունքը կը դրաւէր աս վախը՝ որ կարելի է  
թէ մայրը կը մնանի:

Չորրորդ օրը տիկինն անկողնէն ելաւ:  
Քիչ մը բան ուտելէն ետեւ՝ ուղեց ա-  
ռանձին մնալ: Աղջիկինը նոյն ժամանակ  
գնաց հանգչեցաւ. իսկ Հեղինէ՝ թէպէտ  
բոլոր զիշեր մօրը քովը սպասած էր, բայց  
ցաւէն ու արտամութենէն չկրնալով տեղ  
մը հանգիստ կենալ կամ քնանալ, ուղեց  
սպարտէզ իջնալ, որ օդ առնու: Ժամ մը  
ևտքը վեր ելելով՝ երբ որ մօրը քովը գնաց.

տիկինն իրեն այնշափ տկար երեւցաւ, որ  
զԱննա կանչեց եւ երկուքը մէկ ըլլալով՝  
նորէն անկողին դրին։ Նոյն գիշերն ալ  
Հեղինէ մօրը քովն անցուց։

Առառուան դէմ տիկինն ինք զինքը քիչ  
մը աղէկ իմանալով՝ աղջկանը շնորհակալ  
եղաւ զիշերը քովն արթուն կենալուն հա-  
մար, եւ յայտնեց որ ժողովրդապետին հետ  
տեսնուիլ կ'ուզէ։

Հեղինէ զաղախինն արթընցուց, մօրը  
բաղձանքն իմացուց, եւ զրուցեց որ եր-  
թայ շուտ մը ժողովրդապետը կանչէ։ Քայց  
զարմացմամբ տեսաւ որ Աննա ամենեւին  
շարժում մը չ'ըներ երթալու։ Եւ քիչ  
մը եսքը երկուքն առանձին դտնուած  
ժամանակնին՝ նորէն յիշեցուց։ Ասդին ան-  
դին վազելու ատեն չունիմ, օրիորդ, պա-  
տասխանեց Աննա բարձրամտութեամբ։ Եւ  
երբ որ աղջիկը կ'ուզէր ստիպել որ երթայ,  
առելի եւս յանդղնութեամբ զրուցեց որ  
Չեզի շիվերարերիր։

Ի՞նչ, ինձի շիվերարերիր, դոչեց Հե-  
ղինէ զայրացմամբ։ Ի՞նչպէս կրնաս յան-  
դղնիլ ասանկ խօսք մ'ըսելու։ Երբ որ մօրս  
կողմանէ քեզի կը հրամայեմ։

Տիկինն ինք իրեն տէր չէ, խելքը վրան  
չէ, պատասխանեց Աննա՝ քիչ մ'աւելի  
բաղցրութեամբ։ Անկից ալ զատ՝ քահա-  
նան ինչ պիտ'որ ընէ։ ամէն ամիս խոստո-  
վանանք չ'ըլլար։

— Մայրօ հիւանդէ, բայց խելքը վրան

է : Եւ թեպէտ խոստովանքը բլարու հարկ չունենայ , բաւական է որ կ'ուզէ ժողովրդապետին հետ տեսնուիլ . պէտք է որ իր կամացը հնազանդինք :

Հեղինէ աս խօսքերն ըսելէն ետեւ՝ թողուց մօրը քովը գնաց , սրն որ զինքն առանձին տեսնելուն՝ քիչ մը նեղացաւ :

Արբելի մայր , ժողովրդապետը կ'ուզէք . սցնապէս չէ , հարցուց Հեղինէ

Մայրը ժպտելով մը գլխովը նշան ըրաւ թէ այնպէս է : Անմիջապէս աղջիկը դուրս ելու եւ Աննայէն դրան բալլիքն ուզեց :

Այսափ աճապարենուդ պատճառն ի՞նչ է , պատասխանեց աղախինը . ժամանակին որ գայ՝ ես կ'երթամ : Գիտէք որ տիկինը չուզեր որ առանձին դուրս ելլէք :

Հեղինէ առանց պատասխան տալու՝ վար իջաւ եւ դրան վանդակին քովը գնաց . որ մարդ մ'անցած ատեն՝ մօրը կամքը կատարել տայ : Քիչ մը ետքը վարձակալը տեսնելով , ազաշեց որ երթայ ժողովրդապետը բերէ : Անմիջապէս ալ վեր ելաւ , մօրը քովը գնաց եւ ըսաւ որ զթուվմաս ժողովրդապետը կանչելու խաւըեց :

Տիկինը՝ որն որ ալ չէր խօսեր , նշան ըրաւ թէ բամբը հասկրցաւ , եւ զինքը զըրելէն ետեւ՝ ամուսնոյն կենդանադիրը վզէն հանեց , աղջկան վիզն անցուց : Հեղինէ լութեամբ աս մեծաղին պարզեւն ընդունեցաւ . բայց անմիջապէս սկսաւ լոլ՝ մոտածելով որ անշուշտ մայրը շուտով մեռնե-

լիքը գուշակելով, իրեն այնչափ սիրելի եղաղ  
բանէն կը բաժնուի :

Այսպէս լացած ատեն՝ Տէր պէտնարուն,  
ներս մտաւ, որուն վրայ հիւանդը խիստ  
ուրախացաւ : Աղջիկն առ ուրախութիւնը  
տեսնելով, որտին մէջ սկսաւ յուսալ թէ  
տակաւին կրնայ առողջանալ : Գուրս ելեւ-  
լու ատեն՝ Աննային հանդիպեցաւ, որն որ  
բարկութեամբ հարցուց թէ ինչո՞ւ պյսպէս  
աճապարեց ժողովրդապետը կանչել առւաւ :  
Խօսքը լմբնցուց ըսելով որ Քայլց ըրած-  
նիդ պարապ է, օգուտ մը չունի :

Ինչու, ինչ ըսել կ'ուղես, հարցուց  
Հեղինէ՝ աղախնոյն յանդզնական կերպին  
վրայ զարմանալով :

— Շատ չ'անցնիր՝ կ'իմանաք :

Աս խօսքը խեղճ օրիորդին վրայ անանկ  
աղջեցութիւն ըստ, որ կեցած տեղը եր-  
կայն ժամանակ քար դարձածի պէս ան-  
շարժ մնաց, մինչեւ որ ժողովրդապետը գուրս  
ելելով, զինքը նոյն վիճակէն հանեց :

Սիրելի՝ աղջիկս, ըստ քաղցրութեամբ  
յարդելի ծերունին, պէտք է որ արիանաս  
եւ Աստուծոյ կամաց հետ միարանիս : Չենք  
զիտեր որ արդեօք տակաւին կրնանք յոյս  
ունենալ, թէ չէ . բայց ան դիտենք որ աս  
աշխարհքիս մէջ ամէն պատահած բաները՝  
միշտ մեր օգտին համար են : Աստուծոյ  
առջեւը պէտք է որ խօնարհներ եւ իր ո-  
զորմութեան վստահութիւն ունենանք : Աս  
ըսելով՝ խաչելութեան մ'առջեւը ծունդ

իջաւ, սկսաւ աղօթքը ընել. Հեղինէ ալ քովք գետինն ինկած՝ արցունիք թափելով, մօրն առողջանալը խնդրեց Աստուծմէ:

Քիչ մը այսպէս աղօթքը ընելէն ետեւ. քահանան ոտք ելաւ, եւ ձեռուրները Հեղինէին վրայ տարածելով՝ զինքն օրհնեց:

Աւրեմն ալ յոյժ չկայ, հարցուց խեղջ աղջիկը հեծեծանօք:

— Պէտք չէ որ երրեք յուսահատինք. հապա աղօթքը ընելու ենք: Մայրդ խոստովանանք եղաւ, բայց մնձ գժուարութեամբ հազիւ կրցաւ լմբնցընել, եւ ետքը լեզուն կորսընցուց: Քովք դնա. հիմայ կ'երթամ վերջին օծում կը բերեմ:

Հեղինէ հնազանդելով՝ ներս մնաւ, Եւ տեսնելով որ հիւանդը մրափելու պէս աշուրները զոյցեր է, զինքը չարթընցընելու համար՝ կամացուկ մը գլխուն վերեւը նստեցաւ: Քառորդ մը ետքը տիկինն արթընցաւ, անհանդարտութեամբ սկսաւ չորս կողմը նայիլ: Աղջիկը կարծելով որ դԱննա կ'ուզէ, ոտք ելաւ որ կանչէ. բայց մայրը՝ անձկութեամբ մ'երեսը նայելով եւ մատը բերնին վրայ դնելով, թող չտուաւ: Բարձին տակէն բալլիք մը հանեց, իրեն տուաւ. եւ սենեկին մէկ կողմը կեցող դարան մը ցուցընելով՝ նշան ըրաւ որ բանայ:

Աղջիկը դարանը բանալէն ետեւ, մօրն երեսը նայեցաւ, իմանալու համար որ ինչ կ'ուզէ: Տիկինը թաշկինակը չորս ծալեց եւ նորէն դարանը ցուցընելով՝ մնտուելու

ձեւ մ'ըրաւ : Հեղինէ իմացաւ որ դարսնին  
մէջ պահուած ծրարիկ մը պիտ'որ ըլրայ .  
եւ քիչ մը ասդին անդին նայելէն ետեւ՝  
կանաչ թղթով ուստած ու կնքուած  
ծրարիկ մը գտնելով՝ մօրը ըերաւ :

Մայրը հարցական կերպով մը երեսը  
նայելով՝ մատուքներուն վրայ տասնուշորս  
համբեց . իրեւ թէ հարցընելու համար որ  
ինք նոյնչափ տարւան չէ . Եսոք դարձեալ  
նոյն կերպով մատուքներուն վրայ տասն՝  
ու թը համբեց եւ ծրարկին կնիքը բանալու  
ձեւ մ'ըրաւ : Ան ատեն Հեղինէ յիշեց մօրը  
խօսքը՝ որ ըսած էր թէ տասն'ութը տա-  
րւան որ ըլլայ՝ ամէն բան կ'իմանայ . ուս-  
տի եւ հասկրցաւ թէ մօրը կամքն ան է՝ որ  
նոյն ծրարիկը տասն'ութը տարեկան չե-  
զած չբանայ : Անոք համար առաւ ծոցը  
դրաւ եւ ըսաւ . Ըսածնիդ հասկրցայ , սի-  
րելի՛ մայր . բայց ինչո՞ւ համար :

Տիկինն երկինքը ցուցուց :

Ա՛ն , մայր , դոչեց Հեղինէ՝ սաստիկ  
տրտմութեամբ . եթէ դուք երկինք պիտ'որ  
երթաք , զիս հոստեղս առանձին թողող մի  
տաք , զիս ալ հետերնիդ տարեք :

Անհա աս աղաղակը լսելով՝ վազեց ներս  
եկաւ : Տիկինը հոգին աւանդած էր՝ աղ-  
ջկանը բազկացը մէջ , որն որ անմիջապէս  
մարեցաւ ինկաւ :

Երբ որ Հեղինէին խելքը վրան եկաւ .  
աղախինն իր սովորականէն աւելի քաղցրու-  
թեամբ մը իրեն աղաշեց որ սենեկէն դուրս

ելլէ, որավշետեւ ալ մօրն օգուտ մը չի-  
կընար ընել : Խեղճ աղջիկն աս խօսքին  
ստուգութիւնն իմանալով, հնազանդեցաւ .  
բայց քիչ մը ետքը դարձեալ ներս մտաւ,  
որպէս զի ըրած աննօրոգելի կորստեան վրայ  
մահուան անկողնոյն քովը լայ : Ինք լալով  
մօրը սրազած ձեռուըները պադած տաեն,  
ժողովրդապետը ներս մտաւ : Հեղինէ մե-  
կէն սով ելաւ, դիմացը գնաց եւ առան  
որցունք թափելով ոտքն ինկաւ :

Բարեսիրու ձերունին ալ շատ պյառած  
ըլալով՝ չկրցաւ բան մը զրուցել . յուու-  
թեամբ անկողնոյն մօտեցաւ, եւ քիչ մը  
տաեն աղօթք ընելէն ետեւ՝ որք աղջիկն  
առաւ ուրիշ խուց մը տարաւ եւ հոն իրեն  
պյառէս խօսեցաւ :

Աիրելի՛ աղջիկս, բոլոր սրաւէս քեզի  
ցաւակից կը լլամ՝ որովշետեւ կ'իմանամ  
որ տրտմութիւնդ ու ցաւդ խիստ իրաւ-  
ացի է : Բայց պէտք է որ տրտմութիւնդ  
ու ցաւդ շափաւորես : Թէպէտ հասակդ  
տակաւին պզտիկ է, բայց պէտք է որ միտ  
դրած բլաս թէ սիրելի մայրդ որչափ մեծ  
վշտերով կը շարչարուեր, որոնք կամաց  
կամաց զինքը հիւծեցին եւ զերջապէս ա-  
տենէն յառաջ մահը վրան հասցուցին : Հի-  
մայ վշտերն ու նեղութիւնները լմբնցան :  
Ծատ բան կորսրնցուցիր, սիրելի՝ մայրդ  
կորսրնցընելով . բայց Աստուած՝ որ որո՞յն  
հայրն ու պաշտպանն է, զքեղ թող շի-  
տար, բաւական որ դուն ալ իրեն վստո-  
չե՞լինէ :

Հիս եւ յոյսդ իրմէ չկտրես : Պուցէ նաև  
գուն աս աշխարհքիս մէջ մեծ վշտեր կը  
կրես . բայց աս մոտածմունքը միայն՝ որ ա-  
մէն բան Աստուծոյ ձեռքէն կու զայ եւ  
ինք ամենայնի վարձահատոյց է , բաւական  
է զքեղ քաջալերելու : Միշտ ինք իրենդ  
ըսէ . Աստուած զիս կը տեսնէ . ասով եր-  
բեք չես վհատիր եւ մեղաց վտանգները կը  
յաղթես :

Ս'օրդ կամքն ան է որ Աննային հետ  
մնաս՝ մինչեւ որ ընտանեացդ դաղանիլին  
իմանալու համար իր որոշած ժամանակը  
հասնի : Ըատ անդամ ինծի յայտնած ես  
որ նոյն կնոջ նեղարաւութենէն որչափ կը  
չարչարուիս : Ի վերայ այսր ամենայնի ողե-  
տի ջանաս՝ մօրդ յիշատակին ու սիրոյն  
համար՝ զինքը սիրել : Ես ալ ձեռքէս ե-  
կած ամէն միջոցներով միշտ քեզի օգնա-  
կան կը լսամ . եւ ամէն կերպով վշտերդ  
թեթեւցընելու ետեւէ կ'իյնամ :

Հիմայ պէտք է որ երթամ , սիրելի՛ աղ-  
ջիկս : Աննային քովը զնա . եւ մօրդ հա-  
մար աղօթք ըրած տեսնդ՝ Աստուծոյ ու  
սուրբ Աստուածածնոյ աղաչէ որ զքեղ  
իրենց պաշտպանութեան տակ առնուն :

Աս ըսելէն ետեւ՝ զշեղինէ օրհնեց ու  
դուքս ելաւ . իսկ աղջիկը շուտ մը մօրը  
խուցը՝ Աննային քովը զնաց :

ՄԵռելին տեսութիւնը Հեղինեին սրտին  
մէջ ան վախր չէր պատճառ եր, զորն որ  
հասարակօրէն տկար ու աւելորդապաշտ  
մարդիկ կ'ունենան: Մօրը ջանքովը միաբը  
ճշմարիտ ու անխառն աստուածապաշտու-  
թեան սկզբունքներով լեցուած էր. միան-  
գամայն երրեք ճիւաղի ու քաջի խօսք լսած  
չըլլալով, աւելորդապաշտ մարդիկներու  
ովէս մեռելի մը քով կենալէն չէր վախ-  
նար: Այսպէսով մօրը քովին շրամնուե-  
ցաւ: Գիշերն որ հասաւ, մժութիւնը, ա-  
ռանձնութիւնն ու խոր լուսութիւնը՝ որն  
որ հազիւ երրեմն հովին սուլելէն ու գիշե-  
րային թռչնոց ձայնէն կ'ընդմիջէր, Հեղի-  
նեին տրտմութիւնը սաստկացուցին, բայց  
ամենեւին առանց սարուափ մը պատճա-  
ռելու:

Ինք այսպէս սաստիկ տրտմութեամբ  
մօրն անկենդան մարմնոյն քովը նստած ա-  
տենը, յանկարծ դուռը բացուեցաւ եւ  
դէպ իր կեցած տեղը՝ մէկը կը մօտենար:  
Վախէն ու այլայլութենէն խեղճ աղջկան  
շունչը բռնուեցաւ: Մժութենէն չէր  
կրնար տեսնել թէ ով է: Եկողը դարանը  
բացաւ, սկսաւ խառնել:

Դաւն ես, Անսա, հարցուց վերջապէս  
օրիորդը:

Ասոր պատասխանը՝ սուր ու քստմե-  
ցուցիչ աղաղակ մ'եղաւ:

Հանդարակէ, ես եմ, կրկնեց Հեղինէ, տեսնելով որ եկողն աղախինն է ու իրմէ աւելի վախցեր է:

Ի՞նչ, դուք էք, օրիորդ, դոչեց կինը, դէպ ի Հեղինէ վազելով, որուն անտարակոյս կը զարնէր ալ՝ եթէ անշունչ մարմայ մը մօտուրութիւնը զինքը շրոնէր:

— Ա՞վ կրնար կարծել որ այսպիսի ուշ առեն հոս գտնուիր: Ես կը կարծէի որ արդէն պառկած էք. ուստի կամացուկ մը եւ առանց լուսոյ եկայ, որ վազը հազնելու զգեսանիդ հանեմ: Խսկ դուք չարութեամբ պահութեր էք, որ զիս վախցընէք:

Զէ, չէ, այնպէս չէ, բոաւ Հեղինէ՝ աղախնոյն բարկութեան ու այլայլութեան վրայ զարմացած. ամենեւին անանկ դէշ միտք չունէի: Մօրս քովը նստած՝ աղօթք կընէի, երբ որ դուն եկար. եւ եթէ չվախնայի, յառաջ ալ ձայն կու տայի:

Ամենեւին չեմ հաւատար, պատասխանեց չարասիրտ կինը: Բայց գնենք թէ այնպէս ըլլայ. սակայն չէք կրնար ըսել թէ մայրերնիդ կը սիրէք, ապա թէ ոչ՝ անոր մահուան անկողնոյն քովը անանկ հանդարտ չէիք կրնար կենալ, իրրեւ թէ մէջը պահկողն օտարական մ'ըլլար:

Կարծեմ թէ սէր չունենալու. նշան չէ, բատ. օրիորդը լալով, մօրս քովը կենալս ու հսկելս՝ մինչեւ որ դան զինքն ընդ միշաբնձմէ հեռացընեն:

Աս բոաւ ու հեծեծանոք սկսաւ դառն

արցունիք թափել, եւ ալ չկրնալով սյն-  
պիսի անդութ կնոջ մը քովը կենալ, գուրու-  
ելաւ, գնաց անկազնոյն վրայ ինկաւ, յուսա-  
լով որ քունք վշտացը քիչ մը տիտիութիւն  
կը բերէ: Քայց ակնկալութիւնը պարապ  
ելաւ: Ծէպէտ եւ քիչ մը ետքը քունք  
տարաւ, սակայն տխուր երազներ զինքը կը  
վրդ ովէին, միշտ առ ջեւը դնելով մօրը թա-  
զուելու վայրկեանը, որմէ ետքը՝ ալ անօր  
դէմքը պիտի չաեսնէր:

Եցրեք ժամու չափ այսպէս անհանդարաւ  
քնանալէն վերջը՝ արթընցաւ, եւ դլուխը  
քիչ մը թեթեւցած զգալով, սկսաւ իր  
թշուառ վիճակին վրայ մնածել: Կը խոր-  
նէր թէ Աննային հետ ինչ ճամբայ բռնէ:   
Անանկ պատճառներ կային, որոնք իրեն կը  
կարծեցընելին թէ նոյն կինը վերջին ժամա-  
նակները մօրը վատահութիւնը կօրորնցու-  
ցած ըլլայ: Գրարանին մէջի ծրագն անկից  
ծածուկ պահելու համար Պելլիվ տիկնաց  
տարած փոյթը՝ յայտնի ցոյց մըն էր թէ  
Աննա անոր ամէն գաղտնիքները չէր զի-  
տեր: Տիկնոցմէ հեռու եղած առենք՝ ա-  
զախնոյն իրեն հետ խստաւթեամբ ու բրր-  
տութեամբ վարուիլը, իսկ անոր առ ջեւը՝  
ոիրալիր ու քաղցր կերպ մը բանեցընելը,  
կը ցուցըներ որ խարդախ ու կեղծաւոր  
բնութիւն ունի:

Ասոնք մնածելով՝ Հեղինէ մէկէն ա-  
ռանց կատարեալ մնադրութեան՝ սկսաւ  
ծոցը մնառել, որ տեսնէ թէ արդեօք

ծրարիկը դեռ քո՞վս է՛ թէ չէ : Երբ որ տ-  
սոր վրայ սիրար հանդարտեցաւ, խորին հա-  
ռաջմամբ մը՝ Ծառ կը վախնացի որ, ըստ,  
քնոյս մէջ ծրարիկը վրայէս առած շըլայ :  
Անշուշտ ասօր համար էր՝ որ մութ ատեն  
մօրս դարանը կը խառնէր :

Բայց անմիջապէս ջանաց աս մոտած-  
մունքը մոքէն հանել : Մօրը խօսքը՝ որով  
զինքը խրատած էր զաղախնը սիրելու, ա-  
նոր հաւատարմութեան վրայ ամենափոքր  
կառկած ունենալն ալ իրեն մեծ յանցանք  
մը կ'երեւցընէր : Այսպէսով միտքը գրա-  
որ Աննացին հետ զգուշութեամբ վարուի,  
բայց յառաջուան ընթացքն արտաքուստ  
չփոխէ : Աս որոշամն ըրաւ յիշելով մի-  
անդամայն մօրը զրուցածը թէ Աննա դր-  
սէն ինչպէս ալ որ երեւայ՝ բարի սիրո  
ունի : Գտարձեալ միտքը բերելով մօրն ան  
ըսածն ալ թէ իր ընտանեաց զաղտնիք-  
ները՝ տառնութը տարւան եղած ժամա-  
նակը կ'իմանայ, հետեւցուց որ մայրն Ան-  
նացին սրգելոծ պիտօր ըլլայ որ ան ա-  
տենէն յառաջ բան մը չյայտնէ, ուստի  
եւ ըստ թէ աղախնոյն՝ իրեն հետ ընտա-  
նութեամբ չվարուիլը, կարելի է աս պատ-  
ճառէն յառաջ կու դայ :

Հեղինէ աս մոտածութիւններով հան-  
դարտելով, սկսաւ մոտադրութեամբ մոտ-  
ծել ժողովրդապետին վերջին խօսքերուն  
վրայ, որոնք իր վրայ մեծ տպաւորութիւն  
ըրած էին : Երկայն ատեն խորհրդածելէն

վերջը, Աստուծոյ դիմելով՝ աղաչեց որ  
զինքն իր ամենազօր հովանաւորութեան  
տակն առնու: Եւ որպէս զի նոյն հովա-  
նաւորութեան արժանի ըլլայ, միաբը դրաւ-  
որ Աստուծոյ ներկայութիւնն աչքէն եր-  
բէք շհեռացընէ, եւ միշտ մտածէ որ նոյն  
իսկ իր ամենածածուկ խորհուրդներն ալ  
անկից չեն կրնար ծածկուիլ: Դարձեալ  
ամեն ցաւերն ու վիշտերը ջանայ համբե-  
րութեամբ տանիլ: Վերջապէս իր տկա-  
րութիւնը խոստվանելով, շնորհք ու զօ-  
րութիւն խնդրեց որ դրած առաջադրու-  
թիւնները կարենայ հաստատուն պահել:

Հազիւ թէ աղօթքը ըմբնցուցած էր.  
Աննա խուցը մնաւ, եւ սովորականէն աւ-  
ելի քաղաքավարութեամբ ինչպէս ըլլալը  
հարցուց: Այնպէս կ'երեւցընէր որ դիշե-  
րուան գէպքին վրայ սիրար շատ կսորած  
է: Սաէպ ստէպ կը կրկնէր թէ կենացս  
մէջ անանկ վախ ունեցած չէի. անանկ այլ-  
այլեցայ ու շփոթեցայ որ, կ'ըսէր, ոչ  
ըրածս գիտէի եւ ոչ խօսածս:

Կէսօրէն եաբը վարձակալն ու իր կինը  
բերդն եկան, հետերնին երկու հոգի ու-  
նենալով, որոնք Պելրիվ տիկնոջ մարմինը  
տանելու համար գաղաղ մը կը բերէին:  
Հեղինէ վերջին անգամ մը գիտէին նայե-  
ցաւ, եւ գաղաղը գամուելէն վերջն ալ  
սաստիկ ցաւերու մէջ ընկղմած քովը կը  
կենար: Օդը ցուրտ ու մթին էր. դառ-  
նաշւնչ հով մը տան երկայն ու նեղ

անցքերուն մէջ կը թափանցէք . կարծես  
թէ հին ու փլփլկած աշտարակները ծած-  
կող բաղեղներուն մէջէն հեծութեան ձայ-  
ներ կը լսու էին :

Խրիկուան դէմ Աննա սպոյ զգեստներ  
հաղած՝ կեղծաւորեալ արտմութեամբ Հե-  
ղինէին խուցը մնաւ , եւ իմացուց որ ա-  
մէն բան պատրաստ է : Խեղճ աղջիկը ուոք  
ելաւ՝ առանց չորս կողմն եղածին միտ դնե-  
լու . հազիւ կ'իմանար որ աղախինք՝ զլուխը  
սեւ քող մը ծածկելով՝ զինքրդէպ ի դաւի-  
թը տարաւ , ուր կեցած էք ժողովրդա-  
տեար՝ դպիրներու եւ չորս գեղացիներու  
հետ , որոնք դագաղը պիտի տանէին : Ըստ  
մը ճամբայ ելան , եւ բլրէն վար իջնալով .  
ընթացքնին դէպ ի գեղին եկեղեցին ուղ-  
ղեցին : Հոն բազմաթիւ անձինք ժողված  
էին , ոմանք հետաքրքրութենէ , ոմանք ալ  
բարեպաշտութենէ շարժեալ : Ամենուն  
տչքը որբ օրիորդին վրայ էք , որուն սպոյ  
զգեստներն աւելի եւս երեւան կը հանէին  
երեսներուն գունատութիւնը :

Երբ որ դագաղը գերեզման իջուցին .  
ալ Հեղինէին սիրաը չկընալով դիմանալ ,  
ցաւին սասակութենէն ինք իրմէ ելած , սեւ  
քողը երեսէն մէկդի առաւ , եւ դէպ ի գե-  
րեզման դիմելով՝ սրտաշարժ ձայնով մը՝  
Ա՛Ն , թաղ տուէք որ , գոչեց , գոնէ անգամ  
մ'ալ մայրս տեսնեմ : Ժողովրդապետը  
վարձակալին նշան բրաւ որ դժբախտ օրի-  
որդը մէկդի առնու , ժողովրդապետանոցը

տանի : Խոեղծ աղջիկն առանց դէմ դնելու՝ թող տուաւ որ զինքը տանին . ամենեւին բան մը չէր տեսներ . եւ ոչ իսկ կը լուէր դեղացի կանանց ողբերը , որոնք աս տիտուր տեսարանէն սաստիկ շարժեալ՝ բարձրածայն ու հեծկատանօք կու լային :

Ժողովրդապետը գործքը լմբնցընելէն ետեւ՝ Հեղինէին քովն եկաւ , եւ համառօտ խօսքով մը զինքը մխիթարելէն ու սաստիկ պյըլութիւնը քիչ մը մեղմացընելէն վերջը՝ առաջարկեց որ հետր բերդն երթայ : Օրիորդը շնորհակալութեամբ ընդունեցաւ աս առաջարկութիւնը : Շամբան գերեզմաննոցին քովէն անցած ժամանակնին ծերաւնիէն ու աղախնէն բաժնեաւելով , դէպի մօրը գերեզմանը վավեց , եւ նոր գոցուած փոսին վրայ ծունկի վրայ գալով ու գլուխը թաց հողին վրայ դնելով , սկսաւ լալ ու ողբալ : Ժողովրդապետն առջի բերան թող տուաւ որ առատութեամբ արցունք թափելով՝ սիրոր քիչ մը հանգչեցընէ . բայց տեսնելով որ երկայն տան հոն կը մնայ , գնաց վեր վերցուց եւ գերեզմաննոցէն դուրս հանեց :

Սիրելի՝ մայր , գուշց աղջիկը սրտաշարժ հայեցուածքով մը ետեւը դառնալով , սիրելի՝ մայր , ալ իրաբմէ ընդ միշտ կը բաժնուինք . . . .

Զէ , դուստր իմ , ըստ . ժողովրդապետը , չէ , աս բաժանումը յաւիտենական չէ : Եթէ դուն ալ իրեն պէս համբերելու բյ-

լսու, Եթէ դուն ալ իրեն պէս սրտանց  
թողութիւն տալու ըլլաս թշնամեացդ . . . .

Թոշնամիներու, կրկնեց Հեղինէ : Ո՞ւր  
են : Ստուգիւ մայրս թշնամի . . . .

Հանդարտէ, ըսաւ ծերունին՝ խօսքն  
ընդմիջելով եւ չուղելով անոր հարցման  
պատասխան տալ : Եթէ միայն մօրդ վեր-  
ջին խրատներն աղէկ բռնես, վախնալու-  
բան չունիս : Չոյսդ Աստուծոյ վրայ դիք  
եւ ինք զինքդ անոր ձեռքբ յանձնէ :

Հեղինէ՝ որուն հետաքրքրութիւնը սաս-  
տիկ գրգռուած էր, կ'ուզէր ճիշդ պատա-  
խան մ'ընդունիլ :

Գուստր, շարունակեց ծերունին, մօրդ  
քեզմէ ծածկել ուզած գաղտնիքն իմա-  
նալու ատենն որ զայ, ամեն բան քեզի կը  
յայտնուի : Մինչեւ նոյն ժամանակ՝ իմա-  
նալդ անօգուտ ըլլալէն զատ՝ կնասակար  
ալ կրնայ ըլլալ :

Հեղինէ լսեց, որով եւ առանց ուրիշ  
խօսք մ'ընելու՝ բերդը հասան : Հոնե պա-  
տուական ծերունին ամեն կարելի կերպով  
ջանաց խեղճ ու անօդնական որրը մխիթա-  
րել, եւ իրմէ բաժնուելու ատեն, Յիշէ .  
սիրելի՝ աղջիկս, ըսաւ, երեկուան քեզի  
տուած խրատս : Գտնուած վիճակիդ մէջ  
համբերութեան ու համակամութեան շատ  
հարկաւորութիւն ունիս : Աս առաքինու-  
թեանց գործադրութիւնը որչափ որ ալ  
քեզի գժուար դայ, սակայն եւ այնպէս  
Աստուծոյ ներկայութիւնը միշտ աչքիդ

առջեւն ունենալով՝ կրնաս դիւրաւ յա-  
ջողքընել։ Ասկէ վերջը նոր կեանիք մը պի-  
տի սկսիս։ Նայէ որ բազձանքներուգ  
նպատակը՝ միայն Աստուած ըլլայ, եւ ամէն  
դործքերուդ կանոն՝ իր սուրբ կամքը։

### ԳԼՈՒԽ Է.

Պելքիվ տիկինը մեռնելէն վեր երկու  
տարի անցած էր, եւ նոյն միջոցին Հեղինեին  
տխուր ու միօրինակ կենաց ընթացքն ա-  
մենեւին անսովոր դիպուածով մը չէր  
վրդոված։ Տէր Պեռնարաւէ շարաթը եր-  
կու երեք անգամ դղեակը կու գար, զինքը  
կը մխիթարէր եւ ուսման մէջ իրեն կ'ա-  
ռաջնորդէր։ Քարի ծերաւնւոյն այցելու-  
թիւնը՝ խեղճ օրիորդին միակ մխիթարու-  
թիւնն էր. որովհետեւ աղախինն իր տի-  
կնոջը մահուընէ ետքը՝ հետը յառաջուընէ  
աւելի բրառութեամբ ու կոպութեամբ  
կը վարուէր։ Այսու ամենայնիւ Հեղինե-  
իր յառաջադրութեան մէջ հաստատուն  
մնալով, կը ջանար ըստ կարի զանիկայ սի-  
րէլ, անոր համար ոլ իսկպահն զգացած  
գժուարութիւնը՝ երթալով կը մեղմանար-  
վան զի Աստուած մեր ջանքն առանց վար-  
ձուց չիթօղուր, եւ մարդու սրչափ որ ա-  
ռափինութեան ճամբուն մէջ յառաջ կ'եր-  
թայ, այնչափ ալ անոր գժուարութիւն-  
ները կը նուազին։

Հեղինէ անհամբերութեամբ կը սպա-

ուր որ տասն'ութը տարւան ըլլայ : Եսին  
առեն աղախինն իր ընտանեաց գաղտնիքը  
պիտի յայտնէր . բայց օրիորդն այնչափ բա-  
նի առջ չեր դներ առ առթով իրմէ լոե-  
լու խորհուրդները , որչափ այն խրատները  
զորոնք Տէր Պէռնարտէէն կրնար ընդու-  
նիլ : Բայց ինք տասնուվեց տարւան եղած  
ժամանակը , որ մը լսեց որ ժողովրդապե-  
տը կաթուածէ զարնուելով . շուտ մը հո-  
ղին աւանդեր է : Աս ցաւալի դպյժը զշե-  
զինէ այնչափ տրտմեցաց ու այլայլեց , որ  
երկայն առեն աշուրներէն արցունք թափեց  
եւ չէր կրնար մխիթարուիլ : Ինք զծերունի  
ժողովրդապետը չէ թէ միայն իրրեւ պաշտ-  
պան մը կը նկատէր , հապա հօր առջ գրած  
էր , եւ գտնուած դժուարին վիճակին մէջ  
միայն անկից մխիթարութիւնն էւ հարկաւոր  
խորհուրդները կ'ընդունէր : Իրաք ալ ու-  
նեցած սրտի հանդարտութիւնը՝ անոր  
խրատներուն պտուղն էր : Արդ ասանկ մէկը  
կորսընցընելով , օրիորդը կը համարէր որ  
նորանոր նեղութեանց ու վշտաց մէջ  
պիտոր իյնայ , որոնց դիմանալու համար՝  
երկրիս վրայ ամենեւին նեցուկ մը չունե-  
նալով , բոլոր վստահութեամբ եւ ջերմ  
հաւուաբով Աստուծոյ դիմեց , որպէս զի  
բարորավին չընկճի :

Պէլրիով տիկնոջ ամէն տարի օրոշ ա-  
ռեն մը բրած ճամբորդութիւնը՝ անոր մա-  
հուրնէ եաքը՝ Անսա ծշդիւ կը կատարէր :  
Արդ ժողովրդապետը մեռնելէն քիչ մը

վերջը, դարձեալ նոյն ճամբարդութիւնն  
բրաւ . բայց ետ դարձած ատեն, հետք՝  
թխագոյն ու վայրենի գէմբով շուրջ քա-  
ռասուն տարւան մարդ մը բերաւ, եւ Հե-  
ղինելին ներկայացուց, ըսելով որ եղբայրն  
է, Տեսնելով որ օրիորդն աս բանիս վրայ  
խիստ այլայլած կ'երեւայ, ետեւէն խուցը  
զնաց, եւ դուռը գոցելով, խորհրդաւոր  
կերպով մ'ըստ թէ աս բանս ԳԵՂԻՒԺ  
տիկնոջ իրամացը համեմատ է, որն որ ապս-  
պրած է, որ եթէ Հեղինե տասն'ութը  
տարւան չեղած Տէր ԳԵՂԻՆԱՐՈՒ մեռնելու  
ըլլայ, Պլր. Վառազէն գայ բերդը բնակի :  
Անշուշտ, բառ, մայրերնիդ պատճառ ու-  
ներ այսպէս որաշում մ'ընելու, եւ դուք  
ալ տասն'ութը տարւան եղած առեննիդ  
կ'իմանար : “Նոյն ժամանակէն յառաջ չեմ  
կրնար ձեզի յայտնել, ինչու որ տիկինն  
արդելած է :

Աս ըսելէն վերջը Հեղինելին գիշեր բա-  
րի մաղթելով՝ հեռացաւ, թող տալով որ  
աս արտաքոյ կարգի գէպքին ու խօսքերուն  
վրայ մտածէ : Օրիորդը երկայն ատեն խո-  
րունկ մտածելով՝ չէր կրնար եղածն ըմ-  
բռնել : Մասցը բոլորովին հակառակ կ'ե-  
րեւար, որ մայրը՝ որն որ կենդանութեան  
ժամանակը բերդը չէր ուզեր օտարական մը  
եւ ոչ բժիշկ մը բերել տալ, մահութնէ  
ետքը զինքը Պլր. Վառազէնի պէս մէկու մը  
խնամոցը յանձնել ուղած ըլլայ, որոն  
արտաքին երեւոյթն ամենեւին յարմար չէր

վատահութիւն պատճառելու : Բայց մէկակ  
կողմանէ ազախնոյն խօսքը՝ թէ տասն'ու-  
թը տարւան որ կ'ըլլայ , ընտանեացը բոլոր  
գաղտնիքը կ'իմանայ , մօրն ըսածին հետ  
այնպէս կը միաբանէր , որ ալ հարկ կ'ըլլար  
կարծել թէ ժողովրդապետին մեռնելէն  
ետքը՝ Պր . Առաջնինին գալուն նպատակը՝  
զինքն իր գաղտնի թշնամիներուն դէմ  
պաշտպանել է :

Աս մտածմունքներով կը ջանար Հեղի-  
նէ հանդարտիլ , բայց չէր կրնար . եւ եր-  
թալով վախն ու կառկածը կ'աւելնար :  
Աննային վրայ ուէր ունենալ ջանացած ա-  
տեն , սրտին մէջ ձայն մը կը լսէր , որն որ  
իրեն կ'ազդէր թէ նոյն չար ու կեղծաւոր  
կնոջմէ զգոյլ կենաց : Անոր համար ալ շատ  
անդամ կը մտածէր որ թողու փախչի , եւ  
աշխարհքիս մէջ կերպով մը իր հացը հո-  
գալու ջանայ , համնզուած ըլլալով որ ամեն  
տեղ՝ բերդին մէջ ունեցածէն աւելի խա-  
զադ ու ապահով վիճակ կ'ունենայ :

Այսպէսով խել մը ժամանակ անցաւ-  
մինչեւ որ Հեղինէ տասնութեց տարին լմբն-  
ցընելով , տասնուեօթը տարին մտաւ : Գի-  
շեր մը՝ որ Աննային յանդնութեան ու-  
րասութեան եւ անոր եզրօրը դաժան հայ-  
եցուածներուն համար որք օրիսրդը չէր  
կրնար քնանալ , եւ զանազան խորհուրդ-  
ներով անհանդիստ կ'ըլլար , միտքն եկա-  
որ նոյն տեսն առանութեց տարւան եւ  
չորս ամսուան է , եւ տասն'ութը տարեկան

որ ըլլայ, անտարակոյս բերդէն պիտ'որ ել-  
լէ եւ մարդկան մէջ մտնէ . . . :

Բայց աս բաները մտածելու ժամանակը  
մէկէն զարհուրած մնաց. կը խորհէր թէ  
կարելի է որ իր ընտանեաց դաղանիքն ի-  
մանալէն ետքը՝ ինքն ալ ընկծի ան բեռան  
տակ, որուն ծանրութեան չէր կրցած  
դիմանալ մայրը:

Երկայն ատեն նոյն մտատանջութեան  
մէջ անցուցած էր, մէյ մ'ալ կէս գիշե-  
րուան մօտ լոյս մը նշմարեց դրան ապակի-  
ներուն ետեւէն: Ծուտ մը անկողնին մէջ  
ելաւ նստեցաւ: Քիչ մը ետքը ոտնաձայն  
մ'ալ լսեց: Սաստիկ սարսափած՝ զանապ-  
կին չուանը վնտուեց, որպէս զի զԱնա-  
եւ կամ անոր եղբայրն օգնութեան կան-  
չէ. բայց չկրցաւ գտնել: Խուսված և փո-  
թած՝ ինչ ընելիքը չէր գիտեր: Վոյս մ-  
ջոցին՝ սաստիութեամբ խօսելու ձայներ  
կան ականջը. իրեն այնպէս կ'երաւարոր  
դուրսը երկու հոգի մէկտեղ կը վիճեած  
վերջապէս առ խօսքերը բացայացաւ լսեց:

Չէ, կըսեմ, չէ. հարկաւոր չէ:

Հեղինէ այնպիսի վիճակի մէջ էր, որ  
ամենափոքր շարժում մ'ալ չէր կրնար  
ընել, աչուըները դէպի ի դուռը սեւեռած  
կը նացէր, անանկ կարծելով որ զբոխները  
պիտի բանան ու ներս յարձակին: Բայց  
յանկարծ նորէն ոտնաձայն լսուեցաւ, լոյ-  
սը հեռացաւ, եւ ալ խօսելու ձայն չլսուե-  
ցաւ: Օրիորդը կարծելով որ մօրն ու իր

թշնամիները, վերջապէս իր թաքստեան  
տեղն իմացած ու եկած են զինքը բռնելու  
կամ մեռյընելու, կամացուկ մը ոտք ե-  
լաւ, դէպ ի դուռ գնաց: Միտքը դրած  
էր որ ձայները բոլորովին դադրելուն պէս,  
միայն բերդին բնակչացը ծանօթ եղող ծա-  
ծուկ ճամբով մը ազախնոյն քովն երթայ:

Բայց հաղիւ թէ դողդոզալով ձեռքը  
դրան բանարսոյն երկրնցուցած էր, լզոր  
դարձեալ երեւան ելաւ, եւ վուազէնին,  
ձայնը լսեց, օրն որ բարկութեամբ ու դա-  
ժանութեամբ աս խօսքերն արտարերեց:

Աւ միտք դրի, ամենէն աղէկն ան է :  
ԱՌ, չէ . . . չէ, պատասխանեց ուրիշ  
մէկը՝ զորն որ Հեղինէ ձայնէն ճամնցաւ թէ  
Աննա է, կաղաչեմ մ'ըներ, եթէ հար-  
կաւոր սեպէի, ես զքեզ կը ստիպէի . . . :

Հեղինէ անկից ուրիշ բան շնեց: Այլ-  
պյութիւնն ու սարսափը վերջին ծայրը հա-  
սած էր: Միտքը զարհուրելի խարհուրդ  
մ'ինկաւ, բայց շուտ մը վորնտեց: Խեղձ  
աղ ջիկն ան առտիճանի շփոթած էր, որ-  
կարծես թէ բան մը չէր իմանար, հաղիւ  
կրնար ոտքի վրայ կենալ: Ասկայն եւ այն-  
պէս տեղն անշարժ մնացած էր. ոչ շարժե-  
լու եւ ոչ խեկ ազատ շունչ առնելու կը  
համարձակէր, որ չըլայ թէ Վուազէն եւ  
Աննա իմանան դիրենք լսած ըլլալու:

Աերջապէս երկայն առեն անցնելէն ե-  
տեւ՝ տեսնելով որ եկող դացող չկայ,  
ծունկ իջառ եւ Աստուծոյ շնորհակալ է.

զաւ զինքը թշնամիաց ձեռքէն ազատելուն  
համար : Ասով քիչ մը հոդի առած , ոտք  
ելաւ եւ պատուհանին մօտիկնալով՝ սկսաւ  
դիտել որ արդեօք կարելի՛ է հսնկից վար  
եջնալ եւ վարձակալին տունը փախչիլ :  
Դժբախտութեամբ պատուհանը գետնէն  
շատ բարձր ըլլալով : Ճեր կրնար ցատքել :  
Դարձեալ գետի ի դուռ գնաց , յուսալով  
որ առանց տեսնուելու՝ կրնայ խցէն դուրս  
ելլել . բայց ան խորհուրդն ալ չկրցաւ  
դուխն հանել , մտածելով որ կրնայ ճամբան  
իր հալածչացը հանդիպիլ , որոնք այլայլու-  
թենէն դուշակելով թէ իրեն դէմ ունե-  
ցած թշնամական դիտումնին իմացեր է .  
դուխը չարկի մը կը բերեն : Ուստի փախ-  
չելու խորհուրդը մէկդի թող տալով , հա-  
զուեցաւ , եւ միտքը դրաւ որ բայօր դիշեր  
արթուն կենայ : Աստուած զիս կը տեսնէ .  
բաւ ինք իրեն . իր կամացը դէմ ինծի բան  
մը չիկրնար պատահիլ : Եշաքը Աստուծմէ-  
խնդրեց որ հարկաւոր եղած զօրութիւնն ու  
խսչեմութիւնը տայ իրեն :

Աս կերպով անցուց դիշերուան մա-  
ցած մասը , առանց ամնեւին այլայլու-  
թեան կամ վախինոր պատճառ ունենա-  
լու : Բերդին մէջ խոր լուռթիւն կը տի-  
րեր , ամենեւին ձայն մը չեր լոռեր :

Ա՛վ կրնայ երեւակայել թէ ինչ սրտի  
ուրախութիւն ունեցաւ օրիորդը , երբ որ  
երկինքին վրայ արշալուսին առաջին լու-  
սաւ որութիւնը տեսաւ : “Կորէն պատու-

Հանին առջեւը գնաց, միտքը գնելով որ  
եթէ գեղացիներն անցնելու սկսին, վերէն  
նշան ընելով՝ վտանգի մշջ ըլլալն իմացը-  
նէ : Բայց դեռ շատ կանուխ էր, ամենեւին  
անցնող չէր ըլլար, եւ հեռաւոր առուա-  
կին խոխոջանքէն ու թռչնոց ճռուողելէն  
ուրիշ ձայն չէր լսուեր : Հեղինէ երկայն  
ժամանակ պատուհանը կեցաւ, յուռալով  
որ Աստուած իրեն ազատիշ մը կը խաւ-  
րէ, բայց պարապ տեզ : Ստոյգ է՝ ետքէն  
գեղացիները սկսան անցնիլ, բայց այնչափ  
հեռուէն կ'երթային, որ ըրած շարժումնե-  
րը չէին կրնար նշմարել, իսկ պառալու՛ կը  
վախնար :

Մինչեւ ժամը իննե աս որտի անձկու-  
թեան ու վախերուն մշջ մնաց : Բայց վեր-  
ջապէս պէտք էր բան մ'ընել . որովհետեւ  
եթէ խցէն դուրս չելլէր, վախն ու կա-  
կածը կը յայտնուէր : Աւստի քաջայե-  
րուած՝ դուռը բացաւ, եւ դողդոջիւն քայ-  
լերով դէպի ի կերակրոյ ունեակը գնաց,  
ուր կը կարծէր որ զԱննա եւ անոր եղբայրը  
կը դտնէ : Բայց որչափ զարմացաւ ու ապ-  
շեցաւ, երբ որ տեսաւ որ հոն մարդ չկայ:  
Գեռ ոչ կրակ վառուած էր, ոչ ալ նա-  
խաճաշին սպասը դրուած : Մանաւանդ  
թէ եւ ոչ նախընթաց իրիկուան սեղանը  
ժողվուած էր, հապաւ ամէն բան՝ ընթրի-  
քէն ելած առեն ձգածին պէս՝ կը կենար :  
Գուցէ դեռ ելած չեն, բաւ ինք իրեն  
Հեղինէ . ի՞նչ երջանկութիւն, եթէ իրենք

վար շիջած՝ կարենամ փախչիլ երթալ : Աս խորհուրդներով գեղի գուռ վազեց , մտածելավ թէ ինչպէս պիտի կարենայ՝ առանց շշուկ հանելու՝ բանալ մեծ աղխերը : Բայց հոն հասած առեն՝ տեսաւ որ արդէն ան գժուարութիւնը վերցուած էր . դրան երկու փեղկերն ալ բաց էին , իսկ գետնին վրայի յարդի շիւղերն ու չուանի եւ պատասելու կտաւի կտորուանքը յայտնի կը ցուցընեին որ բերդը ձգած գացած են ան անձինք՝ որոնց ձեռքէն փախչիլ կ'ուղեր :

Հեղինէ՝ առանց ըրածը գիտնալու՝ բակը նետուեցաւ , սկսաւ վազել : Բայց մէկէն միտքն եկաւ . որ Աննա թող տալով երթալով՝ զինքն առանց օգնութեան եւ առանց ապրուստի ձգած էր , իր ընտանեաց դադանիքն ալ հետր տանելով : Առ վիճակին սոսկալի հետեւութիւնը՝ այնպէս սաստիկ կերպով մը երեւակայութեան մէջ նկարուեցաւ , որ աղաղակ մ'արձակեց ու մէկէն նստարանի մը վրայ ինկաւ մնաց :

Ո՞չ, օրիորդ, ըստ Թաղմաս՝ շուտ մը  
կնոջը հետ Հեղինեին քովը հասնելով, ի՞նչ  
ունիք, ի՞նչ եղեր է :

Չդեր գացեր ճի, պատասխանեց Հե-  
ղինե, բաց մնացած դռները ցուցինելով :

Տէր Աստուած, կարելի բան է, գոչեց  
Ազնես: Ուրեմն գիշերը լսած անսովոր  
խշրացոս երեւակայական բան չէ եղեր :

Կերո մտնենք, ըստ վարձակալը, գու-  
ցէ աղախիննիդ քանի մը տող դիր ձգած  
ըլսց, որով առ այլանդակ վարժունքին  
պատճառը կ'իմացընէ:

Բայց երկայն ատեն հետազօտել հար-  
կաւոր չեղաւ. որովհետեւ շուտ մ'իմա-  
ցուեցաւ որ բերդը բոլորովին կողոպտուած-  
է: Դարանեւերն ու պահարանները պարապ  
էին. միայն Հեղինեին անձնական զգեստ-  
ները մնացած էին, որոնք քիչ բան էին:

Ուրեմն ամենացյն ինչ դողցեր տարեր  
են, ըստ վարձակալը, ամէն կողմ քննե-  
լին ետեւ: Դժբախտ օրիորդ, դոնէ Տէր  
Պեռնարակ ողջ բլար . . . . բայց ան մեռած  
է եւ յաջորդը գեռ եկած չէ:

Վեճիթ տան վարձքը վճարուած է, հար-  
ցուց Հեղինե:

Տիկնազ կենդանութեան ատենը կանո-  
նաւոր կերպով կը վճարուէր, պատասխա-  
նեց Թաղմաս. բայց անսր մահութեւ վերջը  
Աննա միշտ կըսէր թէ հարկաւոր եղած

գումարն ընդունած չէ՝ ընտանեաց զանազան գործքերու պատճառաւ, զարոնք մեզի չիկրնար յայտնել:

Աս խօսքին վրայ Հեղինէ շատ այլայլեցաւ ու հառաջեց:

Ամենեւին մ'այլայլիք, օրիորդ, ըստ վարձակալը. նաին վնաս կրողը եւ չեմ. դարձեալ բերդին տէրն աղէկ մարդ մ'ըլլալսվ՝ ձեր աղախնոյն յանցանքը ձեզի շիհամարիք. եւ չէ թէ միայն ստակ չիպահնջեր, հապա նաեւ վրանիդ կը ցաւի:

Ընորհակալ եմ աս միսիթարական խօսքերնուդ, ըստ խեղճ որբը: Բայց հիմայ ես ինչ պիտ'որ ընեմ: Ամենեւին մէկ կողմանէ օգնութիւն չունիմ, ոչ ծանօթ եւ ոչ բարեկամ ունիմ. . . .

Ուրեմն զմեղ ձեզի բարեկամ չէք սեպեր, գոչեց թուվմաս տրտմութեամք:

— Թռողութիւն տուէք. այլայլութենէս բածու չեմ գիտեր:

— Բան չկայ, ասոր վրայ խօսիլ հարկաւոր չէ: Տունս եկէք, չո՞ն մնացէք՝ մինչեւ որ ձեզի աւելի յարմար տեղ մը դրտնենք: Ես ալ ձեզի պէս թշուառութեան փորձն տռած եմ: Բայց Աստուած՝ համբերութեամք տանելու զօրութիւն տուաւննեի: Կը յուսամ որ ձեր վրայէն ալ իր ողորմութիւնը պակաս չ'ըներ:

Բարեկամ, ըստ էրկանը՝ Ազնէս, որն որ մինչեւ նոյն տաեն լուռ կը կենար, ինձի ալ մեծ հաճութիւն կը պատճառէ:

աղնիւ օրիորդին մեր տունը կենալը : Բայց  
կարծեմ որ կրնանք իրեն շուտ մը աւելի  
աղեկ տեղ մը գտնել : Պր . Լարոշ մեր  
բարեկամը բազմաթիւ ընտանիք ունի . եթէ  
իրեն առաջարկուելու ըլլայ , որ զօրիորդը  
քովի առնու՝ դաւկըները դաստիարակելու<sup>1</sup>  
համար , կարծեմ որ ոիրով կ'ընդունի :

Ըստ աղեկ ըսիր , պատասխանեց թուվ-  
մաս . բաւական որ Հեղինէ օրիորդը  
հաւանի :

ԱՇ , իմ բաղձանքս ան է՝ որ մեկու մը  
ծանրութիւն չըլլամ , պատասխան տուաւ-  
Հեղինէ : Անոր համար ալ աղետք չէ որ  
թոշակի խօսք ընէք : Ես գոհ կ'ըլլամ որ  
բրած փոքր ծառայութեանս դիմացը՝ ու-  
տելիք ու բնակարան տան :

Այսպէս խիստ լաւ կ'ըլլայ , օրիորդ ,  
ըստ վարձակալը . նախ՝ սրովհետեւ աւելի  
ապահով կ'ըլլաք որ խնդիրքնիդ չիմերժուիր ,  
եւ միանդամայն երբ որ յարմարագոյն տեղ  
մը գտնուելու ըլլայ , աւելի աղատ կ'ըլլաք  
առաջին տեղին ելլելու :

Բայցինչ որ է նէ , ըերդին մէջ առան-  
ձին չէք կրնար բնակիլ . հիմակուհիմայ մեր  
տունն եկէք : Վաղը ես կ'ելլեմ Կար քա-  
ղաքը Պր . Լարոշին կ'երթամ , հետը կը  
խօսիմ :

Հեղինէ վարձակալին ձեռքը բռնեց՝ ըր-  
թանցը տարաւ : Կ'ուզէք չնորհակալ ըլլալ .  
բայց այլայլութենէն չկըցաւ խօսք գտնել :  
Թուվմաս իրեն աղաշեց որ հանդարտի ,

եւ գուրս ելաւ : Քիչ մը ետքը իր մեծ որդւոյն հետ գառնալով , անոր ուսոցը վրայ դրաւ Հեղինէն զգեստուց արկզը : Ինք ու Ազնէս խեղճ որբն առին իրենց ընակարանը տարին : Երկրորդ առտու կանուխ բարեսիր զեղացին դէպ ի Կար քաղաքը ճամբայ ելաւ :

Պլր . Լարոշ , որն որ նոյն քաղաքը վաճառականութիւն կ'ընէր , վարձակալին առաջարկութիւնը սիրով ընդունեցաւ : Աս մարդն ազնիւ ու մեծանձնական բնաւորութիւն մ'ունէր , եւ զՀեղինէ տունն առնելով՝ աւելի կ'ուզէր դժբախտութեան մէջ գտնուող որբ աղջկան մը օգնութեան հասնիլ , քանի թէ իր զաւակներուն դաստիարակուհի մը բռնել :

Բանը նոյն աչքով շտեսաւ իր կինը , որն որ ագահ ու խստասիրտ ըլլալով , էրկանը որոշումն իմանալուն պէս , սաստիկ բարկացաւ ու շատ ջանք բրաւ միտքը փոխելու : Առջեւը կը դնէր որ բնաւանիքնին բառական բաղմաթիւ ըլլալով , դրսէն մէկ հոգի ալ առնելը՝ խելք չէ : Բարի ծնողքի դործք չէ , կ'ըսէր , իր զաւակներուն բերնէն հացը կարել՝ օտարի մը կերցընել : Վերջապէս ան ամէն պատճառները մէջ բերաւ , զորմնք խստասիրտ մարդիկ կը դործածէն իրենց անզթութիւնը ծածկելու համար : Բայց Պլր . Լարոշ միտքը դրածին վրայ հաստատ մնաց եւ կնոջն այնչափ հակառակելուն վրայ այնպէս ահաճութիւն

ցուցուց, որ վերջապէս ակամայ կամքը զիշաւ որբ աղջիկը տունն ընդունելու :

Ենտանեաց մնացած անձինքը, այսինքն՝ երկու պղտիկ աղաք եւ երեք աղջիկ, որոնց Առէլ անդրանիկը տանուհինդ տարւան էր, սաստիկ ուրախացան մէջերնին դրտէն մէկը գալուն վրայ, բայց աս ուրախութիւնը մօքերնուն առջեւը յայտնելու չէին համարձակիր :

Թռվմաս իր գործքն այսպէս յաջողութեամբ լմբնցընելուն վրայ ուրախութեամբ յեցուած, շուտ մը Ակնազբեր բերդը դարձաւ, ճամբորդութեան ելքը կնոջն ու Հեղինէին հաղորդեց :

Օրիորդն իր մանկութիւնն անցուցած տեղէն չբաժնուած, ուղեց մօքը գերեզմաննին մէյ մ'ալ այցելութիւն ընել : Անոր թաղուած տեղը ծունը իջնալով, երկայն առեն աղօթք բրաւ : Խրեն այնպէս կողար իրբեւ թէ մայրը Բարձրելոյն աթոռին առջեւը կեցած՝ աղջկանը համար կ'աղօթէ :

Ո՞չ, մայր իմ, բռաւ խեղճը, հիմայ՝ որ դուն Աստուծոյ ծոցը կը հանգչիս, նայէ մէյ մը քու դժբախտ աղջկանդ վրայ, որն որ աս աշխարհքիս մէջ առանց օդնականիթուղ տրուած, երկնաւոր օդնութեան կը կարօտի : Գուն վրաս գթա եւ ինձի համար շնորհք ընդունէ, որ Աստուծոյ ողորմութեան ու քու մայրական սիրոյդ անարժան շրջամ: Հօգին Առորը զբուցած է որ Աստուծուած որբին աղօթքն ու այրւոյն հա-

ուաշանքները չ'անտրդեր : Դուն ազաէւ որ  
աս խոստումն իմ վրաս ալ կատարուի :

Այսպէս ազօթք բնելէն ետքը, երբ որ  
քիչ մը միսիթ արուած՝ ետ կը դառնար,  
ժողովրդապետին գերեզմանաքարն աչքին  
հանդիպեցաւ : Հոն ալ քիչ մը ազօթք  
բրաւ . եւ մօրը մահուան ատենը նոյն ծե-  
րունոյն դրուցած խօսքը յիշելով, նորէն  
կրկնեց Աստուծոյ ներկայութիւնն աչքէն  
չհեռացընելու առաջադրութիւնը : Անտա-  
րակոյս շատ նեղութիւն պիտի կրկի՛, բոս  
ինք իրեն . բայց ինչպէս կրնամ վհատիլ՝  
երբ որ կը մտածեմ թէ Աստուծ երկին-  
քէն ամէն կրածներս կը տեսնէ :

Աս խօրհրդածութեամբ աւելի եւս  
քաջալերուած՝ վարձակալին առենը դար-  
ձաւ, որն որ արդէն իր արկզը ջարւոյ մը  
վրայ բեռնաւորած էր : Խօսքը բնտանիքը  
մէկտեղ ուարուղոնէդի հովիտն իջան, ուր  
կառք մը իրենց կը սպասէր : Հեղինէ՝ Ա-  
զնէսին հրաժարական սղջոյնը տալէն ու-  
իրեն բրած բարիքին համար շատ անդամ  
շնօրհակալ ըլլալէն ետքը՝ կառք մտաւ :

Կար հասած ատենը՝ օրինրդը մեծ սի-  
րով ընդունելութիւն գտաւ Պը . Լարոշէն  
եւ անոր Աստէլ աղջկանէն : Բարերախտու-  
թեամբ տիկինը տռենը էքր : Ա աճառակա-  
նը զՀեղինէ տեսած տունն, անոր բարակ  
ու շնօրհալից կերպարանքին եւ աղնիւ ու-  
բարեկիրթ վարմունքին վրայ արտաքոյ կար-  
գի զարմացաւ : Իրոք ալ թէսպէտ Հեղի-

նեին արտաքին երեւոյթը վերջին աստիճա-  
նի պարզ էր, սակայն եւ այնպէս այնպիսի  
ծիբը ունէր եւ վրան անանկ ազնուական  
կրթութիւն մը կը փայլէր, որ հազարնե-  
րու մէջէն կրնար զանազանուիլ: Այնպէ-  
սով որ . Լարոշ զինքը տեսնելուն պէս՝  
գուշակեց որ երեւելի տնէ մ'ըլլարու է:  
Ինք մեր դիւցազնու հւոյն հետ խօսած ա-  
տեն՝ կինը տուն դարձաւ:

Ահաւասիկ ամուսինս, օրիորդ, ըստ  
որ . Լարոշ Հեղինեին, յուսամ որ մէկ-  
զմէկ ճանչնայնուդ վրայ դոհ կ'ըլլար: Աս  
ըսելով՝ աչքը մէյ մը կնոջը վրայ դարձուց  
որն որ ինչ ըսել ուղելը հասկըցաւ:

Հեղինե՝ որն որ ի ներքուստ յօժարու-  
թիւն կ'ունենար զտիկինն իբրեւ իր բարե-  
բարը սիրելու, անոր դիմայն ելաւ: Խսկ  
կինը զինքը քաղաքավարութեամբ, բայց  
միանդամայն պաղութեամբ ընդունեցաւ:  
Օրիորդն անոր աս բռնի ու առերեւոյթ  
քաղաքավարութիւնը դիտելով, շփոթեցաւ  
եւ ինչ ըսելիքը չէր գիտեր: Բախտով ե-  
զաւ որ կինը շատ չկեցաւ, գուրս ելաւ՝ ի-  
րիկաւան կերակրոյն խնամ տանելու համար:

Նոյն ատեն տղաք ներս մտնելով, Հե-  
ղինեին չորս դին առին: Իրեն հազար ու  
մէկ հարցումներ կ'ընէին, եւ իրենց խաղա-  
լիկները ցուցընել կ'ուղէին: Բայց Ատէլ  
չժողուց, ըսելով որ Պելլիկ օրիորդը ճամ-  
բորդութենէն յոգնած է, հիմայ չիկրնար  
անանկ բաներու զբաղիլ:

Ատէլ իրաւունք ունի, ըստ Պր. Լարոշ, օրիորդը տղաք տեսնելու վարժած չէ:

Այնպէս է, բայց տղաքը շատ կը սիրեմ, պատասխանեց Հեղինէ՝ քաղցր ու սիրալիր կերպով մը տղոց նայելով:

Շատ ուրախ եմ, ըստ Լարոշ տիկինք, որն որ նոյն միջոցին ներս մտնելով՝ Հեղինէին խօսքը լսած էր. վասն զի, փառք Աստուծոյ, տղու պակասութիւն չունինք: Աս խօսքին եւ մանաւանդ նոյնն ըսելու կերպին վրայ այլայլելով Հեղինէ՝ աչքը մել մը դեպ ի այլանդակ կնոջ վրայ դարձուց. բայց շուտ մը դարձեալ անկից հեռացընելով՝ Պր. Լարոշին ու անոր մեծ աղջկան նայեցաւ, որոնց շարեկամական եւ սիրալիր վարժունքը զինքը կ'ապահովընէր: Տան մեկալ անձինքներն օրիորդին այնչափ հաճոյ չեղան, մանաւանդ երկրորդ աղջիկը՝ որուն երեսէն ու աչուցներէն անանկ կ'երեւար որ մօրը խիստ բնաւորութիւնն ունի:

Երբ որ իրիկունք Հեղինէ պառկելու կ'երթար, Պր. Լարոշ իրեն ըստ թէ Կը յուսամ որ վաղը մեզի հետ աւելի կընտանենաք: Նոյն կերպով խօսեցաւ նաեւ Ատէլ: Խոկ որը օրիորդը երկուքին ալ շնորհակալ ըլլալով, աս վերջնոյն խուցը գնաց, ուր իրեն համար անկողին մը պատրաստուած էր:

Ատէլ բոլորովին մօրը հակառակ բնաւորութիւն մ'ունէր. մեծ ուրախութիւն կ'իմանար երբ որ ուրիշին բարիք կամ օգ-

նութիւն կարենար ընել : Ուստի եւ Հեղինելին դժբախտ ըլլալը՝ բաւական եղաւ զինքը շարժելու, որ ամէն կերպ ուշութ ցուցընէ անոր :

Արդ Հեղինել՝ աս երկու անձինքներէն գտած սիրոյն վրայ արտաքոյ կարդի ուրախանալով, երեկոյեան ազօթքին մէջ՝ մասնաւորապէս Աստուծոյ շնորհակալ եղաւ իրեն ասանեկ ապաստանարան մը տալուն համար, եւ առաջադրութիւն դրաւ որ ձեռքէն եկածն ընէ իր բարերարը գոհ ընելու :

### ԳԼՈՒԽ Թ.

Երկրպարդ առառու Հեղինել զգեստներն ու հետք բերած ուրիշ բաները արկղէն հանելով՝ դարանի մը մէջ կը տեղաւորէր : Ասէլ՝ որն որ իրեն կ'օգնէր, քովը քանի մը խոալերէն գերը տեսնելով, Ուրեմն խոալերէն զիտէր, հարցուց :

Հրամար էր, պատասխանեց Հեղինել, մանաւանդ թէ պզտիկութեանս ատենը իտալերենէն ուրիշ լեզու չէի խօսեր, թէ եւ ծնողքո Գաղղիացի են :

Ո՞հ, ի՞նչ երջանկութիւն, գոչեց Ատէլ-եւ շուտ մը հօրը վազեց, աս բանս իմացուց : Քիչ մը ետքը՝ Հեղինել վաճառականին խուցն երթալով, ազնիւ մարդն անոր զանազան հարցումներ ըրաւ զաւկըներուն սորվեցընելու նիւթերուն վրայ : Եւ երբ որ օրիորդը շփոթելով ու համեստու-

թեամբ մէկիկ մէկիկ զրուցեց սորվեցրնել  
յուսացած բաները. Աւրեմն դուք գո՞նձ  
մըն էք եղեք, պատասխանեց ժպանով. Եւ  
որովհետեւ այնչափ կը փութաք գիտցած-  
նիդ ուրիշներուն հաղորդել, անոր համար  
վաղութեալ կը սկսիք դաս տալու: Այսօր  
պէտք է քիչ մը հանգչիք: Բոլոր զաւակ-  
ներո ձեզի կը յանձնեմ, կ'ուզեմ որ զա-  
մէնքն ալ կրթէք:

Առէլ՝ որն որ հան ներկայ էք, տես-  
նելով որ Հեղինէ՝ բոլոր ու ամեն բառերը  
լած առեն՝ իրեն կը նայի, Այս, ըստ,  
ես ալ ձեզի աշակերտ պիտի ըլլամ. միայն  
թէ կը վախճամ որ ամենէն աւելի նեղու-  
թիւն տուողը չըլլամ, որովհետեւ գծա-  
գրութիւն ու խտալերէն սորվելու համար  
մինչեւ հիմայ ըլլած բայր ջանքս պարապ  
ելած է:

Հեղինէ առանց բան մ' բաելու բարեկա-  
մական կերպով ժպանցաւ:

Խրիկուան դէմ Պր. Լարոշ ու իր մեծ  
աղջիկը զՀեղինէ քաղաքին քանի մը տես-  
նելու արժանի աեղերը պարացուցին: Եւ  
թէպէտ ան մութ ճամբաներուն տիսուր  
տեսքը՝ սրբ օրիորդին սրտին արտմութիւնը  
փարատելու յարմար չէք, սակայն ինք քա-  
ջութեամբ կը ջանար սրտին վիճակն ար-  
տարուստ չայցնել:

Տուն զառնալէն ետեւ. հետեւեալ օրը  
տալու համարները պատրաստեց, որպէս զի  
սկսելու գործքը՝ յաջողութեամբ կատարէ:

Պիր. Լարոշ ուղեց Հեղինելին տալու առաջին դասին ներկայ ըլլալ, եւ խիստ զարմացաւ ահանելով անոր բանեցուցած ճարտար կերպը, եւ միանդամայն մեծ համեստութիւնը։ Համառօտ խօսքով մը իր զաւակները յորդորեց որ իրենց արուելու կրթութիւնը սիրով ու եռանդեամբ ընդունին։

Չենք ուղեր հոս մանրամասն խօսիլ Հեղինելին իր աշակերտները կրթելու համար բանեցուցած եղանակին կամ ոճին վրայ, զորն որ մօրմէն սորված էր։ Միայն առ բաւական կը սեպենք ըսել որ Պիր. Լարոշ եւ նոյն խոկ իր կինն իրենց զաւակներուն յառաջադիմութեան վրայ սաստիկ գոհ էին։

Բայց կնոջն առ յառաջադիմութեան վրայ ունեցած հաճութիւնը՝ բարեպաշտ ու խելացի մօր մը արժանի զգացմունքներէն յառաջ չէր դար. հապա միայն մնապարծութենէն, որովհետեւ կուղէր որ զաւակներն աղէկ կրթուած ու զանազան ձիրքերով զարդարուած ըլլան, որպէս զի իր հաւասարներուն մէջ անով պատիւ դանէ, եւ նոյն խոկ երեւելի տիկնանց հետ կարենայ մըցիլ։ Աս մտածմամբ սաստիկ չանք կ'ընէր որ տղաք շուտով եւ շատ բան մէկտեղ սորմին. այնպէս որ Հեղինել կը ստիպուէր իր զօրութեան ներածէն աւելի աշխատիլ։

Տիկինն ամէն որ վիրենք տռառուանց

Խիստ կանուխ կ'արթընցընէր, բոլոր օրուան  
մշջ ալ հազիւ քիչ մը ժամանակ թող  
կու տար որ հանգչին: Անոր համար ոլր.  
Վարոշ շատ անգամ քաղցրութեամբ իր  
առջեւը կը դնէր որ զաւակները սաստիկ  
կ'աշխատցընէ, եւ իրենց ուսուցչէն ալ  
չափէն աւելի բան կը պահանջէ: Խսկ կինն  
անգաղար աս խօսքը կը կրկնէր, թէ Երբ  
որ դեռահասակ անձանց կամ ձեռքը կամ  
գլուխը օգտակար գործքի մը զբաղեալ չ'ըւ-  
լար, ժամանակնին դրեթէ միշտ դէշի կը  
գործածէն: Մարդո չիկրնար, կ'ըսէր, ինք  
զինքը գատարկութեան տալ, բայց եթէ  
երբ որ մեծ հարստութեան տէր կ'ըլլայ:  
Ուստի եթէ դուն ալ մեր զաւակներուն  
ձգելու մեծ հարստութիւն ունիս, ան ա-  
տեն՝ թող ժամանակնին պարագ անցը-  
նեն: Բայց ուրիշներէն աւելի աղէկ զիտես  
թէ անոնց թող տալիքդ ինչ է: Ասկից  
զատ՝ թէեւ աղջիկներս միխաններու տէր  
ըլլային, ինչ պատճառի համար զանազան  
ձիբքեր պիտի չունենային: Կարծեմ թէ  
իրենք ալ ազնուական օրիորդներու շափ  
իրաւունք ունին աղէկ դաստիարակու-  
թիւն ընդունելու:

Պր. Վարոշ իր կնոջը ընտորութիւնը  
ճանշնալով, աս խօսքերուն անպատշաճու-  
թիւնն անոր հասկրցընէլու ետեւէ չէր իյ-  
նար, որովհետեւ զիտէր թէ բոլոր ջանքը  
պարագի պիտօր երթայ: Ուստի երբ որ  
կը տեսնէր թէ անիկայ սովորականէն աւելի

խստաւթիւն կը բանեցընէ , աղոց նստած սենեակը կ'երթար , զանոնք կ'առնուր Հեղինէին հետ պարտելու կը տանէր : Ետքը կնոջը սիրոն առնելու համար՝ իրեն կ'ըսէր որ բաց օդը շատ օգտակար է իր զաւակներուն կերպարանքը կենդանի գոյներով զարդարելու եւ անոնց չնորհալից հասակ մը տալու :

Իսկ Հեղինէ թէպէտ եւ աշխատիլը կը սիրէր եւ մեծ սիրով կը զրադէր իր բարերարին տղոցը կրթութեան , սակայն եւ այնպէս շատ կ'ուրախանար քանի մը վայրկեան հանդիստ ունեցած ժամանակը : Տան մէջ փակուած մնալու վարժած չըլլալով , շատ կը նեղուէր այնպէս առտուընէ մինչեւ իրիկուն աղոց հետ սենեկի մը մէջ նոտելով . անոր համար ալ իրեն մեծ զրօսանք կ'ըլլար դուրս ելլել պարտիլը , մանաւանդ երբ որ քաղաքին չորս կողմի լերանց վրայ կ'ելլէին , որոնք իրեն կը յիշեցընէին սիրելի մօրը հետ տղայութիւնն անցուցած տեղերը :

Լարոշ տիկինն իր ծանօթներուն հետ Հեղինէին վրայ խօսած ատենը , զանիկայ իր օրիորդներուն դաստիարակուէին կ'անուանէր : Իսկ Պր . Լարոշ աս խօսքին վրայ շատ կը տհաճէր , եւ վերջապէս Հեղինէին նոյն անունը տայն արգելեց :

Ինչո՞ւ համար , հարցուց կինը նեղանալով . կրանվիլ տիկինն ալ իր աղջիկներուն ուսուցչին նոյն անունը չի տար :

Անիկայ իրաւունք ունի , պատասխանեց

Պր. Լարոշ, որովհետեւ քովի օրիորդն՝ իրոք ալ գաստիարակուհի է, որուն ազեկ թոշակ կը վճարուի։ Իսկ Հեղինէ՛ բնակութենէն ու կերակրէն զատ՝ բան մը չընդունիր մեզմէ։ միանգամայն այնչափ քաղցր ու բարերարոյ է, որ զինքն՝ աւելի իրրեւ մեր աղջիկը կը նկատեմ՝ քան թէ իրրեւ օտարական մը։

Ըստածիդ կը հաւատամ, գոչեց կինը բարկութեամբ։ արդէն շատոնցուքնէ կը տեսնեմ որ նոյն օտարական աղջիկը զաւակներէդ վեր կը դասես, որուն վրայ պէտք էիր ամընալ։

Մտածէ մէյ մը, ընդմիջեց վաճառականը, որն որ վիճարանութեան մէջ մտնել չուզելով՝ ոտք ելաւ, որ օրիորդը մեծ դրժրախտութիւններ կրած է։ Մեր տան մէջ վարած պաշտօնն իր աստիճանին համեմատ չէ. ինք թէ ծննդեամբ եւ թէ կրթութեամբ մեզմէ շատ վեր է, եւ անոր համար պարտական ենք աւելի զինքը մեծարել՝ քան թէ վրան դութ ունենալ։ Կրանվիլ տիկինն իր աստիճանին նայելով, կրնայ իր զաւակներուն դաստիարակուհին կոչել առւննունցած աղջիկը՝ որն որ հասարակ մարդու զաւակ է եւ ստակով քովը կը կենայ։ Իսկ մենք նոյն իրաւունքը չունինք ազնուական օրիորդի մը վրայ՝ որն որ ըստ պատահման դժբախտութեան մէջ ինկած է։ Ասկից զատ՝ Հեղինէ մեզի համար մեծ գանձ մըն է, թէ իր ձրից կողմանէ եւ թէ մեր զա-

ւակերուն տուած բարի օրինակներուն պատճառաւ : Ուստի քանի որ ինք աս կերպով յառաջ երթալով՝ մեր սիրոյն ու մեծարանաց արժանի կը մնայ , կը պահանջեմ որ իրեւ մեր ընտանեաց մէկ անդամը նկատուի :

Լարոշ տիկինը էրկանն ասանկ յայտնի հրամանին դէմ ընել չհամարձակելով , ալ անկէ ետեւ գոնէ անոր առջեւը ղջեղինէ դաստիարակուհի չէր կանչեր : Աս կողմանէ արդէն էրկանը գէմ վշտացած էր . բայց սրտնեղութիւնն ուրիշ պարագայով մը աւելի մեծցաւ : Խմացաւ որ անիկայ ուղերէ չեղինէին աշխատութեան համար թռչակ կապել : Ասոր վրայ օրիորդին դէմ ունեցած առելութիւնն աւելցաւ , մանաւանդ երբ որ յսեց թէ անիկայ էրկանը առաջարկութիւնը չէ ընդունած : Վասն զի ինք սրտին մէջ ամենեւին ազնիւ զգացում մը չունենալով , չէր կրնար ուրիշներուն սրտին նոյնպիսի զգացումներն ըմբռնել : Ուստի մողբին մէջ հետեւցուց որ չեղինէին ըրածը՝ կեղծաւորութիւն ու բարձրամատութիւն է :

Այսպէսով խեղճ օրիորդը՝ որն որ գանուած վիճակին վրայ բատ ինքեան գոչ կրնար ըլլալ , նոյն կնոջ դէշ բնաւորութեամբը մեծ նեղութիւն կը կրէր . որովհետեւ անիկայ առիթ մը գտածին պէս չեղինէին դէմ աւնեցած հակառակութիւնը յայտնի կը ցուցընէր :

Նոյն միջոցներուն՝ օր մը տիկինն ըստ  
պատահման Հեղինէին պահարանին մէջ  
մօրը թողուցած պղտիկ ծրարփկը տեսնե-  
լով, ինչ ըլլոլը հարցուց :

Մէջը մօրմէս մնացած թղթեր կան,  
պատասխանեց օրիորդը, որոնցմէ անշուշտ  
բնուանեացս գազանիքը պիտի իմանեամ :

— Ուրեմն ինչո՞ւ չէք բանար :

— Որովհետեւ տասնութեր տարւան  
չեղած բանալն արգելուած է :

— Կ'երեւայ թէ մայրերնիդ այլանդակ  
կին մըն է եղեր :

— Այլրս շատ դժբախտութիւն կրած էր,  
բայց եթէ զինքը տեսած ըլլայիք, կարծեմ  
թէ վրան այնպէս կարծիք չէիք ունենար :

Հեղինէ առ խօսքերն ըսելու առեն՝ ա-  
չուրներն արցունքով լեցուեցան :

Զբուցածիս մէջ լալու բան չկայ, ըստ  
խառասիրս կինոր. ևս մօրդ վրայ լածս կը  
կրկնեմ :

— Կարելի է որ մարդիկ մօրս վրայ ծուռ-  
դատաստան ըրած ըլլան : Ես իր առան-  
ձնութեան մէջ սպրելուն պատճառները  
չեմ զիտեր, եւ . . . .

Բառական է, ըստ Ատէլ՝ որն որ աս  
խօսակցութեան վերջերը ներս մնած էր.  
եկուր, Հեղինէ, հայրս մեզի կը սպառէ, որ  
երթանք քիչ մը պարտինք : Վղէկ դիտեմ,  
աւելցուց՝ օրիորդին հետ սենեկէն դարս  
ելած առենը, որ մայրս զքեզ վշտացընելու  
միտք չունէր :

Հեղինէ երթալով տւելի կ'իմանաք որ  
նոյն տան մ.ջ երկայն տաեն պիտի չկարե-  
նայ դիմանալ : Աշակերտները կրթելու հա-  
մար կրած աշխատութիւնը բաւական չէ ,  
ովէտք էր որ նաեւ ամէն օր ականատես ըլլար  
նոյն տղոց եւ իրենց մօրը մ.ջ պատահած  
անվերջանալի կոխեներուն , որոնց վախճանն  
ան կ'ըլլար որ աս վերջինն իր բարկութիւնը  
խեղճ որը աղջկան վրայ կը թափէր :

Նոյն կինը տղոց կրթութեան մ.ջ ար-  
տաքսյ կարգի կարդ մը կը բանեցընէր : Իրեն  
սկիզբ դրած էր թէ տղոց մը՝ մինչեւ որ եօ-  
թը տարւան ըլլոյ , ամէն ուզածն ընելու է :  
Աս այլանդակ կարգաւորութեամբ՝ Լարոշ  
տիկինն իր ամէն զաւակներուն հետ պէտք  
էր որ հակառակութեան մ.ջ դտնուէր .  
որովհեան տղաք մէյ մը ազատութեան ու  
հրամայելու ճաշակն առնելէն ետեւ , ալ  
չէին ուզեր հպատակիլ եւ ուրիշին հնա-  
զանդիլ , եւ ոչ իսկ իրենց մօրը : Ասկից  
զատ նոյն կարգին մէկ հետեւութիւնն ալ  
ան կ'ըլլար՝ որ զաւակներուն ամէն մ.էկն  
իրմէ պղտիկներուն իշխանութեան տակ  
կ'իյնար . ինչպէս իրօք ալ անդրանիկ աղ-  
ջիկը երկրորդին իշխանութեան տակ ին-  
կած էր . երկրորդն ալ՝ երրորդին , եւ այն-  
պէս հասած էին մինչեւ ամենէն պղտիկը ,  
որն որ իրմէ պղտիկ չունենալով , տան  
բռնաւորն եղած էր :

## ԳԼՈՒԽ Ժ.

Հեղինէ տասնութը ասրւան ըլլալու մէկ երկու ամիս մնացած էք, մէջ մ'ալ յանկարծական դէպք մը զինքը ստիպեց մօրմէն ընդունած ծրարիկը բանալու :

Օք մը Ատէլ բատ պատահման իր կրտսերագոյն եղբօրք խաղալիկին վրայ կոխելով՝ կոտրեց : Տղան անմիջապէս սկսաւ լալ ու բոլոր զօրութեամբ պոռալ, Քոյրն իրեն կը խոստանար որ անկէ աղուոր մը գնէ, բայց պարապ տեղ, տղան չէր հանդարտեր, հապա կը պնդէր թէ Ատէլ դիտմամբ ու չարութեամբ խաղալիկը կոտրեց : Ան աստիճան ալ բարկացած էք՝ որ քրոջը ուժգին ապտակ մը զարկաւ :

Նոյն միջոցին մայրերնիններս մնաւ, Եւ կոռուպին պատճառը չքննած՝ իբրեւ թէ պղտիկը միշտ իրաւունք ունենայ, Ատէլին վրայ յարձակեցաւ, որուն մեծ ճարտարութիւն պէտք եղաւ ձեռքէն աղատելու :

Ետքը դաժանութեամբ մը Հեղինէին նայելով, որն որ կողմ մը նստած՝ ձեռագործը յառաջ կը տանէր, երեսն ի վեր՝ Ահա ձեր գործքերուն պտուղը, պոռաց : Քիչ մը ժամանակէ վեր՝ Ատէլ այնչափ փոխուած է, որ ալ շիճանչցուիր : Յառաջագոյն պղտիկ եղբայրները կը սիրէր . իսկ հիմայ երեսնին չինայիր : Ան ատեն միպյն գոհ կը լլաց, երբ որ զանոնք թող տալով՝ ձեզի հետ ընկերութիւն կրնայ ընել . . . .

Բայց ըսկը՝ նպյիմ, աս շփոթ ութեան պատճառն ի՞նչ է :

Ես . . . ես . . . պատասխանեց Հեղինեցողովալով, սոուզիւ ես . . . :

— Վախնալու բան չկայ, միայն ըսկը թէ յանցանքը որունն է. Ատելին, թէ՝ եզրօրը :

Հեղինեց չէր համարձակեր պատասխան տալ, որովհետեւ ըլլալիքը կը գուշակեր : Բայց տիկինն այնչափ ստիպեց որ վերջապէս մեղմ ձայնիւ մ'ըստ թէ Ատէլ եղրօրը խաղալիկն ըստ պատահման կոտրած ըլլալով եւ տեղն ուրիշ մը տալ խոստանալով, կարծեմ թէ . . . :

Յանցանք չունի, անանկ չէ, պուաց կինը սաստիկ բարկութեամբ :

Կարծեմ թէ, ոիկին, Ատէլ աս գործքիս մէջ բոյորովին յանցանքէ ազատ է, պատասխանեց Հեղինեց աւելի համարձակութեամբ :

— Եւ դուն կը յանդդնիս դիմացս ասանկ խօսելու, ի՞նչ, ուրեմն կը կարծես որ աղջիկս անիրաւութեամբ յանդիմանեցի : Հիմայ քեզի կը սորվեցընեմ որ ուրիշ անգամ հետո աւելի մեծարանօք խօսիս :

Աս ըսելով, խեղմ օրիորդին վրայ դիմեց, եւ արդէն մէկ երկու ապտակ զարկած էր, երբ որ Ատէլ հօրը հետ ներս մտաւ :

Պլր. Լարոշ կնոջը բարկութեան պատճառը հարցուցած ատենը, Հեղինեց դուրս ելաւ, խուցը գնաց, ուր ցաւերսւ տակ

ընկճած՝ աթռոռի մը վրայ նետուեցաւ. Բայց  
շուտ մը արտասուալից աշուըները դէպ ի  
երկինք վերցընելով՝ Աստուծ մէ համբերու-  
թեան ոյժ խնդրեց :

Նոյն միջոցին Ատէլ քովը գալով, Աե-  
րելի՛ Հեղինես, ըստ, աս կրած վշտիդ  
պատճառն ես եմ: Ո՛չ, ոիրելիս, կրնամ  
յուսալ որ ինձի չես սրդողիր:

Հեղինե՛ ձեռքն անոր երկրնցընելով, Զէ-  
թէ միայն անիրաւ՝ այլ նաև անմոտական  
գործ կ'ընէի, պատասխանեց, Եթէ ինձի  
ցուցուցած բարեկամութիւնդ մոռնայի,  
պարզապէս անոր համար՝ որ մայրդ հետո  
խոտութեամբ կը վարուի:

— Ուրեմն կ'ուզե՞ն, Հեղինե՛, որ իրաւ-  
րու բարեկամ ըլլալէն զատ, մէկզմէկ իրրեւ  
քոյր նկատե՞նը:

Ամենայն սիրով, զոչեց որբ օրիորդը,  
ասով մօրս մահուան վրայ ունեցած ցաւս  
քիչ մը կը մեղմանայ, եւ աշխարհքիս մէջ  
բոլորովին առանց աղքականի չեմ մնար: Եւ  
Եթէ երրեք . . . :

Լարոշ տիկինը՝ որն որ երկու օրիորդաց  
խոռակցութիւնը դռնէն մտիկ կ'ընէր, յան-  
կարծ ներս մանելով, Ծատ աղէկ, ըստ-  
բարեկաւթեամբ Ատելին: Ուրեմն բաւական  
չէ երկու քոյր ունենալդ. կ'ուզես երրորդ  
մալ ունենալ: Բայց դիտնաս որ ես ա-  
սանկ շինծու բարեկամութիւններէն չեմ  
ախորժիր, եւ չեմ ուզեր որ զաւակներուս  
վրայ տեսնեմ: Խսկ դուք, օրիորդ, կեղ-

ծաւորներուն գլուխն էք : Որպէս զի տղոց հօրը սիրար շահիք , անսանկ կը ձեւացը-նէք որ զիրենք իրրեւ եզբայր ու քոյր կը սիրէք : Բայց ի՞նչպէս կրնաք մոռնալ որ դուք ազնուական տնէ օրիորդ մըն էք , իսկ մենք՝ խեղճ վաճառականի բնուանիք : Ասկայն գիտցէք որ այս ամենայն Պր . Լարոշին պիտի իմացընեմ . բաւական առեն զինքը խարեցիք . ալ ժամանակը հասաւ որ ան ալ աշուշները բանայ եւ զձեղ ճանչնայ : Աս ըսելէն ետեւ դուրս ելաւ , աղջկանն ալ հրամայելով որ ետեւէն դայ :

Ան ծաղրական ու արհամարհական կերպը , որով շարասիրտ կինը Հեղինէին աղնուականութիւնը յիշատակած էք , ստուգիւ զօրք օրիորդը վհատութեան մէջ ձդած կ'ըլլար , եթէ տառապանաց դպրոցին մէջ մեծ հաստատամութիւն ու զօրութիւն ստացած չըլլար : Ուստի նոյն խօսքերուն մէկէն իր վրայ պատճառած այլայլութիւնը շուտով դադրեցաւ , եւ ինք նորէն հանգարտութիւնը գտաւ :

Պր . Լարոշ՝ որն որ բոլոր ան օրը անհանգիստ էք , իրիկունք կանուխ անկողին մտաւ : Ուստի եւ կինը չկրցաւ նոյն իրիկունք հետեւ ուղածին պէս խօսիլ : Բայց երկրորդ օրը՝ առառուանց կանուխ քովին երթալով , սկսաւ ծաղրական կերպով իրեն շնորհաւ որութիւններ ընել զաւակներուն ոյսպիսի ոքանչելի դաստիարակուհի մը գտնելուն համար :

Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց Պիր. Լարոշ, խօսքերէդ տմենեւին բան մը չեմ հասկընար:

Ի՞նչ կ'ուզեմ ըսել, աս ըսել կ'ուզեմ որ զշեղինէ տներնիս առնելովդ շատ խոհեմական գարծք մը գործած ես: Երեկ լսեցի որ Ատէլ հետն այնպիսի կերպով կը խօսակցէր, որուն ամենեւին չես հաճիր, եւ ոչ ալ ես կը հաւնիմ. որովհետեւ դեռահասակ անձանց գլուխները կը տաքցընէ: Իրենց խօսքերը լսոծ ատեն՝ մարդ կարծէ թէ Տամննու Պիթիաս մըն են, մէկը մէկալին տեղ իր կետնքը զոհելու պատրաստ:

— Աս իրենց բարեկամութենէն ի՞նչ վնաս կրնայ ըլլալ:

— Ի՞նչ վնաս կրնայ ըլլալ. դուն վնաս չես տեսներ: Աւրեմն բոլորովին կոյրցեր ես: Ատէլ կ'ուզէ որ քրոջ ողէս ըլլայ չեղինեին հետ, որուն հետ բարեկամ ըլլալուն ես գոհ չեմ:

Ըստծներէդ բան մը չիհետեւիր, պատասխանց Պիր. Լարոշ, կնոջը հետ խօսաժժամնակը հասարակօրէն պահած չափաւորութիւնը մէկդի թող տալով:

Կինն ասոր վրայ այնչափ այլայլեցաւ, որ լեզուն կապուելով՝ չկրցաւ պատասխան տալ: Ասով երիկն ատեն ունեցաւ յառաջուրնէ աւելի քաղցրութեամք ու մեղմոյլ հետեւեալ խօսքը զբուցելու: Անանկ բանի մը վրայ կը նեղանաս, որ քեզի ու բախութիւն պատճուելու էր: Պելրիլ

օրիորդին բարեկամութիւնը մեր աղջկան վնասակար շըլալէն զատ՝ շատ ալ օդուտ ըրած է : Արդէն դուն ալ միտ դրած պիտ' որ ըլլաս որ ալ Ատէլ յառաջուանը չէ . հիմայ հեղ, քաղցր, բարեբարոյ, եղբայրառէր դարձած է : Հիմայ զինքը յանդիմանած ժամանակդ՝ յառաջուան պէս դէմ չիխօսիր . եղբայրներն ու քոյրերը զինքը նևզացաւցած ժամանակնին՝ միշտ կը համբերէ, եւ միշտ պատրաստ է զիրենը հաճեցրնելու . . . :

Աղէկ չըսի՞ որ դուն կոյրցեր ես, պուաց կինը, երբ որ լեզուն քակուելով՝ կրցաւ խօսիլ : Չես տեսներ որ Ատէլ Հեղինէին հետ կապուելով, իր ընտանիքէն բոլորովին կը հեռանայ : Ի՞նչ, կարծես թէ չեմ գիտեր՝ որ զինքը յանդիմանած ժամանակս, միսիթարութիւն գտնելու համար՝ իր սիրելի բարեկամին . . . չէ, իր սիրելի քրոջը քովը կ'երթայ . . .

Կ'աղաշեմ, ալ բաւական է, բաւ վաճառականը . ասոր վրայ ու բիշ անդամ՝ կը խօսինք : Այսօր այնչափ աղէկ չեմ, բոլոր գիշերն անհանգստութեամբ անցուցի . չուզեցի բան մ'ըսել, որպէս զի քունդ չվրդովեմ, կարծելով որ բան մը չէ . բայց աս առառ աւելի գէշ կ'իմանամ : Ուստի շնորհք ըրէ՝ բժիշկը կանչել տուր :

Կինն առջի բերան չկրնարով հաւատալ որ մարդ կարենայ ամբողջ գիշեր մը անհանդիստ բյալ՝ առանց ձայն հանելու, ան

ալ՝ միայն ուրիշները չվրդովելու համար, տարակուսելով մը երկանը երեսը նայեցաւ: Բայց երեսին գունատութենէն՝ ըստին ստուգութեան համազուելով, շուտ մը բժշկին մարդ խառըեց:

Քիչ մը ետքը բժիշկն եկաւ, և երկայն առեն հիւանդին քովը մնաց: «Դուքս ելած առենք՝ Ատէլ ու Հեղինէ, որոնք դրան քով իրեն կը սպասէին, երեսը նայելնուն պէս՝ այլայլութենէն իմացան որ Պլր. Լարոշին հիւանդութիւնը վտանգաւոր է: Բժիշկը հեռանալէն ետքը՝ երկու օրիորդք կամոցուկ մը հիւանդին խուցը մտան:

Պլր. Լարոշ ցած ձայնիւ մը զԱտէլ քովը կանչելով, Հօն ևս, աղջիկս, ըստ դարձեալ մօրմեկ յանդիմանսութիւն լսեր ես:

— Ո՞հ, բան մը չէ:

— Ամենայն ինչ իմացայ, սիրելի՛ աղջիկս. բայց ըսէ ինծի, մայրդ սրտանց կը սիրենս, անանկ չէ:

— Այո՛, բոլոր սրտանց կը սիրեմ, թէեւ հետո երբեմն խոտութեամբ կը վարտի:

— Շատ աղէկ: Արդէն գիտես թէ երր որ Աստուած զաւկըներուն հրամայեց որ ծնողքնին սիրեն, չըստւ թէ ծնողք ամենէւին պակասութիւն պիտի չունենան... Բայց ինծի ամենէն աւելի ցաւ պատճառողն ան է՝ որ Հեղինէ այնչափ նեղութիւն կը կրէ, ուր որ արժանի է երջանիկ ըրայոււ: Ինքն ուր է:

Հեղինէ աշուրներէն արցունքը թափե-  
լով՝ անկողնոյն մօտեցաւ :

Մի՛ լաբ, օրիորդ, լսու Պր. Լարոշ.  
արգէն գիտեմ թէ որչափ վիշտ կը կրէք,  
բայց Աստուած ալ կը տեսնէ, ուստի իմ  
ընել չկրցածո՛ ինք կընէ :

Հեղինէ լալը յառաջ կը տանէր . բայց  
առ թափած արցունքներուն պատճառը  
Պր. Լարոշին կարծածին պէս՝ կրած նե-  
զութիւնը չէր : Ասոյգ է, խստասիրտ կնոջ-  
մէ կրածները ոիրոր շատ վիրաւորած էին .  
սակայն եւ այնպէս իր բարերարին խուցը  
մոնելով՝ անոր գեղնած դէմքը տեսած ա-  
տեն՝ ամէն բան բոլորովին մոռցած էր : Խոկ  
յալուն պատճառն ան էր, որ մէկէն միտքն  
եկած էր թէ կարելի է առ իր միակ բարե-  
րարն ու պաշտպանն ալ կօրսընցընէ . որով  
արտաքոյ կարգի այլայլեցաւ, մտածելով  
թէ երկրորդ անգամ մը որբ ու անօգնա-  
կան պիտի մնայ :

Հիւանդը ջանաց. Հեղինէին ցաւն ու  
տրտմնւթիւնը մեզմացընել . բայց քիչ մը  
եաքը այնչափ տկարութեան մէջ ինկաւ,  
որ հարկադրեցաւ լուել :

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Պր. Լարոշ Երկայն տառեն անհանգիստ  
ու խռովեալ կերպով քնանալէն ետեւ,  
ըղեզի ջերմամբ մը արթքնցաւ, եւ Երեք օր  
նոյն վիճակին մէջ մնաց: Աս միջոցին Ատէլ  
ու Հեղինեւ քսվէն չէին բաժնուեր: Իսկ  
Լարոշ տիկինը թող կու տար որ անոնք  
հիւանդը հոգան, որով ինք ազատ կ'ըլլար  
պարտական եղած ինամբն անոր տանելէն:

Երրորդ օրը իրիկուան մօտ հիւանդը  
ինք զինքը քիչ մը աղէկ զգալով, փութաց  
եկեղեցւոյ խորհուրդներն ընդունելու: Քա-  
ռորդ մը վերջը՝ զՀեղինեւ եւ զԱտէլ քովը  
կանչելով, տկար ու դողդոջուն ձեռուր-  
ներովն անսնց մէյ մէկ ձեռքը բռնեց ու  
սյսպէս խօսեցաւ:

Սիրելի՛ Ատէլս, Հեղինելին բարեկամու-  
թիւնը ստանալովդ, այնպիսի բարեկամ մը  
զտար, զորն որ Հոգին Առւրը գանձ կ'ա-  
նուանէ: Կը բաղձամ որ զձեղ կապող բա-  
րեկամութեան կապերն օրէ օր աւելի հա-  
տատուին: ԶՀեղինեւ Աստուծմէ ետքը քե-  
զի կը յանձնեմ: մի մնո՞նար որ անիկայ որր  
է, եւ թշուառութեան մէջ գտնուած ա-  
տենը՝ հայրդ զինքը քովին առաւ:

Իսկ զձեղ, սիրելի՛ Հեղինես, ո՞րչափ կը  
բաղձայի որ չմեռած՝ ապահովագոյն ու  
յաւագոյն վիճակի մը մէջ տեսնեմ: Կը յաւ-  
այի որ կարենամ ձեղի օգնել: բայց Աս-  
տուած՝ որ մարդկան խորհուրդներուն գրայ

կը ծիծաղի, ուրիշ կերպ կարգադրեց, որպէս զի միշտ յիշենք թէ մեր բախտն իր ձեռքն է : Սակայն իր ամենազօր ձեռքը ձեր վրայեն չիվերցըներ : Զ ձեղ ան անձեն բաժնելով, զորն որ իրքեւ միակ նեցուկնիդ կը համարէիք, կ'ուղէ որ բոլոր յոյսերնիդ իր նախախնամութեան վրայ դնէք : Ինչպէս որ սկսած էք՝ անանկ ալ շարունակեցէք, եւ ան ատեն ստուդիւ առ աշխարհքիս մէջ ալ երջանկութիւննիդ կը գտնէք : Ծնորհակալ եմ զաւակներուն կը թութեան համար ունեցած հոգերնուդ : կը յուսամ որ Ատէլ ապերախտ չ'ըլլար . բայց . . . :

Աս բած ժամանակը՝ ցաւադին հայեցուածով չորս կողմը նայեցաւ, եւ կինը չտեսնելով, Մայրդ ուր է, հարցուց աղջկանը :

Քիչ մը հանգչելու համար՝ հիմայ դուրս ելաւ, պատախաննեց Ատէլ, եթէ կ'ուղէք՝ երթամ կանչեմ :

— Ձէ, աղջիկս, թող հանգչի :

Ասկից եսքը հիւանդը քիչ մը ժամանակ լուռ կեցաւ . եւ իմանալով որ ալ մահը հասած է, երկու օրիորդներն օրհնեց ու հանգարառութեամբ հոգին աւանդեց :

Ատելին լալու աղաղակէն բոլոր ընտանիքն առ աղէտալի դէպքն իմանալով, ամէնքը մեռելին խուցը ժողվեցան : Նոյն ատեն Լարոշ տիկինն անանկ կերպով մը վարուեցաւ, որ աւելի թատերական խաղի մը վայել էր, քան թէ որոի մէջ զգա-

ցուած ցաւը յայտնելու : Ըուտ մ'ալ մեռելոյն յուղարկաս որութեան պատրաստութիւնները տեսնելու հոգը կարծես թէ ուրիշ ամէն բան իրեն մոռցուց :

Խակ Ասելին ու իր բարեկամու հւոյն ցաւն ասկից շատ տարբեր էր : Երկուքն ալ մեռելոյն քովը ծունկ իջած , իրենց արտասուախառն աղօթքներն Աստուծոյ կը մատուցանեին :

Երկրորդ օրը հազիւ թէ յուղարկաւորութիւնը լմբնցած էր . Լարոշ տիկինը զշեղինէ իրեն կանչել տալով , Օրիորդ , բաւ , կարծեմ՝ հարկ չէ զրուցել որ էրկանս մահը զիս կը սախալէ տանս ծախքերը թեթեւցընելու : Անոր համար՝ ալ զձեղ տունտ չեմ կրնար պահել . թէպէտ եւ ասոր վրայ շատ կը ցաւիմ , որովհետեւ այսպէսով զաւակներո ձեզմէ ընդունած կը թութենէն պիտի զրկուին :

Տիկին , պատասխանեց որբ օրիորդը՝ պարապ տեղ ջանք ընելով այլայլութիւնը ծածկելու , պատրաստ եմ հնապանդելու : Ե՞րբ կը բաղձաք որ երթամ :

Աս անակնկալ հարցման վրայ կինը խռովեցաւ . եւ իր անագորունութեան վրայ ամը չցաւ : Բայց սաստիկ բարձրամիտ ըլլալով , չուզեց խօսքը ետ առնուլ . ուստի առերեւոյթ հանդարտութեամբ մը , Գիտեմ որ , բաւ , ձեզի խիստ եանը պիտի դայ աղջկանէս բաժնուելնիդ . անոր համար կարծեմ թէ աս բաժանումը որչափ

որ շուտ ըլլայ , այնչափ աղէկ է : Մարդ  
դժուարին գործքի մը կատարումը՝ որչափ  
աւելի կ'ուշացընէ , այնչափ աւելի գժուա-  
րութիւնը կը մեծնայ :

Առ վերջին խօսքերով Լարոշ տիկնոջ  
բնչ ըսել ուզելին իմանալով Հեղինէ , Լաւ-  
է , ուրեմն հիմնակ անմիջապէս կ'երթամ ,  
պատասխանեց :

Բայց թէպէտ չէր գիտեր թէ ուր պի-  
տի երթայ , ի վերայ այսր ամենայնի սրտին  
մէջ ոչ զինքր մերժող կնոջ դէմ ատե-  
լութեան զգացում մ'ունեցաւ , ոչ այ-  
յուսահատութեան խօրհուրդ մը : Միարը  
բերաւ իր բարերարին նախընթաց օրուան  
խօսքը , թէ Աստուած զինքրն ամէն մարդ-  
կային օգնութենէ զրկելով . կ'ուզէ ստի-  
պել որ բօլոր յոյսն իր ամենակարողու-  
թեան ու ողորմութեան վրայ դնէ : Այս-  
պէսով հանդարտ սրտով խուցը գնայ ,  
ոկտաւ զգեստներն եւ ուրիշ ունեցածը  
արկզին մէջ տեղաւորել :

Ինք աս գործողութեան զբաղած ա-  
տեն , Ատէլ ներս մտաւ , եւ սաստիկ այլ-  
այլութեամբ նոյն պատրաստութեան պատ-  
ճառը հարցուց :

Սիրելիս , պատասխանեց Հեղինէ , զքեզ  
արամեցընելու ստիպուելուս վրայ շատ կը  
ցաւիմ . բայց որովհետեւ իմանալ կ'ուզես .  
պէար է ըսեմ : Մայրդ կը պահանջէ որ  
ասկից երթամ :

Այնպէս բան չիկրնար ըլլալ . զուեց

Ատէլ . Եւ առանց ուրիշ բան զբուցելու՝ դուքս եղաւ, միտ չդնելով Հեղինեին՝ որն որ կը ջանար զինքն արգելու : Անմիջապէս մօրը քովն երթալով, Մայր, ըստ յարգութեամբ՝ բայց միանգամայն հաստատութեամբ, լսեցի որ կ'ուզէք եղեր զՀեղինեանէն հանել : Բայց մոտածեցիք թէ որբ է եւ մարդ չունի :

Անիկայ ամենեւին քու գիտնալու բանդ չէ . պատասխանեց բարկութեամբ Լարոշ տիկինը :

— Թառղութիւն տուէք, մայր, աս բանս ինձի ալ կ'իյնայ, որովհետեւ հայրս զՀեղինե ինձի յանձնեց :

— Աղէկ . Եթէ քեզի յանձնեց, դնա զինքն ուզածիգ պէս հոգա, ես չեմ խառնուիր : Բայց գիտցիր որ տներնես ելլելուն վրայ չեմ նեղանար : Արդէն երկայն ժամանակ կայ՝ որ ձեր երկուքին մէջ եղած արտաքոյ կարգի մուերմութիւնը տհաճութեամբ կը տեսնեմ . Եթէ քիչ մ'ալ ասանկ յառաջ երթալու ըլլայ, կարծեմ եղրարցդ ու քերցդ բերնէն՝ հացերնուն վերջին կտորը պիտ' որ առնուս, աս օտարականին տաս :

— Ընտանեացս ունեցած պարտքս երբեք չեմ մոռնար . բայց չեմ կրնար ալ մօռնալ որ աս խեղճ որբ օրիորդին օդնելը պարտք է :

— Խեղճ . . . Այնպէս կը կարծուի . բայց թող մէջ մը ան համբաւաւոր դադանի

ծրարը բանայ : Անտարակոյս անոր մէջ մեծ հարստութիւն եւ այնպիսի անուն մը կը գտնէ , որն որ կրնայ իրեն մեծ պատիւ պատճառ ել :

— Տանութիւն տարւան չեղած՝ չիկրնար բանալ , ինչպէս որ գիտէք : Բայց որովհետեւ մարդ չունի , անոր համար գոնէ պէտք է որ զինքը քովերնիս պահենք մինչեւ որ տեղ մը գտնէ :

— Զինքը անէն հանողն ով է : Ինք իրմէ ուզեց անոմիջապէս երթալ :

— Բայց արդեօք հրամանքնիդ զինքը չափացնենք որ այնպէս ուզէ :

— Ես իրեն ճշմարտութիւնը միայն զրուցեցի :

— Կարելի է . բայց չէք վախնար որ այնպէս զինքը մէկէն անէն հանելնուդ համար երեսնիս վար չառնուն ամէն ծանօթներնիս , որոնք զնեղինէ կը ճանչնան եւ գիտեն ալ թէ հայրս զինքը որչափ կը սիրէք :

Առ խորհրդածութիւնը՝ որն որ Լարու տիկնոջ միտքը չէր եկած , բաւական եղաւ խելքը գլուխը բերելու : Տեսաւ թէ որք օրիորդն այնպէս մէկէն ի մէկ անէն մերժելով , ստուգիս ամենուն առջեւը համարումը պիտի կորսընցընէք : Ուստի շուտ մը զԱտէլ իրեն խաւրեց , բանդ տուաւ որ կենայ , մինչեւ որ ուրիշ տեղ մը հոգացուի :

Առել վազեց Հեղինեին քովը գնաց , եւ վիզը նետուելով , Սիրելի՝ բարեկամն .

բարաւ . մօրս թողութիւն տուք : Կը բաղ-  
ձայ որ մեր քովո մնաս , մինչեւ որ յարմար  
տեղ մը գանուի :

— Ուրեմն ինծի համար իրեն բարեխօս  
եղաք :

— Այս , բայց ասոր վրայ չխօսինք : Հի-  
մայ մօրեղքօրս նամակ մը կը գրեմ , որ քե-  
զի համար տեղ մը հոգայ : Ապահով եմ  
որ ինդիրքս չիմերժեր , որովհետեւ զիս շատ  
կը սիրէ : Եւ ինք առելի կրնայ Նիսի մէջ  
տեղ մը գտնել . քան թէ մենք հոսանդո ,  
բայց ապադայիդ վրայ որոշում մը չըրած ,  
յաւագոյն չըլլար որ մօրմեդ ընդունած  
ծրարիկդ բանաս : Գուցէ անոր մէջէն լոյս մը  
կ'ունենաս բռնելու ընթացքիդ նկատմամբ :

— Ստոյգ է որ տասն'ութը տարւան ըլլա-  
լուս հաղիւ երկու ամիս կայ : Ասկից զատ՝  
հիմակուան վիճակո , զարն որ մայրս չեր  
կրնար գուշակել . ինծի աս թոյլուու-  
թիւնը կու տայ :

— Ես ալ այնպէս կը կարծեմ : Ուստի ես  
կ'երթամ . դուն կարդա . ժամե մը կու  
գամ ինչ որոշերդ կ'իմանամ :

Երբ որ Հեղինէ խցին մէջ առանձին  
մնաց . արկդը բացաւ . գաղտնեաց ծրարը  
դուրս հանեց , եւ գողգոջուն ձեռուրնե-  
րով վրայի կնիքը բացաւ : Մէջը շատ մը  
ճերմակ թղթերով փաթթուած՝ նամակ  
մը դտաւ , եւ այլայլութեամբ ու առան  
արցունք թափելով՝ հետեւեալ խորերը  
կարդաց :

Ամենասիրելի Հեղինեւս :

Աւ հիմայ տղայ չես, ուստի եւ սիրաւ կրնամ քեզի բանալ, Այսօր այնպիսի բաներ պիտի իմանաս, զորոնք մինչեւ հիմայ կամ չեիր կրնար հասկընալ, կամ ուրիշ մոքի կը տանեիր:

Կրած անունդ՝ քու ընտանեացդ անունը չէ: Ես ստիպուած էի նոյն անունն առնուլ, որպէս զի ազատիմ ինձի դէմ զըրգուուած թշնամնոյ մը կատաղութենէն, որն որ կեանկոս աս դաշամբ շնորհեց, որ բալոր մարդիկներէն անծանօթ կեանք մ'անցընեմ:

Լու ուրեմն ըսելիքս....: Բայց չէ, կը վախնամ որ չըլայ թէ աս թուղթն անմարդուն ձեռքն իյնայ, որուն կատաղութենէն դքեզ ազատել կ'ուզեմ: Անսաքեզի ամէն բան կը հասկըցընէ ու ընտանիք կը ճանչցընէ:

Միայն հայրենիքս տեսնելու եւ հոն մեռնելու բաղձանիքը կրցաւ զիս ստիպել գաղղիա դառնալու: Իսկ դուն, աղջիկո, որովհետեւ օտար երկիր մը ծնած ես, եւ ամենեւին կապ մը դքեզ իմ հայրենեացս հետ չիկապեր, փախիր, փախիր. վասն զի մօրդ թշնամին հոն կը բնակի:

Բայց պէտք չէ որ ան մարդուն դէմ վրէժինդրութեան ու ատելութեան խորհուրդներ ունենաս: Ես իրեն շատոնց թողութիւն տուած եմ. կ'ուզեմ որ դուն ալ թողութիւն տաս, ինչպէս որ Քրիս-

առա Տերն մեր իր գահիծներուն ներեց :  
Աս ակնկալութեամբ է՝ որ Աննային հրա-  
ման տուած էմ՝ անոր անունն ու մեզի  
հետ ինչպիսի կապով, կապուած ըստը  
քեզի յայտնելու : Բաւական է որ իրմէ  
փախչիս :

Խոսղիա ազդական մ'ունիմ, որն որ  
քեզի կը սպասէ : Աննային յանձնած էմ  
որ զքեզ անոր քովս տանի : Հոն որ կ'եր-  
թաս, աս աղախնոյն ինձի ըրած ծառայու-  
թիւնները չմոռնաս : Մինչեւ իր մահը զին-  
քը քովզ պահէ :

Աս է մօրդ վերջին կամքը :

Ուրիշ ընկելիքներդ մեծարոյ ժողովրդա-  
պետնիս քեզի կը զրուցէ . ամենեւին տա-  
րակոյս չունիմ որ անոր խրատներուն կը  
հետեւիս :

Ալ ուրիշ բան չիմնար ըսելու, բայց է-  
թէ զքեզ Աստուծոյ նախախնամութեան  
յանձնել :

Մնաս բարով, սիրելի աղջիկս : Աս-  
տուած զքեզ պաշտպանէ :

### Մայրդ կատարինէ :

Ուրեմն ալ յուսակու բան մը չունիմ,  
զոչեց դժբախստ աղջիկը եւ նամակը ձեռ-  
քեն վար ինկաւ : Ետքը աթոռի մը վրայ  
նետուելով, ձեռութեներօվն երեսը ծածկեց,  
սկսաւ աչու ըներեն արտասուաց հեղեղ մը  
թափել :

Բայց առ վիճակին մէջ երկայն առեն շմաց . շուտմը աչուքները երկինք վերցուց , եւ մէկէն յուսահատութեան մէջ իյնալուն վրայ ցաւելով , Տէր , բսաւ , գուն այնպէս ուղեր ես , քու կամքդ օրհնեալ բլայ : Ներէ ինծի որ վայրկեան մը քու բարերարութեանդ վրայ տարակուսեցայ , ինչպէս ես ալ կը ներեմ ան թշուառ կնոջ , որն որ մօրս բոլոր յոյսը պարապի հանելով , զիս առ վիճակին մէջ ձգեց : Գուն ալ , Տէր , թողութիւն տուր անոր , որովհետեւ ինծի բրած վնասը չէր իմանար :

Երբ որ Ատէլ խուցն եկաւ , որբ օրիսրդն անոր դիմացն ելլելով , Սիրելի՛ բարեկամն , բսաւ , Աստուած այնպէս ուղերէ . պէտք է որ զլուխ ծռեմ : Առ կարդա : Աս ըսելով՝ մօրը նամակը ձեռքը տուաւ : Ատէլ գրուածքը լմբնցընելուն պէս՝ որտմառութեամբ , թշուառական կին , գոշեց , բաւական չէր որ . . . :

Բայց Հեղինէ չժողուց որ խօսքը լմբնցընէ , ձեռքը բերնին վրայ դնելով , Սիրելիս , բսաւ , գիտես որ Աստուած շատ անզամ չար մարդիկն իրեն դործիք կ'առնու , իր ընտրելոց հաւատքը փորձելու համար : Եթէ կ'ուզենք Աստուածոյ ողորմութեան մասնակից ըլլալ , ջանանք ան մարդիկներուն թողութիւն տալ որոնք մեզի առիթ կ'ըլլան նոյն ողորմութեան դիմելու :

Խրաւունիք ունիս , պատասխանեց Ատէլ : Մոռնանք աս թշուառը եւ միայն ներ-

կային վրայ մտածենք : Ես երթամ մօրեղ-  
բօրս նամակ գրեմ : Բայց անկից յառաջ՝  
պէտք է որ արկղը տեղաւորած զգեստ-  
ներդ հանես դարձեալ իրենց տեղը գնես :  
Խուցը հիմնակուան դտնուած միջակին մէջ  
չեմ կրնար տեսնել : Կ'ուզեմ որ միշտ մե-  
զի հետ իրբեւ բնտանեաց անդամ մը վա-  
րուիս :

### Գ Լ Ա Խ Խ Խ Ժ Բ .

Վ երջապէս ահաւասիկ պատասխանս,  
գոչեց որ մը Ատէլ՝ Հեղինէին սենեակը  
մտնելով . թէպէտ շատ սպասեցինք , բայց  
զործքը մեր բաղձացածին համեմատ դլուխ  
ելաւ : Մօրեղբայրս քեզի համար դաստիա-  
րակուհւոյ տեղ մը գտեր է՝ Մոնրոպէր  
սեպուհին տան մէջ , որն որ “Նիմ” քաղա-  
քին առաջին աստիճանի ազնուականներէն  
մէկն է եղեր : Ալ յուսայ որ դուք ալ կը  
համիք :

Ծնորհակալ եմ , բաւ Հեղինէ՝ բարե-  
կամը գրկելով :

Ծնորհակալ բլալէն յառաջ , պատաս-  
խանեց Ատէլ՝ Հեղինէին խօսքը կտրելով .  
ըսէ տեսնեմ արտաքոյ կարդի բան մը չե-  
րեւար քեզի , որ այսպէս ուրախ զուարժ-  
ըլամ , ուր որ պէտք էի տիսրիլ իրարմէ-  
բաժնուելուս վրայ :

— Ամնեւին չէ : Ազէկ գիտեմ թէ  
որչափ կը բաղձաս իմ երջանկութեանս .

ուստի եւ ուրախութեանդ պատճառն անմիայն կը համարիմ, որ ինծի ասանկ աւետիս կը բերես :

— Կը սիսլիս : Աստարակոյս չկայ բանմք՝ զորն որ քու երջանկութեանդ համար պատրաստ շրջամ՝ զոհելու : Բայց կ'երեւայ թէ Աստուած հիմնկու հիմնյ չ'ուզեր անզոհը՝ որն որ ինծի շատ ծանր պիտի գար : Բաժանումնիս երկայն ժամանակ պիտի չտեւէ :

Ի՞նչպէս, դոչեց Հեղինէ՝ աշուըներն ուրախութենէն փայլելով :

— Որիշարտոյ մօրեղբայրս, ինչպէս որ որդէն ըսած էմ, զաւակ չունիր. կինն ալ երկայն առենէ վեր հիւանդուտ է : Ուստի բաղձարով որ տան մէջ ապահով մէկն ունենայ, զիս մօրմէս ինդրեց : Անոր համար մեր ընտանեաց գործքերը կարգի դրուելուն պէս՝ ես ալ նիմ՝ պիտի երթամ : Հիմայ պէտք է որ քեզի օդնեմ արկղդ պատրաստելու . որովհետեւ Մոնրոպէր տիկինը կ'ուղէ որ անմիջապէս ճամրայ ելլես :

Պատրաստութիւնը շուտ մը լինցաւ : Եւ երկրորդ առառու կանուխ Հեղինէ զնաց հրաժարական ողջոյնը տալու . Լարոշ արկնոջ, որն որ նոյն անդամ զինքը սովորականէն աւելի քաղաքավարութեամբ ընդունեցաւ :

Օրիորդ, ըսաւ . սրտանց կը բաղձամ՝ որ սկսելու պաշտօննիդ յաջողութեամբ կատարէք, երջանիկ բլագիք : Եւ որովհետեւ

Ճամբորդութիւննիդ ընելու համար ստակի կարօտութիւն ունիք . ընդունեցէք առ փոքր գումարը՝ զորն որ սրտանց կը մատուցանեմ, ցաւելով որ էրկանս մահաւընէն ետքը գտնուած վիճակս չիներեր մեծագոյն գումարով մը շնորհակալութիւնս յայտնելու :

Աս ըսելով, անոր քսակ մը տուաւ, զորն որ Հեղինէ շնորհակալութեամբ ընդունեցաւ :

Անտարակոյս կարդացողները պիտի զարմանան թէ ինչու Հեղինէ չմերժեց : Բայց մերժելու որ ըլլար, կընար կարծիք տալ թէ Լարոշ տիկնոջ դէմ սրտին մէջ հակառակութիւն ունենայ, ուր որ ամենեւին անանկ զգացում չունէր, եւ կրածները մնալու բոլորովին ելած էին :

Լարոշ տիկնոջ շատ անգամ շնորհակալ ըլլալէն ետեւ, Հեղինէ վերջին ըարեւը տուաւ տղոց ալ, որոնք ջերմաջերմ կու լային . որովհետեւ թէպէտ շատ պակասութիւններ ունէին, բայց զօրիորդն այնպէս սրտանց կը սիրէին, որ անոր իրենցմէ բաժնուելուն վրայ մեծապէս կը ցաւէին ու կը արտմէին : Աեր դիւցավնուհին ալ այնպէս այլայլած էր, որ Ատէլ ստիպուեցաւ իրեւ թէ բռնութեամբ զինքը տնէն հանել եւ կառքը նստեցընել, որն որ դրան առջեւը իրեն կը սպասէր :

Երկայն ժամանակ բաժնուած չենք մնար, ըստ Ատէլ՝ բարեկամին : Անոր հա-

մար մի լար, սիրելի Հեղինես, քաջալե-  
րուէ եւ յուսա:

Ետքը գորովով զինքը գրկեց եւ փո-  
թով տուն մտաւ, որպէս զի կամացը հա-  
կառակ աչուրները մթքնցընելու սկսող  
արցունքները ծածկէ:

Երբ որ Հեղինէ քաջաքէն դաւրս ել-  
լելով՝ սկսաւ դաշտերուն մարտւր օդը  
ծծել, սիրտն անհանդիստ ընսղ տիտւր  
խորհուրդները կամաց կամաց ցրուեցան,  
եւ նոր զօրութեամբ ու յուսով լեցուե-  
ցաւ:

Ճամփորդութեան առեն նշանակու-  
թեան արժանի դիպուածի մը չպատահած,  
հանդոտեամբ “Սիմ” հասաւ ։ Պը. Անիշար-  
ադյ եւ իր ամուսինը զինքը մեծ օիրով ու  
բարեկամութեամբ ընդունեցան։ Ազնիւ-  
մարդը շուղեց զօրիտրդը ան օրը Անկրո-  
պէր տիկնոջ առջեւը հանել։

Այսօր ձեր տունը կը հանգչիք, բսաւ-  
վաղն ալ ներկայանալու բլաք, բաւականէ։

Աս սիրայիք ընդունելութիւնը՝ որուն  
Հեղինէ չէր կրնար ակնկալութիւն ունե-  
նալ Լարոշ տիկնոջ եղրօրը կողմանէ, իր  
վրայ քաղցր աղբեցութիւն մը ըրաւ, եւ  
իրիկունը սենեակը քաշուած ատենը։ Աս-  
տուծոյ շնորհակալ եղաւ օտար քաջարի  
մը մէջ իրեն նոր պաշտպան մը տալուն  
համար։

Երկրորդ օրը նախաճաշէն ետեւ, Պը.  
Անիշարադյ դահեղինէ Անկրոպէր ուեպուհին

ապարանիքը տարաւ, որն որ քաղաքին մէկ ծայրը կը գտնուէր :

Մոնրոպէր տիկինը զորք աղջիկը թէեւ սիրով, բայց քիչ մը բարձրամտութեամբ ընդունեցաւ : Իրեն զրուցեց թէ աղջկանը քով շատ բան չունի ընելու, որովհետեւ անիկայ աղէկ կրթութիւն ընդունած եւ արդէն չափահատ ըլլալով, ալ դաստիարակուհւոյ հարկաւորութիւն չունի : Անոր համար ալ, ըստ, աղջկանու աւելի ընկերութիւն պիտ'որ ընէք, քան թէ դաստիարակութիւն :

Հոս դիտաւորութիւն չունինք Մոնրոպէր տիկինոց եւ անոր Օրդանս աղջկան ընաւորութիւնը նկարագրելու : Բաւական կը սեպենք միայն ըսել որ տիկինը Ակրսայիշի արքունեաց մ.ջ մեծցած ըլլալով, իրեն մեծ պատիւ կը համարէր թագուհին գտած շնորհքները, եւ միանդամայն թէ իր ընտանեաց եւ թէ ամուսնոյն տան աղնուականութիւնն իր աշքին առջեւը բաւական առաւելութիւն մըն էր՝ ամենևն պատիւ ու մեծարանք գտնելու :

Օրդանս ալ մօրը փառախրութիւնն ու ընդունայնութիւնը ժառանգած էր : Եւ եթէ սեպուհին տիտւր բնաւորութիւնը չըլլար, որն որ "Ախմ" քաղաքը իրրեւ առանձնութեան մ.ջ կ'առպէր, մայրն ու աղջիկը շատոնց նոյն գաւառական քաղաքէն հեռացած կ'ըլլային, մայրաքաղաքին զուարձու թիւնները վայելելու եւ հոն իրենց հա-

բրստութեան ու ազնուականութեան առաւելութիւնները փայլեցրնելու :

Տիկինը ճաշուն ժամանակը զշեղինէ սեպուհին եւ իր երէց որդւոյն Եղուարդայ ներկայացուց : Աս վերջինը՝ որն որ նոյն օրերը պատերազմական միայարկ նաւի նաւագետ անուանուած էր, կերպարանացը վրայ սիրո շահելու յարմար բան չունէր : Սեւ աշուքները՝ դաժան պայծառութեամբ մը կը փայլէին . պրկած ու ներս քաշուած շրթունքներուն վրայ հազիւ երբեմն ծաղրածու . ժպիտ մը կը տեսնուէր : Ի վերայ այսր ամենայնի նոյն երիտասարդին գծագրութիւնը հաճոյական կրնար ըսուիլ հօրը կերպարանացը համեմատութեամբ, որուն արտաքին երեւոյթն ու վարմունքը Հեղինէին վրայ արտաքոյ կարդի տպառութիւն մ'ըրին :

Առաջին նայուածքին՝ մարդ կը կարծէր որ սեպուհն եօթանասուն տարին անցած ըլլայ : Բայց շուտ մը վրան խոր արտամութեան նշաններ կը նշմարէր, եւ կ'իմանար որ անոնք պատճառ կ'ըլլան այնպէս ծեր երեւնալուն : Իրզը ալ՝ եւ ոչ վաթառուն տարեկան էր + Բարձրահասակ էր, բայց վտիտ ու կորացած . երեսները բոլորովին գունատած էին : Խոկ վարմունքն այնպէս աղանդակ էր եւ այնպիսի սաստիկ թափծութեամբ խառն, որ տեսնողին վրայ զարմանք ու նաև վախ կը պատճառ էր : Այնպէս կ'երեւար թէ չորս կողմին եղածին

առենեւին միտ չիդներ։ Կերակրոյ ժամանակը հաղիւ մէկ երկու անգամ բերանը բացաւ, եւ սեղանը լըննալուն պէս՝ ունեակը քաշուեցաւ։

Ինք երթալուն պէս՝ Մոնրոպէր տիկինը Հեղինէին բաւ, թէ ամուսինը օրուան մեծ մասը սենեակը կ'անցընէ, որավհետեւ ինք զինքը բոլորումին ուսման տուած է։

Առ խօսքին՝ նաւապետին շրթանցը վրայ ծաղրական ժպիտ մը տեսնուեցաւ. բայց հաղիւ վայրկեան մը տեւեց, եւ կերակարանքը դարձեալ իր բնական դաժանութեան երեւոյթն առաւ։

Քիչ մը ետքը Օրդանս զՀեղինէ առաւ իր բնակարանը տարաւ, եւ հոն ոկտաւ խել մը հարցմունքներ ընել, թէ ազնուական օրիորդ մը առաջին անգամ ընկերութեան մէջ երեւցած ատեն՝ ինչ կերպով վարուելով՝ կրնայ աւելի հաճոյական ազգեցութիւն ընել։

Հեղինէ քիչ մը ատեն մտիկ ընելէն ետեւ, թառդութիւն տուեք, օրիորդ, ուստասիսնեց, բարձր ու ազնուական ընկերութեանց սովորութիւններն ինծի անծանօթ ըլլալով, չեմ կրնար . . . . .

Գիտեմ, գիտեմ, գոշեց Օրդանս, ընկերին խօսքն ընդմիջելով։ Բայց բաւք ինձի, ամօթ չէ որ աս տարիքիս մէջ զիս ընկերութենէ հեռու եւ գրեթէ առանձնութեան մէջ կը պահեն, ուր որ ես ալ կրնամ աշխարհիքիս առջեւք շաղալ ու

փայլել, ինչպէսոր մայրս միեւնոյն հասակին մէջ կը փայլէր: Դարձեալ խօստ անհաճոյ բան չէ ինծի, որ տեղ մը չկարենամ եթալ՝ պուանց հօրս, որուն կերպարանքը միոյն բաւական է ամենուն ուրախութիւնը խափանելու եւ չորս կողմք տիրութեամբ լեցընելու:

Աշխարհքս զուարձութիւններ ունի, կը խոռոշվանիմ, բոաւ Հեղինէ: բայց թեղէտ երբեք անսոց փորձն առած չըլլամ, առկայն դիտեմ որ մարդուն սրտին մէջ ցաւէ ու անհանգստութենիւ ուրիշ բան չեն ձգեր:

Ա'աղաչեմ, կ'աղաչեմ, դուք ալ քարոզ տալու մի սկսիք, գոչեց Օրդանս: Կարծես թէ կարողոս եղբօրս հետ խօսք մէկ ըրեր էք: Ինքն ալ ամէն անդամ որ հոս կու գայ, կը սկսի գաւառական քաղաքներու կեանքը գովել: Գիտնալու եւ որ անձնապահ զօրաց գնդին մէջ պաշտօնակալ է, եւ մայրաքաղաքին ամէն զուարձութիւնները վայելելու վիճակին մէջ կը գտնուի: Եվ վերայ այսր ամենայնի միշտ կը հաստատէ որ մարդ աւելի երջանիկ կը լսոյ սպատիկ քաղաքի՝ քան թէ մեծ մայրաքաղաքի մը մէջ: Բայց ես քաածներուն չեմ համոզուիր: Ամենայն սիրով կ'ուզէի իր տեղն ըլլալ եւ իմն իրեն թողուլ:

— Կարելի է շուտով կը զդիայիք ու կը ցաւէիք:

— Կարելի է: Բայց գոնէ մայրս արքու-

նեաց մէջ անցուցած ժամանակին վրայ երբեք ցաւ յայտնած չէ : Մինչեւ հիմայ յօժարութեամբ կը խօսի թագուհւոյն իրեն ցուցուցած սիրոյն վրայ . այնպէս որ հայրս վախնալով որ չըլլայ թէ իմ սրտիս մէջ ալ Ա երսայլ երթալու բաղձանքը գրգռուի առջեւս ասանկ խօսակցութիւն ընելի իրեն արդելեց :

— Ինծի կ'երեւայ որ սեպուհը շատ խոհեմութեամբ վարուեր է :

— Այնպէս կը կարծէք : Խոկ մայրս աս արգելքը բանի տեղ չիդներ : Ասկից ուրիշ՝ ուզելու ալ ըլլայ, շիկրնար ինք զինքը բոնել ու իր անցեալ կեանքը չմիշտապել, երբ որ ներկան այնպէս տիսուր կը տեսնէ : Ինծի շատ անգամ ըսած է որ համբերեմ, յուսացընելով որ իմ ժամանակու ալ կու դայ . . . . :

Յայտնի է որ Հեղինէ չէր կրնար երջանիկ ըլլալ այնպէս տուն մը՝ ուր ստիպուած էր ամէն օր ասանկ ու ասոնց նման խօսքեր լսել : Խրօք ալ շարաթէ մը ետքը միտքը դրաւ որ հսնկից ելլէ : Բայց երբ որ Պլ. Ռիշարտոյ աս որոշումն խմացաւ, դինքը մնալու յորդորեց : Մարդս ամէն տեղ կրելու վեշտ կ'ունենայ, ըսաւ, ուստի աւելի աղէկէ՝ որ փոխել չկրցածին համբերէ, քան թէ ինք զինքը վտանգի մէջ դնէ՝ աւելի գէշին պատահելու :

Բայց Մոնրոպէրեան ապարանքին մէջ Հեղինէին վիճակին աւելի տաղտկացուցիչ

ընողն էր Եղուարդ նաւապետին վար-  
մունքը, որն որ ամէն կերպով կը ջանար  
անոր աչքը մտնելու, թէեւ օրիորդը շատ  
անգամ իրեն կը հասկրցընէր որ առ բանս  
իրեն որչափ անհաճոյ է։ Յոյսը միայն ան  
էր՝ թէ Կարսլոս եղբայրը, որն որ քիչ մը  
ետքը ծնողացը քովը պիտի դար, իր ներ-  
կայութեամբը զինքը պատշաճ չափի մէջ կը  
պահէ, եւ քոյրն ալ քիչ մը աւելի խել-  
քով վարուելու կը յորդորէ։ Աս ակնկա-  
լութիւնը կը հիմնէր՝ նոյն երիտասարդին  
բարութեան ու ազնուական վարմանց ա-  
մենուն տուած զովեստներուն վրայ։

### ԳԼՈՒԽ ԺԳ.

Մ'ոնրոպէր սեպուհին տխուր ու նուա-  
զեալ աչուրներուն մէջ ուրախութեան  
նշոյլ մը փայլեցաւ, երբ որ օր մը ամու-  
սինն իրեն աւետեց որ հետեւեալ օրը Կա-  
րոլոս որդին պիտի տեսնէ։ Հեղինէ մոտ-  
ծելով որ այնպիսի առթի մէջ օտարա-  
կանի մը ներկայութիւնն այնչափ հաճոյ  
չ'ըլլար, հրաման խնդրեց որ նոյն օրը Պի-  
Ռիշարտոյին տունն անցընէ. որուն սիրով  
հաւանութիւն տուաւ տիկինը։

Երբ որ իրիկունը Հեղինէ ապարանքը  
դարձաւ, դռնապանն աճապարեց Պի. Կա-  
րոլոսին գալուստն իրեն աւետեց։ Նոյն  
աւետիսը կրկնեց տան հոգարածու կինն  
ալ, որուն հետ Հեղինէ ստեղ հաճու-

թեամբ կը խօսակցէք, որսվէետեւ ընկերական ու սիրալիք կին մըն էք :

Կատկածելով որ Պր. Կարոլսո մօրն ու քրոջը քովն է, օրիորդը երկշռառւթեամբ սրահին դուռը բացաւ : Իրօք ալ բարձրահասակ երիտասարդ մը տեսաւ, որն որ բազմոցի մը վրայ նստած՝ լրագիր կը կարդար : Մոնրոպէք տիկիննը մայրական սիրով վրան կը նայէք . իսկ Օրդանս կը զրօննուր եղբօրը գեղեցիկ մազերը մատուրներուն փաթթելով ու խոպոպիք շինելով :

Երիտասարդը կռնակը դրան դարձուցած եւ միանգամնյն բոլորովին իր ընթերցուածին մէջ ընկղմած ըլլալով, Հեղինեին ներս մտնելը շիմացաւ : Բայց Օրդանս զինքը տեսնելով, ոտք ելաւ եւ եղբօրը ներկայացընելով, Կարոլս, ահաւասիկ Պելլիկ օրիորդը, գոչեց :

Դեռահասակ պաշտօնակալը նոյն անունը լսելուն պէս՝ անանկ այլայլեցաւ, որ լրադիրը ձեռքէն ինկաւ . եւ կռնակն որ դարձաւ, Հեղինե մէկէն առջեւը տեսաւ Ակնազրեր բերդը հետը քանի մը հեղ տեսնուող Կարոլս Սէն-Ռամէն պատանին :

Ասոր վրայ խեղճ աղջիկն այնչափ զարմացաւ, խռովեցաւ ու շփոթեցաւ, որ քիչ մը ժամանակ արձանի պէս անշարժ մնաց, առանց միտ դնելու Օրդանսին, որն որ առջեւը կեցած՝ կը հարցընէք թէ ի՞նչ ունի :

Ի՞նչ եղաք, մէկէն ի մէկ խուլցաք, զոչեց անդիէն տիկինն ալ :

Հեղինէ շուտ մը ինք զինքք ժողվեց, եւ  
որպէս զի իր այլայլութեան՝ Առնբուպէր  
տիկնոջ ու օրիորդին վրայ բրած տպաւո-  
րութիւնը մոռցընէ, սկսաւ իրենց ցուցը-  
նել նոյն օրը գնած բանելու գծագրու-  
թիւնները, որոնք դիտէր թէ իրենց ճաշա-  
կին համաձայն են :

Ետքը ձեռագործն առած՝ սովորական  
տեղը գնաց նստեցաւ, առանց կարուսին  
նայելու։ Քիչ մը վերջը այնչափ հանդար-  
տեցաւ, որ կրցաւ եղած խօսակցութեան  
միտ դնել, աչուրներն ալ երիտասարդ  
պաշտօնակալին վրայ դարձընել։ Մէկ կող-  
մանէ գծագրութեան ճիշդ նմանութիւնը  
զինքք կը ստիպէր կարծելու որ անիկայ  
կարուս ԱԷն-Շոմէն ըլլայ. բայց մէկալ  
կողմանէ մականուան տարրերութիւնը  
տարակուսի մէջ կը ձգէր :

Վերջապէս վախնալով որ շրլայ թէ  
մասց խամփութիւնն իմացուի, պատճառ  
մը դանելով՝ դուրս ելաւ։ Բայց կարուս-  
ոին բարեւ առած ատենը՝ աղաչաւորի  
հայեցուածքով մը անոր նայեցաւ, իբրեւ  
թէ խնդրելու համար որ գաղտնիքը չժայ-  
տնէ, եւ երիտասարդին աչուրներէն միփ-  
թարութեամբ տեսաւ՝ որ միաբն իմա-  
ցած է :

Հեղինէ կը բազծար որ ընթրիթի չիջ-  
նայ. բայց վախնալով որ անով Առնբուպէր  
տիկնոջ առիթ կու տայ կաւկածի երթա-  
լու, միաքը փոխեց. Միայն՝ կերակրայ առեն

բովանդակ ջանքն ի գործ դրաւ որ զարմունքին մէջ սովորականէն տարրերութիւն չցուցընէ :

Աեղանի վրայ Կարոլոսին դիմացը նստած ըլլալով, անոր կերպարանքին վրայ հաստատուն նշան մը կը փնտուեր, որով համազուի թէ Պարսրանէդի հովտին առանձնութեան մէջ զինքը մսիթ արող պատանին է : Աս անտարակուսելի նշանն անվայրկենին նշմարեց, երբ որ սեղանէն ելած ժամանակնին՝ սեպուհն անոր ըստւ . Կարոլոս, քովէս մի բաժնուիր. գիտես որ քովս եղած ատենդ՝ ինք զինքս երջանիկ կը համարիմ: Նոյն ատեն Կարոլոս քաղցը ժպիտով մը հօրը մօտեցաւ, իրբեւ թէ ուղելով իմացընել որ միշտ պատրաստ է իրեն հնազանգելու, որով իր պղտիկութեան կերպարանքը կատարեալ Հեղինէին առջեւը նկարեցաւ :

Ասով բոլոր տարակոյսը փարատեցաւ. միայն մականուան տարրերութիւնն իրեն զարմանք կը պատճառէր, եւ չէր կրնար մեկնութիւն մը դանել: Աս համոցումն որ ստացաւ, մեծապէս կը բաղձար շուտով հետր խօսիլ, որպէս զի աղաչէ որ հետն իրբեւ անծանօթ վարուի: Վասն զի Առնը բապէր տիկինը չէր դիտեր մօրը դլուխն եկած դժբախտութիւնները . իր բարձրամտութեամբն ու անզգայութեամբը չէր ուղած տեղեկանալ թէ ազնուական օրիորդ մը ի՞նչ պատճառներէ ստիպուած

էր դաստիարակի պաշտօն վարելու։ Իսկ  
ուսպուհը եւ ոչ իսկ անունը զիտեր։

**Հետեւեալ օրը՝** երբ որ բոլոր լնտանի-  
քը պարտէցը կը պտըտէր, Կարոլոս իրենց-  
մէ բաժնուեցաւ, եւ նամակ գրելու պատ-  
ճառաւ, ներս մտնելով, շուտ մը սրահը  
գնաց, ուր կարծէր թէ զՀեղինէ կը դրտ-  
նէ։ Իրօք ալ զինքը հօն տեսնելով, քովը  
մոտեցաւ, եւ բարեւ տալով՝ ձեռքն անոր  
երկընցուց։

**Հեղինէ բարեւն առաւ,** բայց այնպէս  
ձեւացուց՝ իրեւն թէ ձեռք երկընցընելը  
տեսած չըլայ։

**Հեղինէ,** բառ Կարոլոս այլայլելով, ին-  
ձի նեղացած էք։

**Օրիորդը խօսիլ ուղեց.** բայց երիտա-  
սարդը ժամանակ չթողուց։

**Կ'աղաչեմ,** Հեղինէ, բաածս մտիկ ըրէք ։  
Գուցէ ծնողացս առջեւը զձեղ ճանչնալո  
չայտնելուս վրայ նեղացած ըլլաք։ Բայց  
ինձի անանկ երեւցաւ թէ դուք ալ կը  
բաղձաք որ զձեղ անակնկալ մեր տան մէջ  
տեսնելուս վրայ ունեցած այլայլութիւնն  
չայտնեմ։

**Այնպէս է,** իրաւունք ունիք, պատաս-  
խանեց Հեղինէ։ եւ կարծեմ հարկ չկայ  
զրուցեմ թէ ինչու համար կ'ուղեմ որ  
պղտիկութեան ժամանակ մեկըմեկ ճանչ-  
նալնիս ծածուկ մնայ։

— Ուրեմն ծնողքս ձեր ով եւ ուսկից  
եկած ըլլալը չե՞ն զիտեր։

— Ուսկից գալս չեն գիտեր : Խսկ ով ըստու՝ նոյն խսկ ես չեմ գիտեր :

— Ի՞նչ կ'ըսէք, ոտուզիւ զիս զարմանքի մէջ կը ձգէք . . . . Արնայի արդեօք համարձակիլ առ խօսքերուն մեկնութիւնը ինդրելու :

— Պարոն, պղտիկութեանս ժամանակը ինծի ցուցուցած բարեկամութիւննիդ թող չխտար որ ձեզմէ գտղտնիք ունենամ : Արդէն դժբախտութիւններուս մեծ մասը գիտէք . մնացածն ալ իմանալու իրաւունք ունիք :

Ասոր վրայ Հեղինէ անոր պատմեց մօրը մաշն ու անկից ետքը դլուխն եկածները :

Խեղճ օրիորդ, դոչեց Կարոլոս : Բայց ինչու ետեւէ չինկաք իշխանութեան ձեռքով դառնելու ան թշուառական կինը՝ որն որ զձեզ ամէն օգնութենէ զուրկ թողուցեր, ակնկալութիւննիդ պարապի հաներ է :

— Մէջ մը վասն զի չէի ուզեր չարեաց դիմացը չարիք հասուցանել : Մէջ մ'ալ վասն զի իշխանութեան դիմելու համար՝ ինք զինքու ճանչցընելու էի : Բայց պէտք է որ վախնամ ընտանեացս թշուառութեան սպատճառ եզող մարդէն :

— Եթէ կ'ուղէք առ բանիս հոգն ինծի թող տուէք : Թէպէտ քրիստոնէական սէրը մեղի կը պատուիրէ որ թշնամինիս սիրենք . բայց անիրաւութիւն կրած ժամանակնիս՝ մեր իրաւունքը սպահանջելն ալ չ'արդելուք : Մայրերնիդ չափազանց երկիւ-

զածութեամբ մը չէ ուղեր դատաստանարաններուն դիմել . բայց մենք ալ պէտք չէ որ անգործ կենանք եւ իրաւունքնիդ պահանջելէն հրաժարինք : Հաւատացէք , օրիորդ , վախցած վտանգնիդ՝ ձեր կարծածին չափ մեծ չէ . եւ եթէ նոյն խկ թագաւորին դիմել պէտք ըլլայ , ես անձամբ իրեն կը ներկայանամ :

— Խսկ եթէ թշնամիս զօրաւոր մէկն է :

— Անիկայ հոգ մ'ընէք : Բաները զրուցած առաջանիս հասցընելէն յառաջ՝ կը ջանամ աղախիննիդ գտնել : Ինք միայն կրնայ աս դադտնիքն երեւան հանել : Խոկ զինքը գտնելու համար՝ յուսամ որ այսպիսի առիթներու մէջ ոստիկանութեան բանեցուցած սովորական միջոցները բաւական կըլլան :

Հոս Կարոլոս ստիպեցաւ խօսքն ընդմիջելու , որովհետեւ ծնողքը պարտեզէն վեր կ'ելլէին : Ուստի զշեղինէ բարեւեց , եւ շուտ մը ծնողացը ներս մնանելու դրան դիմացի դռնէն դուրս ելաւ :

Հեղինէ ալ քիչ մը ետքը խուցը զնաց , ուր երկայն ժամանակ ընկզմած մնաց կտրոլոսին հետ ըրած խօսակցութենէն մոքին մէջ ծնած խորհրդածութեանց մէջ : Նոյն մտածմունքէն զինքը հանեց հոգաբարձու կինը . եւ երկուքը մէկտեղ սկսան Կարոլոսին վրայ խօսիլ : Օրիորդը շկրնալով հետաքրքրութիւնը ըռնել , խօսքին մէջ անտարբերութեամբ մը հարցուց թէ նոյն պաշտօնակալին սովորական անունն ի՞նչ է :

Յօհապէտ Մոնրոպէր սեպուհին որդին է, պատասխանեց կինը, բայց սովորաբար ԱԷնթոնմէն կը կոչուի, իր հօրագրոջը՝ մեռած ատեն Քրովանսի մէջ իրեն ժառանգութիւն թող տուած մէկ երկրին անուածը: Խոկ երէց եղբայրը՝ Եղուարդ Նաւապետը՝ բուն ընտանեաց անունը կը կրէ:

Աս մեկնութիւնը Հեղինէին այնպէս բնական երեւցաւ, որ քրած հարցման վրայ ամրէցաւ, եւ շուտ մը խօսքն ուրիշ նիւթի փոխեց:

Կարոլսս Հեղինէին հետ այնպէս կը վարուէր՝ իրքեւ թէ իրեն բոլորովին անձանօթ մէկն ըլլայ, այս ինքն՝ մեծ քաղաքավարութեամբ ու ծանրութեամբ: Հեղինէ ալ իր կողմանէ զինքը յառաջագոյն ճանչցած ըլլալն այնպէս ծանուկ կը պահէր, որ Մոնրոպէր տիկինն ու Օրդանս շուտ մը մնացան առաջին անգամ զկարուստ տեսած ժամանակը զգացած այլայլութիւնը: Երկուքն ալ կը զգուշանային որ առանձին տեղ մը մէկտեղ չգտնուին:

Տան մէջ ամէն բան սովորուկան ընթացքով յառաջ կ'երթար: Միայն, ինչպէս Հեղինէ կը յուսար, Եղուարդ Նաւապետը չէր համարձակեր եղբօրը առջեւն իրեն հետ յառաջուան պէս վարուիլ: Խոկ Օրդանս իր ընդունայնական խորհուրդները յայտնելու մէջ մեծ զգուշութիւն կ'ընէր:

“Եղին միջոցներուն որը օրիորդը մեծ ուրախութեան պատճառ մ'ունեցաւ: Ատէլ

Նիմ Հասնելով, մօրեպրօն ու անոր ամուսնոյն հետ քիչ մը տեսնուելուն պէս, Առնբազէրեան ապարանքը՝ բարեկամին այցելութեան եկաւ :

Ի՞նչ երջանկութիւն, դոչեց Հեղինէ, բազուկները բանալով եւ զԱտէլ գորովով սրախն վրայ ճնշելով. ալ գրեթէ յուսահատած էի զքեղ տեսնելու : Այնչափ ժամանակ կայ որ կը հառաչեմ :

Իրարմէ բաժնուելնէս վեր հաղիւ երկու ամիս եղաւ, պատասխանեց Ատէլ՝ քաղցր ժպիտով մը :

— Այնպէս է . բայց ժամանակը շատ երկայն կ'երեւայ սպասողին, մանառանդ երբ որ անանկ վիճակի մէջ կը դանուի, որուն մէջ կամ քիչ եւ կամ ամենեւնն ոչինչ միսիթարութիւն կ'ունենայ :

— Ուրեմն վիճակիդ վրայ գոհ չե՞ս :

— Աստուած շընէ, որ տրատունչ ընեմ : Ըստ բաւականին աղէկ եմ : Բայց կը խոստովանիմ, որ թիւն ձեր տունը երբեմն ահաճութեան պատճառներ կ'ունենայի, ի վերայ այսր ամենայնի եթէ կարելի ըյլար՝ հիմակուան վիճակս ան ատենուանին հետ սիրով կը փոխէի, առանց միտ դնելու հոգ ընդունած առատ թոշակիս ալ :

Անկէ վերջը Հեղինէ դանուած տան անձինքը բարեկամին նկարազբեց, իր մարդասիրական ընաւորութեամբն անոնց պակասութիւնները չափաւորելով : Խոկ Կարոլոսին վրայ մեծ գովեստով խօսեցաւ :

Ատէլ շատ զարմացաւ, երբ որ իմացաւ թէ նոյն պաշտօնակալը՝ դէեղինէ Ակնաղը բերդին պատէն վար ինկած առենք վերցընող երիտասարդն է:

Հոս իփստ քիչ զբաղմունք ունիմ, ըստ Հեղինէ՝ երբ որ Ատէլ իրմէ կը բաժնուէր, օրեր կ'ըլլան՝ որ գործքէ բոլորովին ազատ կ'ըլլամ: Ուստի, սիրելի Ատէլս, իրարու հետ շատ տեսնուինք, կամ դուն ինձի եկուր, կամ ես քեզի գամ, որով կրնանք՝ հոս ամէն օր լածներէս առելի օգտակար բաներու վրայ խօսակցիլ:

Ասոր վրայ Ատէլ շատ ուրախացաւ: Եւ իրօք ալ շարաթ չէր անցներ՝ որ երկու երեք անգամ իրար շտեսնէին,

### Գ Լ Ա Խ Խ Ժ Փ Փ .

Կարսլոսին նիմ գալէն ետքը երկու ամիս անցած էր, մէջ մ'ալ հրաման ընդունեցաւ որ իր գունդը դառնայ: Արդէն քիչ մը ժամանակէ վեր ինք ցաւով առ հրամանին կը սպասէր:

Ստուգիւ, ըստ, նոյն օրը Օրդանս իր մօրը, թէպէտ զկարուս շատ կը սիրեմ, բայց ամենեւին չեմ ցաւիր արքունիք կանչուելուն վրայ: Երբեք զինքն առ անգամուան պէս տիսուր չէի տեսած: Հետո պարտելու երթալ չուզեր, եւ իր ներկայթիւնն ամէն ընկերութէանց մէջ տիրութիւն կը պատճառէ:

Ես ալ ասոր միտ դրի, պատասխանեց տիկինը։ Անանկ ալ կ'երեւայ որ ընկերներուն քովը դառնալու դժուարութիւն կը կրէ։ Աս նկատմամբ իր վարժունքը ըոլորովին հակառակ է իրեն հասակակից երիտասարդներուն ընթացքին։ Քանիներ կան, որոնց խիստ երկայն կու դար այսպիսի տիսուր քաղաքի մը մէջ իր անցուցած ժամանակը։

— Գուցէ մեզի ունեցած սիրոյն առաւելութիւնն է, զինքը հոս մնալու յօժարեցընողը։

— Թէ զմեզ կը սիրէ, անոր վրայ չեմ տարակուսիր. բայց զինքն անհանգիստ ընողն աս չէ։

— Տէ՛ր Աստուած, սիրելի մայր. հիմնդ չըլլայ։

— Չեմ կարծէր։

— Ի վերայ այսր ամենայնի դուք ալ դիտէք որ կուրծքն այնչափ զօրաւոր չէ։ Սիսդրոնի օդն իրեն շատ գէշ բրած է։ Խեղճ կարուս։ — Աս ըսելով Օրդանս սկսաւ լալ։

Այնպէս մի տրտմիր, դուստր, ըստ տիկինը. ապահով եմ՝ որ եղքօրդ տիրութիւնը ֆիղիդական պատճառէ յառաջ եկած բան չէ։

— Ուրեմն ի՞նչ է պատճառը։

— Ես ալ չեմ դիտէր. եւ որչափ ալ դլուխս յոդնեցընեմ, ճշմարտանուն բան մը չեմ կրնար գտնել։

— Զըլլայ թէ իր ջերմեռանդութիւնն ըլլայ, որն որ ինծի քիչ մը չափազանց կ'երեւայ: Այնչափ բարեպաշտ է՝ որ անձնապահ գօրաց պաշտօնակալէ մը չիկրնար յուսացուիլ:

— Եթէ ըսածդ ստոյդ ըլլար, այնպէս մտախորհ ու տխուր ըլլալը հոս գալէն ետքը չէր սկսեր: Չեմ կարծեր որ յառաջուրնէ աւելի բարեպաշտ ըլլայ, եւ եղբօրմէս ընդունածներուն պէս խրատներ ընդունի արքունեաց մէջ: Ա երջապէս հիմայ իմանալ չկրցածնիս՝ օր մը անշուշտ կը յայտնուի: Հիմակուհիմայ զիս մխիթարողն ան է՝ որ Փարիզ կը դառնայ, ուր զրուանաց եւ զուարճութեանց մէջ հոսակազսավ կը մոռնայ:

Մոնրոպէր տիկինը՝ որչափ որ ալ ինք զինքը որամիտ կարծէր, ի վերայ այսր ամենայնի չէր կրնար որդւոյն տխրութեան պատճառն իմանալ: Նոյն իսկ Հեղինէ ալ շատ անգամ անոր տխրութեան ու լութեան պատճառը փնտուած էր, միտքը բերելով թէ յառաջագոյն ինչպէս զուարթու ընկերական էր: Բայց տարակոյսն երկայն չտեւեց:

Կարոլոսին ճամբայ ելլելուն օրը՝ բոլոր ընտանիքը մէկտեղ զինքը յուղարկելու երթալով, Հեղինէ այցելութեան զնաց Պը. Ռիշտորոյին, զորն որ ութ օրէ վեր չէր տեսած: Օրիորդն զվաճառականը սովորականէն աւելի մտախորհ տեսնելով: Հար-

ցուց թէ արդեօք տրտմական բան մը պատահած է :

Չէ, պատասխանեց վաճառականը, մոտախորհ երեւնալուս պատճառն ան է՝ որ ծանրակշիռ բան մը ունիմ ձեզի հաղորդելու :

Ինձի, դոչեց Հեղինէ արտաքոյ կարդի զարմացմամբ :

— Այո, եւ այնպիսի անձի մը կողմանէ, որուն ձերնկատմամբ ունեցած զգածմունքը՝ կարելի է բոլորովին անձանօթէ ձեզի :

— Կ'աղաքէմ, Պարսն, յայտնի կերպով խօսեցէք: Յաւսամ որ բաելիքնիդ՝ տրտմական բան չէ :

— Անոր հակառակ՝ մանտանդ թէ ուրախալի բան է, բառական որ իր կողմանէ ընելու առաջարկութիւնս ձեզի անհաճոյ չըլայ: Արդէն ինձի ըսած էք թէ Մանրոպէր սեպուհին պղտիկ որդւոյն տիրութիւնը ձեզի մեծ ցաւ կը պատճառէ: Բայց չէիք կարծէր որ նոյն տիրութեան պատճառը գուք բլագ:

Աս խօսքին վրայ սաստիկ կարմրութիւն մը ծածկեց Հեղինէին այտերը: Խսկ Պը, Ռիշարտոյ խօսքն այսպէս շարունակեց:

Տեսնելով որ ստիպուած էք իր մօրն ու քրոջը վէս բնաւորութեան համբերել մոածելով որ ձեր աղքատութեան համար զձեզ արհամարհող ան երկու տիկնունց հետ ծննդեամբ հաւասար էք, Պը, կարս-

լսու ձեր վրայ ի դութ շարժեր է , եւ մկառքը դրեր է որ զձեղ ան նուտասացուցիչ վիճակին աղատէ : Աս նպատակաւ հետո տեսնուեցաւ , եւ երկայն ժամանակ մէկաւեղ խորհեցանկը իր դիտաւորութեան վրայ :

— Խոկ իր դիտաւորութիւնն ի՞նչ է :

— Պլր . Կարոլս իր տան կրտսերագոյն որդին ըլլալով , մեծ հարստութիւն մը չէր կրնար յաւսալ հօրմէն : Բայց իր հօրագոյրը մեռնելու ժամանակ , քրովանսի մէջ կտակաւ իրեն դղեակ մը թուղուցած է , որով կրնայ իր մեծ եղբօրք հետ մրցիլ : Կոյն դղեակը Աւն - Ռոմենի դղեակն է , որմէ առած է անունն ալ :

Այս ամենայն արդէն զիտեմ , Պարոն , պատասխանեց Հեղինէ՝ քիչ մը անհամբերութեամբ :

— Խ'նչ , մնացածը չէք կուահէր . . . . Բայց չէ . համեստութիւննիդ թող չետար : Անոր համար պէտք է որ ամենայն ինչ յայտնի ըսեմ : Պլր . Կարոլոսին միտքն ան է՝ որ իր ձեռքն ու հարստութիւնը ձեզի ընծայէ :

Աս խօսքին՝ Հեղինէ այլայլութենէն դոյնը բոլորովին նետեց . քիչ մը ատեն աշուրները Պլր . Ռիշարտոյին վրայ սեւեռած լուռ կեցաւ , չկրնալով բան մը խօսիլ : Աւերջապէս ըստաւ . Եթէ Պլր . Կարոլոսին աղնուական բնաւորութիւնը չճանչնայի , պէտք էի կարծել որ կատակ ընելէն ուրիշ միաք չունի : Բայց չիկրնար ուրիշին դժբախ-

տութիւնը ծաղրել։ Անոր համար ես ալ պէտք է որ ծանրութեամբ պատասխան տամ այնպիսի առաջարկութեան՝ դորն որ տարակոյս չունիմ թէ ինք ծանրութեամբ եւ ոչ թէ կատակի համար կ'ընէ։ Ուստի նախ կ'ըսէմ որ եթէ ընտրութիւն ընել պէտք ըլլար Պր. Կարոլոսին եւ ան ամեն երիտասարդաց մէջ՝ որոնք . . . . Բայց, ո՞հ, կը մոռնամ որ ես խեղճ որր աղջիկ մըն եմ, եւ ինձի շիվայլեր աս կերպով խօսիլ։ Պր. Կարոլոս արդէն զիտէ որ ամենեւին հարստութիւն չունիմ, եւ ոչ ալ անուն։

— Ասիկայ իրեն ծանօթ է. անոր համար ալ զձեզ աւելի կը սիրէ ու կը մեծարէ։ Արդէն կը գուշակէր որ իր առաջարկութեան՝ աս առարկութիւնը պիտ' որ ընէք. ուստի եւ կ'ազաչէ որ ասանկ աւելլրդ մոտածութիւններով խափան չըլլաք իր երջանկութեան, եթէ կը կարծէք որ ինք ալ ձեր երջանկութեան կրնայ գործակից ըլլալ։ Մինչեւ հիմայ ձեր վրայ ունեցած գութն ու գորովը գաղտուկ պահեք, ձեր վիճակը մեծարելով։ Եւ զիտնալով որ զիս իրբեւ բարեկամ կը նկատէք, ինձի յանձնեց որ բաղձանքը ձեզի յայտնեմ։

Պարոն, կրկնեց Հեղինէ, չէ թէ միայն չեմ կրնար, հապա եւ ոչ ալ պէտք եմ լսել այսպիսի առաջարկութիւն մը։ Պր. Կարոլոս ինձի շատ մեծ պատիւ կ'ընէ։ Ես

իր յարդն աղէկ կը ճանչնամ՝ զիտեմ որ  
այն առնենայն առաքինութիւններն ունի,  
զարոնք մարդ կրնայ բաղձալ որ . . . .

Հեղինէ ստիպուեցաւ խօսքը կտրել, այլ-  
այլութենէն չկրնալով բսածը լմբնցընել։  
Յայտնի կը տեսնուէր թէ եղած առաջար-  
կութիւնը չընդունելուն պատճառը ընտղին  
վրայ համարում ու սէր չունենալը չէ։

Մաքերնիդ կ'իմաննամ՝ շարաւնակեց Պիր.  
Ռիշարտոյ. չեմ տարակուսիր որ եթէ։  
Մոնրոպէր սեպուհին աստիճանին ու հա-  
րրատութեան համեմատ վիճակի մէջ գրտ-  
նուէիք, իր անձնական հանդամանաց պատ-  
ճառաւ առաջարկութիւնը չէիք մերժեր։  
Ծառ անգամ իր վրայ այնպիսի համարմամք  
խօսած էր, որ . . . .

Կ'աղաչեմ, Պարոն, բոտ Հեղինէ աւելի  
եւս կարմբնալով, աս պարապ խօսքերը թո-  
զունք։ Գիտեմ որ Պիր. Կարոլոս ձեզի  
յայտնած մեծանձնական մտածմունքներն  
ունի. բայց չի տեսներ արդեօք որ իր ըն-  
տանիքն անոնց չիհաւանիր։

— Ինքն ալ կը ճանչնայ որ իր դի-  
տաւորութիւնն ընդդիմութիւն պիտի կրէ։  
Աղէկ դիտէ որ իր ընտանիքը դէմ պիտի  
դնէ։ Ակար համար ալ միտքը դրած չէ որ  
հիմայ գլուխ հանէ։ Ետքէն երբ որ անկախ  
վիճակի մէջ կը գտնուի, խնդիրքը նորէն  
առջեւնիդ կը դնէ։ Հիմայ ձեզմէ ուրիշ  
բան չիխնդրեր, բայց եթէ ամ որ երբեմն  
իր վրայ մտածելու խօսք տաք։

Հեղինէ այսպիսի մեծանձնական ու անշահանքը սիրոյ վրայ սաստիկ շարժած՝ թոթովելով մը, Այս պատասխանեց, կը խոստանամ որ Եթէ երբեք ամուսնական զիճակի մէջ մտնելու խորհուրդ ունենամ, իր վրայ կը մտածեմ, բաւական որ ինքն ալ հիմակուան դիտաւորութեան մէջ հաստատուն մնացած ըլլայ: Բայց հիմայ տակաւին ես ալ չեմ զիտեր թէ նախախնամութիւնը վրաս ինչ խորհուրդ ունի:

Օրիորդն ան ատեն իմացաւ Կարոլոսին վրայ նշմարած տիրութեան պատճառը, հառկրցաւ դարձեալ թէ ինչու համար այնչափ կը զգուշանար իրեն հետ առանձին գտնուելու, ես աս զգուշաւորութիւնը՝ նոյն երիտասարդին վրայ ունեցած համարումը սրտին մէջ առելի եւս հաստատեց:

Չեղի ըսածներս, կրկնեց Պր. Ռիշարտոյ, ոլէտք է որ մեր մէջը զազուուկ մնան. եւ ոչ իսկ Ատէլ իմանալու է: Հիմայ ես ոլր. Կարոլոսին նամակ կը դրեմ, որպէս զի զինքը հանգարուեցընեմ. որովհետեւ երեկ զրուցեց որ հանգիստ չ'ունենար, մինչեւ որ իմ բերնովս ձեզի ըրած առաջարկութեան՝ ինչ հետեւանք ունենալը չիմանայ, Արդ՝ ի՞նչպէս կ'ուզէք որ դրեմ:

Ըսէք իրեն որ շատ շնորհակալ եմ վրաս ունեցած զգածմանց վրայ, եւ կազմէմ որ նախախնամութեան թողուայն պիսի իրողութեան մը հոգը, որուն կատարումը տակաւին շատ երկայն ժամանա-

կի կարօսութիւն ունենալով ; Հիմակուընէ չեմ կրնար ուրիշ խոստում մը տալ իրեն նոյնին նկատմամբ , բայց եթէ աս՝ որ խեղճ որր աղջկան մը վրայ ունեցած գութը միշտ միարս պահեմ :

Միտքը լսած բաներէն վրդոված՝ Հեղինէ Մոնրոպէր սեպուհին ապարանքը դարձաւ . բայց քիչ մը ետքը աս վրդովումն ալ հանդարտեցաւ : Իրեն սովորութիւնն ըրած էր՝ թէ տրտմական եւ թէ ուրախական դէպքով մը սիրտը վրդովելուն պէս , Աստուծոյ դիմել , որով շուտ մը դարձեալ իր խաղաղութիւնը կը դանէր :

Օրփորդը շատ կը վախնար որ կարողոս Փարիզ դառնալէն ետեւ՝ անոր եղբայրը նորէն յառաջուան ընթացքը չսկսի : Բայց անոր ճամբայ ելած օրուան իրիկունք Օրդանս իրեն իմացուց որ Եղուարդ նաւապետն ալ կանչուած է , եւ հարկաւ շուտ մը ճամբայ պիտ' որ ելլէ , որ իրեն տրուած նաւուն հրամանատարութիւնն առնեւ :

Առ աւետիսն իրեն նոր քաջալերութիւն ու զօրութիւն տուաւ , եւ Աստուծոյ բարութեան աս նոր ցոյցին համար շնորհակալ եղաւ : Իրօք ալ նաւապետին պէս մարդու մը հետ միււնոյն տան մէջ մնալի անկարելի էր : Ամենէն դժուարն ան էր՝ որ չէր կրնար հոնկից ելլել առանց բուն պատճառը Մոնրոպէր տիկնոջ յայտնելու , որն որ իրեն համար խիստ անհաճոյ հետեւութիւններ կրնար ունենալ :

Եւ թէպէտ նոյն տիկնոց ու Օրդանուին  
հետ մնալով ալ՝ բոլորովին ազատ չէր զա-  
նազան տհաճութիւններ ու վիշտեր կրելու  
վտանգէն. ինչպէս որ հասարակօրէն կը  
պատահի՝ երբ որ մարդու իր կարծիքին հա-  
կառակ կարծեաց տէր եղողներու. հետ ա-  
պրելու կը ստիպուի. բայց եւ այնպէս ա-  
սիկայ աչքին բան մը չէր երեւար, որով-  
հետեւ տառապանաց դպրոցը սորված էր  
թէ աս թշուառ. կենաց մէջ մարդու խա-  
ղաղութիւնը՝ աւելի համբերութեամբ վիշտ  
կրելու վրայ կը կայանայ. քան թէ ամե-  
նեւին հակառակութեան պատճառ չու-  
նենալու վրայ :

Քանի մ'օր վերջը դէպի ի Պառլոն ճամ-  
բայ ելաւ ան մարդը, որմէ Հեղինէ այն-  
շափ կը վախնար, եւ մեծ զարմացմամբ տե-  
սաւ. որ, թէպէտ եւ անոր դադափարները՝  
մօրն ու քրոջը դադափարներուն համաձայն  
էին, սակայն եւ այնպէս նոյն երկու տիկ-  
նայք իրմէ բաժնուած առեննին՝ այնպիսի  
ցաւ ու տրտմութիւն չիմացան, ինչպէս որ  
կարոլուն բաժնուած ժամանակնին խմա-  
ցած էին :

## Գ Լ Ա Խ Խ Խ Ժ Ե .

Քիչ մը յառաջ ըստնք որ Մանրոպէր ափկինը Հեղինէին ընտանեաց վրայ տեղեկութիւն չունէր : Թակալէտ Պր . Ռիշարտ ասյէն խմացած էր որ Պելլիվ տիկինը ցաւէն ու տրտմութենէն մեռած եւ զշեղինէ անօգնական թող տուած է . բայց չէր հարցուցած թէ ի՞նչ է անդժրախտութիւնը՝ որով այնպիսի ազնուական օրիորդ մը ստիպուած էր , իբրեւ դաստիարակ իր տունը մտնելու : Կարելի է աս հարցումն ընկլու չէր համարձակեր՝ վախնալով որ չըլլայ թէ իր երջանկութիւնը վրդովէ , միտքը ծգելով որ նոյնպիսի դժբախտութիւն իրեն ալ օր մը կրնայ պատահիլ :

Ինչպէս որ է նէ , ոչ ինք եւ ոչ Օրդանս աս նկատմամբ Հեղինէին հարցում մ'ըրած էին , որուն վրայ որբ օրիորդը մեծապէս կ'ուրախանար , վասն զի կ'ուղէր բոլորովին տնծանօթ մնալ : Նոյն պատճառաւ ալ միշտ կը ջանար ծածկել իր ազնուական տնէ ըլլալը , ամէն առթի մէջ ամենապարզ քաղաքացւոյ պէս վարուելով :

Իոկ սեպուհը՝ որն որ իր տխուր բնաւորութեամբը գրեթէ բոլոր ժամանակը սենեկին մէջ փակուած կը մնար , եւ ոչ առիթ ունեցեր էր Պելլիվ տիկինոջ թշուառութեանց վրայ խօսք մը լսելու : Այսուանենայնիւ ինք եղաւ՝ որ զշեղինէ ստիպեց իր դաղսնեաց մէկ մասը յայտնելու :

Իրիկուն մը նոյն սեպուհն իր սովորութեան դէմ սրահը տիկնանց քովը մնացած էր։ Մոնրոպէր տիկինը Հեղինէին ըստ որ նախընթաց իրիկունը սկսած ընթերցուածը յառաջ տանի։ Օրիորդը Հնաղանդեցաւ բայց շուտ մը հարկադրեցաւ կարդալը դադրեցընել։ աշուըներէն վազած արցունիքներուն պատճառառը։ Կարդացածը՝ Բերդատիկնոջ մը վիշտերը կը նկարագրէր, որուն ամուսինը Ա։ Երկիրը պատերազմելու գացած ատեն, անգութ ասպետ մը դղեակնու սւ ստացուածքը յափշտակած եւ զինքը սառափիկ չքաւորութեան մէջ ձգած էր։

Այսօր շատ դիւրազգաց սիրտ մը ստացեր էր, ըստ տիկինը Հեղինէին՝ արհամարհական կերպով մը։ Եւ աս ըսելուժամանակ՝ մէյ մը սեպուհին երեսը նայեցաւ, իբրեւ թէ օրիորդին այլայլութեան մտադիր ընելու համար։ Բայց սեպուհն այնպէս կը կենար՝ որ կարծես թէ ամենեւին բան մը չիտեսներ ու չկտեր։ Տիկինը նորէն Հեղինէին դստնալով, Օ'րիորդ, ըստ, երբ որ կը հաճիք, մենք պատրաստ ենք մտիկ ընելու։

Հեղինէ պատասխան չտուաւ։ Իսկ սեպուհն իր անշարժութենէն ելլելով, ինչու զինքը կը նեղես, ըստ կնոջը։ Կ'երեւաց որ զգայուն սիրտ, ունի։ Մարդս միշտ իր արցունիքներուն տէր չէ։

Կարծես թէ, պատասխանեց տիկինը, իր սեպհական պատճութիւնը կը կարդայ։

Հարկ չկայ որ կարդացածն իր պատմութիւնն ըլլայ, կրկնեց սեպուհը: Արնայ ըլլալ որ իրեն ծանօթներէն մէկը՝ մեր վեպին բներդատիկնոցը նման վիճակի մը մէջ գտնուած ըլլայ: Այսպէս չէ, որիորդ:

— Հրամեր էք, սեպուհ: Կարդացած պատմութիւնն ինձի սիրելի եղող անձի մը զլուխն եկածներուն հետ շատ նմանութիւն ունի:

— Ուր ծնած էք:

— Սիկիլիա:

— Իսկ ան ձեզի սիրելի եղող անձն ով է:

— Խեղճ մայրս:

Աս պատասխանին վրայ՝ ուեպուհն ապշած դէմքով քիչ մը տաեն Հեղինեին նայեցաւ, եւ ետքը առանց խօսք մը զրուցելու՝ սրահէն ելաւ, սևնեակը գնաց:

Հեղինե զարմացմամբ անոր ետեւէն կը նայէր, այնպէս որ խել մը ժամանակ աչուրներն անոր ելած դրան վրայ սեւեռած թնացին: Իսկ տիկինը խստութեամբ մը, կարծես թէ, ըստ, առաջին անգամն է՝ որ զեւպուհը կը տեսնէք: Բայց բաւական ժամանակ հետը կեցած ըլլալով, պէտք էր որ իր արտաքոյ կարգի վարմանց վարժած ըլլայիք:

Օրիորդն աչուրները վար իջեցուց: Մանրսպէր տիկինն ալ սկսաւ աղջկանը հետ խօսակցիկ, եւ այսպէսով իրիկունն ըստ սովորութեան անցաւ:

“Նոյն շարթուան մէջ, առառու մը՝ երբ  
որ Հեղինէ նախաճաշ ընելու համար վար  
իջնալու վրայ էր, ծառայ մ'եկառ իրեն  
ըստ թէ տիկինը հետք խօսիլ կ'ուղէ :

Ամենեւին չկրնալով գուշակել թէ տի-  
կինն իրեն հետ ինչ տուանձին խօսելիք  
կրնայ ունենալ, Հեղինէ քիչ մը այլայ-  
լութեամբ անոր ոենեակը դնաց :

Մոնրոպէր տիկինը զինքը քովը նստե-  
ցընելով, Շատ կը բաղձայի, օրիորդ, բատ,  
որ զձեզ երկայն ատեն քովս պահեմ. բայց  
ամուսինս այնպէս կը համարի որ ալ Օր-  
դանս կրնայ ինք իրմէ կառավարուիլ եւ  
դաստիարակուհւոյ կարօտութիւն չունի :

Աս խօսքը լսելով՝ խեղճ աղջիկը մեծ  
տրումութեան մէջ ինկաւ, եւ չկրցաւ ան-  
միջապէս պատասխան տալ :

Չեմ գիտեր, շարունակեց տիկինը, թէ  
արդեօք բսածս իմացաք :

Այո, տիկին, պատասխանեց Հեղինէ  
թօթովելով, զիս ձեր քովէն կը հանէք:  
Պէտք է որ զլուխ ծռեմ:

Այսպիսի հեղ պատասխանեց մը վրայ  
տիկինը շատ զարմացաւ, եւ խօսքն առ կեր-  
պով յառաջ տարաւ: Շատ կը ցաւիմ  
ձեզի ասանկ տիսուր լուր մը տարւս հա-  
մար. բայց ամուսնոյս կամացը դէմ չեմ  
կրնար ընել:

— Ներեցէք, տիկին, եթէ մէկէն այլ-  
այլութիւն ցուցուցի: Աեարուհն այնպէս  
կ'ուղէ: պէտք է որ հնազանդիմ, թէպէտ

եւ չեմ կարծեր՝ որ իրեն անհաճոյ ըլլալու  
բան մ'ըրած ըլլամ:

— Հա՛. ասոր վրայ պէտք չէ որ զար-  
մանաք. սեպուհին այսպէս առանց պատ-  
ճառի անէն հանած առաջին անձրդուք չէք:

— Ամենեւին զարմանալու իրաւունք  
չունիմ, կրկնեց Հեղինէ. միայն աս կ'աղա-  
շեմ՝ որ ուրիշ տեղ մը գտնուած ժամա-  
նակ՝ ինծի վկայական մը տաք:

Աս քաղցր ու հեղ խօսքերը տիկնոջ  
սիրու բոլորովին շարժելով, պատասխան  
տուաւ որ չէ թէ միայն սիրով աղէկ վկայ-  
ական մը կու տայ, հապա ձեռքեն եկած  
ամէն միջոցներն ալ կը բանեցընէ՝ իրեն  
յարմար տեղ մը գտնելու:

Աս խռատումն ու Պը • Ռիշարտոյէն եւ  
անոր ընտանիքէն գտնելու ընդունելութեան  
վրայ ունեցած ապահովութիւնը բաւական  
եղան հանդարտեցընել ղՀեղինէ, որն որ  
շուտ մը գնաց Ատելին մօրեղբօրն իմացուց  
Մոնրուպէրեան ապարանիքէն ելելիքը:

Օրիորդն անոր տունն ապաստանարան  
մը ինպրելէն յառաջ, աղնիւ վաճառականն  
ինք իրմէ ըստ. Ասոր վրայ պէտք չէ որ  
վհատիք, Ռւրախանալու ենք որ ձեր ան-  
կեց ելլելուն պատճառն ուրիշ բան չէ,  
բայց եթէ անանկ մարդու մը անձնակա-  
մութիւնը՝ որն որ աւելի իր այլանդակ  
ընաւորութեամբն ամենուն ծանօթ է, քան  
թէ իր հարստութեամբը: Չեղի պէս աղէկ  
դաստիարակուհի մը ամէն ատեղ կը

դանեւ : Բաց առկէ՝ տունս ձեզի միշտ բաց է , եւ կուղեմ որ մեր քովը բնակիք , մինչեւ որ աղէկ տեղ մը գանուի :

**Հեղինէ** Պլր . Որիշարտոյին եւ իր կնոջը սրտանց շնորհակալ եղաւ եւ անմիջապէս Սոնրոպէրեան ապարանքը գնաց ունեցածն առնելու : Դուրս չելած՝ իր շնորհակալութիւնը մատոյց եւ հրաժարական ողջոյնը տուաւ տիկնոջը , որն որ թոշակէն զատ ստակի մեծկակ գումար մ'ալ պարզեւ տուաւ իրեն : Ուղեց նաեւ սեպուհին ներկայանալ , որպէս զի անոր ալ իր մեծարնքը մատուցանէ . բայց իրեն ըստեցաւ որ քիչ մը անհանգիստ ըլլալով , մարդ չիկրնար ընդունիլ :

**Այսպէսով** օրիորդը Պլր . Որիշարտոյին տունը գնաց : Սակայն սիրան անհանգիստ կը լլար , մտածելով որ իր բարերարին ծանրութիւն պիտ'որ ըլլայ : Ուստի եւ անոր ու ամուսնոյն աղաչեց որ տան մէջ իրեն զրադմունք մը տան : Զինքը հաճելու համար՝ յանձնեցին որ Ըտելին հետ տան հոգաբարձութեան խնամ տանի : Դարձեալ զինքը գոհ ընելու համար անմիջապէս սկսաւ Պլր . Որիշարտոյ տեղ մը փնտոել : Կը յուսար որ Հեղինէ Սոնրոպէրեան ապարանքին մէջ զրեթէ երկու տարի կենալէն վերջը՝ դիւրաւ կրնայ իրեն համար ուրիշ տեղ մը գանուիլ : Բայց դժբախտութեամբ երկայն ժամանակ յարմար տեղ չգտաւ , որուն վրայ միայն անոր համար կը ցաւէր , որով-

Հետեւ կը տեսնէր թէ Հեղինէ խիստ կը որսամի :

Քիչ մը ետքը Հեղինէ որտմութեան ուրիշ պատճառ մը ունեցաւ : Ինք ոլր . Ռիշարտոյին տունը գալէն քանի մ'օր յառաջ , Ատէլ հարրուխէ մը բռնուած էր , որն որ կամաց կամաց այն աստիճանի սաստկացաւ , որ խեղճ աղջիկը ալ սկսաւ նախ տնէն եւ ետքը խցէն դուրս չելլել : Հեղինէ ամենայն կարելի կերպով իրեն խնամ կը տանիէր , յուսալով որ շուտով յառաջուան ոռողջութիւնը կը գտնէ . բայց պարապ տէղ : Ատէլ զգալի եղանակաւ կը տկարանար , այնպէս որ զինքը նայող բժիշկներն ամնէ մը ետքը միարան ըսին որ միայն օդափոխութենէ մը կրնայ յոյս ըլլալ առողջութեան : Աս ալ աւելցուցին թէ տուերեւոյթ առողջութեամբ գոհ ըլլալու չէ . հապա պէտք է թողուլ որ զէթ երկու տարի ուրիշ տեղ մ'անցընէ :

Պլր . Ռիշարտոյ շուտ մը իր "Նէապոլսոյ վաճառակցին թուղթ գրեց , եւ իրեն առաջարկեց որ քրոջն աղջիկը հոն խաւրէ : "Նոյն բարեկամն իրեն պատասխան տուաւ թէ մեծ ուրախութեամբ զԱտէլ իր քովը կ'ընդունի , եւ կը յուսայ որ խտախիսի օդը զանիկայ շուտով կ'առաղջացընէ :

Առոր վրայ անմիջապէս ճամբորդութեան պատրաստութիւնները տեսնուեցան եւ ուրացուեցաւ որ հիւանդը շուտով ճամբայ երէ : Եւ թէպէտ Ատէլ տեսնելով որ իր

Հեռանալուն վրայ Հեղինէ սաստիկ կը  
տրտմի, մօրեղբօրն աղաչեց որ ճամբորդու-  
թիւնը քիչ մը ուշացընէ. բայց Պր. Ռի-  
շարտոյ յանձն չառաւ, կը վախնար որ չը-  
լայ թէ ժամանակ անցնելով՝ հիւանդու-  
թիւնն աւելի սաստկանայ:

Սիրելի Ատէլս, ըստ Հեղինէ՝ իր բա-  
րեկամին, ինչո՞ւ մօրեղբօրդ կամացը դէմ  
կը գնես: Անտարակոյս զիս տրառում տես-  
նելուդ համար: Ատոյդ է՝ քու հեռանա-  
լուդ վրայ շատ կը ցաւիմ, բայց չեմ ուզեր  
որ ասոր համար դէմ կենաս մօրեղբօրդ կա-  
մացը, որն որ զքեզ իրրեւ հայր կը հռդայ:

Ծնորհակալ եմ, սիրելի բարեկամա,  
պատասխանեց Ատէլ. խօսքերդ զիս կը քա-  
ջալերէն: Բայց երբ որ ալ չկարենամ զքեզ  
լուել . . . :

— Իրարու համար աղօթք կ'ընենք:

Աս խօսքերն ըսելէն վերջը՝ Հեղինէ դուրս  
ելաւ, սենեակը քաշուեցաւ, ուր սկսու-  
առատ արցունիք թափէլ: Կը տեսնէր որ  
բարեկամին հիւանդութիւնն ան տեսակ  
ցաւերէն է, որոնցմէ աղատիլը խիստ  
դժուար է. ուստի եւ իրաւամբ կը վախ-  
նար որ զինքն աս աշխարհքիս մեջ մ'ալ  
պիտի չտեսնէ:

Ատէլին ճամբայ ելլելու օրը, Հեղինէ  
իրեն յանձնելէն ետեւ որ երբեմն երբեմն  
թուղթ զրէ, ծացէն դուրս հանեց մօրը  
մեռնելու ժամանակն իրեն տուած պատ-  
կերագիրը եւ անոր տալով՝ ըստ: Սիրելի

Ատէլս, առ պատկերագիրը հետդ առ . ի դարձիդ նորէն ինծի կու տառ, որովհետեւ զիտես թէ ինծի համար որշափ ծանրագին բան է : Չեմ զիտեր, բայց ներքին ձայն մը ինծի կը զուցէ որ անիկայ քեզի առիթ պիտի տայ ինծի օգտակար ըլլալու :

Ատէլ առաւ նոյն պատկերագիրը, որն որ Հեղինէին հօրը կենդանագիրը կը ներկայացրնէր : Բայց ամենեւին պատախան շտուաւ : Ուրիշ բան չէր ըներ, բայց եթէ լալ Հեղինէին բաղկացը մէջ, որն որ իր վշտաց ատենը զինքը մխիթարած եւ հիւանդութեան ատեն քրոջ մը պէս հսկացած ըլլալով, իրեն յառաջուրնէ աւելի սիրելի եղած էր :

Հեղինէ ալ չկրցաւ բարեկամը քաջաւերելու համար խօսք մը խօսիլ : Եւ ոչ ինք քաջալերութիւն ունէր, որովհետեւ ունեցածը կորանցուց՝ մէկէն միտքն իյնալով որ առ տեսնուենին գուցէ վերջինն ըլլայ :

Պի . ՈՒիշարտոյ մասծելսվ որ անշափ լացքն Ատէլին ակսորութիւնն աւելի կը սաստկացընէ, Հեղինէին աղաչեց որ սենեկէն դուրս ելլէ : Որը օրիորդն իր բարեկամին համբոյր մ'ալ տալէն ետքը՝ որն որ զուցէ վերջինն էր, ելաւ խուցը դնաց, ուր փակուած մնաց, մինչեւ որ զԱտէլ տանող կառաց դզրդիւնը ականջը հնչելէն դագրեցաւ :

Խիստ գժուար կու գար Հեղինելին՝ այն  
մոածութիւնը, որ Պլք. Ամիշարադինն ծան-  
րութիւն կ'ըլլեց, թէեւ ան ալ ամսւսինն  
ալ շատ անդամ իրեն աղաջած էին որ առ  
մոածմունքը մէկդի ձգէ, Առափի միշտ կը  
խօրհէր թէ ինչ կերպով կրնայ իրենց պատ-  
ճառած ծախուց հատուցում ընել: Ա եր-  
ջապէս որոշեց որ ինք զինքը մատենադրու-  
թեան տայ:

Մ անրոպէր ուեպուհին ապարանքն ան-  
ցուցած ժամանակը՝ գրելու այնպէս վար-  
ժած էր, եւ Գաղղիայի ու Խոտալիայի մա-  
տենադրութեան գեղեցիկ օրինակներն այն-  
չափ անդամ կարդացած էր, որ իրաւամբ  
կը յուսար թէ իրքեւ մատենադիր կրնայ  
քիչ մը ստակ վաստրկիլ: Ծառ անդամ  
լսած էր թէ տանտիկինն մը իր գրուածնե-  
րէն վաստրկած ստակովը՝ բազմաթիւ ըն-  
տանիք կը պահէ:

Աս որոշումն ընելուն պէս, ձեռք զար-  
կաւ Օրլէանի օրիորդին պատմութիւնը  
գրելու. եւ մէկ քանի ամիս աշխատելէն  
ետեւ՝ բաւական աղէկ գնով դրավաճառի  
մը ծախեց: Նոյն առաջին փորձէն քաջա-  
լերուելով, հետզետէ ուրիշ զանազան  
դրաւածներ ալ շնեց, որով թէ ժամա-  
նակն օգտակար կերպով կանցընէր, թէ  
իր անձնական ծախքերն ընելու շափ ստակ  
կը վաստրկէր. որովհետեւ երբ որ առաջին

անգամ դրավաճառին ընդունած գումարին գեթ մէկ մասոք Պլր. Անիշարտոյին՝ իբր թոշակ տալու խօսք ըրաւ, պատուական վաճառականն այնպէս այլայլեցաւ, որ օրիորդը մէջ մ'ալ չհամարձակեցաւ առաջարկութիւնը կրկնելու :

Նոյն միջոցներուն Ատէլէն շատ նամակներ եկած էին, որոնցմէ կը տեսնուէր թէ տակաւին տկարութիւնն ու հիւանդութիւնը կը շարունակէին՝ նոյն իսկ Գալապրիայի գեղեցիկ երկինքին տակ :

Օր մ'ալ Պլր. Անիշարտոյ իր քրոջը աղջկան մէկ նամակը տուաւ Հեղինեին, որուն սկիզբը զօրիորդն արտաքոյ կարդի զարմացուց :

Չեմ գիտեր, սիրելի բարեկամն, կ'ըսէր Ատէլ, որ արդեօք աղէկ կ'ընեմ այնպիսի նիւթի մը վրայ խօսելով, որն որ թէւ խիստ հաճոյական պէտք է որ ըլլայ քեզի բայց կրնայ նաեւ զքեզ պարապ տեղ այլայլութեան մէջ ձգել : Սակայն եւ այնպէս ապահով ըլլարով որ եթէ տալու յոյս իրօք շիկատարուիր, բաւական քաջասրտութիւն կ'ունենաս ակնկալութեանդ պարապի ելլելը համբերութեամբ տանելու, կ'ուզեմ ամէն բան յայտնել :

Հոս մէկու մը հետ ծանօթացայ, որն որ ընտանիքդ կը ճանչնայ եղեր . . . :

Աս խօսքերը կարդացած ատեն՝ Հեղինե այնպէս այլայլեցաւ, որ քիչ մը ժամանակ չկրցաւ նամակին ընթերցումն յառաջ տա-

նիլ։ Չեռութները կը դողդողային, սիրաք  
սասաիկ կը նետէր, սաքի վրայ չէր կրնար  
կենալ։ Բայց յոյսն ու հետաքրքրութիւնը՝  
շուտ մը տկարութեանը յաղթեցին, եւ  
կարդաց լիբնցուց նամակը, որն որ հետեւ-  
եալն էր։

Անտարակոյս կը յիշես որ նախընթաց  
թղթերուս մէջ Մանչինելլի անօւնով  
տիկնոջ մը վրայ կը խօսէի, որուն հետ  
ճանչուորութիւն ըրած ը լալս եւ ինծի  
վերջին աստիճանի մեծ բարեկամութիւն  
ցուցընելը կը յիշատակէի։ Արդ իրմէ ըն-  
դունեցայ այն տեղեկութիւնները՝ զարոնք  
հիմայ քեզի կը հաղորդեմ։

Հօրս վաճառակցին ամարանոցը հաս-  
նելէս քիչ մը ետքը, շրջակայ տեղուանիք-  
ները պարտած ժամանակս, օր մը աս տի-  
կինն ինծի պատահեցաւ, եւ հիւանդու-  
թեանս վրայ շատ ցաւակցութիւն ցու-  
ցուց։ Ան ատեննէն սկսանք շատ անգամ՝  
տեսնուիլ, որովհետեւ իր տունը՝ մերինին  
խիստ մօտ է։ Այսպէսսվ քիչ ատեննուան  
մէջ իրարու հետ սերտիւ կապուեցանք  
Երրեմն հետը Գաղղիա ունեցած բարե-  
կամներուս վրայ կը խօսէի, եւ քու ա-  
նունդ, ինչովէս ինք իրմէ կրնաս իմանալ,  
շատ անգամ խօսակցութեան մէջ կը  
յիշուէր։

Բարեկամն միշտ յօժարութեամբ կը  
լսէր վրադ ըսածներս, թէեւ Պէլլիվ ա-  
նունն իրեն բոլորովին անծանօթ էր։ Զգեզ

այնշափ սիրելու բաւական կը լսար զքեզ  
իրեն ալ սիրելի ընելու :

Վերջապէս քանի մը օր յառաջ՝ հիւ-  
անդութեանս ժամանակ ինծի ունեցած  
խնամքիդ, եւ իրարմէ բաժնուելու ատեննիս՝  
ունեցած արտմութեանդ վրայ խօսելով,  
նոյն առեն ինծի տուած պատկերագիրդ  
ծոցէս հանեցի, որպէս զի հօրդ կենդա-  
նագիրն իրեն ցուցընեմ:

Ո՞հ, սիրելի Հեղինես, որչափ կը զար-  
մանայիր, եթէ նոյն կենդանագիրը տեսած  
ժամանակն արձակած աղաղակը լսէիր եւ  
կերպարանքին այլայլութիւնը տեսնեիր։  
Մէկէն պատկերագիրը յափշտակեց՝ ձեռ-  
քէս առաւ, աչուրներուն մօտեցուց, եւ  
մտադրութեամբ ամէն կողմը զննելէն ետ-  
քը՝ հարցուց թէ նոյնը քեզի ով տուած  
է։ Պատասխանեցի որ մայրդ մահուան  
անկողնոյն մէջ քեզի տուած է, եւ ընտա-  
նեացդ վրայ ամէն դիտցածներս իրեն յայ-  
անեցի։

Ասոր վրայ վիզս փաթթուեցաւ, եւ  
արցունք թափելով բառ որ գուն իր ամե-  
նաօիրելի բարեկամին աղջիկն ես, եւ ինք  
քու մերձաւոր աղղականներէդ մէկը կը  
ճանչնայ։

Աս ըսելէն ետեւ՝ տեղեկութիւն տու-  
աւ գաղղիացի տիկնոջ մը հետ ատենօք  
ունեցած բարեկամութեան վրայ, եւ յա-  
ռաջ բերաւ ան նշանները՝ որոնք իրեն  
կարծել կու տան թէ դուն իր նոյն բա-

բեկամին աղջիկն ըլլաս : Բերած ցոյցերն  
ինձի ալ այնպէս հաստատուն երեւցան,  
որ շուտ մը իր կարծիքն ընդունեցայ :

Եւ թէպէտ ինձի աղաչեց, որ աս բանս  
քեզի շիմացընեմ, մինչեւ որ պատասխան  
ընդունի քու ան աղգականէդ՝ որն որ հիւ  
մայ Սպանիա կը գտնուի եւ որուն շուտ  
մը նամակ գրելով, հօրդ կենդանագրին  
հետ խաւրեց . բայց ես չկըցայ դիմանալ,  
ուղեցի ամէն բան շուտ մը քեզի իմացը-  
նել : Այսպէսով կ'երեւայ որ իրաւացի է-  
եղեր նոյն կենդանագիրն ինձի տուած ա-  
տենդ ունեցած ակնկալութիւնդ :

Հիմայ, սիրելի Հեղինէս, քիչ մ'ալ-  
իմ վրաս խօսիմ : Քիչ մը ժամանակէ վեր  
ինք զինքս աղէկ կը զզամ, եւ զիս դարմա-  
նող բժիշկը կը յուսայ որ տարւոյս ըն-  
թացքին մէջ կրնամ գաղղիա դառնալ :

Հեղինէ աս նամակը կարդալէն ետքը՝  
երկայն ատեն խօրհեցաւ Ատէլին պատ-  
մածներուն վրայ : Մեծ մսիթարաւթիւն  
եւ ուրախութիւն կ'իմանար, մտածելով  
որ կարելի է թէ քիչ մը ետքը կը տեսնէ-  
ան աղգականը՝ որուն վրայ մայրն ալ կը  
խօսէր իրեն թող տուած թղթին մէջ :  
Սրանց Աստուծոյ շնորհակալ եղաւ, եւ  
աղաչեց որ ակնկալութիւնը պարապի  
չանէ :

Աս ուրախարար լրոյն վրայ Պր . Ռի-  
շարաոյ ուրիշ լուր մ'ալ աւելցուց, որն  
որ Հեղինէին համար առաջնոյն չափ ան-

ակնկալ էր : Իրեն ըստ թէ խիստ աղէկ եւ գոհացուցիչ տեղեկութիւններ ընդունած է այնպիսի անձի մը վրայ , որն որ իրեն ալ շատ սիրելի է :

Օրիորդը՝ որուն սիրտն Ատելին նամակէն զգացած ուրախութեամբը լեցուած էր , մեծ զարմացմամբ վաճառականին երեսը կը նայէր :

Կը տեսնեմ որ պրոցածս չէք հասկընար , ըստ Պը . Ուիշարաոյ . ուստի պէտք է որ աւելի յայսնի խօսիմ : Պը . Կարոլոսին առաջարկութեան պատասխանը ձեր ուզածին համաձայն նոյն առեն իրեն խռութեցի : Ստոյգ է՝ առ նիւթին վրայ անկէ ետեւ ձեզի բան մը չըսի , եւ ոչ իսկ յայսնեցի իր պատասխանը . բայց առոր պատճառն ան էր՝ որ կ'ուզէի ճշդիւ ճանչնալ թէ նոյն պաշտօնական արքունեաց մէջ ի՞նչպէս կը վարուի : Չեր՝ իմ վրաս ունեցած վոտահութիւնը , եւ ձեր երջանկութեան վրայ իմ ունեցած հոգս , վրաս պարագ կը զնէին որ առանց ձեզի իմացընելու՝ առ տեղեկութիւններն առնում . . . : Բայց կարելի է՝ ըստածիս չհաճիք :

Պարոն , պատասխանեց Հեղինէ , որտանց համազուած եմ որ իմ բարւոյս համար ըրած էք առ բանը : Միայն թէ յառաջուրնէ կարծիքս հարցուցած որ ըլլայիք , կ'աղաջէի որ . . . :

— Աս զործքէն ետ կենամ , այնպէս չէ . բայց ինչո՞ւ համար : Ինչպէս դուք եւ Պը .

Ապրոլոս, նոյնապէս ես ալ աղեկ դիտեմ որ  
Հմայ ձեր ամուսնութիւնն այնչափ դժուա-  
րութեանց տակ կ'իյնայ, որ խելք չէ  
գլուխ հանել ուղելը: Բայց սակայն ես  
հիմակուրնէ պէտք էի ձեր ձեռքին ետեւէն  
ինկողին վրայ որոշ աեղեկութիւն ունե-  
նալ: Մինչեւ հիմայ իր վրայ ուրիշներէն  
լսածներս՝ իրեն այնապէս նպաստաւոր էին,  
որ մարդ չիկրնար աւելի բանի մը բաղձալ:  
Սակայն ես ասիկայ բաւական չհամարե-  
ցայ. ուղեցի նոյն խեկ արքունեաց մէջ  
զինքը տեսնել կըցող անձանց կարծիքն ի-  
մանալ. եւ եթէ ակնկալութեանս հակա-  
ռակ՝ զինքը ձեզի անարժան ցուցընելու-  
րլային, ձեզի պիտի իմացընէի որ ջանար  
անոր յիշատակը մոռնալ:

— Զձեզ կրնամ ապահովընել, Պա-  
րոն, որ անոր յիշատակը սրտիս հանգիստը  
երբեք չիվրդովեր: Ես իմ ապագաս Աս-  
տուծոյ յանձնած եմ. ինչպէս որ իրեն  
հաճոյ է, թող այնապէս ընէ:

— Ծառ աղեկ ըրեր էք. բայց չեմ  
կարծէր որ ես ալ գէշ ըրած ըլլամ' մարդ-  
կային խոհեմութեան պահանջած զգուշու-  
թիւնները բանեցընելով: Սակայն մեր  
խնդրոյն գանք: Արքունեաց մէջ մուտք  
ունեցող անձ մը. իմ աղաչելովս յանձն  
առած էր Պր. Կարոլոսին ընթացքին  
մտադիր ըլլալ: Պատասխանը հազիւ այս-  
օր ընդունեցաց, եւ ահաւասիկ ձեզի կը  
հաղորդեմ:

Թաղթին մէջ կ'ըսէ որ նոյն պաշտօնաւկալը՝ թէպէտ միշտ ընտիր վարք ունեցած էր, բայց վերջին անդամ տնէն դառնալէն ետեւ՝ յառաջուրնէ շատ աւելի մտախորհ կ'երեւայ եւ առանձնացեալ կեանք մը կ'անցընէ։ Արքունեաց հանդեսներուն մէջ ան ժամանակ միայն կը տեսնուի, երբ որ ի պաշտօնէ պարտաւորած կ'ըլայ։ Ան ամեն ընկերութիւններէն կը փախչի, որոնց մէջ կրնայ վախնալ թէ իր կրօնական սկզբունքներուն չհամաձայնող սկզբունքներով անձանց կը հանդիպի, եւ քաջութեամբ կը մերժէ իր ընկերներէն ոմանց զինքն իրենց համաձայնցընելու։ Համար գործածած հրապոյրները։ Սակայն եւ այնպէս վայրենի ու մարդատեաց չէ։ ամենուն հետ քաղցրութեամբ ու մարդասիրութեամբ կը վարուի։ միայն ան ատեն կը բորբոքի։ Երբ որ առջեւը կրօնի կամ առաքինութեան դէմ ծաղրածու խօսք կ'ըլայ, եւ շատ անդամ իր ներկայութիւնը բաւական կ'ըլայ ամպարիշտ լեզուները լոեցընելու։

Արքունեաց տիկին մը՝ սրն որ Գաղղիայի առաջին աղնուական տներուն մէկէն է, շատ ժամանակ շկայ՝ ուղեց իր միակ աղջիկն իրեն կնութեան տալ, բայց ինք շնորհունեցաւ, ըսելով որ ընտրութիւնն արդէն ըսած է, եւ կ'ուղէ հաւատարիմ մնալ։

Հսս Պը. Ոիշարտոյ լոեց։ կը մտածէր

որ անտարակոյս Հեղինէ պիտի հարցընէթէ արդեօք կը կարծէ՞ որ Կարոլոսին ըսածն իրեն համար ըլլայ : Բայց անիկայ ամենեւին զարմացման կամ այլայլութեան նշան չցուցուցուց :

Արդ, սիրելի օրիորդ, շարունակեց վաճառականը, Պլր : Կարոլոսին առ վերջին զործքը բաւական չէ՞ զձեղ ապահովցընելու ոնոր դիտաւորութեանց վրայ :

Ես անոր դիտաւորութեանց անկեղծութեանն եւ ազնուականութեանն վրայ երբեք տարակուած չեմ, պատասխանեց Հեղինէ : Բայց կարծեմ թէ խելացութեամբ վարուած չեմ ըլլար, եթէ հիմնելուան վիճուկիս մէջ այնպիսի մէկու մը հետ ամուսնանալու վրայ մտածեմ, որն որ ծննդեամբ ինձմէ շատ վեր է :

— Ան չէք կրնար ըսել... բայց աղեկ միտքս եկաւ : Առէլ նամակին մէջ տիկնոջ մը վրայ խօսք ըրած պիտո՞ր ըլլայ, որն որ կը հաստատէ եղեք թէ ձեր մայրը ճանչցեք է :

— Հրամեր էք, Պարան : Ձեր այսօրքերած նամակին մէջ այնպիսի տիկնոջ մը վրայ կը խօսի :

— Չեր հօրը կենդանագիրը քրոջս աղջկան տալու մտածմունքնիդ շատ աղեկ մտածմունք է եղեք :

— Ովէտք է որ խօստավանիմ թէ առանց խորհրդածութեան տուի : Յառաջադրյան երբեք չէի կարծեք որ կարենամ

ձեռքէ հանել զանիկայ, որովհետեւ ինձի  
կրկին պատճառաւ պատուական էք, մեյ  
մը՝ որ մայրս մեռնելու ժամանակ տուած  
է, մեյ մ'ալ՝ որ հօրս կենդանագիրն է,  
որուն ամենեւին ուրիշ մեկ յիշատակը  
չունիմ քովս :

— “Եայի՞նք. յուսամ որ Աստուած  
սկսած գործքը գլուխ կը հանէ, եւ ձեր  
ծնողաց անունն ու աստիճանը ծածկող  
քողը կը վերցուի :

Պը. կարողս կը գրէ որ կոստիկանու-  
թեան ձեռքով զվուաղէն եւ անոր քոյ-  
քը գտնելու ետեւէ է : Մինչեւ Հիմայ ե-  
ղած հետազոտութիւնները սպարապի ելեր  
են, կը կարծուի եղեր որ ան երկու թշուա-  
ռականը օտար երկիր փախած ըլլան : Բայց  
մարդկային արդարութեան կատարել չկըր-  
ցածը՝ աստուածային արդարութիւնը գլուխ  
կրնայ հանել : Չեն կրնար ան ամենատես  
աշքէն պրծիլ, որն որ իրենց թաքստեան  
տեղը դիտէ :

Թուղ յանցանքնին ճանչնան եւ Աս-  
տուծոյ թողութիւն ընդունին, ես ասկից  
ուրիշ բանի չեմ բաղձար, բայտ օրիորդը  
աշքէն արցունք թափելով :

Այսպէսով Հեղինէ ամեն բան Աս-  
տուծոյ յանձնելով, հանդարտութեամբ  
կը սպասէր Ատէլին նամակին, որմէ կը  
յուսար մանրամասն տեղեկութիւն ընդու-  
նիլ իր Սպանիա դտնուազ աղդականին  
վրայ : Բայց անոր վերջին նամակին վրայ

քանի մը ամիս անցաւ, եւ ամենեւին նոր  
լուր մը շառաւ: “Եսյն միջոցին Ատէլ իր  
մօրեղրօրը մէկ երկու անգամ” նաևակ գրեց.  
բայց Մանչինելի տիկնոջ վրայ ամենեւին  
յիշատակութիւն չէր ըներ: Անտարակոյս  
նոյն տիկինը տակուին կը սպասէր Ապա-  
նիա խաւրած նամակին պատասխանին:

### ԳԼՈՒԽ ԺԷ.

Երիկուն մը՝ ող Հեղինէ սենեակը քա-  
շուած գրելու կը զբաղէր, Ռիշարտոյ տի-  
կինը՝ տարիքն առած օտար կնոջ մը հետ  
ներս մոտաւ: Անծանօթն ընտանութեամբ  
մը բարեւ տալով, մէկէն օրիորդին ինչ-  
պէս ըլլալը հարցուց:

Հեղինէ շկրնալով զինքը ճանչնալ, կ'ու-  
զէր ով ըլլալը հարցընել, բայց գիմացինը  
ժամանակ չթողուց: Ի՞նչպէս կարելի է,  
օրիորդ, ըստ, որ զիս մոռցած ըլլալ:  
Ստոյգ է՝ ձեզի հետ մէկտեղ երկայն առեն  
չմնացի. բայց զիս Մոնրոպէրեան ապա-  
րանքը տեսած էր, ուր տիկնոջ սենեկա-  
պանն էի:

Հեղինէ մոտադրութեամբ երեսը նայե-  
լով, վերջապէս ճանչցու որ Մարթան է,  
զորն որ Մոնրոպէրեան ապարանքը տեսած  
էր. բայց վրան երկայն ժամանակ անցած  
ըլլալով, մէկէն չէր կրցած միտքը ըերել:  
Թողութիւն կը խնդրեմ, տիկին, պա-

տասխանեց Հեղինեց, հիմայ կը յիշեմ. իմ  
ապարանքը մտնելէս քանի մը որ եռքը՝  
դուք անկից ելաք եւ . . . .

Ես հոս ձեր ջատագովութիւնը լսելու  
եկած չեմ, ընդմիջեց Մարթա, հապա ա-  
ռաջարկութիւն մ'ընելու, որն որ կը յու-  
սամ՝ ձեզի հաճելի կ'ըլլայ: Ահաւասիկ  
ինպիրու:

Մոնրոպէր տիկնոջ քովին ելլելէս  
եռքը, այրի տիկնոջ մը ծառայութեան  
մտայ, որն որ երկու թերահասակ աղջիկ  
ունէր: Հիմայ որ քիչ մը մեծցած են, տի-  
կինը կ'առզէ դաստիարակուհի մը բռնել-  
եւ որովհետեւ Մոնրոպէրեան ընտանեաց  
հետ բարեկամութիւն ունի, ուզեց անկից  
ձեր վրայ տեզեկութիւն առնուլ, ինչպէս  
որ սովորաբար այսպիսի առիթներու մէջ  
կ'ըլլայ: Մոնրոպէր տիկինը մեծ գովու-  
թեամբ խօսեցաւ ձեր դիտութեան, ճար-  
տարութեան, փութոյն ու վարմանց վրայ  
եւ մեծ եռանդեամբ զձեզ յանձնեց, որով-  
եւ տիկինս որոշեց որ զձեզ քովին առնու-  
լաւստի զիս խաւրեց իմանալու համար որ  
արդեօք նոյն պաշտօնը կ'ընդունիք: Թռո-  
շակնիդ՝ Մոնրոպէր տիկնոջ տուածին հետ  
նոյն կ'ըլլայ, եւ որովհետեւ նոյն տիկինը  
զձեզ իրքեւ բարեպաշտ օրիորդ մը նկարա-  
գրեց, զձեզ աս կողմանէ ալ հանդարու-  
ցընելու համար կը ծանուցանեմ որ տի-  
կինս, կրան-Շէնի կոմսուհին, Մարսիլիա  
քաղաքին ամենէն բարեպաշտ ու պատկա-

ուելի տիկինն է, եւ միանդամայն՝ նշանաւոր  
արքեպիսկոպոսի մը քրոջն աղջիկը :

Հեղինէ այս ամենայն մտիկ ընելէն եւ-  
տեւ, Ըատ կը ցաւիմ՝ որ, ըստ, հիմայ  
մէկէն որոշ պատասխան չեմ կրնար տալ :  
Պր. Արքարտոյ հոռ չէ, եւ իրեն խորհուրդ  
չհարցոցած՝ չեմ ուզեր որոշում ընել :

Հիմայ ի՞նչ ընենք, գոչեց օտարական  
կինը, Կրան - Ըէնի կոմսուհին ձեզի կը սպա-  
սէ : Ի՞նք աս օրերո Լիվունոյ պիտի եր-  
թայ, ուր կը գտնուի իր արքեպիսկոպոս  
մօրեղբայրը, եւ ճամբայ չելած՝ կուզէ ձե-  
զի հետ տեսնուիլ :

Բայց գուցէ կրնանք բանն ուրիշ կեր-  
պով կարգի դնել, աւելցուց քիչ մը մտա-  
ծելէն եաբը : Որովհետեւ Կրան - Ըէնի  
կոմսուհին կը բաղձայ որ Խաղիայէն ետ  
դարձած ժամանակը քովը մտնէր, անոր  
համար՝ եթէ կ'ուզէք, հիմայ կրնաք Մար-  
սիկա երթալ, հետը խօսիլ : Եթէ ըրած  
առաջարկութիւններուն կը հաճիք, հոն-  
կից Պր. Արքարտոյին նամակ կը գրէք, եւ  
պատասխանին կը սպասէք. Խոկ եթէ չէք  
հաճիր, շուտ մը դարձեալ Նիմ՝ կը դառ-  
նաք : Խոկ ճամբուն ծախըրը հոդ մ'ընէք.  
որովհետեւ տիկինս զիս առանձին կառուլ  
մը խաւրած է, որ եթէ կը հաւանիք՝ ճամ-  
բորդութիւնն անով ընէք :

Հեղինէ երկայն ատեն, տարակուսանաց  
մէջ մնաց : Մարթային կերպարանաց վրայ  
կեզծաւ որութեան ու նենդութեան նշմա-

բանքներ կ'երեւային։ Եւ թէպէտ ինք չէր  
բւզեր հաւանիլ միտքն եկած կասկածնե-  
րուն, որոնք բաւական կ'ըլլային ուրիշ մէ-  
կը զգուշացընելու։ բայց չէր կրնար ալ  
բոլորովին հանդարտիլ։

Ուիշարտոյ տիկինն առ անորոշութիւնը  
տեսնելով, Սիրելի՛ Հեղինէ, ըստ, բան  
մ'որոշելու էք։ Չեղի եղած առաջարկու-  
թիւնը շատ պատուաւոր եւ պատշաճական  
է։ Եթէ նոյն աեղը ձեզի հաճոյ կ'ըլլայ.  
ամուսինս ըսելիք մը չ'ունենար. իսկ եթէ  
յարմար չ'երեւար, կրնար դառնալ հոս  
գալ։ Գ.խուէք արդէն որ մեր տունը ձեզի  
համար միշտ բաց է։

Մեր դիւցազնուհոյն սրտին մէջ եր-  
կու իրարու հակառակ զգածումներ կը  
կռառէին։ Մէկ կողմանէ կը բաղձար որ  
ալ իր բարերարներուն բեռ չըլլայ. մէկալ  
կողմանէ ալ ներքին երկիւղով մը կը  
վրդովէք. որուն պատճառն ինքն ալ չէր  
կրնար իմանալ։ Քիչ մը ժամանակ մնա-  
ծելէն վերջը՝ Ուիշարտոյ տիկինոջ հարցուց  
թէ արդեօք աղէկ չ'ըլլար որ երթայ նախ  
Մոնրոպէք տիկինոջ հետ խօսի։

Սիրելի՛ բարեկամ, պատաժիսնեց տան-  
տիկինը, Մոնրոպէք տիկինը քիչ մը յա-  
ռաջ ամուսնոյն հետ Մոնրելիէ գացած  
է։ Հաւատացէք ինծի, միտք զձեղ մեր  
տնէն հեռացընել չէ. մինչեւ հիմայ ցու-  
ցուցած բարեկամութենէւ և կրնար իմանալ  
թէ որչափ սիրելի էք ինծի։ Բայց իբրեւ

բարեկամ կ'ըսեմ որ եղած առաջարկութիւնը մէկէն մերժելը խելացութիւն չէ :

Ուրեմն կարծիքնիդ ան է՝ որ երթամ, բայտ Հեղինէ :

Աս խորին վրայ Ռիշարտոյ տիկինը շփոթեցաւ եւ չկրցաւ պատասխան տալ : Ուստի դարձեալ նոր լոռութիւն մը տիրեց, եւ Հեղինէ տխուր խորհուրդներու մէջ ընկղմած կ'երեւար : Վերջապէս մեծիդ մ'ընելով՝ Մարթային բայտ որ պատրաստ է հետը ճամբայ ելելու :

Տանտիկինը շատ այլայլեցաւ տեսնելով որ Հեղինէ սաստիկ գժկամակութեամբ յանձն կ'առնու երթալ : Կը կասկածէր որ գուցէ զինքը սախած ըլլոյ իր անձնական յօժարութեան գէմ որսչում ընելու : Բայց բան մը չըսաւ, մասունդ թէ օդնեց ալ ճամբարդութեան հարկաւոր եղածը սպատրաստելու :

Երկրորդ առաւ այ երբ որ Մարթակառքով դուռը հասաւ, Ռիշարտոյ տիկինջ սիրան արտաքոյ կարգի վախ ինկաւ : Տէր Աստուած, բայտ Հեղինէին, չեմ զիտեր ինչու այսպէս կ'այլայլիմ : Աիրելի բարեկամն, շատ կը վախնամ :

Ինչու համար, տիկին, պատասխանեց քաջութեամբ օրիորդը նախախնամութեան ձեռքը չեմ մի :

— Այս, բաածնիդ ճշմարիտ է : Ամենքս Աստուածոյ զաւկըներն ենք . Աստուած բարի հայր մըն է : Բայց . . . . .

Կարծեմ, կրկնեց Հեղինէ՝ այնպիսի հանգարտութեամբ մը, որ Ռիշարտոյ տիկինը զարմացուց, վախնալու ամենեւին պատճառ չկայ: Ճամբորդութիւնս ինչպիսի ելք որ ունենայ, Արան - Շենի կոմսուհւոյն Լիլունոյ գացած ատենը՝ ևս հստ կը դառնամ, առնենայն ինչ ձեզի կիմացընեմ:

— «Կայի՞նք. կը տեսնեմ որ պէտք է յուսալ. բայց չեմ համարձակիր:

— Ի խնամն Աստաւծոյ, Մենք նախախնամնութեան գաղտնիքները չենք գիտեր. շատ անդամ ինք մեզի ի կեանո կ'առաջնորդէ ան ճամբով՝ որով կը կարծենք որ զմեզ ի մահ կը վարէ:

Ամէն, այնպէս ըլլայ, պատասխանեց տիկինը:

Ետքը երկուքը մէկտեղ վար իջան, Մարթային գիմացը գացին, որն որ կառապանին հետ ներս կը մտնէր: Կառապանը Հեղինէին արկդն առաւ, եւ օրիորդը նորէն նորէն Ռիշարտոյ տիկնոջ հետ պատառելէն ետքը՝ կառքը մտաւ, Մարթային քովը նստաւ եւ կառքը շտւտ մը ճամբայ ելաւ:

Արլ հասած ատեննին՝ սուրհանդակի մը պատահեցան, որն որ իրենց մօտենալով՝ բաւ. որ կոմսուհին զաւկըներուն հետ իտալիա երթալու համար նաւ մտած է, եւ անհամբերութեամբ ոլելրիվ օրիորդին պատասխանին կը սպասէ:

Շուտով գնա կոմսուհւոյն իմացուր

որ, ըստ. Մարթա, Պելլիսլ օրիորդն անձամբ կու գայ: ՄԵնք ալ կը ջանանք ետեւէդ շուտով հասնելու:

Հեղինէ շատ խռովեցաւ աս լրոյն վրայ, որուն չէր սպասեր: Բայց ունեցած տհաճութիւնն արտաքուստ էւ ոչ նշանով մը ցուցուց: Զարմանքն աւելի շատցաւ՝ երբ որ տեսաւ թէ Արլէն ելած ատեննին, կառքը Մարտիլիայի ճամբան բռնելու տեղ՝ դէպ ի ծով տանող ճամբայ մը կը մտնէ: Ուր կերթանք կոր, ափկին, հարցուց ընկերին:

— Կաւուն խարիսխ ձգած ծովեղերքը:  
— Ուրեմն նաւը Մարտիլիա չէ:

— Չէ. Խտալիա երթալէն յառաջ Ռոն գետին բերանն առնելու վաճառք ունենալով, երէկ իրիկուն Մարտիլիայէն ելած է:

Հեղինէ կրնար Մարթային հարցընելթէ ինչու համար աս դէպքը յառաջադայն իրեն չիմացուց՝ եթէ զիտէր. իսկ եթէ չէր զիտէր, ետքէն ի՞նչպէս իմացաւ: Բայց միտքն ուրիշ խորհուրդներով զբաղած ըլլալով, լուռ կեցաւ, մինչեւ որ ճամբան վրայ եղող պղտիկ պանդոկ մը հասան:

Աւ ծովեղերքէն հեռու չենք, ըստ Մարթա. կառքը հոս թողունք, ճամբանիս սոքով շարունակենք:

Հեղինէ՝ որն որ կառքին երերումէն սաստիկ յոդնած էր, աս առաջարկու-

թիւնը ոիրով ընդունեցաւ : Պահպակին ծառաներէն մէկը Հեղինեին արկղը սայլակի մը վրայ գրաւ , եւ երեքը մէկտեղ սկսան քալել , առուակի մը քովէն՝ որն որ հոնկից քիչ մը հեռու ծովը կը թափէր :

Ծովեզր հասած ժամանակնին՝ իրիկունը մօտ էր : Ծովուն ամայի ափունքը ցուրտ հով մը կը փչէր : Ծովը շարժման մէջ էր եւ ալիքները մնալով՝ ժայռերուն վրայ կը խորտակէին :

Աս կողմերը խարիսխ նետած նառ մը երթալու համար՝ մեզի մակոյկ մը պէտք է , ըստ Մարթա՝ քանի մը ձկնորսներու , որոնք ծովեզրը կեցած՝ ուռկաննին ցիցերու վրայ տարածելու զբաղած էին :

— Ի՞նչ կ'ըսէք , տիկին , պատասխանեց ձկնորսներէն մէկը . գիտէք՝ որ այսպիսի առեն . . . :

Քեզի չափ դիտեմ , ըստ անշամբերութեամբ Մարթա . միայն ան կը հարցընեմ որ զմեզ նառ տանիլ կ'ուզէք :

Բայց , տիկին , կրկնեց ձկնորսը՝ շորս կազմն ու ծովը նայելով , մինչեւ որ ետ դառնամ՝ մուժ գիշեր կ'ըրայ , եւ ամէն նշանները կը ցուցընեն որ փոթորիկ մը պիտի փրթի :

— Փոթորիկ ! Ի՞նչ , կարծես թէ ես ծովէն չեմ հսկրեար , որ քու խօսքերէդ խարուիմ : Չե՞ս ամընար ծովէն վախնալու , ահանելով որ երկու կանայք չեն վախնար :

— Ըստածու վախես չէ . բայց պարագանելքիցի վասնդը ձեզի յառաջադրյն ծառաւցանել :

Ո՞հ , եթէ վտանգ կայ , նաւ չմննենք , գոչեց Հեղինեւ . Աւելի աղեկ է որ պանդոկ դառնանք եւ վազուան սպասենք : Աս բաելու ժամանակն այլայլութեամբ ալիքներուն շարժման եւ երկնից մժննալուն կը նայէք :

Ապահով եղէք որ ամենեւին վտանգ չկայ , պատասխանեց Մարթա . աս մարդուն չսփառանց խօսքերուն նպատակն ան է՝ որ քիչ ժ'աւելի ստակ առնու :

Կը խորտիք , տիկին . կրկնեց նոտաստին . դիտաւորութիւնս աւելի ստակ առնուլ չէ : Աւլոր վազուրնէ աւելի ստակ չեմ պահանջեր ձեզմէ : Բայց կը վախնամ որ ձեր յանդդնութեան վրայ շղղջալ :

Աղեկ դիտեմ , պատասխանեց Մարթա , որ փոթորիկը չսկսած՝ կրնանք թէ՛ մենք նաւը հասնիլ , թէ՛ դուք դարձեալ հոսետ դառնալ : Բայց պէսաք չէ որ շատխօսութեամբ ժամանակ անցընենք :

Տիկին , գոչեց Հեղինեւ , զԱստուած փորձելու չէ : Դուք ալ կը տեսնեք որ վտանգ կայ : Ինչո՞ւ զմեզ վտանգի մէջ դնենք : Ետ դառնանք , կ'աղաչեմ :

Դուք ազատ եք , պատասխանեց Մարթա . եթէ կ'ուղեք , ետ դարձեք . խկ եռ՝ միաբար դրած եմ որ անմիջապէս տիկնոջարովն երթամ :

Աս խօսքերն այնոպիսի հանդարտութեամբ ըստ որ խեղճ օրիորդը սկսաւ լալ : Բայց չկրնալով առանձին նիմ դառնալ , քաջալերուեցաւ եւ ծովեղը մօտեցաւ : Մարմա ցած ձայնին խօսք մ'ըստ նաւազարին , որն որ շուտ մը մակոյիլը պատրատեց : Հեղինէ մէջը մօտաւ , աղէկ մը վերաբերին փախթթուեցաւ եւ խուռն վրան յարձակող մտածմանց մէջ ընկղմեցաւ : Մակոյիլն անոմիջապէս սկսաւ ծովեղերքէն հեռանալ :

### ԳԼՈՒԽ ԺԷ •

Մակոյիլը մտնելէն վեր՝ Հեղինէ միորը պաշարով տխուր մտածմունքներուն մէջ ընկղմած , ամենեւին ուրիշ քանի միտ չէր դներ : Այսպէսով խել մը ժամանակ անցաւ , գիշերուան մութը բոլորովին կոխեց , եւ լուսնայն ճառագայթները սեւաթոյր ամպերը պատռելով՝ փոխմարկեալ երկինքն ու մրրկալից ալիքները սկսան լուսաւորել :

Անտարակոյս քանի մը մզոն ճամբայ բրած ենք , ըստ վերջապէս Մարմային , երբ որ անիկայ թիակավարներուն կը ցուցընէր հեռուն կեցող նաւը , որն որ հաղիւսեւ կէտի մը պէս կը նշմարուէր :

Այնպէս է , պատասխանեց Մարմա . նաւը ցամաքէն շատ հեռացեր է . ի վերայ այսր ամենայնի քիչ մը ետքը կը հանինք :

Օրիորդն ասով քիչ մը ապահովութիւն

ստանալով, ալ բերնէն խօսք մը չհանեց։  
Գլուխը ձեռուըներուն կոթնցընելով՝ ա-  
ռաջին մտածմանցը մէջ ընկղուցաւ մնաց։  
Մէջ մ'ալ յանկարծ Մարմային ձայնը  
լսեց, որ Աւասիկ հասանք, կը դոչէր։

Աս աղաղակէն արթրննալով, գլուխը  
վեր վերցուց, չորս կողմը նայեցաւ, եւ  
քանի մը վայրկեան սքանչացած մնաց՝ առ-  
ջեւը բացուած շքեղ տեսարանը տեսնե-  
լով։ Ծովը՝ նոյն տեղը ծովեզերքին մօտ  
եղածէն հանդարտ կ'երեւար. երկինքն այն-  
չափ ամպոտ չէր. գիշերուան լութիւնը՝  
միայն թիակներուն ձայնէն ու ծովեզը  
դարնուող ալեաց հեռաւոր խոխոջիւնէն  
կ'աւրուէր։ Աչքին առջեւը մնծ ու փա-  
ռաւոր նառ մը կեցած էր, որուն առա-  
գաստները՝ լուսնոյ ճառագայթներուն տակ՝  
սպիտակ լուսով մը կը փայլէին։

Կը տեսնե՞ն, ըստ Մարմայ նաւակա-  
վարին. հիմայ համազուեցա՞ր որ օդէն կը  
հասկընամ եղեր։ Ահաւասիկ ըսածիս պէս՝  
առանց փոթորկի հասանք։

Ոտոյգ է՝ նաւը հասանք. բայց ոչ դուք  
ընելու ճամբարդութիւննիդ լմբնցուցած  
էր, ոչ ալ ես ու ընկերներս ծովեզը  
դարձած ենք։ Շատ կը տարակուսիմ որ  
վաճանգէն աղատած բյանք։

Ովկ կայ հոն, գոչեց նաւուն վրայ սպա-  
սող պահապանը։

Բարեկամ, Մարմա Լավլող, գոչեց  
շեղինէին ընկերը՝ թաշկինակը շարժելով։

Անմիջապէս նաւուն յարկը նաւասիներով լեցուեցաւ, որոնք շուտ մը կախեալ թիկնաթռու մ'իջուցին մակուկին մէջ։

Օրիորդ, վրան նստեցէք, ըստ Մարթա Հեղինեին։ Աւ հիմայ օգէն վախնալու բան չունիք։ Կարծեմ զձեղ բռնտգատելուս համար՝ ինձի չէք նեղանար։

Չէ, պատասխանեց Հեղինե, շնորհակալ եմ։

Սակայն խեղճ օրիորդին սիրար սաստիկ կը զարնեք, բոլոր մարմնովը տերեւի պէս կը դողդողար. վրան մարելիք կու դար։ Մարթա առ տեսնելով, ձեռքէն բռնեց եւ այլայլութեամբ մը։ Օրիորդ, հիւանդ էք, ըստ։

— Հիւանդ չեմ, բայց . . .

— Բայց, ի՞նչ. դեռ փոթորկէն կը վախնաք։

Խեղճ օրիորդը պատասխան շտուաւ. աւելի կ'ուզէք յանձն առնուլ որ զզացած անձկութիւնը՝ ազայական վախէ ծագած համարուի, քան թէ բռն ծշմարիտ պահառը յայտնել։ Մարթա ալ զինքը նորէն շմախանձեց։

Երբ որ խել մը առեն վարանելէն վերջը՝ օրիորդը թիկնաթռուին վրայ նստաւ, ընկերը նշան տուաւ, եւ շուտ մը թիկնաթռուը վեր քաշուելով, Հեղինե նաւուն մէջ կը դանուէք։

Մաքուր հագուած երիտասարդ մը՝ որն

որ ազնուականի ծառայ կ'երեւար, զինքը  
թիկնամթուէն վար իջեցուց։ Խոկ նաւաս-  
տիներն ու քանի մը ճամբորդներ շորո  
կողմն առած՝ մտադրութեամբ ու լուռ-  
թեամբ իրեն կը նայէին։

Տիկին, կը հրամայէք որ զձեղ սենեա-  
կը տանիմ, բաւ երիտասարդը, թէ կ'ուզէք  
սպասել մինչեւ որ ընկերնիդ ալ վեր ելի։  
Կը սպասեմ, սպատասխանեց Հեղինե։  
Վասն զի թէպէտ այնչափ հետաքրքիր  
բազմութեան տեսիլ ըլլալուն վրայ կ'այլ-  
այլէր, ի վերայ այսր ամենայնի կը բազծար  
որ ծանօթ մէկը զինքը ներկայացրնէ կրան-  
շէնի կոմուռ հոյն։ Սպասաւորը զինքն ող-  
ջունեց եւ հեռացաւ գնաց։

Կը վախնամ որ ցամաքէն հոս դալու-  
ատեն՝ մեծ նեղութիւն կրած ըլլաք, բաւ  
Հեղինեին ճամբորդներէն մէկը։ Փոմթորիկ  
մը փրթելու վրայ էր, բայց բարեբախտու-  
թեամբ հովը դագրեցաւ։

Զմեզ հոս ըերտղ նաւաստիներն ալ  
նոյն վախն տնելին, սպատասխանեց օրիոր-  
դը։ անոր համար ալ շատ վախ կրեցի . . . .  
Բայց կրնայի, Պարոն, համարձակիլ հար-  
ցընելու . . . .

Նոյն վայրկենին Մարթա նաւուն յար-  
կը դալով, մեծ զարմանկը ցուցուց զՀեղինե-  
տակաւին հոն գանելուն վրայ, եւ հարցուց  
թէ ինչու զինքը սենեակը չեն տարած։

Ես ուզեցի հոստեղս ձեզի սպասել, սպ-  
ատասխանեց Հեղինե։

Մարթա յարդութեամբ մը ծռեցաւ .  
զինքն առաւ՝ շքեղ զարդարուած սրահ  
մը տարաւ , եւ անմիջապէս դուրս ելաւ  
որ բանը կրան - Շինի կոմսուհւոյն իմացր-  
նէ : Հնի օրիորդը սաստիկ այլայլութեամբ  
բազմոցի մը վրայ նստաւ , եւ աչուրները  
դրան վրայ սեւեռած ամեն բապէ կոմսու-  
հւոյն դալուն կը սպասէր :

Քայլ քիչ մը ետքը Մարթա առան-  
ձին ներս մտաւ , եւ հետք բերած աւտելիքը  
սեղանին վրայ դնելով , կոմսուհին կ'աղաչ-  
որ իրեն ներեք . բայտ : Զկարծելով որ  
այսշափ ուշ առեն հստ հասնիք , պառկեր է :

— Խսկ աղջիկները :

— Անոնք ալ պառկած են : Քայլ վա-  
զը առտու կանուխ զիրենիք ամենքը կը տես-  
նէք : Տիկնոջս հետ խօսելո՞ն ետեւ . մէկ-  
տեղ ցամաք կը դառնանիք ու Մարտիխա  
կ'երթանիք : Խսկ եթէ եղած առաջարկու-  
թիւններուն շէք հաճիք , զձեղ Նիմ կը  
տանիմ :

Հեղինէ հանդարտելով՝ քիչ մը կե-  
րակուը կերաւ , սրուն շատ հարկաւո-  
րութիւն ունէք , որովհետեւ վախէն ու  
անձկութենէն՝ բոլոր ճամբորդութեան ա-  
տենը բերանն ամենէւին բան մը շէք կրր-  
ցած դնել :

Կերակուը լմբնցրնելո՞ն ետեւ . Մարթա  
զինքը սրահին չորս կաղմն եղող պղտիկ  
սենեակներէն մէկը տարաւ , ուր անկողին  
մը եւ աթսու մը կար , եւ բաւաւ . Ահաւա-

սիկ անկողիննիդ . Նայեցէք որ ազէկ քնարնաք . անշուշտ խիստ յոդնած պիտոր ըլլաք : Կը յուսամ որ ազէկ մը հանգչելէն ետեւ , այսօրուան նեղութեան դիմացը՝ վաղք կ'ուրախանաք : Գիշե՞ր բարի . ևս ալ այնպէս յոդնած եմ որ յուսամ թէ զիս անմեղադիր կ'ընէք՝ աւելի երկայն ժամանակ ձեր քովք չկենալուս համար :

— Չեք հանգստեան նայեցէք . վաղք կը տեսնուինք :

— Եթէ բանի մը հարկաւորութիւն կ'ունենաք , առ տախտակամած անջրապետք դարկէք . որն որ ձեր խույն իմբնէս կը բաժնէ :

Աս վերջին խօսքին վայ բոլորովին հանգարտեցաւ Հեղինէ , որն որ առանձին մնարուն վրայ քիչ մը անհանգիստ կ'ըլլաք . թէեւ ազահով էք որ Կրան - Շէնի կոմսու հւոյն պաշտպանութեան տակ ըլլալով , ամենեւին մէկ կողմանէ վախնալիք չիկրնար ունենալ :

Ազօթքն ընելէն ետեւ՝ զգեստներովն անկողնոյն վրայ նետուեցաւ , բայց քունք չտարաւ : Եղին օրք պատահածները . կոմսու հինէն գտնելու ընդունելութեան վրայ ունեցած տարակոյսը , պատերազմական նառու մը մէջ գտնուիլը . առ ամեն բան միտքը զբաղեցրնելով , թող չէք տաք որ քնանայ : Հաղիւ առտուան դէմ ծանրացած աշուրները դոցուեցան :

Աբթնցած ատենը՝ ժամացոյը նայե-

ցաւ, եւ զարմացմամբ տեսաւ որ ժամբ  
տասն է: Ժամանակին այնչափ ուշ ըլլա-  
րւն վրայ այլայլելով, շուտ մը ցատքեց ե-  
րաւ, եւ որահը գնաց, ուր կը յուսար որ  
կրան - Ծէնի կումառհին իր դատերացը հետ  
կը գտնէ: Քայլց հօն մէկը չգտաւ. ամէն  
բան նախընթաց իրիկունը ձգածին պէս  
մնացած էր: Ուստի ամոռու մ'առաւ նստե-  
ցաւ, միտքը դնելով որ սպասէ՝ մինչեւ որ  
մէկը ներս գայ:

Քանի մը վայրկեան ետքը իրեն այնպէս  
երեւցաւ որ նաւը կը քալէ, որուն վրայ  
սրտաքոյ կարգի զարմացաւ: Երբ որ թէ  
սասր եւ թէ զինքն այնպէս առանձին ձգել-  
նուն վրայ կը մնածէր, մէկէն դրսէն ս-  
տնածայն մը լսեց: Առանց զիտնալու թէ  
ինչո՞ւ սկսաւ դողդողալ, սիրոք սաստիկ  
շուտութեամբ կը նետէր, եւ աշուշներն  
անձկութեամբ դուռը սեւեռած կը նայէր:

**Մէջ մ'ալ դուռը յանկարծ բացուե-  
ցաւ, եւ ներս մտաւ . . . . Եղուարդ Մոն-  
րոպէրեան նաւապետը:**

Հեղինէ սարսուաց, եւ իրմէ հեռանա-  
լով՝ ամոռուի մը վրայ նստաւ: **Մէկէն հա-  
զար ու մէկ երկիւղներ ու սոսկալի կաս-  
կածներ միտքը պատեցին, եւ դօղդոջիւն  
ձայնով մը հարցուց թէ Կ՞՞նչ կը նշանակէ  
աս անակնեալ այցելութիւնը:**

Գուցէ օր մը կ'իմանաք, օրիորդ, պա-  
տասխանեց նաւապետը: Հիմակուհիմայ  
չեմ կրնար հետաքրքրութիւննիդ լեցընել:

— Իսկ Արան - Շէնի կոմու հի՞ն :  
 — Որչափ որ ես գիտեմ, Արան - Շէնի  
 կոմու հի անուամբ մարդ չկայ :  
 — Ուրեմն դիս խարե՛ր են :  
 Կարելի է, պատասխանեց Նուազեաքեաք :  
 Ասոր վրայ խեղճ օրիօրդին երակացը  
 մէջ արխանը վախէն սկսաւ սառիլ : Տեսաւ  
 որ Մարթային հաւատալով՝ նենդաւ որ  
 կնոջ մը ձեռքն ինկեր եւ անդութ ու հզօր  
 թշնամուոյ մը մատնուեր է : Զօրութիւ-  
 նը սկսաւ տպառիլ . կարծես թէ թուխ  
 ամազ մը աշուրները կը մթքնցըներ . շիյնա-  
 լու համար՝ չորս կողմի տարկաներուն  
 փաթթութուեցաւ :

Կը տեսնեմ որ շատ կ'այլայլիք, բու-  
 նաւազեաք : Ճայնին բնական խստութիւնը  
 մէզմացընելու ջանալով . բայց այլայլերու-  
 եւ վախնալու բան չկայ : Չձեզ հոս բե-  
 րել տալուո պատճառն ան չէ, զորն որ  
 կարելի է կը կարծէր : Չէ . ձեր պատուայն  
 կողմանէ վախնալու ամեննեւին առիթ չու-  
 նիք : Հոս ամէն մարդ ձեզի հետ այնպիսի  
 մեծարանօք կը վարուի, իբրեւ թէ ձեր  
 սեպհական տան մէջ բլայիք : Իմ նաւուս  
 վրայ կը գտնուիք : Մինչեւ որ մեր ճամբար-  
 գութեան նպատակը հաննիք, Մարթային  
 զատ մարդ հոս ոտք չիկոխեր :

Արնամ հարցընել թէ նոյն նպատակին  
 ուր է, հարցուց Հեղինէ, որուն վախը  
 ծովագետին վերջին խորերէն քիչ մը  
 մեղմացած էր :

— Հոն հաստած ժամանակնիդ կ'իմանաք : Անկից յառաջ խօսին արգելեալ է :

— Ուրեմն ուրիշին հրամանաւը կը գործէք :

— Չձեզ հստ բերել տուողն ես րլամ, ուրիշն ըլլայ, միշտ նոյնչափ համբերաւթեան կարօտութիւն ունիք :

— Բայց, Պարոն, զիս ամէն աստուծային ու մարդկային օրինաց դէմ ի՞նչպէս կրնաք բռնութեամբ հոռ պահել : Պէտք է որ զիս նորէն ցամաք հանել տաք :

— Բարկութիւննիդ չափաւորեցէք, որովհետեւ անօգուտ է : Գլուխնիդ եկած չարիքին՝ համբերութենէն ուրիշ դարման չունիք :

Աս ըսելով՝ ծաղրական արգահատութեամբ մը Հեղինենին նայեցաւ, եւ ձեզ դուրս ելաւ : Խեղճ աղջիկն առանց բերան բանալու, թող տուաւ որ երթայ, եւ ոչ իոկ փորձ բրաւ անոր ետեւէն դուրս ելլելու : Քիչ մը ետքը դողդոջուն քայլերով պառկելու խուցը գնաց, եւ դուռը գոցելով՝ կիսամեռ անկողնոյն վրայ ինկաւ :

Խել մը ատեն աս վիճակին մշջ մնալէն ետեւ, քիչ մը հանգարտելով, սկսուինք իրեն մտածել : Բայց որչափ աւելի կը մտածէք, այնչափ ալ ցաւերը կը սաստկանային : Իրեն այնպէս կ'երեւար թէ Աստուած զինքը բոլորավին թող տուեր է : Բայց իր կենդանի հաւատքը դարձեալ իրեն քաջալերութիւն տուաւ : Մտածելով

որ դուցէ կարենայ կերպով մը իր ազա-  
տութիւնը ձեռք բերել, որահը զնաց, և  
փորձեց որ արդեօք կրնայ դուռը բանալ,  
զորն որ նաւապետը դուրս ելած ատեն գո-  
ցած էր: Բայց բոլոր ջանքը պարապ ելաւ:  
Ետքը պատուհանը վաղեց եւ սկսաւ շատ  
անգամ ուժգին պոռալ, մինչեւ յոդնե-  
լով ու ձայնը քաշուելով, զնաց նորէն  
անկողնոյն վրայ ինկաւ, և մարդիկներէն  
օգնութիւն շկրնալով յուսալ, ինք զինքը  
բոլորովին աստուածային նախախնամու-  
թեան յանձնեց, որն որ իր թշուառու-  
թեանց մէջ միակ ազաւէնն էր:

### ԳԼՈՒԽ ԺԷԹՆ:

Հաղիւ քանի մը բռպէ անցած էր: Հե-  
զինէին խուցը քաշուելէն վեր, մէյ մ'ալ  
դուռն ուժգնութեամբ զարնուեցաւ: Օ-  
րիորդն ելաւ դուռը բացաւ: Նաւապետը  
խուվեալ դիմօք ներս մտնելով, շուտ մը  
ձեռքն անոր բերանը դրաւ, որպէս զի  
շկարենայ պոռալ, և ըստ: Քիչ մը յա-  
ռաջ հանած սաստիկ աղմուկնիդ ի՞նչ պի-  
տի բլայ: Եթէ մէյ մ'ալ պոռալու ըլլաք,  
բաներնիդ բուսած է: Գիտէք որ իմ իշ-  
խանութեանս տակն էր: Նաւուն մէջ  
դանուողներուն ամենուն կեանքն իմ ձեռքս  
է: Ուստի նայեցէք որ ինձիք է՝ ինք զինք-  
նիդ բարկութեանս հանդիպելու վտանգի  
մէջ ձգել, ուրիշներէն օգնութիւն ինդու-

լու համար, ուր որ օդնութիւն ընող ալ չկայ:

ԱՌ չեմ պոռար, պատասխանեց Հեղինէ վախով: Բայց, Պարոն, ի՞նչ պատճառի համար զիս հոս իրբեւ բանտարկեալ կը պահէք:

— Չեզի պատասխան տալու պարտականութիւն չունիմ: Միայն առ կ'ըսեմ որ հոս տեղը գտնուինիդ, վեպերու մէջ պատմուած յափշտակութիւններուն նման բան չկարծէք: Մէջ մը զրուցեցի, հիմայ նորէն կը կրկնեմ, որ զձեզ հոս բերել տալուս նպատակը՝ բոլորովին տարրեր է անկից, զորն որ մեր տունը գտնուած ժամանակնիդ երբեմն բերնէս վախած անխորհուրդ խօսքերը ձեզի կարելի է կարծել տան:

Պարոն, նպատակնիդ ի՞նչ որ կ'ուզէ ըլլայ: ըրածնիդ միշտ եղեռնագործութիւն մըն է: Դուք հոս իրբեւ բացարձակ տէր կ'իշխէք. բայց ձեզմէ վեր արդար Աստուած մը կայ, որն որ մեղքն անպատիժ չիթողուր, Աստուած մը՝ որն որ ինք զինքը՝ Հայր որբոց, եւ հարստահարեալ անմեղութեան պաշտպան կ'անուանէ:

Աս հանդարտութեամբ ու հաստատութեամբ ըստած խօսքերը՝ նաւազետին վրայ այնպէս մեծ ազցեցութիւն ըրբին, որ մէկէն դոյնը նետեց, սկսաւ դողալ: բայց շուտ մը դարձեալ իր առաջին յանդդնութիւնը ստանալով, Եթէ Աստուած զձեզ աղատէլ կ'ուզէ, ըստ, թող աղատէ: Իսկ

մարդիկներուն կօղմանե՛՝ թէեւ բոլոր աշխարհք մէկաեղ գայ, զձեղ չե՞ն կրնար աղատել :

— Հայհոյութիւն մ'ընէք, Պարսն . Աստուած իր պաշտպանութէան տակ առած անձինքն աղատելու համար՝ հրաշք ընելու հարկաւորութիւն շունի, շատ անգամ զմարդիկ ձեռք կ'առնու. իր արդարութիւնն ու բարութիւնը ցուցընելու համար :

— Իր տեսնե՞նք: Բայց մինչեւ որ ձեզի համար առ աղատութէան ժամը զարնէ, մի մոռնաք որ ձեր կեանքը ձեր լուսթենէն կախուած է. Եթէ մէյ մ'ալ պսուալու ըլլաք, բերաննիւթ ընդ միշտ կը գոցուի:

Աս բառ. ու ձգեց դուրս ելաւ: Խոկ Հեղինէ առանձին մնալով, դարձեալ սկսաւ եռանդեամբ աղօթք ընել: Ա՛ւ յառաջուան վհառութիւնը չէր զգար. կարծես թէ ներքին ձայն մ'իրեն կ'ըսէք որ աղօթքը լսուած է, եւ սպասած օդնութիւնը շուտով կ'ընդունի:

Քիչ մը ետքը սկսաւ չորս կողմը միթըննալ, եւ օրիորդը հաղիւ կրցաւ ժամացուցին վրայ նշմարել որ ժամը հինգն է: Կ'ոյն միջոցին նաւուն ամէն կողմերէն աղաղակներ կը լսուէին, եւ իր փակուած խուցին քովերէն մարդիկ վագելով՝ կ'երթ ային կուզային: Խոկ նաւուն երերումն ան աստիճանի կը սաստիանար, որ խեղճ աղջիկն իմացաւ թէ ձկնօրսներուն զուշակած մըրիկը վերջապէս սկսած է:

Չկրնալով հանդարտ կենալ, ոտք եւ-  
յաւ, եւ պատուհանին մօտիկնալով՝ տե-  
սաւ որ ծովը բոլորովին փրփրով ծածկուած  
է, ալիքներն ալ այնպիսի սաստկութեամբ  
սպակիներուն կը զարնուէին, որ կարծէր  
թե պիտի խորտակին: Աչուրները երկինք  
գարձընելով՝ տեսաւ որ ուժամբ ոյր եւ սպառ-  
նալից ամսպեր զարհութելի արագութեամբ  
կ'անցնէին կ'երթային: Սաստիկ հով մը  
նաւուն չուստաներուն եւ առագաստներուն  
մշջէն՝ միակերպ ու տիսուր կերպով մը կը  
սուլէր:

Հեղինէ դարձեալ անկողնոյն վրայ տա-  
րածուեցաւ, եւ մէկ կողմանէ երկնից օգ-  
նութիւնը ինսդրելով, մէկալ կողմանէ հան-  
գարտութեամբ կը սպասէր որ բախտն ո-  
րոշուի:

Նոյն միջոցին նառապետը ձեռքը լապ-  
տերով մը ներս մտաւ: Եշրեսին դոյնը բո-  
լորովին նետած էր, աչուրները գարձած  
էին, եւ իր յառաջուան վէս ու յանդուզն  
կերպարանաց վրայ՝ սաստիկ վախ ու վհա-  
տութիւն նկարուած էր: Առանց Հեղի-  
նէին միտ դնելու, սենեկին պատուհանին  
մօտեցաւ: Խոկ որը աղջիկը մտածելով որ  
կարելի է նոյն վայրկեանը փախչելու միակ  
առենն ըրայ, շուտ մը դէպ ի սրահ վազեց  
ու գոնէն դուրս ելել կ'ուզէր:

Բայց նառապետը ետեւէն հասաւ, բազ-  
կէն բռնեց, եւ վրան մոլեպին նայուածք  
մը արձակելով, նորէն խուզը տարաւ. պա-

տուՀանին վեզկերը դոցեց, չորս կողմէն  
նայեցաւ՝ որ ամէն բան ի կարգի է, եւ  
առանց խօսք մշշելու՝ կը ձգէր կ'երթար:  
Հեղինէ փորձեց անոր ետեւէն դուրս ել-  
լել: Առ տեսնելով՝ նաւապետը մէկէն քիչ  
մը շփոթեցաւ, բայց չուտ մը ինք իրեն ե-  
կաւ, եւ աղջիկն ուժգնութեամբ ներս  
հրելով ելու դնաց:

Խեղճը տապալեցաւ, գետինն ինկաւ,  
ուր խել մը ատեն փոռուած մնաց, մինչեւ  
որ նաւուն շարժելովն ինքն ալ գրտորելով  
եւ կարասեաց զարնուելով, ալ ստիպուե-  
ցաւ ելել՝ անկողնոյն վրայ նետուիլ:

Փոթորիկն երթալով կը սաստկանար,  
նաւը խաղալիկ մ՛եղած էր ալիքներուն,  
որոնք սաստկութեամբ չորս կողմանէ վրան  
կը յարձակէին. Հովն անդադար կը մարն-  
չէր, երկինքը կը դռուար. Երբեմն ալ թրն-  
դանօթք նաւուն մեծ վտանգի մէջ գտնուե-  
լուն նշանը կու տար: Հեղինէին անանկ  
կու գար որ ալեաց մէջ ընկղմնող դժբախտ-  
ներու աղաղակը կը լսէ. ուստի սարսա-  
փած՝ գրութօր վերմակին տակ խոթեց:

Ի վերայ այսր ամենայնի գրսի ձայները  
տակաւին կը լսէր, եւ յաւսահատութեան  
աղաղակիներուն մէջէն, Մակոյկը ծով ի-  
ջուցէր, խօսքն ականջը հառաւ: Ասով գու-  
շակելով որ նաւն ընկղմնու կամ ժայռե-  
րու զարնուելու վտանգի մէջ է, նաւապե-  
տին սպառնալիքը բանի տեղ չդնելով, սուր  
աղաղակ մ՛արձակեց:

Հաղիւ առոր վրայ վայրկեան մ'անցած  
էք . մէջ մ'ալ դրսէն սանաձայն մը լսեց :  
Անմիջապէս դռւոք խորտակեցաւ եւ պաշ-  
տօնակալ մը ներս մնաւ , որուն ձեռքի  
ջահին լուսովը Հեղինէ ճանչցաւ . . . զիա-  
րուս Աէն - Ռումէն :

Ո՞հ . Պարտն Կարոլոս , ստուգիւ դուք  
էք , դոչեց օրիորդը՝ սաստիկ զարմացմամբ :

Խսկ պաշտօնակալը կարծես թէ կեցած  
տեղը գամուածի պէս մնաց՝ զՀեղինէ տես-  
նելով . չէք կրնար աշուըներուն հաւատալ :

Ե՞ս եմ , Հեղինէն եմ , դոչեց խեղճ աղ-  
ջիկը . երկու ձեռքով սենեկին դուռը  
բանելով՝ սրչիյնայ : Կարոլոս ալ ամէն ըոպէ-  
զլորելու վահնդի մէջ էք . այնչափ սաս-  
տիկ էք նաւուն երերումը :

Աերջապէս երիտասարդն ինք իրեն դա-  
րձ , Դժբախտ օրիորդ , դոչեց , ի՞նչ կեր-  
պով հոս կը դանուիք :

Հեղինէ պատասխան շտուաւ :

Բայց ասանկ անգործ կենալով՝ անդին  
ժամանակ մը կը կորսընցընենք , շարունա-  
կեց պաշտօնակալը . ետեւէս եկէք , ապա  
թէ ոչ կորսուած էք : Եւ առանց խօսք  
մ'աւելցըներու . Հեղինէին ձեռքէն բռնեց .  
նաւուն յարկը հանեց : Օրիորդն առանց  
դիմագրութեան՝ թող տուաւ որ զինքը  
տանի . զարմանքն ու երկիւզը չէք ներեր  
որ թշնամոյն հանդիպելուն վրայ մնածէ :

Կեցէք , կեցէք , դոչեց Կարոլոս , բոլոր  
զօրութեամբ նաւուն ան կողմը վազելով .

ուր կը կենար նաւապետը՝ յուսահատեալ դժբախտներու բազմութենէ մը պաշտուած :

Հեղինէ զնաւապետը տեսնելով, չէր համորձակեր յառաջ երթալ. կը ջանար կարոլոսին ձեռքէն պրծիլ. բայց երիտասարդն առանց անոր դիմադարձութեան միտ գնելու՝ զինքը մինչեւ ան տեղը տարաւ, ուր եղբայրն անհամբերութեամբ կը սպասէր մակուկին պատրաստուելուն, որ մէջը նետուի :

“Եաւապետը հաղիւ մէյ մը Հեղինէին ու անոր ազատչին նայեցաւ. կենաց վտանգին մտածմունքն՝ ուրիշ ամէն զգածմունքները գաղրեցուցած էր: Այսպէսով՝ առանց բան մ'ըսելու՝ պատրաստութիւնները յառաջ կը տանէր: ”

Փոթորիկը նոյն միջոցին կատաղութեան վերջին ծայրը հասած էր: “Եաւը՝ զեկն ու կայմերը կորորնցուցած ըլլալով, ծովուն ալիքներուն վրայ մակուկի մը պէս կ'ուտուատէր, եւ ամէն բողէ անոնց տակն անհետ ըլլալու վտանգի մէջ էր: Ծովվեզերքէն շատ հեռու չէին, եւ հովը զիրենք բռնութեամբ կը մղէր եղբները պատող ժայռերուն դէմ:

Հեղինէ ուր գտնուածն ու ինչ ըրածը չէր զիտեր: Մէկ ձեռքով կարոլոսին բազուկը բռնած էր, մէկալովը՝ հովէն կոտրած կայմի կտոր մը: Ոտքի վրայ կը կենար, բայց պյնպիսի վիճակի մէջ կը գտնուէր՝ որ եթէ

Կարոլոս զինքը չրո՞նէր, անտարակոյս չէր  
կրնար հոգին սաստկութեան եւ ալեաց  
կատաղութեան դիմանալ:

Վերջապէս մակոյկը ծով իջնալով, նա-  
ւապետը մէջը ցատքեց. նաւաստիներուն  
մէկ մասն ալ ետեւէն գացին: Եղուարդ  
զեղբայրը կը կանչէր. բայց Կարոլոս տէ-  
ղէն շարժելու առեն շունեցած՝ սաստիկ  
հով մը մէկէն մակոյկը հեռացուց:

Նոյն ժամանակը կայծակի մը սփռած  
լուսովը, Հեղինէ մակոյկը գտնուած մար-  
դիկներուն մէջ նշմարեց զվուապէն՝ Ան-  
նային եղբայրը. Մէկէն միտքը սոսկազն  
կասկած մ'եկաւ. բայց շուտ մ'ան ողոր-  
մելին մոռցաւ, երբ որ ուրիշ փայլակ մը  
ծովին երեսը նորէն լուսաւորելով՝ տա-  
ջեւը զարհուրելի տեսիլ մը բացաւ. Տե-  
սաւ որ մակոյկը դառնալով՝ ծովաւն տակը  
թազուեցաւ: Մի միայն սաստիկ ապաղակ  
մը լսուեցաւ, եւ ետքը գերեզմանական  
ուռութիւն մը տիրեց:

Քիչ մը առեն այնպէս կ'երեւար որ  
Կարոլոս բոլոր քաջարառութիւնը կորսըն-  
ցուցած ըլլայ: Յուսահատութեամբ ձե-  
ռուրները դէպ ի մակուկին ընկղմած կող-  
մը տարածեց, զՀեղինէ թող տուաւ՝ դէպ  
ան կողմը վազեց, կրկին կրկին զեղբայրը  
կանչելով: Բայց ամենեւին պատասխան  
տուող չեղաւ:

Հեղինէ գետինն ինկած՝ աղօթք կ'ընէր,  
բայց չէ թէ իրեն համար, այլ ան դժբախ-

աին համար՝ որուն, առանց մասնաւոր դիտաւորութեան, աստուածային բարկութիւնը սպառնացած էր :

Կարոլս պարագ տեղ խել մը տաեն պոռալէն եսքը՝ օրիորդին քովը դարձաւ, որն որ բոլոր զօրութեամբ պարան մը բռնած կեցած էր :

Հեղինէ, ըստ, միայն Առուածմէ կընանիք օգնութիւն յուսալ, ազօթք ընենք: Օրիորդին քովը ծունք իջաւ եւ բարձր ծայնիւ քիչ մը ազօթք ընելէն եսքը, ոոք ելաւ, քովը զտնուող նաւասահներէն մշկուն գոտին առաւ, Հեղինէին մէջքէն փաթթեց :

Եաւն արագութեամբ ցամաք կը մօտենար, եւ կարծես թէ առանցքի մը վրայ կը դառնար, Պաշտօնակալը զօրիորդը փաթթած գոտւպին ծայրը բռնած, առաւ զինքը նաւաւն կազը տարաւ, եւ անոր հետ մէկտեղ արեաց մէջ նետուեցաւ :

## Գ Լ Ա Խ Խ Ա Խ

Երբ որ Հեղինէին խելքը զլուխը դա-  
լով, աչուրները բացաւ, ինք զինքն աղքա-  
տին խուցի մը մէջ, պղտիկ՝ բայց բաւա-  
կան մաքուր անկողնոյ մը վրայ գտաւ:  
Մէկէն սկսաւ աչուրները չորս դին պտրտ-  
ցընել, ուր եւ ի՞նչ վիճակի մէջ եզածն  
իմանալու համար: Քիչ մը մտածելէն ե-  
տեւ՝ մէջը գտնուած նաւուն նաւարեկու-  
թիւնը միտքն ինկաւ: Կարծես թէ տա-  
կաւին ալեաց մոնչիւնն ու խղդուողներուն  
յաւսահատական աղաղակը կը լսէր: Ուս-  
տի աչուրները նորէն գոցեց՝ իրր թէ ե-  
րեւակայութեան մէջ նկարուած ահազին  
տեսարանը չտեսնելու համար:

Ասինպիսի այլայլութեան մէջ էր, որ  
զժուարաւ կրնար շունչ առնուլ, մինչեւ  
զրեթէ կենդանի ըլլախ իսկ չէր իմանար:  
Մէյ մ'ալ կամացուկ մը դրան բացուե-  
լուն ձայնը լսելով, զլուխը դարձուց, եւ  
հինգ վեց տարւան աղջիկ մը տեսաւ, որն  
որ զգուշութեամբ գէտ իրեն կու գար,  
մէկ ձեռքով՝ հողաթափները, մէկալովն ալ  
պղտիկ ամժու մը բռնած: Աղջիկը շաւնը  
բռնելով՝ Հեղինէին մօտեցաւ, ամժոռն  
անկողնոյն քով դրաւ, եւ վրան ելլելով՝  
սկսաւ զարմացմամբ եւ հետաքրրութեամբ  
օրիարդին կերպարանքը զննել:

Հեղինէ աղջիկը շվախցընելու համար՝  
աչուրները գոցած էր. անոր համար եկողն

աւելի համարձակութիւն առնելով, ձեռքը՝ գունատ այտերուն վրայ դրաւ: Տեսնելով որ պաղած է, ոկտաւ միեւնոյն զդուշութեամբ ետ դառնալ: Բայց Հեղինէ կամացուկ մը գլուխը վեր վերցրնելով, ցած ձայնիւ անոր ըստ: Ո՞ւր եմ. դռնով ես, աղջիկ:

Աղջիկն ետեւը նայեցաւ, մեծ զարմանը ցուցուց: Այս մ'ալ յանկարծ հողաթափներն ու աթոռը գետինը ձգեց, վաղելով խցէն դուրս ելու, բայսը զօրութեամբ սկսաւ պոռալ: Մայր, մայր, գեղեցիկ տիկինն արթընցաւ:

Իր մանկական ձայնին հնչիւնը կամաց կամաց հեռանալով, չառելու սկսաւ: Իսկ Հեղինէ ձեռքը ճակաաը դրած՝ կը ջանար խորհուրդները ժաղվել, որ ուր ըլլայն իմանայ:

Քանի մը բռպէէն՝ դրան առջեւը իիրտ կերպարանօք բարձրահասակ կին մ'երեւցաւ, որն որ հօն կենալով՝ երկչոտութեամբ մը զօրիօրդը կը զննէր: Կարծես թէ կը վախնար որ անկողնոյն մէջինը ճիւազ մը չըլլայ: Բայց Հեղինէին երեսաց գոյնէն եւ աչուրներուն փայրունութենէն քաջալերուելով, իրեն մօտեցաւ եւ ինչպէս ըլլալը հարցուց:

Ինք զինքս շատ գէշ կը զգամ, պատասխանեց Հեղինէ:

— Արնայիք յուսալ որ աւելի աղէկ ըլլաք:

— Ո՞՛՛, չե՞ :

— Հիմայ ձեզի բան մը կը բերեմ, որ  
քիչ մը ոփոփութիւն կու տայ: Մինչեւ  
որ գամ, թող Ամենիկը հոս մնայ:

Պլատիկ աղջիկը՝ որն որ խօսակցութեան  
ժամանակը դրան քավ կը կենար, իր ա-  
նունը լսելուն պէս՝ մօտեցաւ եւ սկսաւ  
իր հասակին սեպհական եղող կարեկցու-  
թեամբ Հեղինեին նայիլ: Բայց օրիորդն  
անոր ամենեւին միտ չէր գներ:

Քիչ մը վերջը կինը զօրացուցիչ ըմազե-  
լիք մը բերաւ: Ասկայն Հեղինե նոյնը խոն-  
դէն ետքն ալ՝ զգալի աղջկութիւն մը շի-  
մացաւ, մանաւանդ թէ սարսուէ մը բըռ-  
նուեցաւ, որուն հետ մէկտեղ մնաց ցնո-  
րում ու զառանցանիք ալ սկսաւ: Աս վի-  
ճակն ամբողջ երկու օր տեւեց:

Երրօրդ օրը նորեն ինք իրեն զալով,  
պատահած զարհուրելի գէպքերը յայտնա-  
պէս յիշեց, անոր համար ալ ինչ եղանա-  
կաւ նաւարեկութենէ ազատած ըլլայն  
աղջկան հարցուց:

Ես չեմ գիտեր, պատասխանեց աղջիկը.  
բայց մայրս կը պատմե:

Հեղինե ետքեն նոյն հարցումը կնոջն  
ալ ընելով, իմացաւ որ սնիկայ նաւարե-  
կութեան օրը լսելով թէ նաւ մը ընկղմե-  
լու վտանգի մէջ է, շուտով ծովեղերք  
վազեր է, եւ արդէն ամէն բան յմբնցած  
ըլլարով, ծովուն ափունքը շատ մը խրդ-  
դուած մարդիկներու գիտեներ գտեր է:

Դուք ալ անսնց մ. ջն էիք, ամիկին, աւելցուց կինը, բայց մտադրութեամբ զննելով՝ տեսայ որ տակաւին կենդանութեան նշաններ կու տաք: Եւ թէպէտ ամէն մարդ կը պնդէր որ մեռած բլագ, ես զձեղ բազկացս մէջ առի, հոս տունս բերի, աս անկողնոյն վրայ դրի, եւ աղեկ մը ծածկելով՝ բերաննիդ տաք գինի լցուցի: Բայց ամենայն ինչ պարագ եղաւ: բոլոր գիշերն ամեննեւին շարժում մը շրբիք: Աւ միտքս դնելով որ իրօք մեռած էք, կ'երթայի զժողովրդապետը բերելու, որ գայ զձեղ թաղէ: մէյ մ'ալ աս շարածնի Մաննիկը զիս կանչեց:

Գիտնալու էք որ աս աղջիկը խիստ կամագաշտ է, այնպէս որ նմանը քիչ կը գտնուի: Թէպէտ շատ անդամ իրեն ապապրած էի որ ձեր քովը շգայ: Ի վերայ այսր ամենայնի դռնելն դուրս ելլելուս պէս՝ ուզեր է հետաքրքրութիւնը յագեցընել: Պղափկ եղբայրն որորոցը գրեր, ձեր խուցն է եկեր՝ զձեղ տեսնելու: Ստուգիւ բախտը բաներ է, որ դուք արթըննալով՝ հետը խօսեր էք. ապա թէ ոչ բրած անհնաղանդութեան պատիժը կը կրեր:

Խոկ ընկերու, հարցուց Հեղինէ՝ սյլայլութեամբ, ի՞նչ եղաւ:

— Ընկերնիդ:

— Այս, որովհետեւ երբ որ ծովը զիս ցամակ նետեց՝ առանձին չէի:

— Հապն, միս մինակ էիք:

— Քովս ամենեւին մարդ չկար :

— Ամենեւին : Կապուն ափունքը քսանի շափ խղղուած նաւաստի տեսայ, բայց ձեզմէ շատ հեռու էին :

— Ուրեմն նաւարեկութենէ աղասող ինձմէ ուրիշ մարդ չկայ :

— Չեմ կարծեր : Ծոսին այնպէս ալէկոծեալ էր, որ ամենեւին նաւակ մը չէ համարձակեր գժքախտ նաւարեկեալիներուն օգնութեան երթալու, իսկ նաւը ցամաք շնասած՝ արդէն խորտակած է եղեր : Բայց . . . :

— Ուրեմն պաշտօնակալ մը չէ՝ աղատեր, ընդմիջեց Հեղինէ՝ յուսահատական ձայնով մը :

— Ա'երեւայ որ չէ :

Հեղինէ աղազակ մը արձակեց, եւ վրան այնպէս սասաիկ ջղաձղութիւն մ'եկաւ, որ կինը չկրնալով խելքը գլուխը բերել եւ կարծելով որ մեռնելու վրայ է, շուտ մը դրացիներուն վազեց, օրիորդին նորէն հիւանդանալն իմացուց : Միանգամայն ըսաւթէ կը կարծէ որ անիկայ նաւապետին եւ կամ նաւուն մեծ պաշտօնակալներէն մէկուն ամուսինն ըլլոյ :

Մեծատանց կամ բարձրաստիճան մարդիկներուն գժքախտութեան հասարակորէն ամէն մարդ գէթ գրանց վշտակից կ'ըլլայ : Ուստի բոլոր դրացիները Հեղինէին քովը վազեցին, սկսան ամէն միջոց ի դորձնել՝ խելքը վրան բերելու :

Բայց խեղճ օրիորդը միօրինակ կը մարէք եւ սաստիկ՝ ջղաձգութեամբ կը տանջուէք։ Հաղիո թէ ինք իրեն կու գար, մոլու մալ յիշելով որ Կարոլոս դինքն ազատելու համար կեանքը կորսրնցուցեր է, նորէն յառաջուան վիճակին մէջ կ'իյնար։

Աերջապէս կրած սաստիկ ցաւերէն զօրութիւնը կորսրնցը լելով, աշուրները դոցեց, եւ չորս կողմն եղաղներուն տուած միիթարութիւնները չէր ուզեր ընդունիլ։ Բայց քիչ մը ետքը հաւատքը դարձեալ զօրացաւ, աղօթքն իրեն որտի խաղաղութիւն շնորհեց։ Աստուծոյ շնորհակալ եղաւ, զինքը մահուրնէ ազատելուն համար, եւ եռանդեամբ աղօթքը բրաւ իր մեծանձն բարեկամին համար՝ որն որ իր պատճառաւը ծովուն ալեացը զոհ եղած էք։

Միոքը հաստատուն դրած էք թէ Կարոլոսին մահուան՝ ինք պատճառ եղած է, որովհետեւ շատ անգամ՝ Օրդանսին լսած էք որ անիկայ քաջ լողացող է։ Եւ որովհետեւ նաւը ծովեզերքէն այնչափ հեռու չէր, անոր համար կը մտածէք որ եթէ մինակ ըլլար, դիւրաւ կրնար լողալով ազատիլ։

Ասանկով քանի մ'օր անցաւ, եւ Հեղինէ չէր համարձակեր Կարոլոսին վրայ խօսք ընել կամ հարցընել թէ արդեօք մարմինը գտնուած է։

Օր մը՝ որ դրացի կանանցմէ մէկը խուցն իրեն ընկերութիւն կ'ընեք, նաւարէկեալ-

ներուն վրայ խօսք բացուելով, նոյն կինն  
իրեն ըստ թէ Ես մէկը տեսայ, որն որ ե-  
կաւ ծովեղերքն ինկաւ, ըստ ամենայնի ան-  
տեղը՝ ուր քիչ մը ետքը ալիքները զձեղ  
ալ նետեցին: Ան մարդը պաշտօնակալ մըն-  
էր, ու ձեռքը գօտի մը կը բռնէր: Զա-  
նացի ինելքը զլուխը բերել. բայց շուտ մը  
տեսայ որ ալ երակը չիղարներ. անոր հա-  
մար թող տուի, որ երթամ՝ եթէ կարելի  
է՝ ուրիշ գժբախտներուն օգնութիւն ը-  
նեմ: Եսքէն լսեցի որ գեղին գեղավաճա-  
ռը քններ ու տեսեր է՝ որ պաշտօնակալը  
մեռած է. ուստի եւ մարմինը խրճիթ մը  
զնել տուեր է, որպէս զի հանկից գերեղ-  
մաննաց տարուի: Եւ սրովհետեւ աս մար-  
դուն արտապին երեւոյթը կը ցուցընէր որ  
բարձրաստիճան մէկն ըլլայ, զինքն հասա-  
րակաց փոսին մէջ չթաղեցին, այլ առան-  
ձին գերեզման մը դրին, վրան ալ մեռած  
օրը նշանակեցին, սրովհետեւ անունը չէին  
գիտեր:

Թէպէտ աս կնոջ խօսած պաշտօնա-  
կալը կարոլոսէն զատ մէկն ալ կրնար ը-  
լալ. բայց նոյն պատմութիւնը լսելով՝ Հե-  
ղինելին երեւակայութիւնն այնչափ տար-  
ցաւ, որ հաստատութեամբ միտքը դրա-  
թէ անիկայ է: \*Եսքէն քաջարատութիւնը  
կօրորնցուց, եւ գարձեալ աչուըներէն  
ժամերավ արտասուաց վասկներ կ'իջե-  
ցընէր:

Այստափ լացքն ի՞նչ օգուտ ունի, ը-

սաւ վերջապէս՝ զինքը տուննառնող կինը, որն որ Մորոյ մայր կը կոչուէր։ Թափած արցունքնիդ շիկրնար ան մարդը կենդահացընել՝ որուն վրայ կ'ոզբաք։ Ուստի ամենէն աղէկն ան է՝ որ մխիթարուիք, եւ ողջ բարեկամներնէդ մէկուն նամակ գրէք։

Հեղինէ առանց պատասխան տալու՝ աշուշները դէպ ի երկինք վերցուց։ Քիչ մը ետքը հարցուց թէ կրնայ արդեօք ժողովրդապետին հետ խօսիլ։

Ինչու համար, պատասխանեց Մորոյ մայրը, Այնչափ հիւանդ չէք՝ որ անար օգնութեան կարօտութիւն ունենաք։ Զգացածնիդ՝ տրտմութիւն մըն է, եւ ձեր հասակին մէջ գանուողն այնպիսի բանէ շիմոնիք։

— Բայց գո՞նէ իր խօսակցութիւնը կրնայ զիս զօրացընել՝ տրտմութիւնո համբերութեամբ կրելու։

— Բէ՛հ, դուք ալ կրնաք անձամբ մխիթարուիլ։ բաց ասկէ՝ ժողովրդապետը մեռածները շիկրնար կենդահացընել։

Ասոր վրայ Հեղինէ շատ տրտմեցաւ, որովհետեւ ժողովրդապետին հետ խօսիլ ու զերւն նպատակը՝ միայն մխիթարութիւն ընդունիլ չէր։ Հապա միանդամայն իրեն աղաչէլ որ Պիր. Ուիշարտոյին թուղթ գրէ, որովհետեւ իր սասարիկ ակարութեան պատճառաւ՝ չէր կրնար անձամբ գրել։ Աս բանս կնոջն ալ բռաւ։ բայց անիկայ խիստ բարկացաւ եւ այնպիսի կերպով մ'երեսը նայե-

ցաւ, որով կը ցուցըներ թէ պէտք է որ  
իրեն հնազանդի:

Եթէ մեռած ըլլայիք, ըստ խօսքը  
լիընցընելով, զինքը կը կանչէի որ զայ  
զձեղ թաղէ. Եթէ մեռնելու մօտ ըլլայիք,  
դարձեալ կը կանչէի, որովհետեւ ձեր հո-  
գւոյն կարստեան պատճառ չէի ուզեր ըլ-  
լալ: Բայց որովհետեւ աս վիճակներէն մե-  
կուն մշջ չէք գտնուիր, սպասեցէք մինչեւ  
որ դուք անձամբ կարող ըլլաք անոր տունն  
երթալ՝ հետը խօսակցիկ:

Հեղինէ պարապ տեղ կը ջանար իմա-  
նալ թէ ինչ պատճառի համար կինն իր  
բաղձանքին կատարման դէմ կը դնէ:  
Չկրնալով հաւանական բան մը գտնել,  
լոեց եւ հանդարտեցաւ:

### Գ Լ Ա Խ Խ Ե Ա \*

Կաւարեկութենէն ութ օր ետքը Հե-  
ղինէ բաւական զօրացած ըլլալով, անկող-  
նէն ելաւ, թիկնամթոռի մը վրայ նստաւ,  
զորն որ դրացիներէն մէկը խրկած էր:

Մաննիկն ալ ցած աթոռով մը քովը  
նստած՝ տղայական անկեղծութեամբ ու-  
սիրալիր աշուրներով անոր դունատ ե-  
րեաները կը նայէր:

Օրիսրդն աս աղջկան իրեն ցուցըցած  
սիրոյ նշանները տեսնելով, ձեռքն անոր  
երկրնցուց ու ըստ. Աղէկ ու սիրուն աղ-  
ջիկ մըն ես դուն:

Մաննիկ աս խօսքին զբայց իրեն աւելի մօտեցաւ, եւ մեծ ուրախութիւն ցուցուց :

Քանի՞ եղբայր ու քոյր ունիս, շարունակեց Հեղինե՛ անոր մաղերուն խօսովիքներով խաղալով :

— Մինակ մէկ պղտիկ եղբայր ունիմ, տիկին :

— Ան տղան չէ՞, զորն որ շատ անգամ մօրդ գիրկը տեսայ :

— Մօրս . մայրս հոս չէ :

— Կը կարծէի որ Մօրոյ տիկինը մայրդ է :

— Զէ . Մօրոյ տիկինը գայեակս է : Բայց լեզու երելէս վեր՝ զինքը միշտ մայր կը կանչեմ : Խոկ բուն մայրս՝ ալ Գաղղիա չէ . եւ չեմ գիտեր թէ ե՞րբ պիտի կարենամ զինքը տեսնել :

— Հայրդ ալ ո՞ղջ է :

— Հրամեր էք, բայց երկայն ժամանակ կայ՝ որ զմեղ տեսնելու եկած չէ :

— Խեղճ աղջիկ . այսպիսի մատադ հասակի մ.ջ ծնաղացմէ բաժնուած ապրիլը գծուար բան է : Բայց չեմ կարծեր որ իրենց հեռաւորութիւնը քեզի այնչափ վիշտ պատճառէ, որովհետեւ գայեակդ ինձի աղէկ կին մը կ'երեւայ . դուն ալ ի հարկէ զինքը շատ կը սիրես :

Աղջիկը տիրութեամբ մը գլուխը շարժեց :

Ինձի բրած բարիքը երբեք չեմ մոռնար, շարունակեց Հեղինե՛ աղջկան բրած

շարժումը չտեսնելու զարնելով : Միշտ պիտի յիշեմ՝ որ ինք զիս տունը բերեր ուխնամեր է, երբ որ ամենքը մեռած կը համարին եղեր : Ինք որ չըլար, ես ծռվեղերքը մեռած կ'ըլայի :

Չէ, դոչեց Մաննիկ սաստկութեամբ . հսն ուրիշներ ալ կային, որսնք կ'ըսէինթէ ողջ էք . բայց Մորոյ մայրն անոնց ըսաւ որ ինք զձեզ հոս պիտի բերէ . եւ որովհետեւ ամեն մարդ իրմէ կը վախնայ, մէկը չկրցաւ դէմ կենալ :

— Բայց ինչո՞ւ զիս ինամել ուզեց :

— Որովհետեւ կ'ըսէր թէ դուք հարուստ մէկը կ'երեւաք, եւ կը յուսայ որ աղէկ վարձք կրնայ ընդունիլ : Եթէ հարուստ տիկին մը չըլար, հոգու էք որ տունս բերէի, ըսաւ Մորոյ մայրը :

Մաննիկ աս խօսքերն այնպիսի անկեղծութեամբ մը կը զրուցէք, որ Հեղինէ չէր կրնար չհաւատալ : Խոկ աղջիկը կարծելով որ ասոնք պատմելը խիստ աղէկ բան մ'ըւլայ, զուարթ դէմքով խցէն դուրս ելաւ, զնաց դայեկին պատրաստած արդանակը բերաւ :

Եցրք որ Նորէն տեղը նոտեցաւ, Հեղինէ խօսքը յառաջ տանելով : Դուն ինծի այնպիսի բաններ պատմեցիր, ըսաւ, զօրինք աւելի աղէկ կ'ընէիր՝ եթէ ծածուկ պահէիր : Եւ որովհետեւ դայեակդ կրնայ սրբողիլ, եթէ իմանայ որ հետո իր վրայ կը խօսիս, նայէ որ ասկէ վերջը իր խօսքերը չկրկնես :

— Ալ ասկէ վերջը շեմ ըսեր : Բայց  
շեմ գիտեր թէ ի՞նչ պատճառի համար  
Մորոյ մայրը կրնայ որդողիլ ան խօսքերը  
ձեզի պատմելուս վրայ , զորոնք ինք բերնովու  
իր բարեկամներուն կը պատմէ :

Հեղինէ շկրցաւ ժպիտը բռնել : Ար-  
դանակը խմելէն ետքը՝ Մաննիկին ըստ-  
որ երթայ իրեն համար Մորոյ մօրմէն  
թուղթու ու գրիչ բերէ , որպէս զի Նիմ  
իր բարեկամներուն նամակ գրէ :

Կնոջն իր աս խնդիրը կատարելու փոյ-  
թը՝ Հեղինէին ցուցուց թէ որչափ ստոյդ  
էն եղեր պզտիկ աղջկան խօսքերը : Նամակը  
գրելու սկսաւ , եւ երբ որ գտնուած տե-  
ղոյն անունը նշանակել կ'ուղէր , միտքն  
ինկաւ . որ գեռ չէր հարցուցած թէ անունն  
ինչ է : Ուստի Մաննիկին դաշնալով ,  
որն որ նորէն եկած քովը նստած էր , Աս  
գեղին անունն ի՞նչ է , ըստ :

Աղջիկն անունը տուաւ :

Քաղքէ մը շատ հեռո՞ւ ենք , կրկնեց  
Հեղինէ :

— Զէ , տիկին , Մոնրէլիկի մօտերն ենք :

— Գուցէ Մարտիլիա պիտ'որ ըսես :

— Զէ , Մարտիլիա ծովսւն քովն է .  
իսկ Մոնրէլիկ՝ դաշտավայրի մը մէջ : Ես  
մօրս հետ շատ անգամ Մոնրէլիկ՝ դացած  
եմ , վազն ալ դարձեալ պիտ'որ եր-  
թանք :

Գրիչը Հեղինէին ձեռքէն ինկաւ եւ  
շատ պյառյեցաւ , մտածելով որ Մոնրոպէր

նաւապետին ընտանիքին նոյն առեն եղած  
տեղւոյն մօտերը կը գտնուի :

Ո՞հ, թողութիւն տուէք, տիկին, գո-  
չեց Մաննիկ՝ ձեռքը պազնելով, աս բանս  
ըսելուս վրայ շատ կը ցաւիմ. բայց զձեզ  
վշտացընելու ամենեւին միտք չունեի :

Աս անոնդ խօսքերուն վրայ Հեղինե-  
ժպտեցաւ, եւ քիչ մը հանգարտելիւն ետ-  
քը, նամակը լմբնցուց : Մորոյ մայրը կան-  
չելով՝ աղաչեց որ Մոնրէլիէ գացած ժա-  
մանակը՝ նոյն նամակը Նիմ խաւրէ :

— Իրաք ալ կ'ուզէի վաղը հոն երթալ,  
որովհետեւ հարկաւոր գործքի մը համար  
երեք ամիսը մէջ մը երթալու եմ. բայց  
պղտիկն այնովէո հիւանդ է, որ առանձին  
ձգել չեմ կրնար : ՈՒ-տք պիտի ըլլայ ճամ-  
բորդութիւնս ուշացընել, մինչեւ որ ա-  
ռողջանայ :

Հեղինէ բաղձալով որ իր վիճակը կարէ-  
լի եղածին չափ շուտով ուր. Ռիշարտոյին  
իմացընէ, տղան հոգալը վրան առաւ, ո-  
րուն համար Մորոյ մայրն իրեն շնորհակալ  
եղաւ : Մաննիկ ալ՝ Մոնրէլիէ երթալիրին  
վրայ սաստիկ ուրախացած՝ շատ ան-  
դամ կրկնեց որ բարի ու սիրուն տիկին  
մըն է :

Երկրորդ օրը դեռ շուտանցած՝ Մորոյ  
մայրն ու Մաննիկ Հեղինէին խուցը մտան,  
հիւանդ տղան իրեն յանձնեցին :

Կ'աղաչեմ, պղտիկ եղբօրս աղէկ հոգ  
ուարէք, տիկին, ըստու աղջիկը : Նայեցէք

որ ետ դարձած ժամանակնիս՝ զինքն առաջացած դտնենք :

**Չեռքէս եկածը կ'ընեմ,** պատասխանեց Հեղինէ՝ զՄաննիկ զրկելով, որն որ դայելին հետ անմիջապէս դէպ ի Մոնրէլիկ ճամբայ երաւ :

Հեղինէ դեռ խիստ տկար ու անհանդիստ ըլլալով, շատ դժուարութիւն կրեց յանձն առած գործքը կատարելու . բայց կարծես թէ ցաւերը մոռցաւ, որպէս զի հիւանդ տղան խնամէ, որն որ մինակ իրմէ կրնար օգնութիւն գտնել :

**Ասյն տղան խիստ գեղեցիկ էր.** բայց շատ տկար ու հիւանդու կազմուածք մը ունէր : Մորոյ կնոջ խօսքերէն Հեղինէ իմացած էր, որ անոր ու Մաննիկին մայրը Գաղղիա թողուցած գացած էր. իսկ իրենց հայրը վրանին այնչափ հոգ չէր տաներ, թէպէտ եւ իրենց կերակրոյն ու բնակութեան համար խոստացած թոշակը կարգաւորեալ կերպով կը վճարէր : Այս ամենայն, ինչպէս ըսինք, գիտէր . բայց չէր համարձակած անոնց ծնողաց անունը հարցընել, տեսնելով թէ դայեակը կը ջանար իրմէ ծածուկ պահել :

**Մէր գիւցազնուհին ըոլոր օրը մեծ հոգով հիւանդ տղուն վրայ հսկեց :** Իրիկուան դէմ տեսնելով որ կը ծանրանայ, վախցաւ որ չըլայ թէ բաղկացը մէջ հոգին աւանդէ, ուստի ուզեց դրացիներէն մէկը կանչել՝ խորհուրդ հարցընել : Ինք

տնելն գուրս ելլելու վրայ էր, մէջ մ՞ալ  
Մորոյ մայրին ետ դարձաւ։ Հեղինէ տղուն  
համար պատասխանառութենէն ազատե-  
լուն վրայ ուրախանալով, զինքը հաճու-  
թեամբ ընդունեցաւ, եւ վախը յայտնեց։

Ի՞նչ, գոչեց բարկութեամբ դայեակը.  
մեռնի նէ, ստուգիւ մեծ վասօ չըլլար.  
սրովհետեւ հայրը զինքը թող տուեր՝  
Հնդկաստան է դացեր։

Հեղինէ նոյն կնոջ խստարտութեան  
վրայ նեղանալով, ըսածին պատասխան  
շտուաւ, հապա զրուցեց որ շուտով քժիշկ  
մը կանչելու է։

— Քժիշկ։ Քայլ վարձքն ով պիտի  
տայ։ Ապահով կրնաք ըլլալ որ ես դանկ  
մը չեմ վճարեր։ Աղէկ զիտեմ որ աս  
տղոց համար ըրած ծափիս փոխարէն՝ ստակ  
մը ընդունելիք չունիմ։ Թաղաւթիւն կը  
խնդրեմ, տիկին, որ քիչ մը տաքութեամբ  
կը խօսիմ, շարունակեց՝ Հեղինէին տհա-  
ճութիւնը տեսնելով։ բայց մարդս հրեշ-  
տակ ալ ըլլայ՝ պէտք է նեղանայ գլուխին  
ասանկ բան մը եկած ատեն։ Ես ուր զըտ-  
նեմ այնչափ ստակ, որ քժիշկներուն վճա-  
րեմ։ ունեցածս հազիւ ինծի կը բաւէ։

Քժշկին ստակն ես վրաս կ'առնում,  
պատասխանեց Հեղինէ։ Գրած նամակս  
բարեկամներէս մէկուն է, որն որ քանի մը  
օրէն ինծի բաւական ստակ կը խաւրէ, որով  
թէ՛ ինծի համար ըրած ծափերնիդ։ թէ՛  
աղուն համար տուածնիդ կը հատուցանեմ։

Մորոյ տիկինն առ խօսքերուն վրայ հանգարանելով, շուտ մը զնաց դեղին դեղավաճառը կանչեց, որն որ տղան տեսածին պէս՝ յայտնեց թէ մեծ վտանգի մէջ է:

Թէպէտ Հեղինէ հանգչելու շատ կարօտութիւն ունէր, բայց գիտնալով որ եթէ ինք պառկի, Մորոյ մայրը հիւանդը շիհողար միաբր դրաւ որ գիշերն անոր որորոցին քովն անցընէ: Սակայն բոլոր ջանքը պարապի զնաց. առտուան մօտ տղան վերջին շունչը տուաւ:

Օրիորդը խիստ շատ արցունիք թափեց, որովհետեւ դրեթէ մայրենի սէր մը կապած էր վրան. բայց աս աշխարհքէս ելլելուն վրայ չցաւեցաւ, որովհետեւ հաւանականարար բոլոր կենացը մէջ հօն վիշտ պիտի կրէր: Առաւգիւ անոր վիճակին նախանձած կ'ըլլար, եթէ կրօնիքն իրեն երկայն ժամանակէ վեր սորվեցուցած շրլար, որ արդար մարդուն վարձբը կրած նեղութիւններուն համեմատ բլլալով, որչափ որ մէկն աւելի վիշտ կը կրէ, այնչափ այլ աւելի ուրախանալու է, իրեն համար որոշաւած յաւիտենական երանութիւնը մտածելով:

Մորոյ մայրն այլ տղօւն մահուան վրայ լացաւ. բայց իր արցունիքներն աւելի շահամիրութենէ կը պատճառէին. վասն զի կը մտածէր որ յօւղարկաւորութեան համար դարձեալ նոր ծափոք պիտի ընէ, միանգամայն անոր մահուամբն ամէն ակնկալութիւն կը կորոբնցընէր՝ օր մը իր աշխա-

տութեան վարձքն ընդունելու . Եթէ  
ծնողքը դառնային :

Աւելի անկեղծ սրտէ եղաւ Մաննիկին  
ցաւը : Երբ որ երկրորդ առտու եղբօրք  
մահը լսեց , խիստ շատ լացաւ : Հազիւ Հե-  
ղինէ կրցաւ զի՞նքը քիչ մը մխիթարել :

Ես ալ ի՞նչ պիտ'որ ըլլամ , կ'ըսէր խեղծ  
աղջիկը : Մորոյ մայրը երէկ ինծի ըսաւ որ  
ալ զիս քովը շիկրնար պահէլ . որովհետեւ  
հայրս հեռու , հեռու տեղ մըն է գացէր :  
Ան ատեն աս խօսքը բանի տեղ չդրի . ո-  
րովհետեւ ինք իրենս կ'ըսէի թէ անկարելի  
է որ հիւանդ եղբայրս տնէն դուրս ձգէ :  
Խոկ հիմայ՝ որ ան մեռաւ , կը տեսնէք , տի-  
կին , որ ալ ասկից վերջը զիս քովը պահէլ  
չուզէր :

Սիրելի աղջիկս , ըսաւ Հեղինէ , սորված  
առաջին ազօթքդ ո՞րն է :

— Հայր մեր :

— Ինչո՞ւ համար Առուծուծոյ , Հայր մեր՝  
կ'ըսէս :

— Որովհետեւ ամէնքս անոր զաւակ-  
ներն ենք :

— Ասիսպէս է , աղջիկս , ամէնքս ալ  
Առուծոյ որդիքն ենք . ուստի թէեւ եր-  
բեմն մեր ծնողքը զմեղ թող տան , Առ-  
ուծած զմեղ երբեք թող շիտար :

Աս խօսքերն ըսած ժամանակը՝ Հեղի-  
նէին աշուշներն արցունքով լեցուեցան ,  
որովհետեւ մօրք մահուընէն ետքը՝ իր  
գտնուած վիճակը կը յիշէր :

## Գ Ա Ա Խ Խ Խ Ե Բ .

Մորոյ կնոջ սանին թաղուելէն քիչ մը  
ետքը՝ թղթարեր մը Պր . Ռիշտառտոյին պա-  
տասխանը բերաւ . Հեղինելին : Ազնիւ մարդը  
նամակին հետ ստակի գումար մ'ալ կը  
խառքէր , որպէս զի օրիորդը խիստ ստի-  
պողական ծափքերն ընէ . եւ կը ծանու-  
ցանէր որ քանի մ'օր ետքը անձամբ կո-  
ղայ զինքը կ'առնու՝ երբ որ Նիմ ունեցած  
ծանրակշիռ դործքերը լմբնցընէ :

Օրիորդին տկարութիւնը՝ որն որ հիւ-  
անդ տղուն քովս ամրող զիշեր մը սպա-  
սելովս աւելի սաստկացած էր , թող չէր  
տուած որ անոր թաղմաններկայ դանուի-  
բայց երկու օր ետքը ինք զինքը բաւական  
զօրաւ որ զգալով , ուզեց դուրս ելել : Մորոյ  
կնոջ ազաշեց որ Մաննիկին հրաման տայ  
հետն երթալու : Ուզած հրամանն ընդու-  
նելով՝ պղտիկ աղջիկը կանչեց , եւ ձեռքէն  
բռնելով՝ մէկտեղ տնէն դուրս ելան :

Երբ որ այնչափ հեռացան , որ ալ մէ-  
կը զիրենք չէր կրնար տեսնել , Հեղինելիքը  
ընկերին ըստ . Ծատ կը բաղձայի , սիրելի  
աղջիկս , ան տունը տեսնել՝ ուր նաւա-  
րեկութեան ատեն խղճուած պաշտօնակա-  
յը տարեր են :

Մաննիկ տրտմութեամբ անոր երեսը կը  
նայէր , եւ յայտնի կը ցուցընէր որ ուզա-  
ծը կատարելու դժկամակութիւնն կ'ունե-  
նալ : Քիչ մը ժամանակ քայլելէն ետքը .

Ան տունն առկից շատ հեռու է, տիկին,  
բառ :

— Ի՞նչ, այնչափ հեռու է, որ չես  
կրնար քալել :

— Ըստ բնծի համար չէ, ձեզի հա-  
մար :

Հեղինէ զինքը շոյեց եւ բառ որ յա-  
ռաջ երթայ : Պլղտիկ աղջիկն առանց բան  
մ'ըսելու՝ հնավանդեցաւ, եւ քառօրդ մը  
ետքը աղքատին խրճիթի մը առջեւը հա-  
սան :

Մէկէն այլայլեցաւ օրիորդը, այտերուն  
նուազ կարմրութիւնն այ կորսընցուց, եւ  
երբ որ ներս մտաւ, չկընալով ոտքի վրայ  
կենալ՝ աթոռի մը վրայ ինկաւ :

Ձեզի տիկին մը կը բերեմ, բառ Ման-  
նիկ՝ հոն նստող պառաւի մը, որն որ կը  
բաղձայ ձեր տունը բերուած պաշտօնու-  
կալին վրայ տեղեկութիւն առնուլ :

Պառաւն ոսկ ելաւ ու մեծարանոր  
Հեղինէին մօտենալով, Զրուցելիքո խիստ  
քիչ բան է, բառ : Խեղճ Պարոնը հոս  
բերած ժամանակնին՝ արդէն մեռած էր :

Հեղինէ կրնար նոյն պաշտօնակալին  
զգեստին վրայ հարցում ընել : Բայց՝ ինչ-  
պէս որ ըստ նոր հաստատութեամբ համո-  
զուած ըլլալով որ ան խղդուած պաշտօ-  
նակալը կարուսն է, միոքը եւ ոչ տարա-  
կոյս մը կու գար : Ուստի միայն հարցուց  
թէ Արդեօք վրայէն բան դանուած է :

Այս, տիկին, պատասխանեց պառաւը,

վրայէն ոսկի ժամացոյց մ'ելաւ, զորն որ  
ես ու էրիկս յօժարութեամբ ձեզի կու-  
տանք, եթէ անոր ամսւսինն էք:

Հեղինէ չկրցաւ բան մ'ըսել, միայն ա-  
շուըներէն առատ արցունք կը թափէք:

Պաշտօնակալին զդեստները, շարունա-  
կեց պառաւը, այնպէս պատուած ու ա-  
պականած էին, որ հետք մէկտեղ թաղե-  
ցին: Խակ դրապանը դանուած քանի մը  
թղթերն անանկ թրջած էին, որ ձեռուը-  
նիս առնեխուս պէս՝ կտոր կտոր եղան:

Աս ըսելէն վերջը՝ գնաց ժամացոյցը-  
րերաւ, օրիորդին առջեւը դրաւ: Եղին  
ժամացոյցը կարուսին յառաջուան ժամա-  
ցոյցը չէր: Բայց եւ ոչ ասիկայ բաւական  
եղաւ. Հեղինէին միտքը տարակոյս մը բե-  
րելու, որովհետեւ կը մոտածէր թէ անշուշտ-  
նոր առած պիտ'որ ըլլայ:

Խեղճ տիկին, գոչեց պառաւը՝ Հեղի-  
նէին ցաւը տեսնելով. ձեր այնչափ տրրու-  
մութեան վրայ չեմ զարմանար: Ան ազ-  
նուական երիտասարդը շատ գեղեցիկ ու  
վայելուչ մէկն էր, թէպէտ եւ ալիքներն ու-  
ժայուերը երեսը պատուած էին: Բայց ան-  
տարակոյս հիմայ գտնուած տեղն երջանիկ  
է, ուստի այնչափ մի արտօմիք, որովհետեւ  
ամէնքս ալ մահկանացու ենք: Եթէ իր  
ամսւսինն էք, ժամացոյցն առէք:

Չէ, չէ, ըստ Հեղինէ, չեմ ուղեր:  
Եւ առանց ըրածն իմանալու, վաղելով  
խրճիթէն դուրս ելաւ: Բայց հազիւ քանի

մը քայլ յառաջ գացած էր, զօրութիւնը կտրելով՝ գետինն ինկաւ։ Մաննիկ կըցածին շափ շուտով ետեւէն կ'երթար։

Քովը հասած ատեն, Տիկին, ըստ, կ'երեւայ որ շատ հիւանդ էր. աղետք է որ տուն դառնանք։

— Հիմայ աղեկ եմ, սիրելի աղջիկս։ Գնա հարցուր որ պաշտօնակալն ուր թաղած են, եւ ետքը զիս գերեզմաննացը տար։

— Անոր թաղուած տեղն ես աղեկ գիտեմ, պատասխանեց Մաննիկ, ղենջակին ծայրովն աչուըները սրբելով. թաղման առեն ես ալ հոն էի։

Ծուտ մը գերեզմաննաց հասան, եւ Մաննիկ հեռուէն մատովը նոր զոցուած փոս մը ցուցուց։ Հեղինէ իրեն ըստ որ եղած տեղը կենայ։ Աղջիկը քարի մը վրայ նստած՝ օրիորդին շարժումները կը դիտէր, որն որ փոսին մնտենալով. ծունը իջաւ, եւ սկսաւ լալ։

Թձեալէտ Հեղինէ միտքը չէր դրած թէ օր մը Կարոլոսին ամուսինը պիտի ըլլայ, սակայն զինքը կը սիրէր, երախտապիտութէան ու համարման վրայ հիմնուած ուուրը սիրով մը։ Այնչափ չէր լար սիրելի բարեկամ մը կորսընցընելուն վրայ, որչափ անոր համար՝ որ ինք անոր մահուան պատճառ եղած էր։

Այսպէսով իր տխուր մնածմանց մէջ ընկղմած, մինչեւ իրիկուան մութին կոխելը հոն մնաց։ Ան ատեն Մաննիկ երկչոտու-

թեամբ մը մօս գալով, ոկտաւ ազաշել որ  
տուն գառնայ, Հեղինէ անոր թախանձա-  
նաց հաւանեցաւ, եւ ձեռքէն բռնած՝ գե-  
րեզմաննոցէն դուրս երաւ:

Քիչ մը քալելէն ետքը, Աւղը զիս ժո-  
ղովրդապետին տունը կը տանի՞ս, հարցուց  
Հեղինէ:

Սիրով կը տանէի, պատասխանեց աղ-  
ջիկը, բայց երեկ իրիկուն անիկայ ուրիշ  
տեղ գացեր է:

— Դայեկիդ տունը շատ կու դայ:

— Շատ ժամանակ կայ որ եկած չունի:  
Բայց Մորդ մայրը զինքը շիսիրեր, Ինք  
շատ չար կին մըն է, իսկ ժողովրդապետը՝  
շատ բարի, Գիտէք, երբ որ ձեր հիւան-  
դութեան ժամանակը՝ զինքը բերել տալ  
ուզեցիք, անիկայ ինչու կանչել չուզեց:

— Զէ:

— Արովհեաեւ կը վախնար որ չըլայ  
թէ ժողովրդապետը զձեզ իր տնէն հա-  
նել տայ:

— Ըսածդ չեմ հասկընար, աղջիկ:

— Ի վերայ սյսր ամենայնի յայտնի բան  
է, ... Ժողովրդապետը քոյր մը ունի, ո-  
րուն տունը կ'երթան հասարակօրէն հոս-  
կից անցնող աղնուական աթիկնայք, որով-  
հեաեւ գեզը պանդոկ չկայ: Արդ՝ Մորդ  
մայրը կ'ըսէք որ եթէ ժողովրդապետն ի-  
մանալու ըլայ թէ դուք իր քոնք էք,  
անտարակոյս զձեզ կը ստիպէ որ երթաք իր  
քրածը տունը կենաք, մինչեւ որ բժշկու իր:

— Ես ասոր մեջ գեշութիւն մը չեմ  
տեսներ :

— Ի՞նչպէս : Ասով ձեզմէ յուսացած  
վարձրէն կը զրկուէր . եւ ետքը . . .

Հոս Հեղինէ ձեռքն աղջկան բերանը  
դնելով, թող շտուաւ որ խօսքը յառաջ  
տանի :

Տուն հասած ատեննին, Մորոյ մայրը  
Հեղինէին ըստ որ ժամէ մ'աւելի իրենց  
կը սպասէր, վասն զի հետեւեալ օրը Մոն-  
թէլիէ երթալու է, որպէս զի իմանայ թէ  
զՄաննիկ ի՞նչ պիտ' որ ընէ, որուն համար  
արդէն շատոնց կառքը բռնած բլալու էր :

Հեղինէ զինքը սպասցըներուն համար  
թողութիւն խնդրեց, եւ օդին խննաւու-  
թեան պատճառաւն ինք զինքը քիչ մը  
մնեցուցած բլալով, խոհակերոց գնաց,  
որպէս զի տաքնայ :

Մաննիկ որն որ օրիորդին ամենափոքր  
բաղձանքն ալ կատարելու կը փութար .  
կրակն արծարծեց, եւ եկաւ ոտուքներուն  
քովը նստաւ : Երկուքն ալ խել մը ատեն  
լուու կեցան : Վերջապէս պղտիկ աղջիկը  
տիսուր ձայնով մը կը յօւսամ որ, ըստ .  
մայրս ուրախական պատասխան մը կ'ըն-  
դունի :

— Ես ալ կը բաղձամ . բայց ի՞նչ ու-  
րախական պատասխան պիտ' որ ընդունի :

— Նայեցէք, տիկին . Մորոյ մայրը շատ  
շար է : Եւ սրսվհետեւ հայրս հեռու տեղ  
դացած է, կընայ զիս քովէն վարստել :

— Արի վախնար, աղջիկս, անանկ բան  
չըներ: Բայց հօրդ անունն ի՞նչ է:

— Պարանշոն:

— Իսկ մօրդ անունը:

— Մօրս անունը՝ հօրս անուան հետ  
նոյն է:

— Գիտեմ որ հիմայ էրկանն անունը  
պիտ' որ ունենայ: Բայց աշխարհք չմոտած  
ի՞նչ կը կոչուէր:

— Ան չեմ գիտեր, տի՛կին . . . Կ'ու-  
զէք նէ՛ ձեզի գիրք մը ցուցընեմ, զորն որ  
վերջին անդամ զիս տեսնելու եկած ա-  
տեն՝ մայրս ինձի տուաւ:

Աս ըստ եւ առանց պատառխանին  
սպասելու՝ դուքս ելաւ:

Քանի մը բոպէ եաքը ձեռքը գիրք մը  
բռնած ներս մտաւ, որն որ աղօթագիրք  
մըն էր: Հեղինէ գիրքը բանալուն պէս՝ մէ-  
կէն ոկատ, դողդողաւ, ձեռուըները քովէ-  
քով բերաւ, եւ քիչ մնաց՝ կը սահէր գե-  
տինը կ'իյնար:

Ո՛հ, հիմայ կը տեսնեմ, որ շատ դէշ  
աղջիկ մըն եմ, դոչեց Ամաննիկ. միշտ զձեզ  
կը վշտացընեմ: Բայց ստուգիւ աս անդամ  
յանցանք չունիմ:

— Զէ՛, աղջիկս, դուն յանցանք չու-  
նիս . . . Ուրեմն կ'ըսէս որ աս գիրքը մայրդ  
քեզի տուաւ:

— Հրամեր էր. եւ տալու ժամանակն  
ըստ որ զգուշութեամբ պահեմ, վասն զի  
շատ տարիներէ վեր քովին է:

Հեղինէ գիլքն աւելի մոտագրութեամբ քննեց, ճակատէն մինչեւ վերջին թռուղթը մ.կիկ մ.կիկ դարձուց: Եսքը սուր ելլելով եւ զՄաննիկ գրկելով, Աղջիկո, բաւ, զքեզ երեք շեմ թռողուր, զքեզ միշտ կը սիրեմ եւ վրադ հոգ կը տանիմ:

Պատիկ աղջիկը՝ թէեւ Հեղինէին իրեն ցուցըցած աս սիրոյ նշաններուն պատճառը չէր իմանար, բայց կրկին կրկին ձեռքը պազնելով՝ սրտանց շնորհակալ եղաւ եւ սկսաւ անոր հետ լալ:

Նոյն միջոցին Մորոյ մայրն ետ դարձաւ, եւ շուտ մը զՄաննիկ պառկեցաւց, սրպէս զի երկրորդ օրը կանուի հետը Մոնըլիկէտ տանի: Հեղինէ ալ քիչ մը ետքը անկողին մտաւ, բայց հաղիւ կէս գիշերին քունը տարաւ:

Մաննիկին բերած դիրքը տեսած ատեն՝ Հեղինէին ունեցած այլայլութեան պատճառն իմանալու համար բաւական է ըսել, որ ձեռքն առածին պէս՝ ճանչցաւ թէ իր Աննա դայեկին գործածած աղօթագիրքն է, որուն անունն ալ առաջին երեսին վրայ գրուած էր: Եւ թէպէտ գրերը՝ քերուած, բայց անուան ու մականուան Ա. Ա. սկզբնագիրները թռող տրուած էին:

Ասով Հեղինէ անմիջապէս տեսաւ որ իր դայեկին հետ Ակնաղըեր բերդը դրտնուած ժամանակը՝ եկող իրենց հետ բնակող մարդը՝ Աննային եղբայրը չէ եղեր, հապա անոր էրիկը, եւ Մաննիկ՝ անոնց

աղջիկը : Աս որ խմացաւ , մէկէն անանկ մեծանձնական որոշում՝ մ'ըրաւ , որն որ միայն քրիստոնէական դիւցազանց վրայ կը տեսնուի :

Կը մոտածէր թէ Մաննիկին հայրը՝ որն որ իր դանուած նաւին խղդուող ճամբարդներէն մէկն էր . կարելի է Մռնրոպէր նաւապետին օգնած ըլլայ՝ իրեն դէմ մեքենայած դաւին մէջ : Ուստի միտքը դրաւ որ չարեաց տեղ՝ բարիք հաստուցանէ , զՄաննիկ իր պաշտպանութեան տակ առնելով եւ իրեն որդեզիր ընելով . որովհետեւ հաւանական կը սեպէր որ Աննա իր աղջիկը գտնելու ետեւէ չիյնար :

### ԳԼՈՒԽ ԻԳ .

Երկրորդ օրը Հեղինէ՝ առանձին մնացած ըլլալով , ճաշէն ևաքը կարուսոին գերեզմանին մէյ մ'ալ այցելութիւն ըրաւ : Աս անգամ ալ իր ազատչին համար երախտադիտութեան արցունքներ թափեց . միանգամայն լոգուարդ նաւապետին ու անոր Պարանշոն գործակցին վրայ ալ լացաւ : Աս տիսուր մոտածմանց մէջ ընկղմած՝ հոն մնաց մինչեւ որ իրիկուան մնւթը կոխելով , հարկադրեցաւ Մորոյ կնոջ տունը դառնալ : Նոյն կինն արդէն ետ դարձած էր , եւ բոլորովին յուսահատութեան մէջ կ'երեւար . իսկ Մաննիկ սաստիկ կու լար : Հեղինէ խմացաւ որ Պարանշոնին մա-

հուան լուրն առեր են . բայց շգիտնալ  
ձեւացընելով , իրենց տրտմութեան պատ-  
ճառը հարցուց :

Տրտմութեանս պատճանը , զուեց բար-  
կութեամբ կինը : Ի՞նչ . չէք խմանար . . . .  
Ալ ես մօխրոյ վրայ նստայ : Մաննիկին  
հայրը մեռեր է . . . . Խնդն ալ ձեր գըտ-  
նուած նաւուն մէջն է եղեր , եւ ձեզի պէս  
նաւարեկութիւն կրեր է . . . . Քիչ մնաց՝  
Երկու զաւկըներն ալ վրաս կը ձգէր : Ի՞նչ  
որ է նէ՝ մէկը մեռաւ . իսկ ողջ մնացողը՝  
մայրը ստուգիւ առնելու չիդար :

— Մաննիկին վրայ՝ կը խօսիր :

— Հապա որուն վրայ պիտի խօսիմ . . .  
կը տեսնէք՝ ինչպէս արցունկը կը թափէ .  
բայց ստուգիւ կ'ըսեմ որ այնչափ հօրը մա-  
հուան վրայ չիդար , որշափ մնոր վրայ՝ որ  
աշխատելու պիտի ստիպուի : Ի՞նչ պիտ' որ  
ընես , պէտք է որ գործէ , եթէ անօթու-  
թենէ մեռնիլ չուզեր : Ես զինքը պահելու  
ստակ չունիմ : Արդէն երեք ամսէ վեր ոչ  
իրեն եւ ոչ եղբօրը համար թոշակ ընդու-  
նած եմ : Անպիտան մարդը , երկուքն ալ  
վրաս ձգել կ'ուզէ եղեր : Բայց Աստուած  
թող շտուաւ որ առ չար խորհուրդը կա-  
տարէ : Աւելի աղէկ է որ մեռաւ . քան  
թէ . . . .

Կ'աղաչեմ , տիկին , այսպէս մի խօսիր ,  
ընդմիջեց չեղինէ . աս անմեղ աղջկան  
վրայ գժացէք . ալ դաշոյնը սիրաը կը խո-  
թէք :

— Հապա ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ։ Ճակտիս քրտինքովը վաստրկած հացի կտորս օտարի զաւկի մը հետ չեմ կրնար բաժնել։ Գիտեք որ առ տունն իմն չէ. եւ եթէ վարձքը չկարենամ վճարել, խայտառակութետմբ դուրս կը վռնուեն։ . . . Թշուառակա՞նը. իսկզբան կը կարծէի որ ուրիշներու պէս՝ առ ճամբորդութիւնը բախտը փրնառելու համար կ'ընէ, եւ ետքէն ստակս կը վճարէ. բայց իր գիտաւորութիւնն ան չէ եղեր, կ'ուզէ եղեր տղաքն ալ ձգել, ինչպէս որ կինը թող տուաւ։ Հիմայ Մանակին ովկ պիտի հոգայ։

Ե՞ս կը հոգամ, տիկին, պատասխանեց օրիորդը հաստատութեամբ։

— Պիուք։

— Այս. զինքն ինծի ընկեր կ'առնում. ինքն ալ ինծի պէս որբ է. զիրար կը միւթարենք։

Հեղինէին խօսքն ուրախութեան աղաղակով մ'ընդմիջեց Մաննիկ, եւ եկաւ բաղկացը մէջ նետուեցաւ։ Մորոյ մայրն ալ շատ ուրախացաւ. եւ Հեղինէին շնորհակալ եղաւ։

Պր. Ռիշարտոյ՝ թղթին մէջ ըրած խօսման համեմատ՝ երկու օր ետքը եկաւ, եւ Հեղինէին գունատութիւնը տեսնելով, ի՞նչչափ փոխուեր էք, օրիորդ, զուեց։ Ա'երեւայ որ շատ նեղութիւն կրեր էք։

Այս, պատասխանեց Հեղինէ՝ քաղցր ժպիտով մը. բայց միայն վախով աղատեցայ։

— Իսկ Արան-Շենի կումառհին ի՞նչ եղաւ : Չեր նամակին մէջ իր խօսքը չէք ըներ :

— Թողութիւն տուէք, Պարսն, ան թուղթը գրած ժամանակս՝ տակաւին խիստ տկար ըլլալով, ամէն բանի վրայ ուզածիս պէս չէի կրնար մանրամասնաբար խօսիլ : Իսկ հիմայ դձեզ մէկէն տեսնելուս վրայ ունեցած այլայլութիւնս անցնելէն ետք՝ հետաքրքրութիւննիդ կը լեցընեմ :

Պր. ՈՒԽԱՐԱԿՅ իմացաւ թէ Հեղինէ չուղեր իր հարցման պատասխան տալ, որովհետեւ Մորոյ տիկինը հոն էր : Ուստի զինքը չթախանձեց. միայն հարցուց թէ առողջութեան վիճակը կը ներէ՞ որ շուտ մը ճամբայ ելլեն :

— Այս, կրնամ. բայց հսուկից չըածնուած՝ կ'ուղէի այցելութիւն ընել կնոջ մը, որն որ նաւարեկութենէն ազատուած ու ինծի համար մեծաղին բան մը ունի քովը : Ասոյդ է՝ առաջին անդամ՝ զինքը տեսած ժամանակս՝ ուզեց ինծի տալ : Բայց կը բաղձայի չնորհակալութիւնս գործքով յայտնել, եւ վրաս բաւական ստակ չունէի :

— Լաւ է, մէկտեղ կ'երթանք :

Առոր վրայ երկուքն ալ ոտք ելան : Մաննիկ ալ կ'ուղէր իրենց հետ երթալ, բայց Հեղինէ ըստ, որ կենայ :

Ուրեմն զիս թող սլիտի տաք, գոչեց աղջիկը լալով :

— ԶԵ, ՃԵ, ԱԲՐԵԼԻՄ, ԳՔԵՂ ՃԵՄ ԹՈ-  
ՂՄՐ : ՔԻԾ ՄԸ ՎԵՐՃԸ ԵՄ ԿՐ ԴԱՌՆԱՆՔ :  
ՉԵ՛Ս ՄԵՌԱՆՔԵՐ ՈՐ ՊԼԱՐՈՆՔ ԿԱՌՔՔ ՄԵԿԱԿ  
ՃԻՄԱՆԻՔ :

Աղջիկն ասոր վրայ հանդարտելով, ներս  
մտաւ : Խոկ ՀԵՂԲԻՆԵ ՊՐ : ՈՒԽԱՐՏՈՒՅԻՆ ՀԵՄ  
ԱԼՍԱՄ ԴԷՎ Ի ԳԵՐԵՂՄԱՆՆԵՐԸ ԵՐԾԱԼ :

ՃԱՄԲԱՆ ՕՐԻՄՐԴՐ՝ ՀԱՄԱՌՈՄ ԿԵՐԱՊԱՄ  
ՄԸ ԻՐ ԲԱՐԵՐԱՐԲԻՆ ԱՎԱՏՈՆՑ ԳԼՈՒԽՆ Ե-  
ԼԿԱԾՐ, ՄԻԱՆԴԱՄԱՅՆ՝ ՊԼԱՐԱՆՉՈՆ ԻՐ յԱ-  
ՓՐԵՇԱԿՀԵՆ, ՆԱԽՈՒՆ ՎՐԱՅ ՄԵԽԱՋ ԱՏԵՆ  
ՄՄՐԻՆ ԱԼԾ ՃՆԱՋ ԿԱՍԿԱՋՆԵՐՆ ալ  
յայտնեց : Խօսքը լմբնցուց ըօելով որ կր  
կարծէ թէ իր ասպնջական կնոջ քալը  
գտնուող աղջիկը՝ ՊԼԱՐԱՆՉՈՆԻՆ եւ իր  
դայեկին աղջիկն է :

Առ պատմութիւնը մոտիկ ընկլու ատեն  
ՊՐ : ՈՒԽԱՐՏՈՒ զանազան անդամ իր զայ-  
րոյթն ու զարմացումը ցուցուցած էր : Եւ-  
տեսնելով որ ՀԵՂԲԻՆԵ սրափին մէջ ուրիշ  
բան մ'ալ սէնի եւ չիհամարձակիր յայտ-  
նել, որովհետեւ պղտիկ աղջկան ով ըլ-  
լայն ըսելէն ետեւ՝ խօսքը մէկէն կտրած  
էր, զինքը քաջալերեց որ խօսքը շարու-  
նակէ :

ՕՐԻՄՐԴՆ ԱՅԼԱՅԼԵԼՈՎ մը՝ ՄԱՆՆԻԿԵՆ  
ՆԿԱՄՄԱՄՔ ՈՐՈՇՈՒՄ մ'ըրի, ըստ, զորն որ  
ՃԵՄ գիտեր թէ կր հաւնիք :

— Ըրած որոշումնիդ ճճանչնալով, ճեմ  
կրնար զրուցել որ պիտի հաւնիմ թէ  
չէ : բայց ձեր խոհեմութիւնը դիս կ'ապա-

Հովքընէ սր որոշումնիդ թեթեւութեամբ  
բրած չէք։

— Մտածեցի սր պէտք եմ կրօնի ձայ-  
նին հնազանդիլ որն որ մեզի կը հրամայէ  
որ չարեաց գիմացը բարիք հատուցանենք։  
Տեսայ որ Մաննիկ՝ հայրը կորսընցուցած  
եւ մօրմէն թող տրուած է, եւ վտանգի  
մէջ է իր դայեկէն ալ թող տրուե-  
լու, միտքս բերի որ ես ալ որբ եմ եւ  
զինքը . . .

— Արդեգի՞ր առիք գուցէ։

— Հրամնը էք, Պարոն։

Ասոր վրայ վայրկեան մը լուսւթիւն տի-  
րեց Աաճառականը քիչ մը պյլայլած կ'ե-  
րեւար առանց աշուշները վեր վերցընե-  
լու՝ ճամբան յառաջ կը տանէր։ Աերջա-  
պէս կանկ տռաւ։

Յայտնի խօսելու համար, ըստ, կը խռո-  
տովանիմ որ եթէ որաշումնիդ շըրած՝ ին-  
ծի խորհուրդ հարցընեիք, կը ջանայի ձեր  
միտքը փոխել։ Բայց որովհեաեւ հիմայ  
որոշումնիդ բրած եւ ինչպէս կ'երեւայ՝ նաեւ  
խօսք տռաւած էք, պէտք է որ ես ալ հառա-  
նիմ։ Համոզուած եմ որ Աստուած ձեզի  
առ աղնուական խորհուրդը չէր աղդեր,  
եթէ զլուխ հանելու միջոցները յառաջուը-  
նէ պատրաստած շըլլոր։ Սակայն եւ այն-  
պէս օրովհեաեւ Աստուած ամէն օր հրաշք  
չըներ, եւ մեզմէ կը պահանջէ որ խոհե-  
մութիւնը ձեռքէ շմոզունք, անոր համար  
դուք ալ անշուշտ առ աղջկան վրայ բան

մը մտածած պիտ'որ ըլլաք : Արդէն գիտեք  
որ նոյն իսկ դուք հարկաւորութիւն ու-  
նիք . . . . :

— Գիտեմ, գիտեմ, անոր համար ալ  
որոշումն՝ աւելի Աստուծոյ բարերարու-  
թեան եւ բարեկամացս մեծանձնութեան  
վրայ վստահանալով՝ ըրի, քան թէ իմ  
անձնական կարողութեանս վրայ :

— Ըստ աղէկ՝ Կը ջանանք որ առ բանս  
ալ ըստ կարելոյն աղէկ վերջ մը ունե-  
նայ : “Նիմ հասնելէն ետքը՝ ասոր վրայ  
աւելի երկայն կը խօսինք :

Հեղինէ կ'ուզէր իր բարերարին շնորհա-  
կալ ըլլալ . բայց անիկայ խօսքը կտրեց,  
եւ ծոցէն թուղթ մը հանելով, Ահաւա-  
սիկ, ձեղի նամակ մը, ըստ : Չուզեցի  
մինչեւ տուն հասնելնիդ սպասել, հետո  
բերի :

Հեղինէ անհամբերութեամբ կնիքը բա-  
ցաւ, եւ խիստ մեծ հաճութեամբ կար-  
դաց . որովհետեւ նոյն թուղթը զբող՝ իր  
Ատէլ բարեկամը կը ծանուցանէր որ բո-  
լորովին առողջացած ըլլալով, արդէն սրա-  
տրաստութիւն տեսնելու վրայ է, եւ քիչ  
մը ետքը ճամքայ պիտ'որ ելլէ, Գաղղիա  
դառնայ :

Այսօր Մանչինէլլի տիկնոջ վրայ խօսք  
չեմ ըներ, կ'ըսէր Ատէլ նամակին վերջը :  
Անանկ լրեր կան՝ զարտնք մարդ աւելի կ'ու-  
զէ անձամբ հաղորդել, քան թէ նամակի  
միջոցով :

Հեղինէ թուղթը շատ անդամ պա-  
դաւ : Եսարք նորէն Պր . Ռիշարտոյին  
թեւն անցնելով , հետք մէկտեղ դերեզ-  
մանատուն մտաւ , եւ զինքր նոր դոցուած  
փոսի մ'առջեւը տանելով , Ահաւասիկ  
առ է , բաւ , եւ սկսաւ լալ :

Պր . Ռիշարտոյ՝ որ պատճառ մը չու-  
նէր տարակուսելու թէ ան նաւարեկելելով՝  
որուն թաղուած տեղը կը տեսնէր , Պր .  
Կարոլոս շրջայ , շկրցաւ այլայլութիւնը  
բանել . ինքն ալ Հեղինէին հետ բացաւ եւ  
քանի մը բոլէ տխուք մտած մանց մէջ  
ընկղմած հոն կեցաւ : Դժբախտ օրիորդը  
փոսին վրայ քանի մը ծագիկ ցանեց , եւ հոն  
տնկուած խաչին առջեւը նորէն Աստուծոյ  
խոստացաւ որ Աննային աղջիկը երբեք թող  
չտայ . հապա անոր մայրութիւն ընէ :

Պր . Ռիշարտոյ ալ համառատ աղօթք  
մ'ընելէն ետքը՝ սոր ելաւ եւ բաւ որ  
ալ երթալու ժամանակն է :

Գերեզմաննեցէն ելելով , սկսան դէպ  
ի ան խրճիթն երթալ , սւր քանի մ'օր  
յառաջ օրիորդը Ամնելիկին հետ դացած  
էր : Բայց հոն հասնելէն յառաջ՝ տեսան  
որ պառաւն իրենց դիմացը կաւ դայ :

Նոյն կինը Հեղինէին մծանենալով , Ես  
ալ ձեզի կու դայի . բաւ մեծարանոք : Ի-  
մացայ որ քիչ մը վերջը ասկից պիտօր  
երթար եղեր . ուստի եւ կուզէի ըսել թէ  
ան դժբախտ աղնուականին ժամացդյոյը  
քայլ չեմ ուզեր պահել :

Ըատ շնորհակալ եմ, պատասխանեց օրիորդը, Եւ ամենքը մէկտեղ պառաւին խրճիթը մտան, որն որ շուտ մը ժամացոյցն օրիորդին տուաւ:

Կ'ընդունիմ, բայտ Հեղինէ, բայց անթէութեամբ՝ որ դուք ալ մեղմէ ասոր փոխարէն մ'առնուք:

Չէ, չէ, դոչեց պառաւը, ամենեւին բան չեմ ուզեր. առէք առէք, եւ ձեզի երջանկութիւն բերէ:

Հեղինէ շատ որ ստիպեց, վերջապէս պառաւը յանձն առաւ Պր. Ռիշարտոյին տուած ուսկին ընդունելու: Իսկ օրիորդը ժամացոյցն առաւ, եւ առանց վրան նայելու՝ ծոցը դրաւ:

Երբ որ տուն դարձան, Հեղինէ Մորոյ կնոջմէն, թէ իր եւ թէ Մաննիկին ու անոր եղբօրը համար բրած ծախքին հաշիւն ուզեց:

Դոււք, տիկին, տունս քիչ ժամանակ կեցած ըլլալով, պատասխանեց կինը, ձեզի համար շատ ծախք բրած չեմ. ինչ որ կը հաճիք՝ տուէք: Իսկ՝ տղոց հայրը՝ ապրին 500 ֆրանգ կու տաք: Արդէն գիտէք որ վերջին եռամսեան վճարած չէ, որն որ ինծի պէս աղքատ կնոջ մը համար քիչ բան չէ:

Հեղինէ ուզեց նոյն դումարը՝ Պր. Ռիշարտոյին իրեն խրկած ստակէն վճարել. բայց վաճառականը թող չտուաւ, եւ տղոց եռամսեան վճարելէն զատ՝ Հեղինէին

Համար ալ քանի մը ոսկի տուաւ, զորն որ Մորոյ մայրը խիստ մեծ ուրախութեամբ ընդունեցաւ, որովհետեւ յուսացածէն շատ աւելի էր:

Ճաշէն ետքը՝ օրիորդը Մաննիկին հետ Պր. Ռիշարտոյին կառքը մտնելով, ճամբայ երան: Խրիկունը Մոնքէլիէ հասան, եւ նոյն գիշերը հոն անցուցին: Երկրորդ առտու կանուխ դէպ ի Նիմ ճամբայ ինկան: Եւ կարելի եղածին չափ գաղառէկ նոյն քաղաքը մտան, որպէս զի եթէ Հեղինէին նաւարեկութիւն կրած ըլլայն իմացողներ կան, մտադրութիւննին չարթըննայ:

### Գ. Լ. Ա. Խ. Խ. \*

Ո՞չ, սիրելի՛ բարեկամ, ըստ Ռիշարտոյ տիկինը, զՀեղինէ տեսած ատեն, ինձի դէմ շատ նեղացած պիտ'որ ըլլաք՝ զձեզ յորդորելուս համար որ . . . :

Ամենեւին չէ, տիկին, պատասխանեց մեր դիւցազնուհին՝ անոր խօսքն ընդմիջելով, գուք ձեր սրտին ազդածին համեմատ վարուեցաք. Հարկաւոր սեպեցիք զիս յորդորել որ չափաղանց երկշոտութեանս յաղթեմ: Խոկ պատահածն Աստուած ուզեց: Անոր համար իր կամացը պէտք է որ երկրպագութիւն ընենք, եւ խրկած օգնութեան շնորհակալ ըլլանք:

Ռիշարտոյ տիկինն աս խօսքերուն վրայ

շատ հաճեցաւ . սակայն եւ այնպէս չէր կրնար մորքն հանել առ տառապեցուցիչ մտած մունքը՝ որ Հեղինեխն գլուխն եկած չարեաց միակ պատճառն ինքն է :

Աս տիրութիւնն ի՞նչ պիտ' որ ըստ , բառ վերջապէս վաճառականն իր ամուսնոյն , կորսընցուցած բարեկամնիս դասնք : Պէտք է որ անով դոչ ըստանք : Ստոյգ է խիստ մեծ վաճանդի մէջ դանուեցաւ , բայց բանն ան է՝ որ անփառ աղատեցաւ , եւ իր թշնամիներն իրենց լարած որոգայթին մէջ բռնուեցան :

— Իր թշնամիները . որ թշնամիներաւն վրայ կը խօսիս :

— Հեղինեխն կը թողում որ գլուխն եկած սոսկալի արկածն անձամբ պատմէ . բայց հիմայ պէտք է թող տալ որ հանդշի :

Իսկ առ սիրուն պզտիկ աղջիկն ով է , աւելցուց տիկինը՝ Մաննիկին նայելով . որն որ երկշոսութեամբ մը Հեղինեխն քովը կը կենար :

— Անիկայ մեր բարեկամին որդեգիրն է :

Տիկինն էրկանն երեար սկսաւ նայիլ . այնպիսի կերպով մը . իրը թէ ըսել ուզեր որ կատակ կ'ընէ :

Կատակ չեմ ըներ . բառ վաճառականը՝ անոր միտքն իմանալով : Հեղինեխ առ աղջիկն իրօք իրեն որդեգիր առած է :

Աս բաելէն ետե՛ աղախին մը կանչեց բառ որ զՄաննիկ դուրս տանի :

Հիմակ առ անձին ենք , շարունակեց ոլոր .

Արիշարտոյ՝ ամուսնոյն, ալ հետաքրքրութիւնդ շուտ մը դո՞ւ կ'ընենք, ամէն բան կ'իմանաս :

Տեկինը քիչ մը զովացուցիչ ճաշակելիք բերել եւ սեղանին վրայ դնել տալով. Հեղինելին քովը նստեցաւ : Օրիորդն ալ սկսաւ իր պատմութիւնը : Բայց երբ որ զՄաննիկ որդեգիր առնելու ըրած որոշման եկաւ, դարձեալ չկրցաւ խօսքը յառաջ տանիլ :

Հիմայ խօսելու կարգն իմն է, բաւ վաճառականը : Բարեկամնիս Աստուծոյ եւ մեր վրայ վստահանալով, մեծ բարեգործութիւն մ'ըրեք է :

Ետքը Հեղինելին եւ Մորոյ մօրմէն յսածներուն համեմատ՝ պատմեց թէ ի՞նչպէս Մաննիկ՝ Հեղինելին Աննա դայեկին եւ անոր շինծու եղրօնն աղջիկն է . եւ թէ ի՞նչ պատճառաւ օրիորդը զանիկայ իրեն որդեգրած է :

Ի՞նչ, գուշեց տիկինը՝ Հեղինելին դառնալով. աս բանս ինձի յայտնելու կը վախնացիք : Բայց, սիրելի՝ բարեկամն, կը կարծէք թէ ես Աստուծոյ տեսչութեան վրայ վստահութիւն չունիմ : Չէ, չէ . ազէկ դիտեմ որ բարեգործութիւն մը երբեք անվարծ չիմնար . եւ թէ գլխաւորաբրորսց արաւած կերակրոյն կը պատշաճի անառածը : Թէ Ուր երկու հօգւոյ ուտելիք կայ, երեք հոգւոյ ալ կը դանուի : Ասկից վերջը Մաննիկ մեր աղջիկը կը լսայ, ինչ-

պէս որ մինչեւ հիմայ դուք էիք : Ար յու-  
սամ որ ինքն ալ երախտագէտ կը լսայ :

Հեղինէ այլայլութենէն պատասխան  
տալ շկարենապով, գորովով մը իր բարե-  
կամին ձեռքը բռնելով ճնշեց : Տիկինը  
պզտիկ աղջիկը նորէն ներս կանչել տուաւ  
եւ սիրով գրկելով, Ալ ասկից վերջը մեր  
աղջիկը պիտ' որ ըլլաս, մեր քովը մնաս,  
ըստ . եւ եթէ խելօք կը վարուիս, ամէնքս  
զքեղ կը սիրենք :

Մաննիկ լալով տիկնոջ ձեռութերը  
պաղտաւ եւ խօստացաւ որ աղէկ կենայ :  
Բարեսիրտ տիկինը զինքը նորէն գրկեց եւ  
առաւ էրկանը տարաւ, որն որ նոյնպէս  
զինքը շոյեց եւ փայփայեց : Ամէնքն ալ  
մնծ որտի ուրախութիւն կը զգային, ինչ-  
պէս որ մարդս բարեգործութիւն մ' ըրած  
կամ վայելած ժամանակը կը զգայ :

Հեղինէ շուտ մը աղջկան համար խուցն  
անկողին մը պատրաստեց : Եւ որովհետեւ  
զգեստները հին էին, նոր ու պատշաճ  
զգեստներ հոգացին ու հազցուցին :

Բայց Հեղինէն սրտին մէջ՝ Պր. Ուի-  
շարտոյին իրեն համար ըրած ծախըին գո-  
նէ մէկ մասը հատուցանելու բաղձանքը  
դեռ չէր մարած : Աակայն ալ ամենէւին  
յօժարութիւն չէր զգար՝ իրբեւ դաստիա-  
րակուհի ուրիշի տունն մտնելու . որովհետեւ  
օտարաց հետ ընակած ժամանակը՝ չէ թէ  
միայն անոնց ընտուրութենէն զանազան  
կերպով նեղութիւն կրնար կը եւ, հապա

նաեւ կը պարտաւորուէք Մաննիկէն բաժնուիլ, որուն այնպէս սէք կապած էք, որ իրեն մեծ ցաւ պէտք էք պատճառել՝ անկից հեռու ըլլալը։ Խոկ գիրք շինելով վաստրկած ստակն այնչափ մեծ բան չէք. որ ինք զինքը նորէն գրաւոր զբաղմանց տայ։

Մոնրոպէք տիկնոջ քովն եղած առենը յաճախ նորաձեւ զգեստներ շինող կնոջ մը կ'երթար, ուր շատ մը աղջիկներ իրենց ձեռադործովը բաւական աղէկ վաստակ կ'ընէին։ Արդ երկայն մտածելէն ետքը՝ որոշեց որ նոյն կնոջ երթայ, իրմէ գործք առնու, եւ բերէ տունը. գործէ։ Ասով Մաննիկին քովը կ'ըլլար, որն որ կամաց կամաց կրնար իրեն օդնել։ Աս խորհուրդը նաեւ Ռիշարտոյ տիկնոջ յայտնեց, որն որ միայն զինքը չվշտացընելու համար՝ հաւանեցաւ, միանգամայն ուղեց հետք մէկտեղ երթալ։ Վաճառական կինը Հեղինէին խնդիրքը սիրով յանձն առաւ, եւ խոստացաւ որ շարթէ շարաթ իրեն գործք տայ։

Հեղինէ աս բանիս յաջողելուն վրայ այնչափ ուրախացաւ, որ տուն դարձած առեն՝ երեսները սովորականէն աւելի կենդանութիւն մ'առած էին։

Մաննիկ զինքը տեսնելուն պէս՝ առօր միտ դնելով. Զձեղ երբեք այսօրուան պէս կարմրած չէի տեսեր, բայց աղայական պարզմտութեամբ։

Արովհետեւ երկայն քալելով՝ քիչ մը  
տարցայ, պատոսիաննեց Հեղինէ :

Խոկ անիկայ ի՞նչ է, հարցուց պզտիկ  
աղջիկը՝ թեւին տակի ծրարը ցուցընելով :

— Տիկնաջ մը համար կարելու բաներ են :

— Ո՞հ, ի՞նչպէս կը բաղձայի որ ես ալ  
կարենայի կար կարել :

— Եթէ կ'ուզես, կրնաս սորվիլ :

— Շատ սիրով : Գուռք ինձի սորվեցու-  
ցէք! Մորոյ մայրը զիս այնչափ չէք հոգար,  
անոր համար իր քավը բան մը չկըցայ  
սորվիլ :

— Աղէկ է, ես քեզի կը սորվեցընեմ,  
որպէս զի կարենաս օր մը ինձի օգնել :

— Աս կերպով կրնամ քիչ մը բան ալ  
վաստրկիլ . եւ երբ որ զգեստս կը հիննայ,  
առանց Ռիշարտոյ տիկնաջ ծախք ընել  
տալու՝ իմ ստակովս կը գնենք :

— Հոգ մ'ըներ . Ռիշարտոյ տիկինը  
զքեզ շատ կը սիրէ : Քեզի համար հիմակ  
ըրածը՝ միշտ սիրով կ'ընէ , եթէ դան ալ  
իրեն երախտադէտ ըլլաս :

— Կը տեսնէք՝ որ վրաս ի՞նչպէս դոհ  
կ'ըլլայ : Թէ որ կ'ուզէք՝ հիմակուընէ ին-  
ձի կարելու բան մը տուէք, կը ջանամ  
աղէկ կարել, եւ ետքը իրեն կը ցուցընեմ:

Հեղինէ սիրուն աղջիկը գրկեց, եւ ա-  
մէն բան կարգի դնելէն ետքը, զինքը քո-  
վը նստեցընելով, դիւրաւ կարելու բան մը  
տուաւ ձեռքը :

Մաննիկ այնպէս փութով ու մոտա-

դրութեամբ սկսաւ գործել, եւ շուտ մը  
այնպէս յառաջ զնաց, որ քիչ օրեն՝ Հե-  
ղինելին իրաք կ'օդնէր:

Երկուքը մէկտեղ ասանկ աշխատած  
ժամանակ՝ Հեղինէ մէկ կողմանէ սրդաիկ  
աղջկան սիրտը կրօնական նիւթերու մէջ  
կը կրթէր:

Այսպէսով բաւական ժամանակ անցած  
էր, մէյ մ'ալ օր մը ան գրավաճառք՝ ո-  
րուն Հեղինէ իր յառաջուան ձեռադիր-  
ները ծախած էր, իրեն այցելութեան դա-  
լով. Օրիսրդ, ըստ, շատերը ձեր վերջին  
գրքին վրոյ այնչափ հաճութիւն ցուցուցին,  
որ կու դամ աղաչելու, որ նոյն ոճով ու-  
րիշ գիրք մ'ալ շնէր: Յանձն կ'առ-  
նո՞ք:

— Հաստատուն պատասխան չեմ կրնար  
տալ, Պարոն, որովհետեւ՝ ինչպէս կը տես-  
նէք՝ անկէ դիւրին եւ ապահով վաստակ  
բերող գործքի մը կը գրաղիմ:

— Մատուքնիդ նոյն ձեռադործին դրա-  
վեցուցած ատեննիդ՝ կրնաք նաեւ մոքեր-  
նուդ մէջ գլքի մը ծրագիրը հանել, եւ  
մէջընդմէջ՝ մտածմունքնիդ թղթի ան-  
ցընել:

Հեղինէ վայրկեան մը մտածելէն վերջը,  
Նիմ դալէս վեր, ըստ, գրուածքի մը կը  
գրաղէի, որն որ կարելի է՝ ձեզի հաճոյ  
կ'ըլլայ: Բայց հրատարակելու մոտք գրած  
շրմալով, միայն ծրագրած էի:

— Նիւթն ի՞նչ է:

— “Եիմ քաղաքին եւ անոր հնութեանց  
պատմութիւնը :

— Ծառ աղէկ : “Եայեցէք որ լմբնցընէք .  
եւ եթէ ձեր վերջին գրուածին պէս ա-  
զէկ կ'ըրայ , իւրաքանչիւր թերթին երկ՝  
երկու սոկի կու տամ” :

Հեղինէ ուրախ սրտով ձեռք զարկաւ  
գրուածքը կարգաւորելու , եւ ամսուան մը  
մէջ լմբնցուց՝ առանց ձեռագործն ալ  
բոլորովին մէկդի ձգելու :

Չեռագիրը գրավաճառին տարած ժա-  
մանակ , զրատունը շատ բազմութիւն ըլ-  
լալով , ստիպեցաւ սպասել : Մաննիկ՝ որ  
հետքայած էր , տղայական հետաքրքրու-  
թեամբ ստէպ պատուհանէն կը նայէր :  
Վերջապէս Հեղինէին դառնալով , “Եայե-  
ցէք , օրիորդ , բառ , նայեցէք , գուրսը Պա-  
րսն մը կայ , որն որ երկայն առենէ վեր  
կեցած՝ ձեղի կը նայի : Կարծես թէ կ'ուզէ  
ձեզի հետ խօսիլ :

Միտ մի գներ , պատասխանեց Հեղինէ ,  
առջեւի գրքերը թղթատելը յառաջ տա-  
նելով :

— “Եայեցէք , նայեցէք , հիմնակ աւելի կը  
մօտենայ :

Հեղինէ գլուխը դարձուց , բայց մարդ  
չտեսաւ :

— Տեսար որ սիսակէր ես , սիրելիս :

— Չէ , չէ , չեմ սիսակ . բայց երբ որ  
դուք դէպ ի դուռ նայեցաք , Պարսնը  
կոնտակը դարձուց , դնաց :

Հեղինէ աղջկան խօսքերուն մեծ մտա-  
դրութիւն չըրաւ, եւ իր կարգը զալով,  
դրավաճառին քովը դնաց:

Կը յաւսամ, օրիսրդ, որ ասիկայ վեր-  
ջինը չ'ըլլար, ըստ իրեն դրավաճառը՝ ձե-  
ռադիրն առնելով: Գրուածնիդ հոս առ-  
անձին կը դնեմ, որ ամենէն յառաջ աշ-  
քէ անցընեմ, եւ լմբնցընելուս պէս՝ ստա-  
կը կը խառըեմ:

Հեղինէ քաղաքավարութեամբ շնորհա-  
կալ եղաւ, եւ ուրախ սրտով տուն դար-  
ձառ, վասն զի կը յաւսար որ աս կերպով  
օր մը կարող կ'ըլլայ թէ իր եւ թէ Ան-  
նիկին ապրուսոք հոգալ:

Ակսաւ նորէն իր ձեռագործը յառաջ  
տանիլ, մէկ կողմանէ ալ ուրիշ նիւթ մը  
գտնելու կը զբաղէր եւ վերջապէս դտաւ  
ալ: Բայց անակնկալ եւ արտաքոյ կար-  
գի գէպքեր նոյն դրուածքը շինելուն ար-  
գելք եղան:

Աս գէպքերը պատմելէն յառաջ՝ պէտք  
է որ ընթերցողներուն հաստատուն բան  
մը զբուցենք կարուխան վիճակին վրայ:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Եղուարդ նաւապետին ճամբայ ելլելու  
պատրաստուած ժամանակը, կարոլոս Անր-  
իայլեի արքունիքն էր: Մէջ մ'ալ նամակ  
մ'ընդունեցաւ հօրմէն, որն որ կ'ըսէր թէ  
անհրաժեշտ հարկաւոր է Մոնրելիէ գալը,  
խիստ ծանրակշիռ դորձքի մը համար, զորն  
որ բերնով կը ծանուցանէ: Նոյն ատեն  
կարոլոս իմացաւ միանդամայն որ եզրայրը  
գէպ ի Հնդկաստան ճամբայ պիտի եմէ:  
Եւ Ռոմ գետին բերանը քիչ մը պիտի  
կենայ:

Կարոլոս հարկաւոր հրամանն ընդու-  
նելով, շուտ մը ճամբայ ինկաւ, բայց ա-  
ռանց Մոնրելիէ կենալու՝ աճապարեց գէպ  
ի եղրօրը նաւին երկաթ նետած կողմերը  
գնաց, որպէս զի հետք տեսնուի: Ինքն ալ  
միեւնոյն ճամբէն անցաւ, ուսկից նախըն-  
թաց օրը Հեղինէ անցած էր: Ծավելը  
հասած ժամանակն ալ նոյն նաւին ճիշդ-  
ուր գանուիլը, դարձեալ բատ ամենայնի  
ան նաւավարին հարցուց, որն որ առջի  
իրիկունը մեր դիւցազնուհին հոն տարած  
էր:

Ֆոգոն նաւն արդէն ճամբայ ելած է,  
պատախանեց նաւաստին. բայց որովհե-  
տեւ Նարպոն պիտի հանդիպի՝ մեր Հընդ-  
կաստանի գաղթականութեանց համար  
զօրք առնելու, եւ հակառակ հովն ալ  
թող չիտար որ ցամաքէն շատ հեռանայ:

անոր համար ծովեղերքին քովէն նաւարկելով՝ կրնայինք ետեւէն հասնիլ։ Միայն թէ երեկուընէ վեր փաթորիկ մը բրդելու վրայ է, որով աս անցքը խիստ վտանգաւոր էւ գրեթէ անկարելի կ'ըլլայ։ Ես նոյնը զրուցեցի երէկ իրիկուն երկու տիկնանց՝ որոնք ուղեցին որ զիրենք նոյն նաւը տանիմ։ բայց անոնք խօսքս մատիկ չըրին։ Աստված տայ որ չզդիան։

Կարուս աս խօսքերը բանի տեղ չդրաւ։ Հապա զեղրայրը տեսնելու բաղձանքով վառաւած, ձին մորակեց ու շուտ մը նաւավարին աչքէն աներեւոյթ եղաւ։

«Ծովեղերքէն յառաջ երթալով, երկայն ընթացքէ մը եսքը՝ բարձր տեղ մը հասաւ, ուսկից տեսաւ որ նաւը պարապ տեղ կը ջանայ եղերքէն հեռանալ, ուր հովուն կատազութիւնը զինքը սաստկութեամբ կը մղէր։ Անմիջապէս ծեր նաւավար մը կանչելով, ըստ որ կ'ուղէ աննաւն երթալ։

Ի՞նչ կ'ըսէր, Պարսն, պատասխաննեց ծերունին. գուք ալ կը տեսնէք որ ծովի ինչպէս ալէկոծեալ է. Հովք շիթողուր որ նաւուն մօտենանք։ Անկարելի է որ առագաստ բանանք։

— Թիավարելով ալ չ'երթբցուիր։  
— Հովին եւ ալեաց դէմ մրցելու համար շատ թիակավար հարկաւոր է։  
— Որչափ հոգի կ'ուղես՝ առ. վարձքին վրայ գժուարութիւն շեմ ըներ։

Նաւաստին ոկտառ մտածել, եւ երբ որ  
Կարոլոս զինքն աւելի կը ստիպէր, Պարսն  
ըստ, կը տարակուսիմ որ կարենանք այն-  
պիսի անձինք գտնել, որոնք իրենց կեանքը  
վտանգի մէջ դնել ուզեն:

— Իրենց կեանքը:

— Այս. որովհետեւ երկինքը թանձր  
ամսվերով ծածկուելու ոկտած է, եւ շատ  
չերթար սարսափելի փոթորիկ մը պիտի  
բրդի:

Աս որ լսեց Կարոլոս՝ ալ ոկտառ վա-  
րանիլ, թէ արդեօք կ'արժէ՞ ինք զինքը  
յայտնապէս վտանգի մէջ դնել՝ միայն  
զեղրայրը մէյ մ'ալ տեսնելու համար: Ինք  
ալ կ'իմանեար թէ որչափ յանդգնութեան  
դործք է ընելիքը. բայց ներքին ազդեցու-  
թիւն մը կը ստիպէր որ դիտաւորութիւնը  
զլուին հանէ:

Քարեկամ, ըստ նաւաստիին՝ քսակն  
անոր նետելով, կ'ուզեմ վտանգին դիմացն  
ելլել, ինծի քաջասիրտ եւ յաջողակ մար-  
դիկ տուր, կրնամ զիրենք ապահովընել  
որ ողջամբ ետ կը դառնան:

Աս խօսքերն այնպիսի հաստատու-  
թեամբ մ'ըստ, որ ստրկին հետ մէկտեղ  
զնաւաստին համազեց: Ուստիեւ շուտ մը  
իր երեք որդիքը կանչեց, որոնք անմիջապէս  
մտկոյէն իջեցուցին ու Կարոլոսին կեցած  
կողմը բերին:

Պաշտօնակալը՝ ձին ծերունի նաւաստ-  
րին յանձնելով, շուտ մը նաւակը նետուե-

ցաւ, եւ ինքն ալ թիակ մ'առնելով, սկսաւ ամենայն զօրութեամբ թիտվարել: Չինքն այնպէս դէպ ի նաև փութացընողը՝ նախախնամութիւնն էր, որն որ չէր ուզեր թէ Հեղինէ պարագ տեղ յոյսն իր վրայ գրած ըլլայ, եւ նոյն երիտասարդն ընտրած էր՝ անոր ազատիչն ըլլալու:

Կարոյսին ակնկալութիւնը պարապի չգնաց. թէպէտ ինքն ալ ընկերներն ալ ալեաց սաստկաւթեան դէմ կռուելու համար՝ արտաքոյ կարդի աշխատեցան, ի վերայ այսր ամենայնի նաւը հասան: Եաւ ուն մարդիկը չուանէ սամփուղ մ'իջեցընելով, պաշտօնակալը վեր ելաւ, ու անկից՝ զինքը բերող մակուկին ծովեղելք հասնիլը տեսաւ:

Մոնրոպէր նաւապետը զեղբայրն այնպիոի պազութեամբ ընդունեցաւ, որ աս վերջինը չկրցաւ ասոր վրայ ունեցած զարմանքը չյայտնել:

Ուրիշ անդամ՝ զքեզ մեծ հաճութեամբ կընդունէի, ըստ Եղուարդ բայց հիմայ՝ որ մեծ մրրիկ մը բրդելու վրայ է, զքեզ հոս տեսնելուս վրայ պէտք է որ տհաճիմ, որովհետեւ կեանդի վտանգի մէջ է:

— Ի՞նչ, կ'ուզեիր որ աւելի երկշոտ ըլլամ՝ քան թէ ան երկու տիկինները, որոնք ինչպէս պատմեցին, երէկ աս նաևն եկը են:

Առ խոսրին վրայ նաւապետին գոյնը

նետեց ու խոռվեալ դեմքով մը աչուր-  
ներն անդին դարձուց : Բայց շուտ մը ինք  
զինքը ժողվելով, Ան տիկնայք, ըստ, ի-  
րենց աղջականները տեսնելու եկած չեն.  
Հապա իրենց ամուսիններուն հետ Հընդ-  
կաստան երթալու համար : Խօսքս մտիկ  
ըրէ, Կարոլոս . նայէ որ ասկից հեռանաս:  
Գուցէ կէս ժամ ետքը բանը բանէն ան-  
ցած կ'ըլլայ : Հիմայ մակայկս կ'իջեցրնեմ,  
եւ ամենէն ընտիր նաւաստիններս կու տամ,  
որ դքեղ ցամաք տանին :

— Զէ, զքեզ և մ թողուր . հոս կը կե-  
նամ եւ վտանգին մասնակից կ'ըլլամ :

— Կ'աղաչէմ, Կարոլոս, մեր ծնողաց սի-  
րոյն համար ըլլայ, շուտով գնա: Ես պաշ-  
տօնէս պարտական եմ՝ հոս մնալու, թէ եւ  
կեանքս վտանգի մէջ տեսնեմ: Բայց զքեզ  
մնալու պարտաւորող բան չկայ. ուստի  
գնա, տուն դարձիր: Եւ եթէ երկինք  
կուզէ որ Ես հոս մեռնիմ, հօրս, մօրս ու  
քրոջս ըսէ, որ իրենց վրայ մոտածելով կը  
մեռնիմ:

Կարոլոս եղբօրը պատճառներէն շար-  
ժելով, միաքը փոխելու վրայ էր . բայց այն  
ներքին ձայնը՝ որն որ զինքը մնալու կը  
ստիպէր, նոյն միջոցին առելի եւս սաստ-  
կութեամբ իրեն աղջեց որ հաստատուն  
կենայ: Ուստի եւ գլուխը ցնցելով, Միոքս  
դրած եմ որ, ըստ, քեզմէ չբաժնուիմ:  
Լսեցի որ Կարպոնէն զօրք պիտի առնաւս,  
մինչեւ հոն հետզ կու դամ, եւ եթէ՝ ինչ-

պէս կը յուսամ՝ մօտայուա վտանգէն կ'ա-  
զատինք, որն որ գուցէ մեր կարծածին  
չափ մեծ ալ չէ. նոյն ուրախալի լուրը  
հօրս կը տանիմ:

\*Սաւապեաը մէկ երկու անգամէն ալ  
ջանաց եղբօրը միտքը փոխելու. բայց վեր-  
ջապէս տեսնելով որ անկարելի է, ուղեց  
խոհեմութեան ցուցուցած ամէն միջոց-  
ներն ի գործ դնել, որպէս զի Հեղինէին՝  
նաւուն մէջ ըլլալը չիմանայ: Մարթային  
գտնուած տեղը գնաց, եւ առանց պատ-  
ճառը զրուցելու՝ հրամայեց որ պահուըտի.  
Ետքը Հեղինէին խուցը մտաւ եւ սպառ-  
նացաւ որ եթէ մէյ մ'ալ պառալու ըլլայ:  
իր բարկութեան կը հանդիպի:

Անտարակոյս ընթերցողները կը միշեն  
օրիորդին տուած պատասխանը:

\*Նոյն միջոցին՝ այնչափ ժամանակէ վեր  
վախցուող փոթորիկը՝ նաւապետին կար-  
ծածէն ալ աւելի սաստկութեամբ բրդաւ:  
Կարուս նաւատեաց հետ մէկտեղ՝ Եղբօ-  
րը տուած հրամանները կը կատարէր, եւ  
այնպիսի փութով կը գործէր, որ նաւա-  
պետը վախնալով թէ չափէն աւելի շյող-  
նի, աղաշեց որ քիչ մը հանգչի:

Ըատ կը վախնամ՝ որ բոլոր աշխատու-  
թիւննիւ պարապի պիտի երթայ, ըստ :  
Պէտք է որ մահը յանձն առնունք:

Մէկտեղ կը մեռնինք, պատասխա-  
նեց կարուս: Բայց վտանգն իրօք ալ մեր  
երեւակայածին չափ մեծ է:

- Ասյի, վատանգը շատ մեծ է :
- Կարոլոս այլայլեցաւ, աշուշներն արցունքով լեցուեցան.
- Կարոլոս, կը վախնան, բայ եղբայրը :
- Զէ, մահը զիս չիվախցըներ :
- Ուրեմն ինչո՞ւ կու լաս :
- Ո՛չ եղբայր, հրաման կու տան, որ սիրոս քեզի բանամ :
- Խօսէ :
- Կը վախնամ որ Աստուծոյդ առջեւն ելլելու բոլորութին պատրաստ չըլլաս :
- Կարելի է երկայն ժամանակէ վեր . . . :
- Նայէ, Կարոլոս, երբ որ մէկը ինձի պէս մահը շատ անգամ մօտանց տեսած կ'ըլլայ, հանդերձեալ կենաց վրայ քահանաներուն ըրած սոսկալինկարագրութիւններէն այնչափ դիւրաւ չիվախնար :
- Բայց թէ որ նոյն հանգերձեալ կենաց վրայ իրենց ըսածներն առասպել չեն. Եթէ դժոխքն իրենց մոտաց դիւտը չէ . . . Ո՛չ, եղբայր, այսպիսի զարհուրելի անստուդութեան մէջ կընան անհագութեամբ տեսնել տարակոյսներուն փարատելու վայրկենին մօտենալը : Կ'աղաչէմ, խուլ մ'ըւլար իմ ձայնիս, մանաւանդ թէ Աստուծոյ ձայնին, որն որ քեզի տակաւին ժամանակ կը թողու իր զթութեան դիմելու եւ յանցանկներուդ թողութիւն ինդրելու :
- Նաւապետն աս խօսքերուն վրայ այլայլած կ'երեւար, բայց կերպարանացը վրայ

ամենեւին վախի նշան չէր ցուցըներ : Քիչ  
մը ատեն լուռ կենալէն ետեւ , Կարոլսս ,  
բայւ , քու երկուսութիւնդ կ'ըմբռնեմ .  
ասիկայ մօրեղբօրդ քեզի տուած կրթու-  
թեան հետեւանքն է : Խսկ եռ ասանկ սնո-  
տի վախերէն բոլորովին աղատեմ . եռ զատ  
կերպ կրթութիւն ընդունած եմ , որով  
եւ կրնամ ռամլին վախ պատճառող կար-  
ծիքներն արհամարհել . . . . Բայց ասանկ  
պարապ խօսքերով ժամանակնիս կը կոր-  
որնցընենք : Պէտք է որ մակոյին իջեցընե-  
յու հրաման տամ . ասիկայ մեր աղատու-  
թեան վերջին միջոցն է :

Աս ըսելով , ձգեց նաւաստեաց քովը  
դնաց , որոնք անձկութեամբ իր հրաման-  
ներուն կը սպասէին :

Կարոլսս ետեւէն կը նայէր՝ մինչեւ որ  
նաւուն վրայ եղած խառնակութեան մէջ  
աներեւոյթ եղաւ : Չորս կողմը պատահած  
բաներուն գրեթէ անզգայ ըլլալով , խեղճ  
պաշտօնակալը միջնայարկը քաշուեցաւ , եւ  
հոն ծունքը իջած՝ սկսաւ . Աստուծոյ եռան-  
դադին աղաչել որ եղբօրը սիրտը շարժէ  
ու զինքը դարձի բերէ :

Խսկ նաւապետն ըսած յուսահատական  
միջոցը մէկէն ի գործ չդրաւ . քիչ մը ժա-  
մանակ ալ ուղեց սպասել . նաւն աղատե-  
լու համար կրցածին չափ աշխատեցաւ :  
Բայց կամ իր պարծածին չափ քաջասիրտ  
ու աներկիւղ չըլլալով . կամ եղբօրմէն  
բած խօսքերն իր վրայ ազդեցութիւն ընե-

լով, վրան մեծ այլայլութիւն մը կը տիրէր, որով չէր կրնար հրամանները հանդարտութեամբ տալ:

Նոյն վիճակին մէջ կը գտնուէր, երբ որ՝ ինչպէս իր տեղը պատմեցինք՝ Հեղինեին խուցը մտաւ, նայելու համար որ ամեն բան ի կարգի է:

Իսկ անկէ ետքը նաւուն յարկն ելաւ, ուր ամենուն վրայ յուսահատութիւն ուսարսափ կը տիրէր, եւ հրամայեց որ մոկոյկը ծով իջեցընեն:

Երբ որ աս հրամանը բերնէ բերան անցնելով՝ մինչեւ նաւուն ներքին կողմերը հասաւ, Կարոյոս՝ որն որ դեռ իր աղօթքին զբաղած էր, մէկէն ոռոր աղաղակ մը լսեց: Անմիջապէս նաւուն մէջ գտնուած երկու տիկնայլը միտքը դալով, ձեռքը ջա՞, մ'առած՝ աղաղակին ելած կողմը վագեց, եւ Հեղինեին բանտարկուած իցին դուռը խորտակելով՝ ներս մտաւ:

Արդէն գիտենք թէ ինչպէս զօրիորդը նաւուն յարկը հանեց եւ եղրօն ալեաց մէջ թագուիլը տեսնելէն ետքը, անոր հետ մէկտեղ ծովը նետուեցաւ:

Կարոյոս իր աս պատուական բեռովը լողալով, բաւական ճամբայ ըրած էր, մէջ մ'ալ գատին քակուելով՝ ձեռքէն փախաւ: Ան առեն մէկ ձեռքով զաեղիներանած, մէկալովը կը ջանար ալիքները պատուելու, բայց վրան այնչափ զօրութիւն չէր մասցած՝ որ թէ լոզայ և թէ օրի-

սրգին անկենդան մարմինը հաստատուն բռնէ։ Այլք մը զանիկայ յափշտակեց հեռու տարաւ։ Որչափ որ ինք յուսահատական քաջարտութեամբ կը ջանար որ ետեւէն հանի, այնչափ ալ ալիքները զինքը կը հեռացընէին։

Երկայն տեսն մահուան հետ մըցելէն ետեւ, ծովին ափունքը նետուեցաւ, ուր զլուխը քարի մը զարնուելով, արեան մէջ թաթխաւած՝ կիսամեռ ինկած մնաց, մինչեւ որ գեղացի մը զինքն առաւ իր տռւնը տարաւ։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Որչափ որ ալ նոյն բարեսիրտ գեղացին իր ընտանիքովը մեծ ինսամք տարաւ կարուլոսին շուտով առողջանալուն, ի վերայ այսօր ամենայնի հիւանդութիւնը խիստ երկայն տեւեց։ Սաստիկ տենդ մը զինքը չէ թէ միայն շաբաթներով անկաղնոյն մէջ պահեց, հապա գրեթէ գերեզմանին եղերքը հասցուց։ Բայց նոյն վտանգալից շաբաթներն անցնելէն ետեւ, հիւանդութիւնը նոր կերպարանք մ'առաւ, Քիչ մը ետքը խելքը վրան դալով, Հեղինէին եւ եղբօրք վրայ տեղեկութիւն ուզեց. բայց ոչ ոք կրցաւ զինքը գոհ ընել, որովհետեւ ալիքները զշեղինէ իր ինկած տեղէն շատ հեռու ձգած էին։

Կարոլոս կ'ուզէր անձամբ Երթալ հենակնէ։

տակոտել . բայց գեռ շատ տկար քիւալուն ,  
թող չտուին : Իր ասախնջականը զինքը քիշ  
մը տփոփել տվելով , իր որդին գեղին  
շրջակայ տեղերը իրկեց , որն որ քիչ մը  
ետքը լուր բերաւ , որ մանկամարդ տիկին  
մը նաւարեկութենէ աղատեր , գեղի տան  
մը մէջ խնամուեր , եւ առողջանալով՝  
“Նիմ գարձեր է : Պաշտօնակալն առ լոյն  
վրայ շատ ուրախացաւ , եւ բառական զօ-  
րանալէն ետքը՝ ձի մը հեծաւ , Մորոյ կնոջ  
տունը գնաց :

Չեր քովք մանկամարդ տիկին մ' բնդ-  
ուներ էր Եղեր , բայց ներս մոնելուն  
պէս . անունը գիտէք :

— Անունը չհարցուցի . բայց զինքն առ-  
նելու համար “Նիմէն եկող Պարոնն իրեն  
Հեղինէ կը կանչեր :

Աս խօսքին վրայ Կարոլոսին աչուրներուն  
մէջ ուրախութեան նշոյլ մը փայլեցաւ :

— Ան Պարսնին ով ըլլալը գիտէք :

— Չեմ գիտեր . բայց կարծեմ թէ  
անունն էր Ռիշ . . . Ռիշոյ . . .

— Ռիշարտոյ :

— Հրամեր էր . Ռիշարտոյ : “Եոյն Պա-  
րսնը զտիկինն իր աղջկանը պէս կը սիրեր .  
կը ջանար զինքը միտթարել . տրտմու-  
թիւնը մկանցընել , եւ . . .”

— Տրտմութիւնը : Տրտմութեան պատ-  
ճառն ի՞նչ էր :

— Պաշտօնակալի մը մահը . որն որ  
կարծեմ ամուսինն էր :

Աւրեմն անիկայ մեռե՞ր է, դոչեց կարողս՝ աթոռի մը վրայ նետուելով, եւ ձեռուըներովն երեսը գոցելով. վասն զի գիտէր թէ նաւուն մէջ իրմէ եւ եղրօրմէն զատ պաշտօնակալ չկար. որովհետեւ մէկալ պաշտօնակախները Նարապոնէն ներս պիտի մտնէին :

Քանի մը բոպէ լուռ կենալէն ետքը՝ արտասուալից աշուըներն երկինք վերցընելով, Տէր Աստուած, դուն անոր ողորմէ, դոչեց :

Քիչ մ'ալ տիսուր մտածմանց մէջ ընկդմած մնաց կարողս, եւ ետքը ոտք եւ լաւ ու Մորոյ մօրն ըստ. Եղբայրս կենդանի գանելու ակնկալութիւն չունէի. անոր ալեաց մէջ թաղուիլը տեսած էի. եւ զինքը գտնելու համար մինչեւ հիմայ ըրած բոլոր ջանքս պարապի ելած էր: Բայց ձեր խօսքերն իր մահուան յիշատակը մաքիս մէջ նորոգեցին, եւ մէկէն աչքիս առջեւն եկաւ. իր եւ ընկերներուն ալեաց մէջ թաղուիլը :

— Աւրեմն մեր քավը թաղուած պաշտօնակալը ձեր եղբայրն էր:

— Աւյն, եղբայրս էր, որովհետեւ նաւուն մէջ մեր երկուքէն ուրիշ պաշտօնակալ չկար: Արդեօք քովէն բան գտնեւեցաւ:

— Քովէն միայն ժամացոյց մ'ելած էր, զորն որ ձեր Հեղինէ անուանած տիկնոց տուին:

— Ինքն ալ ընդունեցաւ :

— Նոյն իսկ ինք ետեւէ ինկաւ որ առնու : Մեզի կ'ըսէք որ զինքը նաւարեկութենէն աղատողը՝ նոյն Պարսնն էք . անոր համար ալ շատ անգամ թէ՛ հոս եւ թէ՛ դերեզմանին վրայ զինքը լացաւ : Հիւանդութեան մէջ ալ խելքը վրան չեղած ատենները ստէպ ստէպ . Ո՛հ , կարուս , կը գոչէք , ես եմ մահուանդ պատճառք :

ԽԵՂԾ օրիորդ , ըստու Կարուս՝ արտասուալից տչքով :

Կու լար , Պարսն , ըստու կինը , որն որ թէեւ լածներէն ու տեսածներէն՝ յայտնի բան մը չէք իմանար . բայց եւ այնպէս Կարուսին այլայլութիւնն ու ցաւն իր վրայ ալ մեծ աղդեցութիւն կ'ընէին ու սիրոր կը շարժէին :

— Այս , կու լամ , որովհետեւ ան մարդը՝ որուն մահուան վրայ Հեղինէ կու լար , մեռած չէ . ան ալ՝ իրեն պէս աղտած է :

— Ան Պարսնը կարելի է՝ գուք էք :

— Այս , ես եմ . իսկ ան թաղուաղ պաշտօնակալը , որուն դերեզմանին վրայ Հեղինէ այնչափ աղցունք թափիեր է , իմ եղբայրս՝ Գրոբն նաւուն նաւապետն էք . . . Բայց ան տիկնոջ վրայ ուրիշ ըսելու բան չունիք :

— Հիւանդութեան ստենիսլքը գլուխը չեղողը՝ շատ հեղ ըսածք չիդիտեր : Անոր համար տենդին սաստկացած ժամա-

նակն ըստ զանազան խօսքերուն այնչափ  
միտ չէի դներ: Բայց կը յիշեմ որ Մոն...  
Մոն... (անունն աղէկ մը չեմ յիշեր)  
անուամբ մէկու մը դէմ կը խօսէր, եւ  
զինքը նենգաւոր ու անիրաւ կը կոչէր.  
Եւ երկնից գրէմինդրութիւնը կը սպառ-  
նար, եթէ զինքն աղաս չթողու: Ըստ  
անգամ ալ կը կանչէր որ ինչ իրաւամբ  
զինքը հեռու տեղ կը տանին, եւ կը հրա-  
մացէր որ ցամաք հանեն: Աս եւ առաջ  
նման խօսքերէն՝ ես այնպէս գուշակեցի, որ  
նոյն տիկինն իր կամացը դէմ ու բռնի  
նաւուն մէջ կը գտնուէր:

Կարողս ուժգնութեամբ մը ձեռքը  
ճակատը զարկաւ, աշուշները սաստիկ  
ցաւ եւ միանդամայն մեծ որտմառութիւն  
կը յայտնէին: Քանի մը վայրկեան լուռ  
կենալէն ետքը, Մորոյ մօրը հարցուց թէ  
արդեզր նաւուն մէջիններէն՝ աղասաղ ու-  
րիշ մարդ կայ:

Չէ, պատասխանեց կինը. ալիքներուն՝  
մը կողմերը ծովեզերք ձգած բոլոր նաւ-  
աստիներն ու ճամբորդներն արդէն մե-  
ռած էին:

Դարձեալ լուռթիւն տիրեց: Կարողս  
նախ լուռթիւնն աւրելով, Ան տիկինն,  
ըստ, անշուշա իր կամացը դէմ՝ այնպիսի  
բաներ յայտներ է, որ ընդ միշտ ծածուկ  
պէտք էին մնալ: Ուստի կ'աղաչէմ որ  
ինչպէս մինչեւ հիմայ յստ խօսքերնիդ  
բանի տեղ չէք դրեր, նոյնպէս ասկից

վերջն ալ չգնէք, եւ ամենեւին մարդու  
մը չզբուցէք։ Տեղո համնելուս պէս՝ կը  
փութամ առ ձեզմէ ինդրածիս փոխարէն  
ձեզի իմ երախտագիտութիւնս գործքով  
իսկ յայտնել։

— Ալրնաք բոլորովին հանդարս ըլլալ։  
Երբեք չեմ ուղեր խեղճ տիկնոջ մը՝ խել-  
քը զլուխը չեղած ժամանակ ըսածները՝  
չորս կողմը հրատարակել։ Իսկ ձեզի անոր  
համար պատմեցի, որովհետեւ ձեր անոր  
վրայ ունեցած գութէն կը զուշակեմ որ  
հետաքրքրութիւննիդ եպերելի չէ, մա-  
նաւանդ որ զինքը մահուընէ ազատելու  
համար՝ ձեր կեանքը վտանգի մէջ դրեր էք։

Բայց կը խոստովանիմ որ ձեր անոր  
ունեցած սիրոյն արժանի էք։ Գուցէ տա-  
կաւին չեք զիտեր հոսկից չզացած՝ բրած  
բարեգործութիւնը։

— Բոլոր զիտցածո՞ւ ձեզմէ լսածս է։  
Այսպէսով տակաւին չպատմած բաներնիդ  
չեմ կրնար զիտնալ։ Եւ կ'ազաշեմ որ  
զիտցածնիդ յայտնէք։

— Դժբախտ նաւարեկելոց մէջ մէկը  
կար, որն որ յառաջագոյն իր երկու զաւ-  
կրներն ինծի յանձնած էք։ Մէկը՝ որ երկու  
տարւան մանչ մըն էք, մեռաւ Հեղինէ  
տիկնոջ զիրկը։ որն որ հիւանդութեան  
ատեն զինքն արտաքոյ կարդի մեծ սիրով ու-  
մօր պէս կը ինամէք։ Իսկ մէկալը՝ որն որ վեց  
տարւան աղջիկ մըն է, նոյն տիկինն իրեն  
որդեզիր բրաւ եւ առաւ հետք' նիմ՝ տարաւ։

Առ խօսքերուն վրայ հարսլոս շատ զարմացաւ : Զեր կրնար հասկընալ թէ ինչպէս հարստութիւն շունեցող մանկամարդ մը՝ իրեն բռլորսվին անձանօթ եղող աղջիկ մը որդեգիր կրնայ առնուլ : Մաքին մէջ ասոր հաւանական պատճառ մը փրնուելով եւ շկրնալով զտնել . Մորոյ կնոջ հարցուց թէ աս բարերարութեան պատճառն ի՞նչ կարծէ որ բայց :

Ես ալ չեմ զիտեր , պատասխանեց կինը : Բայց դուցէ տեսնելով որ հայրը մեռած է եւ մայրը զինքը թող տուած , ես ալ քսվո չեմ կրնար պահել . ոիբրաք շարժած եւ ուզած ըլլայ , այսպիսի բարեգործութեամբ մը իր Աստուծմէ ընդունած շնորհքին եւ մահուան վտանգէն աղատելուն դիմացը շնորհակալութիւնը բայտնել :

Առ մեկնութիւնը զկարոլոս շագեցուց բայց հոգ չըրաւ , զիտնալով որ զիւրաւ կրնայ աս գաղտնիքին լուծումն ընդունիլ , Ուստի դարձեալ Մորոյ կնոջ ապսպիւլով որ Հեղինէկէն լսածներն ամենեւին մէկու մը չշայտնէ , եւ նորէն խոստանալով որ ան օրիորդին ըրած ծառայութեան համար զինքն առատութեամբ կը վարձատրէ . Ճի հեծաւ եւ դէպ ի Մանքէլիէ ճամբայ ելաւ :

Իր նաւարեկութիւն կրելը . մահուընի աղատին ու երկայն հիւանդութիւն բաշելէն ետքը առողջանալը՝ նամակով ձնու-

զացը ծանուցած ըլլալով, ուստի հաս-  
նելն անոնց վրայ արտաքոյ կարդի աղջե-  
ցոթիւն չորաւ։ Արահը մոտած ժամանա-  
կը՝ մայրն ու քոյրը տեսաւ, որ սդոյ զգեստ-  
ներ հագած՝ տիսրութեամբ նստած էին,  
աչուրնին՝ նոր թափուած արցունքներէն  
կարմրցած։ Աեպուհն ալ սրահին մէջ մե-  
ծաքայլ կ'երթար կու դար, երրեմն  
կնոջը եւ երբեմն աղջկանը վրայ սիրալիք ու  
ցաւաղին կերպով նայելով։

Ա երջապէս եկար, գոչեց սեպուհը՝ որ-  
դւոյն, որչափ ժամանակ է որ դարձիդ կը  
սպասեմ։ Եւ հազին մայրն ու քոյրը զրր-  
կելու ժամանակ թող տալով, զինքն ա-  
ռաւ խուցը տարաւ։ “Եթոս մոնելուն պէս՝  
դուռը զգուշոթեամբ գոցեց, եւ աչուր-  
ներն որդւոյն վրայ սեւեռեց, այնպիսի  
կերպով մը՝ իրրեւ թէ կ'ուզէր սրտին  
խորքը թափանցել։ Ետքը սկսաւ հետր  
խօսիլ, բայց այնպիսի այլայլած ու խոռ-  
ված ձայնով եւ այնշափ շփոթութեամբ։  
որ կարոլոս շուտ մ'իմացաւ թէ արտաքոյ  
կարդի ծանրակշիռ բան մը պիտի յայտնե-  
իրեն։”

Պոււն հիմայ իմ միակ որդիս ես, ըստ  
սեպուհը, եւ մեր տան միակ յաջորդը։  
Կը յուսամ որ մեր տան պատիւր միշտ  
հաստատուն կը պահէս։

Ասոր տարակոյս չկայ, հայր, պատաս-  
խանեց կարոլոս զարմացմամբ։

— Հասարակաց համարման վրայ ունե-

ցած իրաւունքնիս, աշխարհքիս մէջ ունեցած աստիճաննիս պէտք է որ պաշտպանես :

— Իմ կամքս ալ ան է : Աը յուսամ որ իմ գործքերովս երբեք մեր նախնեաց անունը չեմ ազարտեր :

Սեպուհն աս խօսքին վրայ սարսաւց : Կարոլոս, բառ դողդոջուն ձայնով մը, կը պահանջեմ՝ որ ինձի խօսք տաս թէ երբեք յանձն չես առնուր հրաժարիլ մեր . . . մեր . . . ամեն ստացուածոց վրայ ունեցած իրաւունքէն, երբեք աչքէդ չես հեռացըներ ընկերութեան մէջ ունեցած բարձր աստիճաննիս . . . վերջապէս մեր բոլոր առաւելութիւնները կը պաշտպանես, ամեն կերպ միջոցներով . . . ամեն կերպ . . . :

— Պատուաւոր անձի մը վայելող ամեն միջոցներով, որովհետեւ անուննիս ու աստիճաննիս մեր պատուէն կախում ունի :

Սեպուհն աչուըները ձեռքովը գոցելով, Ո՞հ, Կարոլոս, զոչեց, եղբայրդ . . . խեղճ եղբայրդ, մեռաւ . . . անոր համար մեռաւ, որպէս զի . . . :

Ասկից աւելի շերցաւ խօսիլ : Երեսները մեռելի գունատութեամբ մը ծածկուեցան. ձեռքը որդւոյն երկընցուց, եւ Երթաւ բարսվ ըսելով, դուռը ցուցուց իրը թէ հրամայելով որ դուրս ելլէ :

Կարոլոս խռ.սված, զարմացած, աչուզողի մէջ ինկած՝ հնազանդեցաւ : Գուրս ելած ժամանակը՝ Օրդանս գիմացն եկաւ :

Ե՛ղայր, գոշեց խեղճ օրիորդը, բան  
մ'իմացա՞ր :

— Աչինչ : Կը յուսայի որ հայրս իր  
ծածուկ տրամութեան պատճառը կը յայ-  
տնէ : Բայց ամենեւին բան մը չըսաւ :

— Եղուարդայ մեռնելէն, մանաւանդ  
թէ անոր գէոդ ի Պատլոն ճամբայ ելլելէն  
վեր, հայրս յառաջուրնէ աւելի տիսուր է  
և յառաջուրնէ քիչ կը խօսի . իրեն եղած  
հարցումներուն պատասխան տայու ալ  
ըսայ, միավանկ բառեր կը զբուցէ : Ճառ  
անդամ՝ մնոր իրմէ կը խօսի, և ժամերով  
զլուխը ծռած կը պարտի : Կարծէս թէ  
երկնից անէծքն իր վրայ եկած է :

— Աստուծոյ աղաւենք, քոյրս, որ ի-  
րեն զթայ եւ զինքը մսիթարէ :

— Զեմ կարծեր որ երկայն ժոմանակ  
կարենայ ապրիլ : Առողջութիւնն երթա-  
ռով կը կորարնցընէ . միաքը կը շփոթի . ա-  
նանկ կը վարուի, որ կարծէս թէ մայրս ու-  
էս իրեն համար օտարական ենք . . . Ո՞հ .  
զեռ կը յիշեմ վերջին անդամ Եղուար-  
դայ մեզմէ բաժնուած օրը : Հօրս հետեր-  
կու . ժամէն աւելի սենեակը փակուած  
մնացին, և երբ որ հոնկից ելաւ ու մեզի  
վերջին բարեւը կու տար, երեսին վրայ  
այնպիսի վայրենութիւն մը կը տիրէր, որ  
վախցայ : Այնչափ խոսված ու այլայլած  
էր, որ հազիւ մէկ երկու աննշանակ խօսր  
կրցաւ բաել :

Տէ՛ր Աստուծած, գոշեց Կարուս . . .

սահատական ձայնով մը , եւ գլուխը կրծո-  
ցը վրայ ծռելով՝ սկսաւ . հեծ կլտալ :

Խ՞նչ ունիս . Եղբայր , հարցուց անձ-  
կութեամբ Օրդանս :

Բան չունիմ , պատասխանեց Արոլոս  
խորին հառաջմամբ՝ զարհութելի երազէ մը  
արթնցածի պէս , եւ խուզը քաշուեցաւ :

Երկրորդ օրը՝ առառն ձագելուն պէս  
դէպ ի Նիմ ճամբայ ելաւ :

### ԳԼՈՒԽ ԻԿ .

Արոլոս Նիմ հասածին պէս . ձին  
Մոնրոպէրեան ապարանքը թող տալով .  
սկսաւ դէպ ի Պր . Որիշարտոյին տունն եր-  
թալ : Արդէն տան մօտերը հասած էր . մէջ  
մ'ալ մտածեց որ կրնայ ըլլալ թէ իր տե-  
սութիւնը վտանգաւոր ազդեցութիւն ընէ  
Հեղինէին վրայ , որն որ զինքը մեռած կը  
կարծէր : Ուստի սկսաւ ետ դառնալ . միտ-  
քը գնելով որ զվաճառականը զրով մը իր  
ապարանքը կանչէ :

Հազիւ թէ քիչ մը տեղ յառաջ գա-  
ցած էր , երբ որ տեսաւ թէ առջեւէն տի-  
կին մը կ'երթայ՝ հետը պղտիկ աղջիկով  
մը , եւ իրեն անանկ երեւցաւ որ ան տի-  
կինը Հեղինէն ըլլայ : Որպէս զի չճանչուի .  
վերարկուին մէջ աղջէկ մը փաթթուեցաւ .  
եւ ճամբան յառաջ կը տանէր . փոյթ  
տոննելով որ միշտ ետ մնայ :

Ա երջապէս տեսաւ որ Հեղինէ զրավա-

ճառի մը խանութեր մտաւ : Օրիսրդը դու-  
ռը դօցելուն պէս՝ ինք խանթին մօտեցաւ,  
ստուգելու . Համար որ իրօք ան է՝ թէ  
չէ : Զգուշութեամբ դրան ապակիներէն  
նոյելով , թէպէտ հասակէն ու ձեւէն դու-  
շակեց որ սխալ չէ տեսեր , բայց չկրցաւ  
կատարելուպէս ապահովնալ , որովհետեւ  
ինչպէս վերը յիշեցինք . Հեղինէ կռնակը  
դրան դարձուցած՝ կարդալու կը զբազէր :  
Ուստի առանց տեսնուելու՝ երկայն առեն  
կրցաւ զանիկայ դիտել : Բայց երբ որ  
Մաննիկ մեր դիւցազնուհւոյն մտադրու-  
թիւնը զարթուցանելով , օրիորդը գլուխը  
դէպ ի դուռ դարձուց , կարուս շուտ մը  
մէկդի քաշուեցաւ եւ ապարանքը դնաց :

Անմիջապէս զիր . Ռիշարտոյին տոմանկ  
մը դրեց ու ազաշեց որ իրեն դայ : Վաճա-  
ռականը շուտ մը դարսվ . կարուս զինքը  
մեծ սիրով ու պատուավ ընդունեցաւ,  
եւ Հեղինէին ինչպէս ըլլալը հարցուց :

Ազ առողջ է . պատասխանեց զիր .  
Ռիշարտոյ . բայց կարծեմ աւելի աղէկ վե-  
ճակի մէջ կ'ըլլար . եթէ իմ հիմնյ դիտ-  
ցածս՝ ինք ալ դիտալու ըլլար :

— Ուրեմն միտքը դրած է որ ես մեռած  
եմ :

— Այս . ինչպէս ձեր տոմանկն ընդու-  
նելէն յատաջ՝ ես ալ նոյն կարծիքն ու-  
նէի : Ըստ աղէկ ըրեր էք , զարո՞ն , որ ան-  
ձամբ մեզի չէք եկեր , ինչպէս որ իսկզբան  
միտք ունիր եղեք : Պէտք է որ աս ուրախալի

լուրը զգուշութեամբ և կամաց կամաց ի-  
մացընենք Հեղինէին :

— Իրեն դէմ եղած բռնութեան պատ-  
ճառը կուահած է :

— Որովհետեւ զիս իրրեւ բարեկամ էւ.  
իրրեւ հայր կը նկատէ . ինձի յայտնեց  
որ գլուխն եկածը՝ Առնբողեր նաւապետին  
դաւաճանութեան դօրծքը կը համարի :

— Բայց բան մ' իմացերէ թէ ինչ նպա-  
տակաւ եղբայրս աս եղեռնագործութեան  
ձեռք զարկերէ :

— Զէ , բան մը շիգիտեր : Առաջին  
անդամ զինքը նաւուն մէջ տեսած ատեն ,  
հոս ապարանկին մէջ անոր իրեն հետ վա-  
րուելու կերպը միտքն ինկեր է , եւ վախ-  
ցեր է որ շրւայ թէ զինքն աս եղանակու-  
ուզէ ստիպել հետը կարգուելու : Բայց  
ձեր եղբօրը կրկին կրկին տուած ապահո-  
վութենէն իմացեր է որ ամենեւին այն-  
պէս միտք շունի : Եղբայրնիդ միանգամայն  
ան ալ ըսեր է իրեն՝ որ կարելի է թէ աս  
բանիս պատճառն օր մը իմանայ :

Կարուս վայրկեան մը տիսուր մոտած-  
մանց մէջ ընկղմած մնալէն ետքը , խան-  
դաղատանօր Պր . Ռիշարտոյին ձեռքը  
բռնելով եւ տրտմութեամբ անոր նայե-  
լով , մարտն , ըստու , ինձի անանկ կ'ե-  
րեւայ որ Հեղինէին վիճակը ծածկող մութ-  
քողին մէջ թափանցելու վրայ եմ . զուցէ  
ալ հեռու չէ ան օրը՝ որ նոյն քօղը բռ-  
լորովին կը վերնայ : Բայց , Աստուած իմ ,

ինչպիսի ցաւ, ո՞րչափ վիշտ, ի՞նչ ամօթ պիտի պատճառի ասով ընտանիքի մը, զորն որ պէտք եմ սիրել եւ մեծարել. այնպիսի ընտանիքի մը՝ որ . . .

Աս խօսքերուն խեղճ երիտասարդը սկսու վարանիլ, աչուըները չորս կողմը գարձուց, իրրեւ թէ վախնալով որ ըսելիքն ուրիշ մարդ չլէ, Ետքը գարձեալ Պր. Ռիշարտոյին նայեցաւ, որն որ անձկութեամբ մը անոր շարժմանց միտ կը դնէր:

Պարսն, Պարոն, գոշեց վաճառականը՝ սաստիկ այլայլութեամբ. ան սոսկալի դաղտնիքը ձեզի պահեցէք. ես չեմ ուզեր իմանալ: Հեղինէ ալ յանձն չ'առնուր իմանալ. թէեւ անով իր ընտանեաց անունն ու հարստութիւնը կարենայ ձեռք բերել:

— Ինչու համար:

— Վասն զի աս նպատակին շիկրնարութիշ կերպով հասնիլ, բայց եթէ, ինչպէս դուք կ'ըսէք, ուրիշ ընտանիք մը թշուառութեան եւ յուսահատութեան մէջ ձգելով:

— Ո՞չ, Հեղինէ միշտ բարեսիրտ եւ զգուշաւոր է, իր մահուչափ թշնամեացը թողութիւն տուած է: Այս, կը հաւատամ որ իր երջանկութիւնն ուրիշնի դրժրախտութեամբը չ'ուզեր գնել: Բայց, Պարոն, նախախնամութիւնն իր վրայ կը հսկէ, եւ աստուածային արդարութիւնը երրեք յանցանիքն անպատիմ շիթողուր: Կրնայ թոյլ տալ որ անմեղութիւնը քիչ

մը ժամանակ հարստահարի. Եւ հարստահարիչք յաղթական բլան. բայց վերջապէս իրուունքը կը յայտնուի. Եւ ան ատեն վայ անոնց՝ որոնք կը մոռնան թէ երկինքն անմեղութեան վրէ ժխնդիր մը կայ :

Ուրեմն նախախնամութեան թողունք հարստահարեալ անմեղութեան վրէ ժը խընդրելու. Եւ իրաւունքը յայտնելու հողը : Եստուած ային արդարութեան ձգենք՝ որ ուղած ատենքը Հեղինեին դարձլուէ իր իրաւունքները : Ան ատեն մեր բարեկամը կրնայ եղածը հանդարս սրտով նկատել. սրովհետեւ, ինչպէս ըսի, աւելի կ'ուզէ մեռնիլ, քան թէ միտկ անձի մը վնասովը մեծամեծ պատիւներու Եւ հարստութեան հառնիլ :

— Աս զգած մունքներն իրեն մեծ պատիւ կ'ընեն. Ես ալ չեմ ուզեր իր կամացը դէմ վարուիլ : Բայց որովհետեւ խոհեմութիւնը կը պահնջէ որ ձեռքերնէս եկածն ընենք՝ մեր բարեկամն ամէն կարելի վտանգներէն պահելու, անոր համար կը կարծեմ՝ թէ պէտք է որ կարելի եղածին չափ ծածկուած մնայ : Իրեն թշնամի կարծած մարդու շատ չ'անցնիր՝ առ քաղաքը կը հասնի : Պիէտք չէ որ զօրիորդը տեսնէ : Ապահով եմ որ զինքը մեռած կը կարծէ . շատ վտանգաւոր բան կ'ըլայ, Եթէ սիսալածն իմանայ . . . : Հիմակ ըսէք, Պարոն, Հեղինեին որդեղիր առած պղտիկ աղջիկն ով է :

— Իր ըրածն այսպիսի զարմանալի գործք մըն է, որ մարդուն հաւատալիքը չիդար:

Աս բաւ ու Մարոյ կնոջ մեկնել չկրցածն իրեն պատմեց: Կարուսս զարմացման աղաղակ մ'արձակեց, երբ որ իմացաւ թէ ինչ պատճառաւ գործեր է Հեղինեւ ան սրանչելի եղբայրսիրութեան գործքը, որն որ խեղզրան իրեն՝ եթէ անպատեհ չէ նէ, դէժժ անխսհեմ բան մ'երեւցած էր:

Աղեկ դիտէի որ, բաւ, քրիստոնէական եղբայրսիրութիւնը հրաշալի գործքեր կատարել կու տայ, եւ թէպէտ զշեղինել ըստ բաւականին կը ճանչնայի, այսու ամենայնիւ չէի կարծեր որ այսպիսի գործք մը գործէ:

Աս խօսակցութիւնը կէս ժամի մը չափ ալ տեւեց: Աերջապէս որոշուեցաւ որ Կարուսս ետ դառնայ, եւ իր մահուքնէ ազատած ըլլալը՝ Հեղինեին չըայտնուի:

Պաշտօնակալը շուտ մը ճամբայ երաւ, ոլր, Անիշարտոյ ալ իր տունը դարձաւ:

Ճամբան երթալու ատեն՝ կնոջ մը հանդիպեցաւ, որուն պատառած զգեստներէն կ'իմացուէր որ յետին թշուառութեան մէջ է: Եսոյն կինը փողոցին մէկ անկիւնը նոտած՝ անցաւորներէն ողորմնութիւն կը խնդրէր: Երեսը սեւ ու խորշումած էր, աչուքները տխուր ու վհատեալ, եւ դողդոջուն ձեռքը հազիւ կրնար հաստատուն բռնել ան տաշտը՝ որուն մէջ անցաւորք ստակ կը ձգէին: Երբ որ զՊլր,

Արիշարտոյ տեսաւ. որուն մարդասէք ընաւ-  
որութիւնը կերպարանքէն կ'երեւար,  
ցաւադին ձայնով մը՝ Աստուծոյ սիրոյն  
համար ողորմութիւն խնդրեց։ Ա աճառա-  
կանը՝ որ Աստուծոյ անուամբը խնդրուած  
ողորմութիւնը երբեք չէր զանար, մուրաց-  
կանին մօտիկցաւ, եւ ձեռքը գրպանը խո-  
թելով՝ անոր ուրտեղացի ըլլալը հարցուց։  
— Շատ հեռաւոր տեղէ եմ, Անժուէն  
եմ։

— Բայց հնչումդ հարաւային կող-  
մանց արտաքերութեան մօտ է։  
— Կարելի է, Պարոն, որովհետեւ եր-  
կայն ժամանակէ վեր աս կողմերը կը ընա-  
կիմ։

— Ի՞նչպէս եղաւ. որ ասանկ ողորմե-  
լութեան մէջ ինկար։

— Ո՞չ, Պարոն, երկու տարի է՝ որ է-  
րիկո իբ գէշ վարմունքովը զիս ստիպեց իր-  
մէ բաժնուելու։ Խել մը ժամանակ Հե-  
լուետիա պտղտեցայ, յուսալով որ կարե-  
նամ գործք մը գանել։ Ա իմակէս կը տես-  
նէք որ ակնկալութիւնս ինչպէս պարապի-  
ելաւ։ Բայց զիս աս վիճակին մէջ ձգող  
թշուառականն ալ սոսկալի եղանակա-  
պատիժը կըեց, ողորմելութեան մէջ մե-  
ռաւ։

— Զաւակ ունի՞ս։

— Երկու զաւակ ունիմ. խեղճերը, ա-  
նօթութենէն պիտի մեռնին, որովհետեւ  
իրենց տալու հաց չունիմ։ Ո՞չ, Պարոն,

Աստուծոյ արդարութիւնը պրշտի զարհութելի է :

— Աստուծոյ արդարութենեն վախնաւու ի՞նչ պատճառ ունիս :

— Ան պատճառը՝ զորն որ մեծ ոճիր մը գործող մարդը կ'ունենայ :

— Բայց թէ որ ինք զինքդ մեծ յանցանքի տէր կը սեպես, մարդիկներուն դիմելու տեղ՝ Աստուծոյ դիմէ, որն որ յանցանքիդ թողութիւն շնորհելով, աս աշխարհքիս մէջ ալ կրնայ քեզի տակաւին երջանիկ օրեր պարզեւել :

— Ո՞չ, Պարոն, եթէ յանցանք անուանածնիդ՝ միայն իմ վրաս մնացած ըլլար, գիտեմ որ ապաշխարութեամբ կրնայի թողութիւն գտնել . բայց ինձմէ զատ՝ ուրիշներու համար ալ սոսկալի հետեւութիւններ ունեցած է, եւ ինչպէս գիտէք, բաւական չէ որ մարդո գործած չարիքին վրայ զզջայ, այլ պէտք է նոյնին հատուցում ալ ընել :

— Զքեզ ով կ'արգելէ :

Մուրացիկ կինը սկսաւ վարսնիլ, եւ խորին հառաջանք մ'ընելով, լուռ կեցաւ : Պլր. Ռիշարտոյ իրմէ պատասխան մը շընդունելով, հարցուց թէ ուր կը բնակի :

— Խեղճութեանս վրայ զթացողներուն տուած բնակութենէն ուրիշ տեղ չունիմ : Երբեմն ալ հարկ կ'ըլլայ որ զիշերները բաց օդի մէջ անցընեմ :

Տղաքդ տեսնել կ'ու զէի, բայտ վաճառաւ :

կանքը, կարելի որ իրենց տեղ մը կրնամ՝ հոգալ:

— Աստուած ձեր զթութեան համար զձեղ վարձատրէ, Պարոն: Կ'ուղեք որ տղաքս ձեզի բերեմ:

— Զէ! կիրակին օրը իրենց հետ մայր եկեղեցւոյն մեծ դրան դիմացը գտնուեւ: Պատարագէն ելած ժամանակս՝ հետդ կը խօսիմ եւ կը յայտնեմ թէ իրենց համար ի՞նչ կրնամ ընել:

Աս ըսելէն ետքը՝ յառաջադոյն սուլ ուղած դանկը դրապանը դրաւ, ու հինգ ֆրանգնոց մը հանելով՝ ամանին մէջ ձգեց:

Բարի կին, ըստ իրմէ բաժնուելու առեն, թշուառութեանդ բուն պատճառը չուղեցիր զբուցել. եռ ալ չեմ ուղեր զքեզ ստիպել: Բայց յանցանքդ ի՞նչ որ ալ է նէ, մի մոռնար որ Աստուած ամենակարող եւ ամենաբարի է: Գործած չարիքիդ հասուցում ընել չկրնալուդ վրայ կը ցաւիս. քու չունեցած միջոցներդ Աստուած ունի. եւ եթէ անկեղծ սրտով իրեն դիմելու ըլլաս, նոյն միջոցները քեզի կը մատակարարէ թէ քու եւ թէ ան անձանց երջանկութեան համար, որոնք զուցէ գործած յանցանքիդ հետեւութիւնները մինչեւ հիմայ կը կրեն:

Մուրացիկ կնոջ աչու ըներն արցունքով լցուեցան, եւ կրկին կրկին իր բարերարին շնորհակալ եղաւ:

## ԳԼՈՒԽ Ի՛Ը.

Հետեւեալ կիրակին Հեղինէ Մաննի-  
կին հետ առառուանց կանուխ պատարադ  
տեսնելու համար անանկ եկեղեցի մը դնաց .  
ուր քիչ մարդ կ'երթար . եւ շուտ մը  
տուն դարձաւ , որպէս զի Պր . Կարոլոսին  
ու Պր . Արիշարտոյին մէջ որոշուածին պէս՝  
ան ծածուկ թշնամիէն զգուշանայ . որմէ-  
իրեն համար կը վախնային :

Խսկ Պր . Արիշարտոյ սովորական ատե-  
նին առանձին մայր եկեղեցին դնաց . եւ  
ասսուածային պաշտաման ներկայ զըտ-  
նուեցաւ : Դուրս ելած ատենը՝ տեսաւ որ  
մուրացիկ կինը հոն իրեն կը սպասէր .  
Այս կինը սաստիկ արցունք կը թափէր .  
Եւ երբեմն երրեմն բարձրաձայն կը հեծե-  
ծէր : Ալրան յուսահատութիւն տիրած  
էր եւ սաստիկ ջցաձզութեամբ կը շար-  
շարուէր :

Ամինը զՊր . Արիշարտոյ տեսածին պէս .  
ողբերը դադրեցուց , եւ վաճառականին  
բրած նշանին հետեւելով , սկսաւ ետեւէն  
երթալ : Այսպէսով քանի մը ամսոյի փո-  
ղցներէ անցան , եւ խել մը տեղ հե-  
ռանալէն ետքը՝ երբ որ բոլորովին առան-  
ձին կողմ մը հասան , վաճառականը լուու-  
թիւնն աւրելով , ըստ .

Քարի կին , կ'երեւայ որ զլուխդ նոր  
դժբախտութիւն մ'ալ եկեր է :

— Հրամեր էք, Պարոն, այնպիսի մեծ  
դժբախտութիւն մը, որուն մարդկային  
կարողութիւնը չիկրնար դարման ընել :

— Աւքեմն Աստուծոյ ամենակարողու-  
թիւնը բանի տեղ չե՞ս դներ :

— ԱՇ. մահուանէ յափշտակուող  
զաւակս նորէն կենդանացընելու համար  
Աստուած հրաշք չ'ըներ :

— Ի՞նչ, զաւակդ մեռեր է :

— Այս, զաւակներէս մէկը, իսկ մէ-  
կալը . . . :

Սաստիկ ցաւէն հաղիւ այսչափ կրցաւ-  
րսել : Պը, Ռիշարտոյ տեսնելով որ նորէն  
լալու կը սկսի, եւ չուզելով անցաւորաց  
մուադրութիւնն արթքնցընել, մօւրացկա-  
նին աղաչեց որ ձայն չհանէ : Կի՞նը հնա-  
զանդեցաւ :

Երբ որ վաճառականին տունը հասան,  
տանտէրը զմուրացիկը պարտէզը տարաւ :  
Նոյն միջոցին Հեղինէ ալ Մաննիկին հետ  
հոն կը գտնուէր : Երկուքն ալ ծաղկի մը  
վրայ ծռած եւ կռնակնին դրան դարձու-  
ցած, ծաղկին վրայ կեցող թիթեռնիկի  
մը գեղեցիկ գոյները կը նկատէին :

Արշափ որ ալ Մաննիկ ասով կը զմայ-  
էր, ի վերայ այսր ամենայնի ոտքի ձայն  
լսելով, վեր ելաւ եւ դարձաւ ետեւ ը-  
նայեցաւ :

Աղջկան ետեւ դառնայն ու մօւրացիկ  
ինո՞ց՝ Մաննիկ, աղջիկս, Մաննիկ, դոչե-  
րով՝ մարած գետինն իյնալը մէկ եղաւ :

Հեղինէ ալ նոյն գոշիւնը լսելով՝ ոսր  
ելաւ։ Ան ալ մարած կնոջ նայելուն պէս՝  
Աննան է, գոշեց, եւ այնպէս այլայլի-  
դաւ, որ գոյնը նետեց եւ չորս կողմը նե-  
ցուկ մը կը փնտռէր որ չիյնալ։ Պր + Ուի-  
շարտոյ քովի նստարանը ցուցուց, որուն  
փրայ նստեցաւ մնաց Հեղինէ։

Մուրացիկը՝ որն որ իրզը Աննան էր,  
ժամանակ չէր ունեցած զՀեղինէ ճանչնա-  
յու։ Արդ վաճառականը մտածելով որ ե-  
թէ արթքնցած ժամանակը՝ մէկէն զօրիոր-  
դը տեսնելու եւ ճանչնալու ըլլայ, առ  
բանս կրնայ անոր վրայ խիստ վտանգաւոր  
ազգեցութիւն ընել, առաւ զինքը ներս  
խոթեց, եւ ամուսինը Հեղինէին քովը  
խրկեց, որպէս զի հարկաւոր եղած օդնու-  
թիւնն ընէ։

Մաննիկ մօրն ետեւէն գացած էր-  
րայց չհամարձակելով անոր տարուած  
խուցը մօնել գրան առջևը կեցած՝ կո-  
յար։

Պր. Ուիշարտոյ աղախիններուն օգնու-  
թէամբն Աննային խելքը գլուխը բերաւ։  
Երբ որ գժբախտ կինն աշուքները բացաւ,  
առանց բառ մ'ըսելու եւ առանց չորս  
կողմն եղողներուն միտ դնելու, ոկատ առ-  
դին անդին նայիլ։

Ազջիկդ կը փնտռէս, հարցուց վաճա-  
ռականը։

— Հրամեր էր. Մաննիկո, ոիրեյի Ման-  
նիկո։

Մաննիկ՝ որն որ դռնեն մտիկ կը ընէր .  
աս խօսքերը լսելով , կարծեց որ ղինքը կը  
կանչեն եւ ներս մտաւ : Մայրն որ տեսաւ ,  
ապշած մեաց . երկայն ժամանակէ ի վեր  
ղինքը տեսած շունէր , եւ նոյն միջոցին  
դժբախտ կնոջ կերպարանքն այնպէս փո-  
խուած էր , որ աղջիկը չէր կընար հաւա-  
տալ թէ անիկաց իր մայրն ըլլայ :

Աննա զարմանքէն եւ ուրախութենէն՝  
բերնէն խօսք մը չէր կընար հանել . աղ-  
ջկան կը նայէր , եւ բազուկները տարածած  
կը կենար , իրրեւ թէ զանիկաց կանչելով՝  
որ դայ անոնց մէջ նետուի :

Մօտ եկուր . աղջիկս , ըստ վերջապէս  
որ . Ռիշարտոյ . նայէ մայրդ է : Եւ ձեռ-  
քէն բռնելով՝ մօրը տարաւ , որն որ օաս-  
տիկ գորովօվ ու գրեթէ կատաղութեամբ  
մը սրտին վրայ ձնշեց :

Երբ որ խեղճ կինը քիչ մը հանդար-  
տեցաւ , որ . Ռիշարտոյ իրեն ըստ .

Կը տեսնես՝ որ ներկայութիւնդ աղ-  
ջկանդ վրայ ինչ ազդեցութիւն ըրաւ . պէտք  
չէ որ երկայն ատեն հոս գոց օդին մէջ  
մնայ : Հիմայ ղինքը քիչ մը պարտէղ տա-  
նիմ . ետքը նորէն քովդ կը բերեմ : Դուն  
ալ աւելի հանդարտ կ'ը լաս , եւ ան ա-  
տեն կընաս աւելի եւս հաճութեամբ վայե-  
լել աղջիկդ դտնելող վրայ զգացած ու-  
րախութիւնդ :

Իրաւոնք ունէր վաճառականը զՄան-  
նիկ հեռ ացրնելու . վասն զի Խննոցին հի .

ծեալ ու տկար կերպարանքը եւ հագած ցնցութի ու աղտոտ զգեստներն աղջկան վրայ արտաքոյ կարդի աղդեցութիւն ըրած էին:

Մօրը քովեն հեռանալէն ետքը, ՈՇ, Պարոն, ըստ վաճառականին, անիկայ իմ մայրս չէ: Ատոյդ է՝ մայրս քիչ անդամ տեսած եմ. բայց կը յիշեմ որ այսչափ պառաւ չէր, եւ ոչ ալ ասանկ հին ու գէշ զգեստներ հագած էր:

— Ըսածդ կարելի է. աղջիկս. բայց պէտք է դիանաս որ աշխարհքիս վրայ ամէն մարդ կը ծերանայ: Խակ մօրդ վրայի ցնցութի զգեստները՝ միայն ան կը ցուցընեն, որ անիկայ շատ տառապանք քաշեր է:

— Արովհետեւ Հքամինքնիդ կ'ըսէք որ մայրս է, կը հաւատամ: Բայց զինքն ի՞նչպէս դասը: Հայրս ինձի ըստ էր թէ անիկայ օտար ու հեռաւոր երկիրներ դացած է:

— Իրօք ալ օտար երկիրներէ եկած է: Աստուած զինքը հոս ըերաւ:

Եցրը որ ուարտէղ մոտան, Պր. Ռիշարտոյ տեսաւ որ Հեղինէին այլայլութիւնը բոլորովին անցած էր: Մաննիկինն նշան ըրաւ, որ քիչ մը հեռու երթայ, եւ ինք օրիորդին մօտենալով, կ'ուղէք ի՞նչպէս ըլլալը հարցընել: բայց անիկայ աճապարեց հարցուց թէ Աննա ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի:

— Աւելի աղէկ է, պատասխանեց վա-

Ճառականը . բայց կարծեմ թէ իր արտաքոյ կարգի տկարութիւնը թողով պիտի չտայ որ այնշափ շուտ անկողնեն ելէ :

Խեղջ կին , դունց Հեղինէ ցաւով . զիս ճանչցե՞ր է :

— Չեմ կարծեր , որովհետեւ երեսնիդ իր կողմը դարձընելնէդ յառաջ , անիկայ արդէն մարած էր :

— Շատ ուրախ եմ . խիստ կը ցաւէի՝ եթէ զիս ճանչցած բլլարով , իր աղջիկը գտնելուն վրայ . զգացած ուրախութիւնը վրդովիլ :

— Ստկայն եւ այնպէս պէտք է որ զձեղ տեսնէ ու ճանչնայ : Չեր ընտանեաց անուննու վիճակը չգիտնալնուդ համար՝ միշտ հոգի եւ տառապանաց մէջ կը գտնուիք . այլ հիմայ կրնաք ամենայն ինչ իմանալ : Ասկէ զատ՝ կրնաք ձեռք բերել անիբաւութեամբ յափշտակուած հարստութիւննիդ : Աւ իրաւունքնիդ յառաջ տանելու վայրկեանն եկած է :

— Ո՞հ , Պարոն , իրաւունքնե՞րս . . . Կ'ուզէք ուրեմն որ ստացուածքն եւ պատիւս ձեռք բերելու համար , որն որ տարակուսական բան մըն է , խեղջ կին մը եւ իր աղջիկը դժբախտութեան մէջ ձգեմ : Ի՞նչ պատասխան կրնամ տալ Մանեիկին . եթէ օր մը զիս յանդիմանելու բրայ , որ մօրը մարմնոյն վրայէն անցնելով ստացայ աստիճաննս , որն որ՝ ով դիտէ՝ կարելի է աղնուականութեան ամենէն ստորիննն է : Չէ :

չէ . երբեք չեմ ուղեր ան դժբախտը ստի-  
պել անանկ բան մը յայտնելու , որն որ  
կրնայ իր բանտարկութեան եւ կարելի է՝  
մահուան պատճառ ըյալ : Չեի ուղերնոյն  
իսկ ամենէն ոզորմելի մարդուն ալ մնաստ-  
առիթ տալ , որչափ եւս առաւել որդե-  
գիր առած աղջկանո մօրը , որն որ թէպէտ  
եւ ինծի շատ վիշտ պատճառեց , բայց մօրս  
կենաց վերջին օրերը հոգաց ու ինսամեց-  
եւ զիս ալ՝ ինչպէս հաւանականութեամբ կը  
կարծեմ՝ մարդասպանի դաշտնէն ազա-  
տեց : Չէ . առելի աղէկ է որ բոլոր կեան-  
քըս աղքատութեան եւ խեղձութեան  
մէջ անցընեմ , քան թէ թշուառի մը ար-  
ցունքով պատիր . եւ հարստութիւն ոսա-  
նամ :

Հեղինէ աս խօսքերն այնպիսի սառտկու-  
թեամբ մը խօսեցաւ , որ Պիշարապյ  
շհամարձակեցաւ զինքն ընդմիջել : Բայց  
երբ որ անիկայ խօսքը լմբնցուց , ի վերայ  
այսր ամենայնի , բաւ , գուք Պիր . Կարու-  
սին իշխանութիւն տուած էլլը որ ստի-  
կանութեան ձեռքով աս կնոջ ետեւ էն  
իշխայ :

— Ես երբեք իրեն իշխանութիւն շտաւի-  
մի այն դէմ շդրի , եւ աս տկարութեանս  
վրայ շատ անգամ մեծ ցաւ ունեցած եմ :  
Անոր համար միշտ Աստուծմէ կը ինսղրէի  
որ աւելի անոր սիրար շարժէ . բան թէ  
մարդկային արդարութեան ձեռքն իյնալ  
տայ , որն որ նոյն իսկ զզչացողին չինկրեր :

Աւատի, Պարոն, ձեր ինձի ունեցած սիրոյն համար՝ կ'աղաւեմ զինքն արդարութեան ձեռքը չմատնէք :

— Իմ դիտաւորութիւնու ալ ան չէ, սիրելի օրիորդս։ Ա'երեւայ որ աղէկ չեմ մեկնած միտքս՝ որն որ ձերինին բոլորովին համաձայն է։ Ա'ըսէք թէ միշտ Աստուծոյ կ'աղաւէլիք որ ան կնոջ սիրու շարժէ, որ բրածին վրայ զղջայ։ Կարծեմ թէ աղաւանքնիդ արդէն լսելի եղած է։

— Ստորդ կ'ըսէք, գոչեց Հեղինէ, և դարձեալ երեաները յառաջուան զուարթութիւնն առին։

— Այս, եւ այսպէս կարծելուս պատճառն ալ առ է։

Աս ըսելէն վերջը՝ պատմեց քանի ժ'օր յառաջ զԱննա առաջին անդամ տեսնելը. եւ խոստովանեցու որ թէպէտ նոյն տաեն չէր կրնար երեւակայել թէ ան խեղճ մուրացիկն իր գայեւակն ըըայ. ի վերայ այսր ամենայնի քանի մը անդամ անիկայ միտքն եկած էր, եւ աս յիշատակը շատ աւելի զինքը շարժած էր՝ անոր բարիք ընելու, քան թէ առջեւը տեսած թշուառութիւնը։

Կը տեսնէք, Պարոն, պատասխանեց Հեղինէ, որ Աստուծած դժբախտին մահը չուզեր, հապա անոր դաւնայն ու կեանիքը։ Ուստի կ'աղաւեմ, Աստուծոյ ձեզի ազդած զործքը զլուխ տարէք, Գայցէք զինքը յուսպիք խոռքերով քաջալերեցէք։ Ըսէք ի-

բեն որ կրնայ Աստուծմէ թողութիւն  
ընդունիլ, եթէ այնչափ երկայն ժամանակ  
ծածուկ պահած ճշմարտութիւնը յայտնէ .  
չէ թէ անողոքելի գատաւորի մը, այլ բա-  
րեկամներու առջեւը: Բայց իր տկարու-  
թեան խնայեցէք:

— Արնաք բոլորովին աղահով բլալ,  
օրիորդ:

Պլր. Ուիշարտոյ պարտէզէն ներս մտած  
ատեն՝ Մաննիկին պատահեցաւ, որն որ  
տրտմած եւ սիրտը կոտրած՝ գաւթին մէջ  
կը պարտէք: Զինքը շոյեց ու սիրեց, եւ  
ըստ որ պարտէղ Հեղինելու օրիորդին քովն  
երթայ:

Աղջիկը հարցուց որ իր մօրը քովը կ'եր-  
թայ:

— Այսի, աղջիկս. դուն ալ քիչ մը  
հանգչելէն վերջը՝ կու գաս:

Աս բաելով, վեր ելաւ, Աննային խուցը  
զնաց: Անկողնոյն մօտեցաւ, եւ հիւան-  
դին քովը սպասող աղախինը գուրս խըր-  
կելով, քաղցրութեամբ մը անոր ինչպէս  
բլալը հարցուց:

Ո՞հ, Պարոն, պատասխանեց Աննա, աս  
ի՞նչ մեծ բարիք է ինձի բրածնիդ. ինձի  
պէս մեղուորի մը հետ առանկ վարուելնիդ  
ստուգիւ շատ մեծ բարութեան նշան է....  
Կը կարծէք որ գործած շարիքիս հատու-  
ցումը չըրած: Աստուած ինձի թողութիւն  
ասց:

— Թողութիւն կու տայ, եթէ հաս-

տատուն կամք ու դիտում ունենաս քու,  
պարտրդ կատարելու։ Աս կամքը բաւական  
կ'ըսայ՝ երբ որ մարդո կարողութիւն չու-  
նենար կրօնին հրամայածին համեմատ, իբ  
ձեռքսվը թշուառութեան մեջ ինկողնեւ-  
րուն նկատմամբ ունեցած ուրիշ պարտ-  
քերն ալ կատարելու։

— Ո՞հ, ի՞նչ տխուր բան է մատածելը  
թէ մարդ խեղճ աղջկան մը չարիք ըրած  
է, որն որ գուցէ գլուխը դնելու տեղ չու-  
նի։ Երանինի թէ կարենայի զինքը գտնել,  
որպէս զի մխիթարեմ, որովհետեւ կրնամ  
մխիթարել։

— Աս հոդն Աստուծոյ նախախնամու-  
թեան յանձնել։ Քու յանցանքիդ զահ ե-  
ղող անձին ուր դանուիլը դուն չեռ գի-  
տեր, բայց Աստուծը ամէն բան գիտէ։ Եւ  
իրեն գիմող դժբախտները երբեք չիթ ո-  
գուր։

Աս խօսքերը քիչ մը մեղմացուցին Ան-  
նային խռովութիւնը՝ որն որ գեմքեն յայ-  
տնի կ'երեւար։ Վայրկեան մը լուռ կենա-  
լէն ետքը՝ Պլր. Ռիշարտոյին ըստ։

Երբ որ ձեզի հետ պարտեզ մնայ, աղ-  
ջկանս քով մանկամարդ տիկին մը տեսայ։  
արդեօք անիկայ է Ֆորդոն նաւին ընկղզե-  
լէն ետքը Մորոյ կնոջ տունը բերուող  
տիկինը, որն որ ետքէն զՄաննիկ հետր  
ոտարեք է։

— Այս, անիկայ է։

— Ես ալ անանի մակարերեցի։ Կայե-

ցէք. Պարոն, ամէն բան իմացայ, միայն ան տիկնոց անունը չեմ զիտեք, զորն որ մէկը չկըցաւ ինծի զրուցել։ Մորոյ մայրը որուն քովէն երկու զաւկըներս առնելով՝ ձեզի բերել կու զէի, առունը չէր։ Դրացիներէն մէկն ամէն բան ինծի պատմեց ։ ։ ։ Քարի տիկինը, աղջիկո հոնկից առնելով՝ չէր կըրնար երեւակայել թէ ինծի որչափ այլայլութիւն ու անձկութիւն պիտի պատճառէր։

— Մեզի ըսին որ դուն աս կողմերէն զացած ես, եւ դուցէ երբեք ետ չես դառնար։ Եւ խեղճ Մաննիկը հոգացող չկար։ Աակայն եւ այնպէս ամէն կարելի գէպքերը մտածելով, Մորոյ կնոջ իմ բնակարանիս տեղը զրուցած էի, որպէս զի եթէ իրեն դաս աղջիկդ վնասես, անոր ուր ըլլալը քեզի իմացընէ։

— Շնորհակալ եմ, Պարոն, եւ կազաշեմ որ իմ կողմանէս նաև ան տիկնոց շնորհակալ ըլլալը, մինչեւ որ ես ալ կարենամ անձամբ իմ շնորհակալութիւնս մտացանել։

Պր. Ռիշարտոյ տեսնելով որ Աննա գեռ շատ տկար է եւ չիկրնար տակաւին հետր Հեղինէին վերաբերեալ նիւթերուն վրայ խօսուիլ, ալ խօսակցութիւնը յառաջ չտարաւ։ Զինքը հոգացող աղախինը կանչեց, եւ ձգեց կնոջն ու Հեղինէին քովը զնաց, եւ Մաննիկին մօրք վրայ տեսած պատրաստակութիւնն անոնց իմացուց։

## Գ Ա Ռ Ի Խ Խ Ի Ժ Ձ Ա .

Երկայն ու հանդարտ քուն մը բաւական եղաւ զԱննա զօրացընելու : Ուստի երկրորդ օրը երր որ Պը - Արիշարտոյ նախաճաշէն ետքը քովը գնաց , տեսաւ որ անկազնէն ելած՝ խցին մէջ կը պարտէր :

Ըստ ուրախ եմ որ երեկութնէ առելի աղէկ ես , ըստ անոր :

— Չեր բարութեան շնորհակալ եմ , Պարոն . առանց ձեզի չեմ դիտեր թէ ի՞նչ պիտ' որ ըլլացի :

— Պէտք է որ Աստուծոյ շնորհակալութիւն մատուցանես , ինչպէսնաեւ պէտք ես իրմէ յուսալ եւ խնդրել ան քու բաղձանքիդ կատարումը , որմէ կախում ունի որտիդ հանդարտութիւնը :

— Ըստնիդ կը հասկընամ : Ազահութեանս զոհ եղող անձին ընելու հատուցմանս վրայ կ'ուղէք խօսիլ : Կը տեսնէք , Պարոն , որ ձեզի հետ անկեղծութեամբ ու համարձակութեամբ կը խօսիմ , թէ պէտեւ չեմ դիտեր թէ ի՞նչպէս կ'ըլլաց՝ որ մէկու մը յայտնել չկրցածո , ձեզի յայտնելու յօժարութիւն կը զգամ : Ինձի անանկ կ'երեւայ որ դուք կընաք զիս ընկճող ծանր բեռը խղճիս ու որտիս վրայէն մէկդի առնուլ : Արդեօք կը սխալի՞մ :

— Արելի է որ չէ : Աախախնամութեան ճամբաները խիստ զարմանալի են :

— Այս հիմայ ըստ ներկես՝ իմ վրաս  
ինչ կարծիք ունեցաք:

— Յայտնի զրուցելու համար, թէ եւ  
կէս ի կէս խոստովանութիւնդ լսելով,  
չեմ կրնար յանցանքիդ վրայ ճիշդ գտղա-  
փար մը ունենալ, բայց եւ այնպէս կար-  
ծես թէ իմ կամացս գէմ՝ դքեզ կը նման-  
ցընեմ ան թշուառ կնոջ, որուն ետեւէն  
ինկած է սատիկանութիւնը երկայն ժամա-  
նակէ վեր. բայց կերպարանացը ճիշդ նկա-  
րագիրը չունենալով, մինչեւ հիմայ չկրցաւ-  
ձեռք ձգել: “Նոյն կինը կամքաստանուի որ  
առանց օգնութեան թող տուած ըլլայ  
խեզք օրիորդ մը, զորն որ մայրը մեռնելու  
ժամանակ՝ իրեն յանձնած է եղեր:

Աս խօսքերուն՝ Աննային վրայ սաստիկ  
այլայլութիւն մը տիրեց: Բայց որ. Որի-  
շարտոյ չտեսնելու զարկաւ:

**Սուրացիկը քիչ մը մնածելէն ետեւ՝**  
Կը կարծէ՞ք, ըստ, որ եթէ ան կինը յան-  
ցանքն անձամբ յայտնելու ըլլայ, թողու-  
թիւն գտնէ:

— Աւելի աղէկ կ'ընէ, եթէ դժբախ-  
տութեան մէջ ձգած անձին դիմելու ըլլայ:

— Խոկ թէ որ անիկայ իր իրաւունքը  
գործածելով՝ զինքն արդարութեան ձե՛ռ-  
քը մնանէ:

— Վերի դէպին վրայ տեղեկութիւն  
ունեցող անձէ մը լսածիս նայելով, կր-  
նամ զձեզ ապահովորնել որ եթէ ասանկ

բան մը պատահելու ըրայ. Պելքիկ օրի-  
որդն այնպէս անգթութեամբ շիվարուիր:

Պելքիկ անունն Աննային վրայ շանթի  
հարուածի մը աղցեցութիւնն ըրաւ: Ըուտ  
մը վեր ցատրեց, եւ խոռված դէմքով զիր.  
Ռիշարտոյին նայելով, ոտուըներն ինկաւ,  
ծնկուըները փաթթուեցաւ, եւ հեծ կլտան-  
քէն ընդմիջած ձայնով մը դոչեց.

Պարսն . . . Պարսն . . . ես եմ, այս,  
ես եմ Աննա Վուաղէն . . . Ո՛հ, զթա-  
ցեր ինծի եւ խեզ աղջկանս . . . ինք  
զինքս ձեր զթութեան կը յանձնեմ. . .  
եղածէս աւելի թշուառ մ'ընէր զիս . . .  
Ոճիրս ձեզի խոստովանեցայ . . . կրնաք զիս  
արդարութեան մատնել . . . Բայց ի՞նչպէս  
կրնաք մատնել ան աղջկան մայրը, զորն որ  
ձեր տունն ընդունած էք . . . զորն որ ան-  
օթութենէ մեռնելու վտանդէն աղտած  
էք . . .

Պիր. Ռիշարտոյ այնպէս այլայլած էք,  
որ եւ ոչ միտքն եկաւ. աս դժբախտին  
ցաւոց աղաղակը լռեցընել: Բայց վերջա-  
պէս զինքը վեր վերցուցեւ աթուի մը վրայ  
նստելու ստիպելով, ըստ.

Հանդարտէ. Հոս բարեկամներու քով,  
եւ ոչ թէ թշնամեաց մէջ ես: Քեզի  
վնաս մը չըլլար, եթէ քու կողմանէդ  
ճշմարտութիւնն երեւան հանես:

Ո՛հ, ամէն բան կ'ըսէմ, բան մը չեմ  
պահեք: Բաւական տաեն է՝ որ աս սոս-  
կալի բեռը օրտիս վրայ կը ծանրանոյ եւ

կեանքս անտանելի կընէ . . . : Բայց որուն  
պիտի յայտնեմ: Պեղիսվ օրիորդը հոս չէ.  
Եւ խոստովանութիւնս՝ միայն իրեն կրնայ  
օգուտ ընել:

Ոլր. Որիշարտոյ մեծ շփոթութեան մէջ  
կը գտնուէր. վահնալով որ շրպայ թէ  
նախընթաց օրուան պատահածը նորէն  
կրկնուի, չէր համարձակեր ունեցած զի-  
տաւորութիւնը կատարել: Բայց պէտք էր  
որ թէ Հեղինէին եւ թէ Աննային հան-  
դարտութեան համար՝ իրենց իրարու հետ  
տեսնուիլը շատ չուշանար: Վերջապէս  
մտածերով թէ Հեղինէին կերպարանքը՝ իր  
ըսածին համեմատ՝ քանի մը տարիէ վեր  
շատ փոխուածէ, ուստի եւ Աննա շիկրնար  
զինքը մէկէն ճանչնալ, ուզեց զանիկայ իր  
դայեկին առջեւը հանել: Անոր համար առ  
վերջնոյն ըսաւ.

Քիչ մը յառաջ անձի մը վրայ խօսե-  
ցայ, որն որ Պէլրիսվ օրիորդին պատմու-  
թեան մէկ մասը զիտէ: Ան տիկինը ձեր  
աղջիկը հեան առնողն է: Ուստի հիմայ  
կերթամ իրմէ կը խնդրեմ որ հօն դայ,  
եւ ինք անտարակոյս նոյն օրիորդին վրայ  
ինձմէ առելի ճիշդ տեղեկութիւն կու տայ  
քեզի:

Աննա շնորհակալ եղաւ, եւ ոլր. Որի-  
շարտոյ անմիջապէս զՀեղինէ կանչերու-  
զնաց, որուն իմացուց թէ իրեւ ինչպիսի  
անձ պիտի տեսնուի իր յառաջուան դայե-  
կին հետ:

Բայց իր ակնկալութիւնը պարապի է-  
լու. Օրիորդն Աննային խուցն որ մոտու,  
մեկէն այնպէս այլայլեցաւ, որ քիչ մնաց  
կը մարէր. Պլր. Ռիշարտոյ աճապարեց ա-  
նոր ամուս. մը տուաւ, եւ ետքը խօսքն  
Աննային դարձընելով.

Ահաւասիկ, բայս, ան տիկինը՝ որն որ  
Մորոյ կնոջ քովին աղջիկդ առած է:

Աննա առանց պատասխան տապու՝ շփո-  
թած աչուրները մեր դիւցազնուհոյն վրայ  
սեւեռած կը նայէր. չորցած շրթանցը վրայ  
սպայլութեան դող մը կը տեսնուէր: Եր-  
կու անգամ՝ իրը թէ յիշողութիւնն ամ-  
փոփելու համար՝ ձեռքը ճակատը տարաւ,  
որուն վրայ քրտինքի խոշոր կաթիլներ ձե-  
ռացած էին: Իսկ Հեղինէ հաղիւ կրնար  
շունչ առնուլ. սիրար սաստիկ կը զար-  
նէր, եւ ամէն անգամ բռնութեամբ զըս-  
պուած հեծեծանք մը՝ մարին մ.ջ ծնած  
զանազան զգացմունքները շշայտնելու հա-  
մար ըրած ճիզը կը յայտնէր: Աչուրները  
գետնէն վերցընելու չէր համարձակեր:

Պլր. Ռիշարտոյ ընկիքը չէր դիմեր: Կը  
տեսնէր որ մեծ անխոհնեմութիւն ըրած էր,  
զԱննա Հեղինէին այցելութեան յառա-  
ջուրնէ շղատրաստելով: Բայց նոյն անխո-  
հնեմութեան դարման չէր կրնար տանիլ.  
ուստի անձկութեամբ առ անսովոր տեսա-  
րանին կատարած ին կը սպառէր:

Աննա երկայն ժամանակ Հեղինէին կեր-  
պարանքը զննելէն ետեւ, վերջապէս Պլր.

Արիշաբասին դառնալով, շատ յած ձայնին  
անոր ըստ:

Չեմ գիտեր թէ արդեօք աչու ընե-  
րուս հաւատամ. բայց աս տիկնոջ կեր-  
պարանքն ինձի... Ո՞հ. չէ, դուցէ ան  
չէ... Բայց... կ'ազաշեմ, զիս աս ահա-  
զին տարակուսանաց մէջ երկայն առեն մի  
թողուք:

Ետքը ձայնը բարձրացընելով, Տիկին,  
գոչեց, Տիկին... Ասուուծոյ սիրոյն հա-  
մար... անուննիդ զրուցեցէք... Ըսէք,  
դուք ով էք:

Հեղինէ, պատասխանեց մեր գիւցազ-  
նուհին՝ սաստիկ շարժած. Եւ մէկէն ոտք  
ելլելով, դէպ ի Աննա վազեց ու զինքը  
բազկացը մէջ ճնշեց:

Ո՞հ, զիս թոնդ տուէք... թոնդ տուէք,  
օրիորդ, գոչեց Աննա՝ Հեղինէին բազկացը  
մէջէն դուքս ելլելու ջանք ընելով: Ես  
հրէշ մըն եմ, որ արեւուն լոյսը տեսնելու  
արժանի չեմ... Թոնդ տուէք, որ ոտաւը-  
նիդ իյնամ՝ թողութիւն խնդրեմ:

Թողութիւն, ըստ Հեղինէ. շատ ա-  
տեն է որ ձեզի թողութիւն տուած եմ: Եւ  
ինչպէս կրնայի չներել: Ստոյգ է ինձի  
շատ վիշտ հասցուցիք, բայց կեանքս ալ  
պահեցիք: Այս, գիտեմ որ զիս մահուընէ  
աղատեցիք. որովհետեւ երիկնիդ զիս մեռ-  
ցընել ուղած ատեն՝ անոր տուած պա-  
տասխաննիդ լսեցի: Անոր համար ինձմ.  
զահնալու բան մը չունիք: Միայն ան կը

խնդրեմ՝ ձեզմ. որ ընտանեացս անունը յայտնէք: Եթէ ինչքերս ստանալու ըլլամ, ոչ դուք եւ ոչ աղջիկնիդ կարօտութիւն կը կրէք: Այլ տեսնէք որ ձեզի դէմ ամենեւին ոիս չեմ պահած: որովհետեւ աղջիկնիդ քովս առած ատենս՝ գիտէի որ ձեր եւ ան դրժրախտ մարդուն զաւակն է, որն որ զձեզ գործած շարիքնիդ ընկլու ստիպեց եւ որուն՝ ալեաց մէջ թաղուիլը տեսայ:

Ո՞չ, մեծանձն Տիկին, գոչեց Աննա զշեղինէ: սիրով ու մեծարանոք գրկելով, եւ զինքն արցունքներովը թրջելով. Աստուած միայն կրնայ ձեր բարութիւնը վարձատրել. ես եւ ոչ կրնամ ըստ պատշաճի շնորհակալ ըլլալ:

Պիր. Ռիշարտոյ՝ որ մինչեւ նոյն ատեն մէկ կողմ քաշուած՝ խօսուածքը մտիկ կ'ընէք, ան ատեն խօսիլ սկսելով, խաթուն, ըստ Աննային, մեր բարեկամին բաղձանքը լսեցիր: Ուստի ես ալ կ'աղաւեմ՝ զինքը գոհ ըրէ:

— Ամենայն սիրով: Պելրիվ օրիորդը կ'ուզէ որ իր ընտանեաց անունը յայտնեմ: Բայց որովհետեւ պատմելու պատմութիւնն կապակցութիւն ունի ուրիշ հզօր ընտանիքի մը պատմութեան հետ, որն որ Պելրիվ տիկնոջ դժբախտութեանց առաջին պատճառն եղած է: անոր համար նախ պէտք է որ ան ընտանիքին վրայ տեղւկութիւն տամ, որով . . . :

Կեցէք, կեցէք, գոչեց մէկէն Հեղինէ: իմ

այսչափ թշուառութեանս պատճառ ըլլոզ  
մարդուն անունը չեմ ուզեր լսել : Իրեն ար-  
դեն թողութիւն տուած եմ . բայց կը  
վախնամ որ զինքը ճանչնալէս ետքը նոյն  
զգածումները չկարենամ սրտիս մէջ պա-  
հել : Միայն մօրս անունը զրուցեցէք :

— Չեմ կընար ձեր մօրն անունը զրու-  
ցել՝ առանց միււնոյն ժամանակ ան մար-  
դուն անունն ալ յայտնելու , զորն որ ի-  
մանալ չէք ուզեր :

— Եթէ այնպէս է , աւելի աղէկ կ'ը-  
լայ որ ամենեւին չիմանամ : Արդէն տա-  
րակոյսներ ունեցած եմ ընտանիքի մը  
վրայ , որուն ամէն անդամներն իրարու նման  
չեն . եւ ան կասկածն ունենալուս վրայ  
շատ անդամ խիղճս զարկած է . ուստի չեմ  
ուզեր որ նոյն կասկածներն ստուգու-  
թեան դառնան :

Պր . Ռիշարտոյ Աննային նշան ըրաւ որ  
Հեղինեւին կամացը զիջանի :

Աննա խօսքն այսպէս շարունակեց : Ե-  
թէ անանկ է , պէտք է որ ձեր մօրը պատ-  
մութեան միայն դլիսաւոր դէպքերը պատ-  
մելով՝ գոհ ըլլամ , զինքը՝ ձեզի ծանօթ  
եղող անուամբը յիշելով :

Պելլիվ տիկինը՝ որն որ Գաղղիայի ա-  
մենէն նշանաւոր ընտանիքներուն մէկէն  
էր , այնպիսի մէկու մը հետ ամուսնացած  
էր , որն որ իր տաղանդներովը՝ տէրու-  
թեան առաջին պաշտօնները բարձրանալու  
արժանաւորութիւն ունէր . բայց որովհե-

տեւ փառասիրութիւնն երբեք սրտին մէջ  
մնուոք ունեցած չէր, անոր համար իրեն  
տրուած բռոր պաշտօնները հաստատու-  
թեամբ մերժեց, աւելի աղեկ համարելով  
անձանօթ ապրիլ եւ իր հարատութիւնն  
աղքատաց օդնելու դործածել։ Տիկինն  
խտալիա ճամբորդութիւն մ'ընելու բաղ-  
ձանք ցուցընելով, ամուսինը յօժարու-  
թեամբ հաւանեցաւ. եւ մենք ամենքնիս  
մէկտեղ ճամբայ ելանք։ Անք, կըսեմ,  
որովհետեւ ճամբայ ելելէն քանի մ'օր  
յառաջ՝ ձեր մօրը ծառայութեան մէջ  
մտած էի. հօրաքոյրնիդ ալ մեզի հետ գալ  
ուզեց։ Քանի մը ամիս կեցանք Սիկիլիա,  
ուր դուք ալ աշխարհք եկաք։

Չեր ծնանելէն երեք շաբաթ ետքը, օր  
մը ձեր հայրը լիբանց վրայ որսորդութիւն  
ըրած ատեն, ձիէն իյնալով՝ կիսամեռ տուն  
բերուեցաւ։ Ազախնոյ մը անխոհեմու-  
թեամբը տիկինն աս գոյժն առնելով, ան  
աստիճանի այլայլեցաւ, որ խեղճը բոլորո-  
վին խելքը կորսընցուց։ Իսկ ձեր հայրն ա-  
զատելու համար թէպէտ ամենէն ճար-  
տար բժիշկները շատ աշխատեցան, բայց  
ամէն բան պարագ եղաւ. քանի մը օր ետ-  
քը մեռաւ. ինչպէս յայտնի է՝ հաղիւ եր-  
կային ժամանակէ ետքը կարելի եղաւ աս  
գոյժը ձեր դժբախտ մօրը տալ։

Հոս Աննա կեցաւ, որպէս զի Հեղինե-  
ատեն ունենայ թափած արցունքներովը քիչ  
մը ցաւը մեղմացընելու։ Ետքը շարունակեց։

Աս գոյժը Պելրիվ տիկնոց վրայ վախ-  
ցուած ազգեցութիւնը չըրաւ, որովհետեւ  
նոյն սուեն խելքը տակաւին դրուխն եկած  
չէր: Հազիւ վրայէն երկու ամիս անցնելէն  
ետքը՝ ինք իրեն եկաւ, սակայն մինչեւ իր  
մահը երբեմն երբեմն նոյն սոսկալի հա-  
րուածին հետեւանքը կը դպար:

Նոյն միջոցին մօրեղբայրնիդ հասաւ, եւ  
երկրորդ օրուընէ սկսեալ, տիկնոց հետ  
ամէն օր առանձին խցի մը մէջ ժամերավ  
փակուած կը մնային: Աս բանս խել մը  
ժամանակ այսպէս տեւելով, հետաքրքրու-  
թիւնս բռնեց՝ թէ ինչ կը խօսին, մանաւ-  
անդ որ կը աեսնէի թէ Պելրիվ տիկինը  
յառաջուընէ աւելի կը տիսրէր ու օրէ օր  
կը հիւծէր կը մաշէր: Ուստի օր մը իրենց  
փակուած սենեկին քովի խցիկը պահուը-  
տեցայ, ուսկից անոնց ամէն խօսածները  
կրնայի լսել: Աս եղանակաւ իմացայ թէ  
մօրեղբայրնիդ ձեր մօրմէն կը պահանջէր,  
որ իր ամսւանոյն իրեն ձգած դզեակն ու  
ինչքերն իրեն թռողու, խօստանալով որ  
իրեն եւ ձեր ապրուսամն հարկաւոր եղած  
դումարը տարւէ տարի ինք կու տայ: Ա-  
սսր վրայ երկուքին մէջ սաստիկ բանա-  
կառութիւն մը բրդաւ: Եօ՛ որ բանարոյն  
ծակէն կը նայէի, տեսայ որ վերջաղէս  
տիկինը դոզգոջուն ձեռքսվ այլեւայլ  
թղթէր բերաւ, սկզանին վրայ դրաւ, եւ  
իր եղբօրն իրեն առջնւը դրած թղթին  
ստորագրեց:

Մօրեղբայրնիդ աս ամէն, թղթերն առնելէն ետքը, սաստկութեամբ քրօջն ըստւ Հիմայ միտութնիդ պահեցէք, տիկին, որ ալ դուք աշխարհքիս համար մեռած էք: Պատուոյս վրայ խօսք կու տամ, որ ձեզի ամեննեւին վնաս չիհասնիր, քանի որ անծանօթ կ'ապրիք: Խոստացած ստակս ճշգիւ կը խրկեմ: Կրնաք Գաղղիա ալ դառնալ. բայց միշտ Նիմէն հեռու տեղ պիտի բնակիք, որպէս զի կասկածի առիթ չտաք: Ստակնիդ երբեմն մէկ եւ երբեմն մէկալ քաղաքը կ'ընդունիք, ինչպէս որ յառաջութնէ մեր մէջն որոշած կ'ըլլանք: Անը իրարու հետ ունեցած յարաքերութեան մէջ՝ անուննիդ Ֆորմէոյլ կ'ըլլայ: Իսկ ձեր կեցած տեղը՝ ուրիշ ինչ անուն որ կ'ուզէք, առէք, ազատ էք:

Աս խօսքերուն վրայ անչափ զայրացայ, որ մօրեղբայրնիդ երթալուն պէս, ըրած անխոհնեմութիւնս Պեղիսվ տիկնոջ յայտնեցի: Ասոր վրայ բարի տիկինն այնչափ այլայլցաւ, որ ոսքս ինկաւ աղաչեց թէ Աստուծոյ սիրայն համար լսածներս ամեննեւին մէկումը չցայտնեմ, եւ ոչ իսկ տոլոջը, մինչեւ որ ինք մեռնի եւ դուք տասն'ութը տարեկանը լլամբ:

Քիչ մը ետքը դէպ ի Հռոմ ճամբայ ելանք, ուսկից տալոջը զբեց որ դուք ճամբարդութեան ատեն մեռած էք: Անկէ երկու ամիս վերջն ալ հօրաքոյրնիդ ուրիշ համակ մ'ընդունեցաւ, որուն մէջ իրեն գոյժ

կը տրուէր թէ ձեր մայրը Գաղղիա գար-  
ձած ատեն՝ մեռած ըլլայ, եւ թէ իր ա-  
մուսնէն ունեցած բոլոր ստացուածը կտա-  
կաւ իր եղրօրը ձգած ըլլայ:

Մնացածն արդէն գիտէր, օրիորդ, ա-  
ւելորդ է նորէն յիշեցընել: Միայն պէտք  
է որ իմ վրաս ալ քանի մը խօսք ըսեմ:  
Ան կեղծեալ եղբայրը՝ որն որ Ակնազրեր  
բերդը մեզի հետ բնակեցաւ, Խտաղացի մըն  
էր, որուն հետ առանց ձեր մօրը գիտու-  
թեան՝ ամռւսնացած էի, անոր մահուրնէ  
քիչ մը յառաջ: Բայց որովհեաւ իր՝  
հետո ամռւսնանալուն զլխառ որ նպատակն  
էր՝ զձեզ կողոպտելը, զորն որ արդէն յա-  
ռաջուրնէ մոքին մէջ որոշած է եղեր,  
անոր համար քանի մը տարի ետքը զիս  
թող տուաւ: Զաւկըներն ալ թող տա-  
լու վրայ եղած ատեն՝ թշուառութեամբ  
ծովուն ալեացը մէջ թաղուեցաւ: Ասու-  
ած անոր հոգւսյն ողորմի:

Աննա վերջին խօսքերը զբուցած տտեն՝  
մէկէն գաւթին մէջ սաստիկ խշառոյ մը  
լսուեցաւ: Պր. Ուիշարտոյ խցէն դուրս  
ելաւ: իր կինը, Հեղինէ եւ Աննա ալ ե-  
տէւէն զային:

Զելարովս վերջին անգամ՝ Մոնրելիէի  
ճամբուն վրայ թողուցինք։ Երբ որ հօրը  
ապարանքը հասաւ, ցաւով լսեց թէ սե-  
պուհը. ծանր ու վահանգաւոր հիւանդ է։  
Վնմիջապէս մօրը քովը գնաց եւ հարցուց  
թէ ի՞նչ պատահած է։

ԱՇ, սիրելի որդեակ, գոշեց տիկինը, կար-  
ծես թէ երկնից վրէ ժինդրութիւնը գլուխ-  
նիս իջած է։ Հազիւ երեք ժամ՝ կայ, օտա-  
րական մը եկաւ, հօրդ հետ տեսնուից  
ուղեց։ Քառորդի մը չափ մէկտեղ մնա-  
լէն ետեւ՝ դուրս ելաւ, ինձի ըստ որ  
սկզբունքն իմ՝ օգնութեանս կարօտ է։

Ծուտ մը սենեակը վազեցի, եւ տեսայ  
որ իրօք սաստիկ ջղաձղութենէ կը չար-  
շարուէր։ Վնմիջապէս բժիշկը կանչել տուի,  
որն որ հիւանդը տեսածին պէս՝ գլուխը  
շարժելով անոր վիճակին ինչ աստիճանի  
յուսահատական ըլլալը յայտնեց։ Եւ թէ-  
պէտ գեղագիր մը գրեց, բայց Երթալու-  
ժամանակը զմեղ քաջայերելու համար  
ըսած խօսքերն աւելի եւս յուսահատու-  
թեան մէջ ձգեցին զմեղ։ Հայրդ կարծէս  
թէ զիս բոլորովին մնացած է։ Միայն  
զքեղ կը հարցընէ. երբեմն ալ զիշգուարդ  
կը յիշէ։ Գնա, հետը քիչ մը խօսէ. կա-  
րելի է։ քու ներկայութիւնդ իրեն օգուտ  
մ'ընէ։

— Հանդարտեցէր, սիրելի մայր, ըստ

կարոլոս՝ սաստիկ այլայլած . յուսամ՝ վա-  
խերնիդ շափազանց է :

Տեկինը լռութեամբ խուցը քաշուե-  
ցաւ . իսկ Կարոլոս հօրը սենեակը մոտաւ :  
Քանի մը ժամու մէջ հիւանդութեան՝  
անոր վրայ ըրած ազգեցութիւնը տեսնե-  
լով , չհամարձակեցաւ յառաջ երթալ .  
դրան քովը կեցաւ : Ա երջապէս ինք զին-  
քը քաջալերելով . հիւանդին անկողնոյն  
մօտեցաւ , սկսաւ հօրը հետ իօսիլ . բայց  
պատասխան չընդունեցաւ : Աեպուհը միշտ  
կը բանդադուշէր եւ ամենեւին բան մը  
չէր իմանար : Կարոլոս տիրութեամբ քո-  
վը նստեցաւ :

Աեպուհը քանի մ'օր նոյն վիճակին  
մէջ մնալէն ետեւ , ինք իրեն եկաւ : Որ-  
դին քովը տեսնելով , ցաւագին դէմքով  
մը ժպտեցաւ , եւ ձեռքը բռնելով՝ իրեն  
ցուցուցած սիրոյն համար շնորհակալ եղաւ :

Քեզի զրուցելու շատ բան ունիմ , որ-  
դեակ , ըստու . եւ որովհետեւ կը տեսնեմ որ  
մեծաքայլ դէպ ի գերեզման կ'ընթանամ .  
պէտք է սր աճապարեմ : Արդ դիտցիր որ  
թէ դուն եւ թէ մայրդ ու քոյրդ քիչ  
մը վերջը խիստ վտանգաւոր վիճակի մէջ  
պիտի զանուիք : Արնամ արգեօք ան ակն-  
կալութեամբ գերեզման մտնել , որ պար-  
տական եղած որաշտպանութիւնդ կ'ընես  
անոնց :

Միշտ եւ ամէն առթի մէջ , պատաս-  
խանեց Կարոլոս : Մայրս ու քոյրս կրնան

ապահով ըստ որ երբեք իմ պարտուցու  
կատարման մէջ պակասութիւն չեմ ընել :

— Ծնորհակալ եմ, որդեակ : Հիմայ  
իմ նկատմամբս ալ շնորհը մը պիտի  
խնդրեմ քեզմէ : Ամենեւին մի թողուր որ  
յիշատակս աղարտի . խօսք տուր որ եր-  
բեք յանձն չես առնուր որ ստացուած-  
ներդ ձեռքէդ յափշտակեն :

Կարուլսին վրայ իր կամացը դէմ ստո-  
տիկ դոդ մ'եկաւ :

Միտ դիր, կարուլս, ըստ սեպուհը .  
անշուշտ ոմանք պիտի ջանան սիրուդ շար-  
ժել : Բայց պէտք չէ որ հեռաւոր ազգա-  
կանաց վրայ դժալով, ամենէն մերձաւոր  
տաղականացդ մուծ վսաս ու սաստիկ նա-  
խատինք հասցընես :

Որդեակ, դուցէ մօտ ժամանակները  
հօրսքեռաղջիկդ, զորն որ մեռած կը հա-  
մարէի եւ քիչ մը յառաջ իմացայ թէ  
կենդանի է եղեր, քեզի դէմ կ'ելլէ եւ  
կ'ուզէ ձեռքէդ առնուլ քրոջմէս քեզի  
ժառանգութիւն մնացած ինչքերը :

Քանի որ եղբայրդ ողջ էր, հարկաւոր  
չէի համարեր քեզի յայտնել ան գաղտնի-  
քը՝ որն որ բոլոր կենացս օքերը դառնու-  
թեամբ լեցուց : Բայց որովհետեւ անիկայ  
վերը յիշատակուած վտանգէն զմեղ ազա-  
տել ջանացած ատեն՝ մեռաւ, ալ չեմ  
կրնար քեզմէ ծածկել՝ որ չէ թէ միայն  
Աէն . Արոմէնի ստացուածքները, հապտ-  
նաւու գրեթէ բոլոր ուրիշ ինչքերս վտան-

գի մէջ են . Եւ եթէ վտանգին առջեւն առնելու համար արտաքոյ կարգի միջոցներ չըսնեցնես , գլուխդ գալիքը՝ վերջին աստիճանի նախատինք ու յետին չքաւորութիւն է :

Կարելի է լոած ըլլաս մնկեկան խաղասիրութեամբս եւ շահագիտական յանդուղն ձեռնարկութիւններովս՝ շատ մեծ կորուստներ ըրած ըլլալս : Ասով զրեթէ կործանման եզրը հասած էի , մէյ մ'ալ լսեցի որ քեռայրս մեռնելով , մեծ հարստութիւն ձգեր է խենթ կնոջ մը եւ նորածին աղջկան մը : Այնչափ հարստութիւն՝ հօրաքրոջդ եւ անոր աղջկան չափէն առելի շատ էր . ուր որ ես երկու որդւոցս ապագայ միջակին համար պէտք էր որ հոդ տանելի . . . .

Կարուս տեսնելով որ հայրը չիհամարձակիր խօսքը յառաջ տանիլ , անոր կիռկատար թողուցածը ըմբնցընելով . Ասոր համար հօրաքրոջս ձեռքէն իր ինչքերն առիք , ըստ , այնալիսի ձայնով մը , որմէ կամացը դէմ կը յայտնէր սրտին մէջ դգացած արդար բարկութիւնը :

Չեռքէն չառի , պատասխանեց սեպուհը՝ կասկածու դէմքով մը որդւոյն նայելով . այլ կարծեցի թէ եզրօր մը՝ իր խենթ քրոջը վրայ ունեցած իշխանութիւնը գործածելով , կրնամ զինքը ստիպել որ ինչքերն ինծի յանձնէ , եւ ես անոր փոխարէն իրեն ու աղջկանը պա-

տուաւոր կերպով ապրելու հարկաւոր եզած թռչակը վճարեմ:

Ահաւասիկ դրասեղանիս բանաղին վերջին ձգոցին մէջ կը դանես Սէն - Ռումէնի դղեկին եւ Մոնքելիէի ու Նիմի ապարանքներուս մուրհակները, եւ ուրիշ ամէն թղթերը՝ որոնցմով անոնց վրայ ունեցած իրաւունքդ կը հաստատուի: Սէն - Ռումէնի դղեակին ու աս ապարանքը յառաջադոյն հօրաքրոջդ էին. իսկ Նիմի ապարանքը կորսընցընելու վրայ էի, երբ որ հօրաքրոյրդ ինչքերն ինծի ձգեց, որով կրցայ պարտատեարցս ձեռքէն ազատել:

— Բայց ինք հօրաքրոյրս ու իր աղջիկն ուր են:

— Հօրաքրոյրդ մեռած է. իսկ աղջիանը գալով, գիտէի որ ողջ էր. բայց իմանալով որ արդարութիւնը Վուազէն անուամբ կնոջ մը ետեւէն կ'իյնայ, որուն համար կ'ըսուէր թէ նոյն աղջիկը թողտուած փախած ըլլայ, ուզեցի քրոջս աղջիկը հեռաւոր երկիր մը խաւրել, ուր կը նար խաղաղ ու երջանիկ ապրիլ, եւ չէր կրնար մեզի վսաս մ'ընել, եթէ Վուազէն կինը բռնուէր ու բան մը յայտնէր: Սակայն բախտն ուրիշ տեսակ որոշած է եղեր: Եղբայրդ՝ որն որ հօրաքեռաղջիկդ իր նաւն առած՝ կը տանէր, կեանիքը կորսընցուց. իսկ աղջիկը, զորն որ նոյնպէս ան ատեն մեռած կը համարէի, քիչ մը յառաջ իմացայ որ ազատեր է եղեր:

Աիրելի հայր, գուեց կարսլս դողդո-  
ջուն՝ բայց զօրաւոր ձայնով մը, աւելի ա-  
ղէկ կ'ընէլիք եթէ ասով ճանչնայիք նա-  
խախնամութեան բազուկը, որն որ չէ ու-  
զեր թողուլ որ անմեղութիւնը հարստա-  
հարեալ մնայ: Ես ան խեղճ որր աղջիկը  
կը ճանչնամ. Պելլիկ օրիորդն է, որն որ  
երկայն առեն մեր տունը բնակեցաւ:

Աս խօսքը լոելով՝ թշուառ ծերը նո-  
րէն սաստիկ ջղաձգութենէ բռնուեցաւ-  
սկսաւ. յուսահատութեան ահաղին աղա-  
ղակներ արձակել . . . Քառորդ մը տեւեց  
աս սարսափելի վիճակը, որմէ ետքը սե-  
պուհն ապրելէն դադրած էր:

Եւ ոչ իսկ փորձ կ'ընենք խօսքով  
բացատրելու կարօլոսին զգացած ցաւին  
մեծութիւնը: Իր հօրը յուսահատութեան  
մէջ մեռնիլը՝ դիւրազգած երիտասարդին  
վրայ այնպէս սաստիկ ազգեցութիւն մ'ը-  
րած էր, որ ամբողջ ժամ մը հսն անշարժ  
մնաց: Աչուքները բոլորսին ցամքած էին,  
բոլոր արիւնը դէպէ ի սիրոր ժողվուած էր,  
աւելի ճիւաղի կը նմանէր՝ քան թէ կնն-  
դանի մարդու մը:

Հազիւ թէ մօրն ու քրոջն աղազակնեն-  
րը վերջապէս խելքը դլուխը բերին: Ինք  
ալ սկսաւ արցունք թափել, որով եւ սիր-  
որ քիչ մը սփոփեցաւ . . .

Հօրը յուղարկաւ որութեան հանդեսէն  
դառնալուն պէս, կարօլս շուա մը ժող-  
վեց բոլոր ան թղթերը՝ որոնք Աէն- իու-

մէն տիկնոց կը վերաբերէին, այսինքն  
Հեղինելին մօրը, զորն որ ասկէ վերջը իր  
բռւն անուամբը կրնանք կոչել : Զանոնք  
իր մօրը ցուցուց, կարելի եղածին չափ  
իրեն հասկրցուց զարհաւրելի գաղտնիքը  
որուն վրայ անիկայ ամենեւին տեղեկու-  
թիւն չուներ, եւ շուտ մը դէպ ի ՞նիմ  
ճամբայ ելաւ :

Նոյն քաղաքը հասած առենք՝ նամա-  
կաւ մը Պլր. Ռիշարտոյին աղաւեց որ  
զՀեղինել պատրաստէ հետեւեալ օրը զին-  
քը տեսնելու, որովհետեւ հետն արտաքոյ  
կարգի ծանրակշխո գործքերու վրայ պէտք  
է որ խօսի :

Բայց Կարոլոսին իր հօրաքեռ աղջ կա-  
նը հետ տեսնուիր պատմելէն յառաջ,  
պատշաճ կը սեպենք մեկնել՝ թէ ինչ էր  
Աննային պատմութեան լմբնալու ժամա-  
նակը պատահած խշրտոցին պատճառը :

Աս խշրտոցին պատճառն էր՝ Ատէլին  
խոպիսայէն գալը : Բայց նոյն օրիսրդն ա-  
ռանձին չէր, հապա հետը մէկտեղ եկած  
էր Աէն-Ռումէն տիկինը, որն որ Հեղինելին  
հօրաքոյրն էր :

Լուռթթեամբ կ'անցնինք ան սրտաշարժ  
տեսարանը՝ որն որ տեղի ունեցաւ մեր  
դիւցազնուհոյն իր հօրաքրոջը հետ տես-  
նուած ատենը : Միայն աս կ'ըսենք, որ  
նոյն տիկինն իր նուին (եղբօրը կնկան,  
Հեղինելին մօրը) մաշը լսելէն ետեւ, Սպա-  
նիա քաշուած էր, ուր տեղ Մանչինէլի

տիկնոջմէ ընդունած նամակէն իմանալով  
թէ եղրօրը Հեղինէ աղջիկը՝ զորն որ ինք  
մեռած կը համարէր, դեռ կենդանի է՝ բայց  
աևնէն թող տրուած, փութացաւ իտա-  
լիա անցաւ եւ հոնկից Ատէլին հետ գաղ-  
ղիա եկաւ :

Աս ալ պէտք է աւելցընենք, թէ երբ  
որ Ատէլ զլէն Որոմէն տիկինը Հեղի-  
նէն ներկայացուց, օրիորդը մէկէն այլ-  
այլեցաւ. վասն զի շուտ մը միտքն եկաւ  
թէ զկարուս նոյն անուամբ ճանչցած էր :

Այսպէսով մեր դիւցաղնուհւոյն վրայ  
քաշուած մութ քողը մէկդի առնուած  
էր, Որբ օրիորդն՝ առանց ուղելու եւ ա-  
ռանց հարցընելու՝ վերջապէս զլուխն եկած  
ամէն չարեաց պատճառն իմացաւ : Ասով  
դիւրինցած էր Պր, Ռիշարտոյին գործքը,  
որն որ պէտք էր զՀեղինէ պատրաստել  
կարուսին հետ տեսնուելու, զորն որ նոյն  
օրիորդը՝ ինչպէս դիտենք՝ տակաւին մե-  
ռած կը համարէր :

Ո՞ւ կրնայ բացատրել Հեղինէին զգա-  
ցած սրտի ուրախութիւնը, երբ որ աս  
նկատմամբ սխալած ըլլալն իմացաւ :  
Բայց աս ուրախութեան վայրկենին՝ շուտ  
մը մեծ տիրութիւն յաջորդեց, որովհե-  
տեւ անմիջապէս միտքն եկաւ թէ ինչ  
մեծ ցաւ ու ամօթ պէտք է որ կրէ կա-  
րուս՝ հօրը վարժունքին պատճառաւ :

Երբ որ Պր, Ռիշարտոյ եկաւ Հեղինէ-  
ին ըստ թէ Պր, կարուս եկած՝ իրեն կը

սպասէ, ոտք ելաւ եւ դողդոջուն քայլերով վաճառականին ետեւէն դնաց :

Զինքը տեսածին պէս՝ արձակած տկար աղազակէն, շրմանցը դողդողալէն ու երեսին գունատութենէն իմացաւ Կարոլոս օրիորդին սրտին տաղնապր : Իրեն աթոռմը հրամցուց, ետքը հետք մէկտեղ բերած թղթերը ծոցէն հանելով .

Աիրելի հօրաքեռաղջիկս, ըստւ, որչափ որ ալ ծանր ըլլայ որդւոյ մը իր հօրը յանցանքը յայտնելը, այսու ամենայնիւ առ դժուարին ու տխուր պարոքը կատարած ժամանակս, մեծ հաճութիւն կ'իմանամ, մտածելով որ ասով նորէն կը ստանաք անուննիդ, հարստութիւննիդ եւ պատիւնիդ, որոնց այնչափ կողմանէ արժանի էք : Եհաւասիկ ձեզի կը բերեմ հօրս թող տուած բոլոր թղթերը, զորոնք ձեր մօրը ձեռքէն յանիրաւի առած է եղեր : Առէք եւ երկայն ժամանակ ու կատարեալ երջանկութեամբ վայելեցէք ինչքերնիդ՝ որոնցմէ այնչափ ատեն զրկուած էիք :

Հեղինէ այնպիսի վիճակի մէջ էք՝ որ չէր կրնար բերնէն ամեննեւին բառ մը հանել : Հազիւ կրցաւ ձեռքն մօրեղքօրորդւոյն երկընցընել, որն որ գորովով ճնշեց : Թռէպէտ կը ջանար արցունքը բռնել, բայց չէր կրնար : Կարոլոս ալ արտաքոյ կարգի այլայլած էք . ներքին շփոթութիւնը ծածկելու համար՝ երեսն անդին դարձուց :

Քիչ մը կենալէն ետքը, ինք զինքը

ժողովելով՝ խօսքն այսպէս յառաջ տարաւ։ Սիրելի Հեղինէ, մայրս յանձնեց որ ձեզի զրուցեմ թէ քանի մը օրէն թէ Նիմի եւ թէ Մոնրելիիկի ապարանքները պատրաստ կ'ըլլան ձեր հրամանին։

Աւրեմն զիս մեռցընել կ'ուզէք . . . զուշեց Հեղինէ։ Ո՛հ, Աստուծոյ սիրոյն համար, ինձի խնայեցէք։ Չեր մայրն ի՞նչ յանցանք ունի։ Բաց ասկից՝ Նիմի ապարանքը՝ Աննային բասծին նայելով, միշտ ձեր բնտանեացն է եղեք։

Այս, այնպէս է։ Բայց ձեր մօրը ստակովը նորէն գնուած է։ որովհետեւ հայրս առած պարտքերը չկրնալով վճարել, պարտատէրները նոյն ապարանքը դրաւելու վրայ են եղեք, եւ հայրս հօրաքրոջմէս ընդունած ստակովը կըցէք է զիրենք գոհ ընել։ Ասոր համար ալ մայրս՝ ամսւանոյն եւ որդւոյն զլուխն եկած սարսափելի պատժէն վախնալով, յանձն չ'առնուր հսն բնակիլ, հապա ամէն բան ձեզի կը թողու, եւ մեր տունը գտնուած ժամանակնիդ ձեզի հասցուցած բոլոր վիշտերուն համար ալ հտզար թողութիւն կը խնդրէ։

Հեղինէին դիւրազգած ու ազնուական սրտին անկարելի էր առ խօսքերուն դիմունալ։ Ուստի ձեռաւըներուն երեսը ծածկեց եւ սկսաւ հեծեծանոք լալ։ Հօրաքրոյր վախնալով որ սյաչափ սաստիկ ցաւն իրեն փսառ մը լընէ, փութաց իր սիրոյն

ոսկը տալ՝ դիմքը քաջալերելով և այս-  
պէս խօսեցաւ:

Սիրելի աղջիկս, ինչո՞ւ այնպէս վհա-  
տութեան մէջ կ'իյնաս: Չառ դիւրին  
միջոց մը կայ ամեն դժուարութիւնները  
վերցընելու, եւ ամենայն ինչ մեր մէջն  
այնպէս կարդի դնելու, որ դրսէն ամե-  
նեւին մէկը բան մը չիմանայ: Եշկուքնիդ  
ալ աղէկ միտ դրէք բուլիքս Կարոլոսին  
ալ կը պատշաճի: Բայց յառաջուրնէ կը  
յայտնեմ որ ասանկ առիթներու մէջ  
սովորաբար գործածուած շրջանները պիտի  
չրանեցընեմ, հապա ուղղակի եւ բա-  
ցայայտ կերպով բուլիքս առջեւնիդ պիտի  
դնեմ:

\*Նախ եւ յառաջ խօսքս ձեզի կ'ուղ-  
ղեմ, Կարոլոս, եւ կ'աղաչեմ որ այնպէս  
պարզութեամբ եւ շիտկէ շիտակ պատաս-  
խան տաք, ինչպէս որ ես հարցումն պար-  
զութեամբ կ'ընեմ:

Յառաջոյն՝ երբ որ տակաւին Հե-  
ղինէին հետ ազգականութեան կապերսով  
կապուած ըլլալնիդ չելք զիտեր, չելք  
յայտնած որ կը բաղձաք իր ձեռքն ըն-  
դունիլ:

Ասյո՛, կը խոստովանիմ, պատասխանեց  
Կարոլոս կարմընալով, որ այնպէս է: Հօրա-  
քեռաղջկանս առաքինութիւնները սիրտս  
այնպէս շարժած էին, որ զիս ամենէն եր-  
ջանիկ մարդը կը համարէի, եթէ առ բաղ-  
ձանքս գլուխ ելլէր: Բայց հիմայ որ հօրո

նախատական յիշատակն ինձի ալ կ'անցնի,  
ալ չեմ կրնաք այսպիսի . . . :

Հարցումն ձեր հիմակուան զգածման  
վրայ չե , ընդմիջեց Աւն - Ռոմեն տիկինը :  
Կ'ուղէի միայն ձեր յառաջուան բաղձան-  
քին վրայ ուրիշէն լսածո , ձեր բերնէն ալ  
լսել : Բայոր ըսելիքս ըսելէս լմբնցընելէս  
վերջը , եթէ ընդդիմութիւն մը ունիք , ան  
ատեն կրնաք զրուցել :

Հիմայ կարդը քուկդէ , Հեղինէ . զի-  
տեմ որ մօրեղբօրորդիդ միշտ կը յարդէ-  
իր ու կը սիրէիր : Արդ առ յարդութիւնդ  
ու սէրդնուազեցաւ , քանի որ Մոնրոպէր  
ընտանեց վրայ վերջին ժամանակուան  
դժբախտութիւններն եկան :

Հեղինէ գլխովը ժխտական նշան մ'ըրաւ :  
Ուրեմն , կարոլոս , շարունակեց տի-  
կինը , եթէ ձեր հօրաքեռաղջիկը՝ Պր .  
Ռիշարտոյին ձեռքովը յառաջադոյն իրեն  
ըրած առաջարկութիւննիդ՝ հիմակ ըն-  
դունի , ի՞նչ պատասխան կու տաք :

— Պատասխան կու առմ որ հօրմէս՝  
միայն նախատինք ժառանգած ըլլալով ,  
արժանի չեմ . . . : Բայց տիկին . . . :

— Աս բաւական է : Հեղինէ , գուն  
ի՞նչ կըսես :

Մեր դիցազնուհին ամօթիածու-  
թեամբ՝ բայց այնորիսի նշանակիչ կերպով  
մը հօրաքրոջն երեսը նայեցաւ , որ Աւն-  
Ռոմեն տիկինը շուտ մը միտքն իմացաւ .  
եւ չուղեց խօսելու ստիպել :

Միտքդ կ'իմանամ, աղջիկս, ըստ, կուզես որ ես քու կողմանէդ խօսիմ։ Կարույս, դուք Հեղինէին հետ ուզեցիք կապուիլ, երբ որ անիկայ առանց անուան եւ առանց ընտանեաց որբ աղջիկ մըն էր իրեն հետ ամուսնանալու ակնկալութեամբ՝ Փարփղի մէջ խիստ հարուստ եւ շատ մեծ ընտանիքէ օրիորդի մը հետ կարգուելէն հրաժարեցաք։ Կը կարծէք որ Հեղինէ ասձեր իրեն ցուցուցած այնչափ սիրոյն մեծութիւնը չի զգար, կը կարծէք որ քանի մը ժամկ վեր բաներն ուրիշ կերպարանիքի մէջ մտնելով, դուք աղքատ եւ ինք հարուստ ըլլալով, ալ յառաջուան զգածմունքները պիտի դադրէին։ Կարծեմ հօրաքեռաղջիկնիդ բառական ճանչցած պիտի ըլլաք, որ զինքն աս աստիճանի տկար ու փոփոխակիտ շնամարիք։ Հեղինէ՝ միշտ յառաջուան Հեղինէն է, ուստի եթէ կուզեք որ ձեր հօրն ինչպիսի եւ իցէ կերպով ձեռք բերած ինչքերը ձեր ընտանեաց մէջ մասն, եթէ կուզեք ձեր մօրը ցաւերը մեղմացընել եւ ձեր քրոջը գրայէն նախատինքը հեռացընել, Հեղինէին ձեռքն ընդունեցէք։ Ես իրեւ իր երկրորդ մայրը զինքը ձեզի կու տամ։ Ապահով եմ որ բոլոր բաժներու իր մոաց համաձայն են։ Իսկ ազգականութեան կողմանէ ծագած գժուարութիւնը շատ դիւրաւ կրնայ վերցուիլ տնօրինմամբ, զորն որ այսպիսի պարագաներու մէջ եկեղեցին չիզլանար։

Ապրոլս չէր կրնար ապասել որ Հեղինէ նաև միակ բառ մը զբուցէ Աէն-Առամէն տիկնոջ բանները հաստատելու համար։ Ուստի եւ անոր հաւանութեան յայտնի նշանը սեպեց, երբ որ տեսաւ թէ խօսքը լմբնցած ժամանակը՝ օրիորդը հօրագրոջը մօտենալով, անոր բաղկացը մէջ նետուեցաւ։ Աս գործոզութիւնը երկայն խօսակցութիւններէ աւելի աղեկ կը յայտնէին օրիորդին միտքը։

Ան ատեն ինքն ալ ստք երաւ, Հեղինէին մօտեցաւ, եւ որովհետեւ սիրան այնչափ շարժած էր, որ չէր կրնար շնորհակալ ըլլալու համար բերնէն խօսք մը հանել, լռութեամբ իր մասնիններէն մէկն անոր մատոյց։ Աէն-Առամէն տիկինն ալ առաւ մատնին, եւ եղբօրը աղջկան մատը դրաւ։

Բոլոր հոն ներկայ ըլլողներն իրենց չորս կողմն առած՝ շնորհաւորութիւննին ըրին։ Եւ այսպէս աս այնչափ տիսրութեամբ սկսած խօսակցութիւնը, պարագաներուն ներածին շափ ուրախութեամբ լմբնցաւ։

Ա երը պատմուած դէպքերուն վրայ տարի մ'անցնելէն ետեւ, կարոյս եւ Հեղինէ՝ Մոնրոպէր սեպուհին մահուան սուզէն ելլելով, սուրբ սեղանին առջեւն ամուսնութեան օրհնութիւնն ընդունելով, մէկտեղ պատկուեցան։ Անկէ վերջը անմիջապէս Սէն-Ռոմենի դղեակը քաշուեցան, եւ Կիմի ապարանքին գործածութիւնը սեպուհին այրոյն եւ աղջկանը թողուցին։

Հան՝ գղեկին մէջ քաշուած, երչանիկ օրեր կ'անցընէին, Սէն-Ռոմեն տիկնոջ հետ, որն որ իրենցմէ բաժնուիլ չէր ուղած։ Իրենց հետ էին նաեւ Աննա եւ Մաննիկ։ Այնպիսի հանդարատութեան եւ երջանկութեան մէջ, որն որ աս աշխարհքիս վրայ միայն բարիներուն բաժինն է, ամենեւին աշխարհքիս աղմկալից զուարձութիւններուն բաղձալու առիթ չէին ունենար, եւ միշտ կ'օրհնէին ան ժամը՝ որուն մէջ իրենց երկուքին բախտը մէկտեղ միացած էր։

Գաղղիայի մեծ յեղափոխութենէն յառաջ։ Սէն-Ռոմենի գղեկին քովի գեղին գերեզմանատան մէջ տակաւին Հեղինէին անպաճոյն շիրիմը կը տեսնուէր, որուն վրայ հետեւեալ արձանագիրը կար։

Հսո կը հանգչի Հեղինէ ԱԵն . Ռումին ,  
որն որ կենացն առաջին տարիները՝ սաս-  
տիկ վշտերով փորձուեցաւ , բայց երբեք  
ակնկալութիւնը չկտրեց Անկէց , որուն  
աներեւոյթ ձեռքն իր բնտանեաց վրայ  
ծանրացած էր : Աշխարհքիս Փրկչին հե-  
տոցը վրայէն քայելով եւ իր բոլոր գործ-  
քերն անոր գործոցը նմանցընելու ջանա-  
լով , անոր պէս իր մահացու թշնամեացը  
ներեց : Իր հաւատոց եւ բարեգործու-  
թեանց փոխարէն՝ կենացը վերջին տա-  
րիները երջանկութեամբ անցուց եւ խա-  
զալութեամբ մեռաւ , ամուսնոյն նւ-  
զաւակացը եւ միսիթարած գժբախտներուն  
ցաւը մէկտեղ տանելով : — Անցաւոր , իր  
հոգւոյն հանգստեան համար ազօթք ըրէ :







